Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99
Ē-66

891.992
Շ-66

6 NOV 2011

1001/3113

ԾԻՐՎԱՆԶԱԴԻ

# Փղոսկածու

ԵՐԿԵՐԻ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԹԻՖԼԻՍ

Тип. «Веренчевъ и Каменмахеръ». | Տպ. «Վեռեիչև եւ Կամենմախեր»
Мих. пр., № 81
1903

Հ. ՀԱՅԿԱԶՅԱՆ
Գրադարան

15.07.2013

47990

Дозволено цензурою, Тифлисъ, 17-го Іюня 1903 года.

# ՆՈՐԵՐԻՑ ՄԷԿԸ

*պ ա տ կ ե ր*

Օրը մթնեց։ Ծանր, վշտալի օր. նա անցաւ... Գիշեր է, կըլուսանայ, արեգակը դուրս կըգայ, և դարձեալ կըսկսվի նոյն տաղտկութիւնը, նոյն ձանձրալի կեանքը, որն ահա ուղիղ հինգ տարի է նրան մաշում է։ Անհնարին է այդպէս շարունակել, այդ արդէն չափազանցութիւն է, ստորութիւն է և, վերջապէս, անբարոյականութիւն է։ Դառն է այդ ճշմարտութիւնը, բայց ճշմարտութիւն է, և, վերջապէս, ժամանակ է ուղիղ նայել այդ ճշմարտութեան երեսին։ Հարց. ինչ է անում նա, ուր է գնում, ինչու՞ համար է ապրում։ Գտել է. խնդիրը հէնց այդ չորս բառերի մէջ է կայանում։ «Ինչո՞ւ համար է, ապրում», այսինքն, ինչ է նրա գոյութեան նպատակը։ Միթէ միայն ապրելը։ Բայց լոկ ապրելն, արդեօք, կարող է բարոյական մարդու կեանքի նպատակ լինել։—Ոչ։ Ապրել միայն ապրելու համար—այդ ստոր և ղզվելի կեանք է, որ արժանի է միայն անբան կենդանուն։ Բայց ինչ ասել է կեանքի նպատակ։—Նա մարդկային գոյութեան յետնաբանն է։ Սուտ է, որ ասում են, թէ կան մարդիկ առանց նպատակի։ Նա չի հաւատում։ Աննպատակ կեանքը մահ է։ Հարուստի և աղքատի, ոգեղի և ի-

76

մաստունի, բարոյական մարդու և անբարոյականի կեանքն ունի որ և է յենարան։ Ամեն մարդ ձգտում է հասնել իւր ցանկացածին, և ահա այդ ցանկացածին հասնելու յոյսն է, որ պահում է իւրաքանչիւրի դոյութիւնը։ Հակառակ դէպքում, նա չի կարող ապրել, կանհետանայ, կըչոդիանայ իւր անբովանդակ կեանքի անբովանդակ տարածութեան մէջ։ Բայց ինչ է նա։— Ոչինչ. դատարկ տարածութիւն, եթերական էութիւն։

Քամալեանը բարձրացաւ աթոռից, որ դրած էր փոքրիկ, հնամաշ դրասեղանի քով։ Այդ սեղանի վրայ դարսված էին անկանոն կերպով զանազան բոլանդակութեան, մեծ ու պստիկ, կազմած ու անկազմ դրքեր, լրագրների թերթեր, մի քանի դրչակութեր, մի հայելի և ուրիշ հարկաւոր ու անպէտք իրեղէններ։ Իսկ սեղանի առաջի կողմում, աթոռի դէմ ընկած էր մի բաց ձեռագիրք։

Այս—Քամալեանի յիշատակարանն էր։

Փոքրիկ ապակեայ հասարակ կանթեղն աղօտ կերպով լուսաւորում էր նեղ և ցածր առաստաղով սենեակը։ Ձեռները դնելով վարդիկի դրպանները, գլուխը թեքելով դէպի կուրծքը, Քամալեանը սկսեց քայլել սենեակի մի անկիւնից դէպի միւսը, յետ ու առաջ։ Նրա դէմքը գունատ էր, նրա պայծառ ճակատը կորցրել էր իւր պարզութիւնը և ծածկվել այնպիսի կնճիռներով, որոնք երևում են միայն տարիքն առած մարդկանց ճակատի վրայ։ Բարակ, սևագոյն յօնքերի տակից նայող մուգ աչքերը, գրկվելով իրանց նախկին կրակոտ փայլից, ընկել էին խորը խորշերի մէջ։ Երկու խոշոր գծեր այդ աչքերը բաժանում էին ապրդնած երեսի միւս մասից։



Մի քանի րոպէ լուռ ու մունջ շրջելուց յետոյ, Քամալեանը կրկին մօտեցաւ սեղանին։ Նա սկսեց թերթել սեղանի վրայ դրած ձեռագիրը, երբեմն ձեռը տանելով ճակատին և յետ դարսելով երկայն, փայլուն ու կակուղ մազերը, որոնք շուտ շուտ ցրվում էին առաջ։

—Հեռացիր աչքիցս, դոչեց նա յանկարծ, յիշատակարանը ձգելով սեղանի մի անկիւնը։

Այն աւելի կրկնապատկում էր նրա վշտերը, երբ աչքի առջև էր։ Այն յիշեցնում էր նրան իւր պախարակելի անցեալը, պատկերացնում էր նրա առջև մի դատարկ, մի յիմար կեանք, և ինքն իսկ քննադատում այդ կեանքը։ Պիտի չորանար այն ձեռը, որ գրել էր այդ թերթերը, այն ձեռը, որ անշունչ առարկայիդ բերանը լեզու է դրել, որպէս զի այսօր այդ լեզուով անէծք կարդացվի նոյն այդ ձեռը բանացնողի դէմ։ Եւ ինչ ես դու, ղվվելի թղթի կոյտ։ Ի՞նչ ես դու և ինչ են ահա սրանք (Քամալեանը ձեռը մեկնեց դէպի մեծաքանակ դրքերը), որոնք խաբում են մարդկութիւնը, բաղդաւորութիւն են խոստանում, իսկ յետոյ դառնութիւն և կսկիծ են տալիս այդ բաղդաւորութեան փոխարէն։ Բայց ոչ, դուք թղթեր մեղաւոր չէք. մեղաւոր են դարձեալ նրա նման զզուելի կենդանիները, մեղաւոր է մարդ կոչված սոսկ արարածը։ Այո, մեղաւոր են նրանք, որոնք, սևացնելով իրանց կեղտոտ մատներով ձեր լոյսի նման մաքուր երեսը, հաւաքում են ձեզ միասին, սփռում են աշխարհի չորս կողմերը— նրա նման անօգուտ արարածների թիւը աւելացնելու և մարդկութեան թշուառութիւնը բազմապատկելու համար։

Մտաբերում է նա, երբ իւր պատանեկութեան

օրերում, վարակված ընկերակիցների սովորութիւնից, ահա այդ սևացրած թերթերից մի կապ դրած առ-ջևը, ժամերով կարդում էր, մայրը միշտ կրկնում էր. «որդի, խնայիր քեզ, սիրտդ մի մաշիր այս դիր ու դրեանքով»: Այն ժամանակ մօր այդ խօսքերը նրան ծիծաղեցնում էին: Նա զուարճանում էր այդ կնոջ միամտութեամբ, որ չգիտէր «դիր ու դրեանքի» արժանաւորութիւնը, նրանց օգտակարութիւնը: Տասը տարի է անցել այդ ժամանակից, նրա մայրն արդէն մեռած է, և այժմ Քամալեանն ուրիշ կերպ է հասկանում նրա խօսքերը: Նրա մայրը միամիտ չէր, ոչ, այլ ինքն էր յիմարը, որ նրա տգէտ խօսքերի մէջ թագնված խորը իմաստութիւնը չգիտէր: Այո՛, չգիտէր, խորասուզված ընթերցանութեան մէջ, ոչինչ ուրիշ բան չէր ուզում հասկանալ, ոչնչի և ոչոքի չէր հաւատում, բացի նրանից, ինչ-որ ասում էին այս «դիր ու դրեանքը»: Այսօր ամեն ինչ անցած է, այլ և մայրը նրա կողքին նստած չէ, և նա չի կարող, նրա խրատը կատարելով, մխիթարել նրան: Այժմ ուշ է, ամեն բան վերջացած է, և նա...

Մի ուժգին ապտակ տալով ճակատին, Քամալեանը վեր թռաւ աթոռից և սեղանից վերցնելով մի ծխախոտ, վառեց ու սկսեց ծխելով յետուառաջ շրջել: Նա աւելի ու աւելի դառնանում էր, մտաբերելով իւր անցեալը, իւր մանկութիւնը, այն օրերը, որոնց նա վերադարձնել կըցանկանար, բայց չէր կարող: Այդ օրերը նրա համար մի մի ասեղներ էին, որոնք, ցցվելով նրա ուղեղի մէջ, բորբոքում էին նրան:

Նա ծխում էր անսովոր կերպով: Վառելով ծխախոտը, նա մի քանի անգամ այնպիսի ագահութեամբ քաշեց, որ պապիրօսի կէսը, ծուխ դառնալով, անհետացաւ: Ինչպէս մի մարդ, որ երկար չնչարգելութիւնից յետոյ, լիքը բերանով կլանում է թոքերը միանգամից օդի ահագին քանակութիւն, Քամալեանը ծխախոտի ծուխը իւր ընդ ողջ զօրութիւնով ծծում էր ներս: Կարծես, կամենում էր այդ դառն ծխով թունաւորել և սպանել այն վշտերը, որոնք դարսվել էին նրա ճնշված սրտի վրայ, և արմատախիլ անել այն մտածմունքները, որոնցով ծանրաբեռնվել էր նրա ուղեղը: Բայց չէր լինում, ծխախոտը չէր օգնում, նրա վշտերը և մտածմունքները մնում էին միևնոյնը. նրանք չէին թուլանում, չէին պակասում, միայն աւելի գըրգռում էին: Եւ Քամալեանը յաղթված, ճնշված նրանց ներքոյ, չգիտէր ինչ անէր, ինչպէս կրէր նրանց ծանրութիւնը: Նա կրկին մօտեցաւ սեղանին և կրկին ըսկսեց իւր անդուլ դատաստանը իւր անցեալի և ներկայի վրայ:

—Համեմատե՞լ եմ, արդեօք, ինձ ուրիշ ինձ նման արարածների հետ, գտե՞լ եմ, արդեօք, իմ մէջ այն յատկութիւնները, որոնցով ես նմանվէի այժմեան մարդկանց, որոնք իմ կեանքը կապէին այդ մարդկանց հետ: Կա՛ն, վերջապէս, ինձ նման ուրիշ մարդիկ— Այո՛ և ոչ: Այո՛, որովհետև բոլոր իմ ճանաչած մարդիկ առանձնապէս վերցրած ունեին ամեն մէկը իմ յատկութիւններից որ և է մէկը: Ո՛չ, որովհետև չկայ մի մարդ, որ պարունակէր իւր մէջ այն բոլորը, ինչ-որ ես եմ պարունակում իմ մէջ: Ինձ նման չկայ մի ուրիշը, և ինչ եմ ես:—Ամենայն ինչ, և ոչինչ: Այդ հատատում է այս անողորմ, անգութ վկան, իմ նախաեղի անցեալի այս արհամարհելի նկարագիրը:

Քամալեանն, այս ասելով, ձեռը դարձեալ մեկնեց յիշատակարանին, վերցրեց նրան և, դնելով իւր առջև, կրկին սկսեց թերթել։ Կանթեղի աղօտ լոյսը ընկաւ յիշատակարանի մանր տառերով գրված տողերի վրայ։ Նա չարունակում էր թերթել, երբեմն կանգ առնելով այս ու այն երեսի վրայ և կարդալով։ Այդ ժամանակ նրա դէմքն աւելի այլայլվում էր, նրա ճակատի կնճիռները մօտենում էին իրարու և սեղմվում, երեսի գծերն աւելի ու աւելի խոշորանում։ Այդ—նրա հոգեկան խորին յուզումն, նրա ներքին ալեկոծութիւնն էր։ Յիրաւի, յիշատակարանի ամեն մի երեսը, մտաբերելով նրան իւր կեանքի այս կամ այն ժամանակամիջոցը, գրգռում, եռապատկում էր նրա վրդովմունքը, լեցնում էր նրա դառնութեան բաժակը։ Կարծես, այս լուռ ու մունջ սև տողերը մի մի թունաւոր սողուններ լինէին, որոնք, սողալով նրա մարմնի վրայ, ծակծկում էին նրան իրանց թունաւոր ասեղներով։

Հինգ տարի է, որ նա մտել է կեանքի մէջ։ Ի՞նչ է արել այդ հինգ տարուայ ընթացքում հասարակութեան համար, ինչ օգուտ է տուել նրան։—Ո՛չինչ, բացի ձլուսից։ Բայց չէ՞ որ նա կամենում էր օգտակար լինել և դեռ ուսումնարանի նստարանի վրայ, իւր եռանդուն երևակայութեան մէջ ստեղծում էր իւր ապագայ «հասարակական գործունէութեան» համար հարիւրաւոր ծրագիրներ։ Ո՞ւր են այդ ծրագիրները։ Զրկան նրանք, շոգիացել են։ Ինչո՞ւ։ Որովհետև... այո, որովհետև նա այդպէս չէր հասկանում կեանքը, որովհետև նա թանձրացնելի օդի մէջ կամենում էր ամրոց կառուցանել։ Նա կարծում էր, թէ կարող է կեանքը ծառայեցնել իւր



նպատակներին։ Պատանեկական երևակայութիւն, ինչեր չես ստեղծում դու, ինչ հսկայական խոչնդոտներ չեն փշրում, խորտակվում քո առջև։ Ա՛խ, Տէր Աստուած, գլուխը պտտում է, աչքերը մթնում են, երբ նա մտածում է այդ մասին։ Ինչ անի, դիշերն անցնում է, լոյսը մօտենում է, ամենքը քնած են անդորր հոգով, ամենքը ցերեկուայ իրանց աշխատութիւնից յոգնած, հանգստանում են։ Իսկ նա ինչ է արել, որ այդքան յոգնել, թուլացել է, և ինչ պիտի անի վաղը։ Դարձեալ պիտի նստի այստեղ, այս տաղտկալի, ձանձրացուցիչ սենեակում, կարդայ, կարդայ ու կարդայ տակն ու վեր, մի հինգ տող այս գրքից, հինգը միւսից։ Տէր Աստուած, համբերութիւն էլ չունի մի գիրք մինչև վերջը կարդալու...

Քամալեանը կրկին բարձրացաւ տեղից և սկսեց չուարված չրջել յետ ու առաջ, ինքն իրան անդադար կրկնելով. «մի՛թէ, մի՛թէ չկայ մի ելք»։ Յետոյ նա յուզված մօտեցաւ վառարանին և, մէջքը տալով պատին, դարձեալ խորասուզվեց իւր դառն մտածողութեան մէջ։

—Հարկաւոր է, հարկաւոր է անպատճառ դուրս գալ այդ ծանր մտքերի լաբիրինթոսից—դարձեալ ըսկսեց խօսել նա ինքն իրան։—Այո, հեշտ է ասել, հարկաւոր է ազատվել այդ ծանր մտքերից, բայց կատարել... Հըմ... Թշուառ արարած, ղեացիր քո ոչնչութիւնը, անիծիր ինքդ քեզ, ուրիշ միխիթարութիւն չունիս։ Չէ՞ որ դու ամեն ինչ փորձեցիր, և ինչ յաջողութիւն գտար։ Դրականութիւն, ուսուցչութիւն և ուրիշ ոչնանման չափիղներ դու ոտք ես կոխել, ինչու ուրեմն չկարողացար այդ չափիղներից մէկի վրայ երկար շարունակել քո ընթացքը։ Չէ՞ որ դու մինչև անգամ ու-

զում էիր արհեստաւոր, նոյն իսկ հասարակ բանւոր դառնալ, ինչու ուրեմն այստեղ ևս չկարողացար երկար մնալ։ Ո՞վ էր քեզ արգելում, ինչն էր խոչնդոտում քո առջև։

—Ո՞վ էր արգելում, ինչն էր խոչնդոտ դնում իմ առջև—կրկնեց Քամալեանը ինքն իրան։

—Ինքդ և ուրիշ ոչ ոք, քո խոչնդոտը պարունակվում է հէնց քո մէջ,—շշնջաց նրան նոյն ներքին ձայնը։ Որոնիր և կըզտնես, հարցրու քո հիւանդ նեարդերից, քո դիւրագրգիռ զգացմունքներից, հարցրու քո թոյլ կամքից, անհիմն և անհաստատ բանականութիւնից, և նրանք կասեն քեզ։ Դու ամեն տեղ որոնում էիր այն, ինչ-որ քեզ համար հնարաւոր չէր գտնելու, և, որոնածդ չըգտնելով, յուսահատւում էիր ու թողնում քո ընտրած ճանապարհը։ Դու դեռ գործը չըսկսած, նրա վերջի, նրա հետևանքի մասին էիր դողում, և այդպէս դու անում էիր ամեն անգամ, բոլոր ասպարէզներում։ Քո խելքի և զգացմունքների մէջ երբէք ներդաշնակութիւն չի եղել—ահա քո յաւը, քո խոչնդոտը, քո արգելքը։ Դու չըգիտէիր և այժմ իսկ չըգիտես այն նշանաւոր իմաստասէրի խօսքերը, թէ «կեանքը կոմեդիա է մտածողի համար, իսկ դրամա—զգացողի համար»։ Քեզ համար նա դրամա է եղել, ուրեմն թող կատարվի այդ դրաման մինչև վերջը։

—Ճշմարիտ է։

—Իմիր, ուրեմն, քո դառնութիւնը մինչև բաժակի յատակը։

—Իմի՛ր. այո, կըխմեմ և մի կաթիլ անգամ չեմ թողնիլ նրա մէջ։

Եւ Քամալեանը կրկին սկսեց շրջել։



Փոքրիկ սենեակը լցվել էր ծխախոտի ծխով։ Վառարանի մէջ այրվում էին փայտի վերջին կտորտանքը։

—Ցոյս—ահա ինչ է հարկաւոր ինձ, ահա ինչի բացակայութիւնն է թունաւորում իմ կեանքը։ Բայց ո՞րտեղից գտնել յոյս, ո՞ւր է նա, ինչպէս կարող է նորից վերակենդանանալ իմ մէջ, քանի որ նա միանգամայն, այո, միանգամայն, մեռած է...

Այս խօսքերը Քամալեանն արտասանեց աւելի բարձր ձայնով։ Յետոյ նա իւր մտայլ, ցրված հայեացքը ուղղեց դէպի վառարան և սկսեց անթարթ աչքերով նայել այրվող կրակին։ Մի տեսակ դառն ժպիտ էր խաղում նրա շրթունքների վրայ այդ ժամանակ։

Ահա վառարանի մէջ այրվում է անտառից բերած փայտը։ Սրանք ևս, այդ անշունչ փայտի կտորտանքն ևս, անօգուտ չեն։ Քանի որ լուռ անտառի մէջ էին, այնտեղ նրանք կազմում էին ահագին կանաչազարդ ծառեր բազմաթիւ ճիւղերով և անհամար տերևներով։ Այդ մի բազդաւորութիւն է։ Նրա ճիւղերի շուաքի տակ հանգստանում էր յոգնած հովիւն իւր փոքրիկ դառնուկների հետ, նրա դագաղում ուրախ ուրախ թռչկոտում և զուարճանում էին անթիւ թռչնիկներ։ Որքա՜ն, երևի բազդաւոր էր զգում իրան ծառն այդ ժամանակ, որչափ նա հպարտանում էր, զգալով իւր օգտակարութիւնը թէ մարդուն և թէ կենդանիներին։ Սակայն, ապերախտ է մարդը։ Ի՞նչ վճռեց նա բարեսիրտ և օգտաւէտ ծառին նրա վեհանձնութեան փոխարէն։ Նա, այդ երախտամոռ արարածը, կացնի սուր բերանն իւր կեղտոտ և գզուելի ձեռներով ուղղեց ծառի ամուր և հաստ բունին։ Ծնքաց

այդ վեհանձն մարդասէրը, իւր սրտի խորքից անիծեց ապերախտ մարդուն, ճռճռաց և, մի դառն հառաչանք արձակելով, թաւալվեց դեպինը։ Ծառը մեռաւ, բայց մահից յետոյ էլ նա չդկորցրեց իւր օգտակարութիւնը։ Նրա մարմնի փշրանքներն ահա այսօր ձմեռուայ սառնութիւնից պաշտպանում են մի ղղուելի մարմին։ Գիւղական խրճիթում նրանք տաքացնում են աղքատ չինականի և նրա փոքրիկ զաւակների ձիւնից ու բուքից քարացած մարմինները։ Հարուստի պալատում նրանք դիւրերկան ջերմութիւն են պարգեւում փարթամներին։ Իսկ նա, անբաղդը, նա է միայն աւելորդ մարմին աշխարհի երեսին։ Որքան դժբաղդութիւն, որպիսի ցաւ է ղգալ ինքդ քեզ մինչև անդամ այդ անշունչ առարկայի, փայտի առջև քո աւորութիւնը, քո ոչնչութիւնը։ Այդ մի անտանելի վիշտ է...

Քամլեանը մօտեցաւ սեղանին և կրկին սկսեց թերթել յիշատակարանը։

Այնտեղ նկարագրված է նրա կեանքը 187... թուականից մինչև այսօր. այսինքն սկսած այն օրից, երբ աւարտեց դիմնազիայում իւր ուսման ընթացքը։ Նա արհամարհեց բարձր կրթութիւնը, և ինչու՞։ Նրա համար, որ աւելի շուտ մանի հասարակական գործունէութեան ասպարէզը։ Այն ժամանակ չտապում էր և, կարծելով, թէ բաւական է իւր ստացած մատուր պաշարն այդ ասպարիզում իւր համար յարմար տեղ բռնելու։ Նա մտածում էր, որ կարող է ընթերցանութեամբ լրացնել այն պակասը, որ պիտի լրացներ համալսարանն, և սկսեց այդ օրուանից անդադար և անընդհատ կարդալ, կարդալ ու կարդալ։ Ահա այս-



տեղ գրված է նրա կարդացած գրքերի անունները։ Տէր Աստուած, որչափ անկանոն և անկապ ընթերցանութիւն։ Բայց նա մինչև այսօր էլ չարունակվում է։ Ո՛հ ցնորք, մի ժամանակ նա հաւատացած էր, թէ մեծ բանաստեղծական ձիրք ունի, և այդ ցնորքով ոգևորված ուսումնասիրում էր Շեքսպիրին, Շիլլերին, Բայրոնին, Գէօթէին։ Լաւ ուսումնասիրեց. համբերութիւն չունեցաւ սրանց գրուածքներից գէթ մէկը կանոնաւոր կերպով կարդալու։ Ինչ ծաղրելի միտք էր այն, որ այդ ժամանակ նրան պաշարել էր։ Նա հաւատացած էր, թէ իւր մէջ կայ թաղնված ընդարձակ տաղանդ և կարծում էր, որ ընթերցանութիւնը կըսպանի այդ տաղանդի ինքնուրոյնութիւնը։ Բայց ահա նրա բանաստեղծական տաղանդի պատուղը, ահա այն չիմար, անհամ ոտանաւորները, որոնք նոյն իսկ Թառուեանի նման ախմարին էլ ծիծաղ էին պատճառում։ Փորձեց մի դրամատիկական պիես գրել. կարծում էր, որ պրօզան աւելի կըյաջողվի։ Բայց, դեռ առաջին երկու երեսը չըաւարտած, թողեց։ Այն արդէն չափից դուրս անհամ էր։ Փորձեց վէպիկներ գրել... Թիւ, ինչ անտանելի էին այդ օրերը։ Ուղիղ երկու շաբաթ մտածել միայն մի վէպիկի վերնագրի մասին և վերջ ի վերջոյ յօրինել «դանդաղութիւն» վերնագիրը—այդ արդէն չափից դուրս է, խելագարութիւն է։ Եւ ո՛ր մէկը թէ, նրա յիմարութիւններն անթիւ, անհամար են, նրա ամեն մի քայլը եղել է սխալ։ Բայց ինչի՞ց է ծագել այդ սխալը—թուլութիւնից, հաստատ կամքի բացակայութիւնից, որոնք նրա անընական կեանքի հետևանքներն են։ Նոյն անընական կեանքը շարունակվում է և՛ այսօր։ Նրա ուղեղը ծանրա-

քեռնվել է հազար տեսակ տարբեր գաղափարներով, իրարու հակառակ մտքերով, և այդ բոլորն անորոշ ու անկանոն կերպով այս րոպէին դասաւորված նրա գլխու-մը, դըժդըժում են այնտեղ, ինչպես անթիւ որդեր։ Ի՞նչ է արել... ինչ է անում և ինչ պիտի անի... Էլի ո-չինչ։ Ոչինչ...

Նա հանեց ժիլետի գրպանից ժամացոյցն և նայեց։

—Արդէն գիշերուայ երկու ժամն է, քունս չի տա-նում, գլուխս ցաւում է... ականջներումս, կարծես, թմբուկներ են ածում, գլխիս գանգը ուզում է տրաք-վել։ Ինչպէ՞ս տաք է ճակատս. աչքերս մթնում են... այդ ինչ՞ից է...Անքնութիւնից կըլինի, երեկ գիշեր էլ մինչև լոյս չեմ քնել։ Բայց ինչ անեմ, որ քունս չի տանում։ Զարմանալի բան... այսօր չեմ ճաշել, երե-կոյեան էլ թէյ չեմ խմել, բայց քաղց ամենևին չեմ զգում, ախորժակս մեռել է...

Նա կրկին բարձրացաւ տեղից և կրկին սկսեց քայլել։ Այս անգամ նրա երեսին բոլորովին դոյն չէր մնացել, աչքերը վառվել էին, ցամաքած շրթունքնե-րը ջնջողաբար դողդողում էին։ Նա մտածում էր, բայց ինչ էր մտածում—այդ ինքն էլ չգիտէր։ Նրա գլու-խում տիրում էր կատարեալ քաոս։ Սակայն մտքերի այդ խառնաշփոթութեան մէջ որոշվում էին հետե-ւեալ գծերը։

—Հոգւոյ անդորրութիւնը մարդկային կեանքի եր-ջանկութիւնն է։ Երանելի է այն մարդը, որ վայե-լում է այդ երջանկութիւնը։ Ես մինչև այսօր զուրկ եմ եղել նրանից, նա մանուանդ—այժմ։ Իմ անցեալը լիքն է վշաերով, ապագան պատկերանում է իմ առ-ջև սև գոյներով, իսկ ներկան անտանելի է։ Անտա-



նելի է. հեշտ է ասել, թէ կեանքն անտանելի է, բայց զգալ այդ անտանելիութիւնը, օհ... Մուրացկանի, անգամալոյծի, դառն, դժնդակ կեանքի հարուած-ների ներքոյ թշուառացած արարածների ողբալի դրու-թիւնը կարող է հասկանալի լինել ամենի համար։ Բայց թէ որքան ծանր է այս դրութիւնը, որքան վըշ-տալի է—այդ զգալի է միմիայն իրան, միմիայն թշուա-ռին։ Ամենազօրեղ երևակայութիւնը, ամենազգայուն սիրտ ունեցող մարդն անգամ չի կարող զգալ ուրի-շի թշուառութիւնների տանջերորդ մասը։ Ո՞վ կարող է զգալ իմ դրութիւնը, բացի ինձանից։—Ո՛չ ոք։ Ի՞նչ-պէս կարող եմ ես հասկացնել ուրիշներին այն, ինչ-որ ես եմ զգում։—Ոչ մի կերպ, դա անհնարին է։

Քամալեանը կրկին թաղվեց մտածողութեան մէջ։ Անցան մի քանի րոպէներ և կրկին սկսեց խօսել բար-ձր ձայնով։

—Այո, անտանելի է կեանքը, այս աշխարհում ինձ համար տեղ չըկայ։ Անօգուտ եմ եղել մինչև օրս... ա-նօգուտ եմ այժմ... անօգուտ կըլինի և՛ իմ ապագան։ Անօգուտ ինձ համար, ընտանեկան ուրիշների համար։ Եւ ով կարող է ասել, որ ես հասարակութեան աւե-լորդ անգամ չեմ։ Մ՛ի, կեանքի բեմի վրայ ես դեր չու-նիմ։ Իսկ մի մարդ, որ դեր չունի, նա պիտի հեռա-նայ բեմից, որպէս զի չըխանգարի խաղացողներին։ Այդ պարզ է, և ոչ ոք չի կարող հակառակել, Ի՞նչ միտք ունի, ուրեմն, իմ գոյութիւնը։—Ոչինչ։ Զըկայ մի բան, որի հետ կապված լիներ իմ կեանքը։ Ես աւելորդ մար-մին եմ, որ սխալմամբ ընկել եմ այս աշխարհ։ Ես իս-կի մարմին էլ չեմ... ուր է, ես ոչինչ եմ... ոչինչ... ո-չինչ... Թափանցելի օդ... Այդ էլ չեմ... օդը օդաս-

ւէտ է... Բաս ինչ եմ... ոչինչ: Սխալվում են ֆիզիկոսները, ասելով թէ աշխարհում «ոչինչ» ասված բան չկայ: Ի՞նչպէս թէ չկայ, բաս ես ինչ եմ: Սխալվում են. երևի, նրանք ինձ չեն ճանաչում, աբա թող ինձ իրանց գիտնական հետազօտութեան ենթարկեն, այն ժամանակ կըտեսնեն, թէ ինչպէս կոչնչանայ իրանց թէօրիան:

Դրսում սաստիկ ձիւն էր գալիս: Քամլեանը բարձրացաւ տեղից և, պատուհանի վարագոյրը մի կողմ ծալելով, սկսեց նայել դէպի փողոց: Երկար ժամանակ նա անշարժ դրութեան մէջ նայում էր քրանած ապակիների միջով ձիւնալի մթնոլորտին: Յանկարծ նա, կարծես, մի բան մտաբերելով, ալ ձեռը խփեց ճակատին և պատուհանի վարագոյրը շտապով ծածկեց:

—Վճռված է, վճռված է,—արտասանեց նա բարձր ձայնով և կրկին դիմեց սեղանին:

Նա ջարդված սրտով, թուլացած մարմնով ընկաւ աթոռի վրայ և, երկու ձեռներով պինդ սեղմելով գլուխը, սկսեց անթարթ աչքերով նայել յիշատակարանին: Նրա հայեացքն անմիտ էր, նրա շրթունքները ժպտում էին վայրենի կերպով, աչքերը փայլում էին մի տեսակ կատաղի փայլով: Մի քանի րոպէ նա այս դրութեան մէջ մնաց, յետոյ կրկին սկսեց քայլել: Նրա ծնկները թուլացել էին, հարբածի նման չէր կարողանում ուղիղ ման գալ: Այդպէս շարունակվեց մօտ կէս ժամ: Յետոյ նա, շուռ ու մուռ գալով, դարձեալ մօտեցաւ սեղանին և յանկարծակի, խելագարի պէս, յարձակվեց յիշատակարանի վրայ, վերցրեց նրան և սկսեց ձեռներով ճմռսել և ատամներով կրծոտել...

Վառարանը հանգչելու վրայ էր, կրակի երեան



արդէն ծածկված էր մոխրով: Քամլեանը, յիշատակարանը կռծոտելով և վայրենաբար բզտտելով, մօտեցաւ վառարանին, վերցրեց ունելիքը և կրակը խառնեց: Անցան մի քանի վայրկեաններ, յանկարծ կրակը վառվեց, և վառարանի մէջ բարձրացաւ պայծառ բոց:

—Հա հա հա, քսան ու հինգ տարուայ կեանք... ահա՛ ինչ է քո վարձը, ահա ինչի ես արժանի դու—գոռաց նա վայրենի ղուարճութեամբ, նայելով յիշատակարանի բոցավառված թերթերին:

Մի րոպէում կրակը լափեց երեսուն թերթերից բաղկացած ձեռագիրը: Բոցը դադարեց, և կրկին մոխիրը ծածկեց կրակի երեսը:

—Վերջացաւ, վերջացաւ ամենայն ինչ, քսան ու հինգ տարուայ կեանքս մոխիր դարձաւ, մոխիր դարձաւ իմ բոլոր անցեալը... Ազատվեցի, ուֆ, ազատվեցի... դնա կորիր հին կեանք, էլ քեզ հետ ես գործ չունիմ:

—Ամեն ինչ կորաւ, կորաւ ամբողջ կեանքս, անհետացաւ: Զրկայ այն: Իսկ ապագա՞ն. հը՛մ, երեխայ եմ, նորից պիտի մեծանամ, հա հա հա, քսան ու հինգ տարեկան երեխայ, ինչ ասել կուզի, շատ փոքր եմ դեռ: Սպասիր, կրակ, ես քեզ համար դեռ կբակուր շատ ունիմ պատրաստած, սեռնում եմ, խիստ ես քաղցած... սպասիր: Դա ինչ է, հա...

Նա սեղանի վրայից վերցրեց մի մեծ հաստակազմ գիրք:

—Առաջ առաջ այս ցնորամիտին, յետոյ,—ասաց նա ձգելով գիրքը վառարանը: Բարձրացաւ մի թանձր ծուխ, որից յետոյ գիրքը բոցավառվեց, և նրա կազմի վրայ փայլեց ոսկեզօծ տառերով տպված „Философія безсознательнаго“ վերնագիրը: Բոցը չդադարած,

1301/3113

Գ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Государственная Библиотека
7/XI 1922

վառարանի մէջ ընկաւ մի ուրիշ դիրք, որին հետևեց երրորդը, չորրորդը, թուով մինչև տասը։

—Ձիմարներ, ամբողջ ձեր դառարիկ կեանքը նուիրել էք այդ թերթերը սևացնելուն, տեսէք, կրակը ինչ շուտ է լափում ձեր խելքը... Ի՞նչպես է, լաւ է, կըռվեցէք իրարու հետ, բայց տեսէք, ես ձեզ ինչպես հաշտեցրի...

Բոցը կրկին դադարեց, և մոխիրը ծածկեց կրակի երեսը։ Քամալեանը հեռացաւ վառարանից, կանգնեց սեղանի առջև, մոխրակոյտ դրքերի դարդակված տեղին, յետոյ հայեացքը դարձրեց վառարանին և ձեռները բարձրացնելով, մի ուժգին հառուած տուաւ դլխին։

—Ի՛նչ արի ես, ինչ արի, ինչ արի այդ,—գոռաց նա այնպիսի զօրեղ ձայնով, որ հարևան սենեակում քնից զարթնեց նրա տանտիրուհին, պառաւ Քեթեւանը։

—Այժմ ես նոր մարդ եմ, հա հա հա,—կրկնեց Քամալեանը, կատաղաբար ծիծաղելով։ Ետևի մէջ երեւեցաւ Քեթեւանի սարսափած դէմքը։

Քամալեանը, ինքն էլ չըդիտեր թէ ինչու, յարձակվեց պառաւի վրայ և, բռնելով նրա թևից, նետեց քաշեց։

—Ե՛կ այստեղ, ցանցառ պառաւ։

Պառաւը սարսափած, դողդողալով, մէջքից ծըռված, ակամայ հետևեց նրան։

—Քանի՞ տարեկան ես։

—Խելքդ գլուխդ տիղը չէ, երազ ես տեսի։

—Ասիր տեսնեմ, ես թանասուն տարեկան կենդանի, ինչպես ես ապրել այդքան ժամանակ, հըմ, չես



ղղվել կեանքից, հը՛մ, ասիր,—կրկնեց Քամալեանը, բոլոր ոյժով թափահարելով պառաւին։

—Ի՞նչ անիլդ...

—Սուս, սուս, դուրս եկ, գնա, քունս տանում է, գնա դուրս։

Նա պառաւին հրեց սենեակից դուրս և, դուռը փակելով, պառկեց երեսի վրայ անկողնում։

—Ի՛նչ եմ անում, ինչ եմ անում,—կրկնում էր նա անդադար։ Եւ մի ամբողջ ժամ նա մնաց այդպես պառկած։ Վերջապես, քունը յաղթեց նրան։

Առաւօտեան պառաւ Քեթեւանը, վախվխելով դուռը բաց արաւ և մի ոտը սենեակի ներսում, միւսը դրսում, հարցրեց.

—Ո՞ւնցիս։

—Գլուխս ցաւում է, տաքացրել եմ, դէդի, մի հաքիմ կանչել տուր,—պատասխանեց Քամալեանը, վերմակով ծածկելով իւր դունաթափ դէմքը և երեսը շուռ տալով պատին...

1884 թ. Թիֆլիս.

# ՕՐԻՈՐԴ ԼԻԶԱ

ՆՈՒՅՐ ՆՆ...ԻՆ

Մի անգամ Թիֆլիսի կենտրոնում դանվող մի տան պատշգամբի վրայ երկու բարեկամ նստած դարեջուր էին խմում։ Մեկը վառ աչքերով, պարզ ճակատով և դանդուռ մազերով քառասունհինգ տարեկան երիտասարդ էր։ Միւսը մօտ երեսունհինգ տարեկան տղամարդ էր, միջահասակ սև մրքով, քիչ նիհար դէմքով և բաւական բարձր ճակատով։ Երիտասարդի հագուստը աւելի շքեղ էր և աչքի ընկնող։

Օրը վերջանում էր։ Գարնանային արևի վերջին ճառագայթները փայլեցնում էին եկեղեցիների արծաթագոյն դմբեթները։ Գետնում, կանաչազարդ ծառերի վրայ, ճլվլում էին ճնճղուկները։ Իսկ թեթև իրիկնային զեփիւռը սօսափում էր ծառերի տերևները։ Յայտնի չէր որ կողմից, լսվում էր նոյնպէս և՛ դաշնամուրի ձայն։—Դա պարսկական մի քաղցր «մուղամմաթ» էր «հէյրաթիի» հետ խառն։ Արևելեան երաժշտութեան մի անծանօթ արտիստ, այդ երկու եղանակները ազատաղելով և զարդարելով մի հայ երգի եղանակով, դրել էր եւրոպական նօտաների վրայ և անուանը կնքել «բայեաթի»։ Ո՛չինչ նմանութիւն արտաստական վշտահնչիւն բայեաթիի հետ։



—Նայիր,—ասաց միջահասակ տղամարդը, դարեջրի բաժակը իւր շրթունքներին տանելով և ձախ ձեռով խփելով երիտասարդի ուսին։

—Ո՞ւր,—հարցրեց երիտասարդը։

—Երկնքին, տես որքան գեղեցիկ է։

Երիտասարդը նայեց դէպի արևելք։ Երկինքը պարզ էր, բայց ցած հորիզոնից ուռչելով բարձրանում էր մայիսեան բամբակագոյն ամպերի մի ահագին սար։ Սարը բարձրանում էր, հանդարտութեամբ լողալով։ Նրա կոլորակ, թանձր կատրները, խառնվելով և ձուլվելով իրարու հետ, երբեմն հորիզոնում դոյացնում էին տեսակ տեսակ հրաշալի պատկերներ, որ նմանվում էին մերթ գեղեցիկ շինութիւնների, մերթ զանազան վիթխարի կենդանիների։ Արևի վերջին շողքերի տակ այդ պատկերները ներկվում էին բազմատեսակ նուրբ գոյներով, որոնց նմանը հանճարեղ նկարչի վրձինն անդամ չի կարող ստեղծագործել։

Երիտասարդը, հիացած նայում էր երկնային տեսարանին, բայց նրա միտքը, կարծես, զբաղված էր ուրիշ բանով։

—Ես շատ եմ սիրում այդպիսի տեսարաններ,—կրկին խօսեց տղամարդը, բաժակը նորից լեցնելով։—Նրանք ինձ յիշեցնում են մարդկային կեանքի այն յիմար շրջանը, որի խաղալիքն ես դու այժմ։

Երիտասարդը նայեց նրան և, գլուխը յանդիմանօրէն շարժելով, բաժակը մօտեցրեց շրթունքներին։

—Շարժիր գլուխդ, բայց մի հինգ տարի ևս, և յետոյ ինքդ քեզ վրայ կզծիծաղես, Գէորգ։ Նայիր երկնքին։

Գէորգը դարձեալ նայեց երկնքին։ Ամպերի վիթ-

խարի սարը հետզհետե բարձրանում էր, աւելի ու աւելի ուռչելով և մեծանալով։ Սակայն, նոյն րոպէին, երբ տղամարդը ցոյց տուեց, պատահեց մի փոփոխութիւն։ Սարի ստորոտից արագութեամբ բարձրացան ամպի ուրիշ ալիքներ, բայց ոչ սպիտակ, այլ մուգ մոխրագոյն։ Նրանք սահեցին վերև, և մի քանի րոպէում բամբակագոյն սարը ծածկվեց մութ քօղով։ Անհետացան աքանչելի տեսարանները, և հորիզոնը ծածկվեց ահռելի բազոյրով։

—Տեսա՛ր ինչպէս փոխվեց,—դիմեց տղամարդը Գէորգին,—ահա են այն բազմագոյն հրաշալի նկարները։—Ձրկան, սև թռչնիկը պատեց, դուցէ անձրև էլ գայ։

—Սա՞ղդ ինչ է,—հարցրեց Գէորգը ժպտալով։

—Այդպէս է և՛ երիտասարդական փայլուն կեանքը, շատ շատ մինչև երեսուն տարի։ Հասաւ երեսունը, մի ճեղք բացվեց, և նրա միջից դուրս եկած մութ ամպերը պատեցին ամբողջ քօղով մարդու կեանքը։ Բայց դառնանք մեր վէճին։ Ինչպէս ասացի, Գէորգ, սէրը բնական պահանջ է, առանց նրան մարդ չէ կարող ապրել, ինչպէս ճուկը առանց ջրի։ Սէրը, այսպէս ասած, մարդկային գոյութեան խարիսխն է։ Բայց նա ցանցառ զգացմունք է դառնում, երբ կնոջն է վերաբերվում։ Կնոջ սիրել ներելի է, ինչպէս և ներելի է սիրել Ղազանի գարնջուր, Թիֆլիսի խորոված, թառ թառ, բիֆշտեկս։ Հասկացար։ Բայց նրա համար գիշերները նստել և սրտի խորքից «ախ»-եր քերելով դուրս թափել օդի մէջ—դա խելագարութիւն է։ Կինը յիմար արարած է, Գէորգ, և ստեղծված է կեանքում յիմար դեր կատարելու, թէկուզ նա խորին փիլիսոփայի գլամիդ հագնի։ Ապա, խորը քննիր, տես, ճիշտ եմ



ասում թէ չէ։ Իսկ տղամարդը, ծծծ, տղամարդը ուրիշ բան է, օրինակ, ես ու դու։ Կեցցէ տղամարդը։

Արզաս Պետրովիչը—այսպէս էր խօսողի անունը—այսպէս ասելով, դատարկեց գարեջրի բաժակը։ Ցետոյ նա մի կտոր հաց ու խաւիար դրեց բերանը և շարունակեց.

—Տղամարդի նշանաբանն է՝ կնոջը նայել իբրև մի առօրեայ կենսական պիտոյքի վրայ։ Այո՛, Գէորգ, նայել բարձրից և հետը արժան չհամարել երկար խօսելու։ Համաձայն ես իմ մտքին։

—Ամենևին,—պատասխանեց Գէորգը,—դա Պրուդոնի միակողմանի սխալ գաղափարն է, որ, երևի, քեզ վրայ շատ է ազդել։

Արզաս Պետրովիչը ներողամտաբար ժպտաց։

—Պրուդոն, հըմ, Պրուդոն, ես նրան իսկի չեմ էլ կարդացել, եթէ ուզում ես իմանալ։ Ես ասում եմ այն, ինչ-որ կարողացել եմ նկատել մինչև այսօր։ Բայց թողնենք փիլիսոփայութիւնը։ Դու այժմ սիրահարված ես և կնոջ կօշիկներին երկրպագութիւն ես տալիս։ Ես էլ մի ժամանակ սիրահարված եմ եղել. թոյլ տուր ինձ պատմել քեզ իմ ռոմանը, էհ, բան է, դուցէ կարողանաս օգուտ քաղել իմ պատմութիւնից։ Համաձայն ես։

—Համաձայն եմ։

—Միայն թէ դու ինձ չընդհատես։

—Հարկաւոր եղած ժամանակ, չեմ կարող չընդհատել։

—Գեղեցիկ։ Բայց նախ թոյլ տուր, որ կոկորդս թրջեմ, որպէս զի լաւ խօսեմ։

Արզաս Պետրովիչը մի բաժակ ևս դատարկեց և, թաշկինակով բեղերը սրբելով, ասաց.

—Լսիր։

Գէորգը արմունկները դրեց սեղանի ծայրին, գլուխը թեքեց ձեռների ափերին և աչքերը յառեց Արշաս Պետրովիչի երեսին։

Արշաս Պետրովիչը այսպէս սկսեց իւր պատմութիւնը։

---

Հազար ութ հարիւր եօթանասուն ու վեցն թուականին, քսան ու վեց տարեկան հասակումս, ուսումս աւարտեցի և վերադարձայ հայրենիք։ Ի հարկէ, իբրև նորաւարտ, թարմ երիտասարդ, ես դէնումս դարսած բերեցի դեղեցիկ գաղափարների մի շարք, որ մտադիր էի իրագործել հասարակութեան օգտին։ Այդ գաղափարների շարքում ես կին առած էակի մասին ևս ունէի որոշ հայեացքներ, որոնք սկզբունքով հակառակ էին ներկայ հայեացքներին։ Խօսք չկայ, Գէորգ, դու տես, թէ որքան առաջադէմ և ազատամիտ պիտի լինէին այդ գաղափարները։ Ճիշտ նոյնը, ինչ-որ դու ունես այժմ, այսինքն՝ ազատ սէր, հաւասար իրաւունքներ, իդէալ, ֆլան-ֆստան։ Մի խօսքով, պատանեկական վարդագոյն երևակայութիւն, որ այժմ մի փոքր մըթնեցնում է քո ուղեղը, իմ սիրելի Գէորգ։

Գէորգի շրթունքներով սահեց մի դժգոհ ժպիտ։

—Դէ, լաւ, մի վիրաւորվիլ, միւս անգամ չեմ կրկնել,—շտապեց հանգստացնել նրան Արշաս Պետրովիչը և շարունակեց։—Այսպէս, Գէորգ ջան, ես եկայ հայրենիքս յայտնի գաղափարներով։—Ներիր, որ այդպէս մանրամասնօրէն եմ սկսում պատմութիւնս. մի քանի հանգամանքների հետ հարկաւոր է քեզ ծանօթացնել, որպէս զի չկարծես, թէ ես բոլորովին զուրկ եմ եղել դաղափարական կեանքից։ Ինչպէս դիտես, իմ մասնագիտութիւնը բժշկականութիւնն է։ Բաղդի բերմունքով, ինձ շուտով յաջողվեց պաշտօն գտնել հէնց այն քաղաքում, ուր այս րոպէին քո խոնարհ ծառան պատիւ ունի նկարագրել իւր կեանքից մի կտոր։ Այդ առաջին յաջողութիւնն ինձ խրախուսեց, բառի բուն նշանակութեամբ ես մտայ կեանքի մէջ։ Ես սկսեցի քարոզել իմ նոր գաղափարները։ Շատերն արհամարհեցին, շատերն էլ համակրեցին և մի հայ ընկերութեան մէջ, մի թեթև ճառից յետոյ, անմիջապէս ընդունեցին ինձ գործող անդամ (չնա մեծ օգուտներ տուեցի այդ ընկերութեան)։ Բայց ինձ աւելի զբաղեցնում էին կանայք, ինչ մեղքս թագցնեմ։ Ես ձգտում էի ծանօթանալ այդ քնքոյշ կոչված սեռի հետ։ Ի հարկէ, իբրև հայ և աղգասէր հայ (ես մի փոքր լայնամիտներից էի), աւելի մօտ էի հայ ընտանիքներին։ Ես ծանօթացայ շատերի հետ։ Դու գիտես, որ բժիշկն այդ կողմից աւելի դիւրութիւններ ունի, քան թէ մի ուրիշը։ Ինձ վրայ խորթ աչքով չէին նայում ընտանիքներում, մինչև անգամ տեղ տեղ ընդունելի էին հաճութեամբ։ Պիտի աւելացնեմ, որ ես այդ ժամանակ դէմքով էլ վատ չէի։ Հիմայ քիչ խունացել եմ, դե ութ տարի հեշտ է միայն բերանով ասել։ Մի տիկին մինչև անգամ՝ մի տեղ ասել էր, որ իբրև թէ իմ շրթունքների վրայ միշտ խաղում է չքնիտեմ ինչ մի հրապուրիչ ժպիտ, որ կանանց համար վտանգաւոր է։ Բայց դա ինձ այնքան չէր հետաքրքրում։ Ես կնոջ վրայ նայում էի ուրիշ աչքով և երբեք թոյլ չէի տալիս ինձ տարուբերել նրան դիւր գալու միայն արտաքուստ։ Գիտես ինչու, հըմ, որովհետև գաղա-



նել, որպէս զի չկարծես, թէ ես բոլորովին զուրկ եմ եղել դաղափարական կեանքից։ Ինչպէս դիտես, իմ մասնագիտութիւնը բժշկականութիւնն է։ Բաղդի բերմունքով, ինձ շուտով յաջողվեց պաշտօն գտնել հէնց այն քաղաքում, ուր այս րոպէին քո խոնարհ ծառան պատիւ ունի նկարագրել իւր կեանքից մի կտոր։ Այդ առաջին յաջողութիւնն ինձ խրախուսեց, բառի բուն նշանակութեամբ ես մտայ կեանքի մէջ։ Ես սկսեցի քարոզել իմ նոր գաղափարները։ Շատերն արհամարհեցին, շատերն էլ համակրեցին և մի հայ ընկերութեան մէջ, մի թեթև ճառից յետոյ, անմիջապէս ընդունեցին ինձ գործող անդամ (չնա մեծ օգուտներ տուեցի այդ ընկերութեան)։ Բայց ինձ աւելի զբաղեցնում էին կանայք, ինչ մեղքս թագցնեմ։ Ես ձգտում էի ծանօթանալ այդ քնքոյշ կոչված սեռի հետ։ Ի հարկէ, իբրև հայ և աղգասէր հայ (ես մի փոքր լայնամիտներից էի), աւելի մօտ էի հայ ընտանիքներին։ Ես ծանօթացայ շատերի հետ։ Դու գիտես, որ բժիշկն այդ կողմից աւելի դիւրութիւններ ունի, քան թէ մի ուրիշը։ Ինձ վրայ խորթ աչքով չէին նայում ընտանիքներում, մինչև անգամ տեղ տեղ ընդունելի էին հաճութեամբ։ Պիտի աւելացնեմ, որ ես այդ ժամանակ դէմքով էլ վատ չէի։ Հիմայ քիչ խունացել եմ, դե ութ տարի հեշտ է միայն բերանով ասել։ Մի տիկին մինչև անգամ՝ մի տեղ ասել էր, որ իբրև թէ իմ շրթունքների վրայ միշտ խաղում է չքնիտեմ ինչ մի հրապուրիչ ժպիտ, որ կանանց համար վտանգաւոր է։ Բայց դա ինձ այնքան չէր հետաքրքրում։ Ես կնոջ վրայ նայում էի ուրիշ աչքով և երբեք թոյլ չէի տալիս ինձ տարուբերել նրան դիւր գալու միայն արտաքուստ։ Գիտես ինչու, հըմ, որովհետև գաղա-

փարասեր էի։ Հայ դիմի յիմար երիտասարդութիւնը։ Ինչ կենացը, Գէորգ։

—Ինչպէս ասացի,—շարունակեց Արզաս Պետրովիչը, գարնանը խմելուց յետոյ, բաժակը իրանից հեռու դնելով,—ես դեռ ուսումնարանական նստարանի վրայ ունէի կազմած որոշ գաղափար կնոջ մասին, ի միջի այլոց, և հայ կնոջ մասին։ Հայ կնոջն ես երևակայում էի իբրև գեղեցիկ, թարմ, առողջ, բայց անմշակ նիւթ, որից կարելի է պատրաստել մի հրաշալի բան։ Բայց կարող ես դժալ, թէ որքան ես խաբված համարեցի ինձ, երբ հակառակը դուս, առաջին անգամ՝ գոնէ ֆիզիքական կողմից։ Ո՛ր տուն, ո՛ր ընտանիք մտնում էի, ինձ հանդիպում էին կարճահասակ, պչկած, թառամած, քիթը երկայն, մէջքը ծուռ, կուրծքը ներս ընկած էակներ։ Դրանք հայ օրիորդներն էին, որոնց դէմքերից, կարծես, մի չար ձեռք ջնջել էր բոլոր չարժուժը, աշխուժութիւնը, այնինչ այն, ինչ գրաւում է երիտասարդին։ Այդ երևոյթն ինձ խիստ ցաւեցրեց։—Այսպէս, Գէորգ, ես տեսայ, որ հայ կինը առողջ չէ։ Դա թեթև բան չիմանաս, Գէորգ, նամանաւանդ մի բըժշկի համար, որ դաստում էր. «առողջ հոգին առողջ մարմնի մէջ»։ Բայց ես չըվհատվեցի և դարձեալ աշխատում էի գտնել այդ սպրդնած, ժահրագէմ էակների մէջ կենդանութիւն։ Դա ինձ համար մի քիչ դըժուար եղաւ։ Պիտի ասել, որ այդ կողմից ինձ չափազանց վրդովում էին հայ մայրերը։ Ախ, այդ տեսիլ թաւակրաքները, այդ թթված գէկել-փէփէլները, ինչ տուն որ մտնում էի, ինձ կատարելապէս հալածում էին իրանց միատեսակ «վին արիս» և «կուճ տակօյ»-ներով։ Բայց չըգիտեմ ինչու, երբ այդ «վին արիս»-ների և



«կուճ տակօյ»-ների փոխարէն լսում էի «ով է», սակաւ էի վրդովվում։ Գուցէ դա իմ ազգասիրութիւնից էր։ Բայց, այսու ամենայնիւ, ինձ դարձեալ զայրացնում էին այդ հարցերը։ Ես տեսնում էի, որ ամէն տեղ ինձ վրայ նայում են իբրև մի փեսացուի վրայ։ Այս պատճառով անկարելի էր ինձ՝ հայ օրիորդին տեսնել իբր բնական և սացածին լաւ ու վատ առանձնայատկութիւններով։ Ինձ թուում էր, թէ հայ օրիորդներն այն չեն, ինչ աշխատում են ձևանալ։

—Մի օր, սիրելի Գէորգ, իմ բարկութիւնը հասաւ իւր դադաթնակէտին։ Առաւօտ էր։ Ես նստած թէյ էի խմում և մի նոր դուրս եկած հայերէն գիրք թերթում։ Յանկարծ ծառաս ներս մտաւ և քաղաքային փոստայով ստացված մի նամակ տուեց ինձ։ Ես կարդացի։ Նամակի մէջ մէկն ինձ խոստովանում էր իւր «սէրը»։ Դու, երևի, դիտես, թէ ինչպէս են գրվում այդ յիմար նամակները, հարկ չըկայ, ուրեմն, նրա մասին խօսելու։ Օրիորդի հետ ես նոր էի ծանօթացել, նա վատ չէր, բայց սիրել—էհ, բան չունիս։ Նամակը սկզբում ուզեցի այրել, բայց յետոյ, մտածելով, գրեցի մի կողմ։ Ես թէև խիստ բարկացայ, բայց խոստովանվում եմ, Գէորգ, որ մի և նոյն ժամանակ ինչ որ հաճոյք էլ զգացի։ Այսու ամենայնիւ, ես բարկացայ և, որպէս զի մի քիչ թուլացնեմ բարկութիւնս, մի ծխախոտ վառեցի, որ ծխեմ։ Ահա, այսպէս։

Արզաս Պետրովիչը ծոցից հանեց տուփը և նրա միջից դուրս բերեց մի ծխախոտ։ Նա ծխախոտի ծայրը նախ մի քանի անգամ խփեց սեղանին և յետոյ, վառելով, նայեց ժամացոյցին։

—Օհօ, դեռ վաղ է, ժամանակ շատ ունինք, բայց

պատմութիւնս դեռ չեմ սկսել։ Նայիր, Գէորգ, երկընքին, ամպերը կուտում են, եղանակը ցրտանում է։ Գնանք ներս, անձրեւ կըգայ։

Արդաս Պետրովիչը մտաւ ներս։ Գէորգը հրամայեց ծառային գարեջրի շիշը ներս բերել։

Ծառան շիշի հետ կոլորակ սեղանի վրայ դրեց և վառած կանթեղը։

Երկու բարեկամները տեղաւորվեցին սեղանի շուրջը, միմեանց հանդէպ, փափուկ բազկաթոռների վրայ։ Մի քանի վայրկեան նրանք լուռ մնացին։ Ծխախոտի ծուխը, թանձր քուլաներով դուրս գալով նրանց բերանից, բարձրանում էր դէպի սենեակի առաստաղը։ Վերջապէս, Արդաս Պետրովիչը ծխախոտը հանեց բերանից, մի քիչ գարեջուր խմեց և շարունակեց.

—Այսպէս, Գէորգ, ես բարկացայ և դադարեցի այցելել օրիորդին։ Ի՛նչ պատահեց սիրահարված օրիորդին—ես չգիտեմ, բայց համոզված եմ, որ նա ինքն իրան Քուռ գետը չի ձգել իմ պատճառով։ Անցել էր ուղիղ մի տարի։ Մի գեղեցիկ օր, աշքիս լոյս, իմ աղաս դու ես, բանաստեղծացած Գէորգ Մինաեվիչ Շանաբանդեան, ես քո համեստ ծառայ Արդաս Պետրովիչ Մախաուդեանս պատիւ ունեցայ կլուբում ծանօթանալ մի հին պաշտօնաթող հայ չինովնիկի հետ։ Դա մօտ վաթսուն տարեկան, ալեխառն մազերով, մի առողջ թիֆլիսեցի էր, անունը Մարտին Բուդաղանիչ Բագամով։ Լսում ես, «ով» և ոչ թէ «եան»։ Հակառակ իմ սպասածին, Բագամովը ոչ թուղթ էր խաղում և ոչ Կախեթի գինի խմում, ինչպէս առհասարակ անում են Թիֆլիսեցի ծերունիները։ Նա միայն սիրում էր լապիրներ կարդալ և երկար վիճաբա-



նել Բիսմարկի քաղաքականութեան մասին, որին նա պաշտպանում էր այնպէս, ինչպէս գուցէ կըպաշտպաներ միայն իւր հարազատ եղբօրը, որից զուրկ էր ինքը։ Բագամովը խօսում էր ռսերէն և, ինչպէս Թիֆլիսեցի, բաղաձայն տառերը արտասանում էր զարմանալի կոշտ։ Ինչ և իցէ, մենք ծանօթացանք և, մի քանի անգամ խօսելուց յետոյ, իրարու դուր եկանք։ Նա ինձ հաճելի եղաւ իւր պարզ, ինքնուրոյն հայեացքներով և համակրելի ծերուկական դէմքով, իսկ ես նրան —իրրև քիչ թէ շատ լուրջ երիտասարդ։ Մի անգամ իրարուց բաժանվելիս, ծերունին, հասցէն տալով, յայտնեց, թէ շատ ուրախ կըլինի ինձ հիւր ընդունել իւր տանը, թէկուզ հէնց հետեւեալ օրը։ Հետեւեալ օրը, իհարկէ, չգնացի, գնացի մի շաբաթից յետոյ, առաւօտեան տասներկու ժամին։ Ես ասացի, որ պատիւ ունեցայ ծանօթանալ Բագամովի հետ, բայց, իսկապէս, պիտի ասեմ, տարաբաղդութիւն ունեցայ։ Դա, Գէորգ, մի նշանաւոր ծանօթութիւն էր, որի հետեւանքը, ինչպէս իսկոյն կըպատմեմ, եղաւ կեանքիս մէջ մի արմատական փոփոխութիւն։

Ծերունին ինձ ընդունեց մի ուրախ և անկեղծ ժպիտ երեսին։ Նրա բնակարանը բաւական ընդարձակ էր և թէև ոչ շքեղ, բայց ճաշակով կահաւորված։ Նա ինձ հրաւիրեց իւր ընդունարանը, և մենք այստեղ տեղաւորվեցինք թաւշեայ բազկաթոռների վրայ։ Քառորդ ժամու չափ դէսից-դէնից խօսելուց յետոյ յանկարծ ծերունին ցուցամատը դրեց սեղանի վրայ գտնվող զանգակի գլխին։ Զանգակը սև թիթեռնիկի պես հնչեց մի քանի վայրկեան։ Դռները բացվեցին, և ես զարմացայ, երբ, ծառայի փոխարէն, ներս մտաւ

մի օրիորդ թեթեւ տնային շղեստ հագուստով։ Օրիորդը ձախ ձեռքում պահած էր մի գիրք, որի մէջ նա մատրել էր իւր մինչեւ մատը։

«—Դու ես, Լիզա, ծառան ուր է,—հարցրեց ծերունին իւր մեղմ և հանգիստ ձայնով։

Ըստ երեւոյթին, օրիորդը չէր կարծում, թէ անծանօթ հիւր կայ նստած։ Ինձ տեսնելով, նա մի քիչ շփոթվեց և կամենում էր հէնց չէմքից յետ դառնալ, բայց Մարտին Բուզդանիչի հարցը նրան պահեց։

«—Ծառան խոհանոցումն է, ինչ էք կամենում,—պատասխանեց և հարցրեց օրիորդը, մի քանի վայրկեան երեսը դէպի մեզ շուռ տալով։

Այդ մի քանի վայրկեանները բաւական էին, որ ես ծանօթանայի Լիզայի կերպարանքի հետ։ Դա, սիրելի Գէորգ, գեղեցիկ չէր, բայց մի աքանչելի արարած էր, և գիտես ինչով—իւր խոշոր, խելացի աչքերով, որոնց մէջ վայելում էր այն կանացի կախարդական հուրը, որ ընդունակ է միանգամից թափանցել տղամարդի սիրտը։ Նա աքանչելի էր մի ուրիշ բանով ևս, որ աւելի նշանաւոր էր ինձ համար այդ ժամանակ։ Դա նրա բարձր, նուրբ և, ըստ երեւոյթին, առոյգ կազմուածքն էր, որ այդքան հազուագիւտ է մեր կանանց դասում։ Բացի դրանից, ես Լիզայի դէմքի վրայ նկատեցի մի տեսակ մեղմ տուրեր, որ, հովանաւորելով այդ դէմքը, գրաւիչ կենդանութիւն էր տալիս նրան։ Զըգիտեմ ինչու, նոյն վայրկեանին ես իմացայ Պուշկինի Տատիանային։ Բայց, դու, իմ սիրելը, չկարծես, որ ես ինձ Օնեգին համարեցի։ Ամենևին։

«—Հրամայիր, սուրճ բերեն շուտով,—պատաս-



խանեց Բազամովը և յետոյ, երբ Լիզան երեսը շուռ էր տուել հեռանալու, աւելացրեց.

«—Դու էլ Ժենիայի հետ այստեղ եկ։

Լիզան դուրս եկաւ։ Բազամովն ինձ պատմեց, թէ Լիզան և Ժենիան իւր աղջկերքն են և բացի նրանցից չունի ուրիշ զաւակներ, իսկ կինը տասը տարի է, որ մեռել է։

Մի քանի րոպէից յետոյ ծառան ներս բերեց արծաթի մատուցարանի վրայ չորս բաժակ սուրճ։ Անմիջապէս ներս մտան Լիզան և Ժենիան։ Բազամովն անունս յիշեց, և ես վեր թռայ ու, մօտենալով, սեղմեցի նախ Լիզայի, յետոյ Ժենիայի ձեռքը։ Ժենիան, կամ ճիշտն ասեմ, Եւգենիան, կըլիներ մօտ քսաներկու տարեկան, իսկ Լիզան—աւելի քան քսանուհինգ։ Բացի միաչափ հասակից, ուրիշ ոչինչ նմանութիւն չէր կար երկու քոյրերի մէջ։ Եւգենիայի դէմքը կլորակ էր, քիչ սև և մի փոքր դեղնախառն, ճակատը նեղ, աչքերը սև, փոքրիկ ու խորամանկ։ Հէնց առաջին հայեացքից նա ինձ դուր չեկաւ, և ես նրա մեծին դէմքի վրայ նկատեցի չնչին ինքնասիրութիւն և գոռոզութիւն։ Փոքր առ փոքր, սովորական հարցերից յետոյ, մեր խօսակցութիւնը տաքացաւ։ Մարտին Բուզդանիչը կրկին մէջտեղ բերեց Բիամարկին և նրա՝ սոցիալականութեան դէմ խօսած՝ վերջին ճառը։ Ես լսում էի նրա դովասանութիւնը և չէի վիճաբանում, թէև նա չատ էր յափշտակվում։ Եւգենիան խօսում էր և տաքացած վիճաբանում։ Նա երբեմն, տեղի-անտեղի, զանազան լուրջ հեղինակների անուններ էր յիշում, իբրև թէ իւր հօր տասը հերքելու համար։ Բայց ես, չգիտեմ ինչու, զգում էի, որ նա այդ հեղինակներից ոչ մէկի հետ

լաւ ծանօթ չէ և նրանց անունը տալիս է լոկ էֆֆէկ-
տի համար։ Լիզան լուռ էր և լսում էր։ Հօր հայեացք-
ներից ազատ վայրկեաններ որսալով, ես մերթ ընդ
մերթ, նայում էի այդ օրիորդի երեսին և նկատում
էի, որ նա նոյնպէս աչքի տակով երբեմն ինձ է նա-
յում։ Այդ ժամանակ ես զգում էի մի տեսակ հոգեկան
հաճոյք, որի հետ մինչև այն ժամանակ ծանօթ չէի։
Է՛հ, Գէորգ։

Արշաս Պետրովիչը դարեկլի վիշը վերցրեց, պա-
հեց կանթելի դէմ և շարժելով, ասաց.

—Փիչ, ոմ ծակեց այս վիշի տակը։ Հրամայիր,
Գէորգ, որ այդպիսի անկարգութիւնները չըլինեն իմ
ներկայութեամբ։

Գէորգը հրամայեց, և ծառան ներս բերեց մի
նոր վիշը։

—Իմ կենացը, Գէորգ, կոնծիր,—ասաց Արշաս
Պետրովիչը, բաժակը միանգամից պարպելով։ Չի՛ ձանձ-
րացնում քեզ իմ պատմութիւնը։

—Խոստովանում եմ, մեծ ախորժակով եմ լը-
սում. Լիզան ինձ հետաքրքրում էր,—պատասխանեց
Գէորգը։

—Հասկանում եմ, հասկանում եմ։ Հմ, արդէն
անցել էր երկու ժամ։ Ես ողջունեցի Բագամովներին
և դուրս եկայ։ Վերջին անգամ նայեցի Լիզայի երե-
սին և նրա խոշոր, պարզադոյն աչքերը ինձ վրայ յա-
ռած տեսայ։ Նոյն օրն ես գործ շատ ունէի, վեր-
ջացրի և ճաշից յետոյ, իրիկնադէմին քիչ հանգստա-
ցայ ու դուրս եկայ զբօսնելու։ Ամառ էր, վողոջի օ-
դը թարմացրեց ինձ, և ես, սովորութեանս համեմատ,
սկսեցի այն օրուայ տպաւորութիւնները քննել։ Երևա-



կայիր, Գէորգ, որքան դլխես զօր տուեցի Բագամո-
վի ընտանիքի մասին յիշել մի առ մի այն, ինչ-որ նը-
կատել էի այդ օրը—ոչինչ չըկարողացայ մտաբերել,
բացի մի բանից։ Դա Լիզայի խոհուն աչքերն էին,
որ բարձր ճակատի և կակուղ ունքերի տակից նայում
էին ինձ վրայ։ Ինչո՞ւ, մի՛թէ ուրիշ ոչինչ հետաքրքրելի
բան չըկար այդ ընտանիքում, որ ինձ վրայ ազդէր,
բացի այդ երկու աչքերից։ Կար, թէ չըկար, բայց ես
ուրիշ ոչինչ չըկարողացայ յիշել։ Մի օր, սովորութեանս
հակառակ, փոխանակ չուտով տուն վերադառնալու,
գնացի այգի։ Լուսինը նոր նոր բարձրանում էր, խը-
տատերև ծառերի միջով տարածելով իւր շողերը այ-
գու մութ ճեմելիքների վրայ։ Ցեսնում ես, ինչպէս
բանաստեղծօրէն գիտեմ բարբառել, Գէորգ, էլ չասես,
թէ միայն քեզ է տուած։ Նստեցի կանանչ նստարան-
ներից մէկի վրայ և սկսեցի նայել դէս ու դէն—ծա-
ռերին, երկնքին, լուսնին, աւելից շատ լուսնին։ Կեան-
քումս դուցէ հազարաւոր այդպիսի գեղեցիկ երեկո-
ներ էի տեսել, բայց երբեք այնքան չէի հետաքրքրվել
բնութեան գեղեցկութիւններով, որքան այդ երեկոյ
առաջին անգամ։ Ես սիրում էի հրաշալի, մեղմ, լու-
սին գիշերները, բայց նրանց ազդեցութեան ենթարկ-
ված չըկայի այնչափ, որչափ այժմ։ Մի տեսակ ծանր,
սակայն խիստ ախորժելի մելամաղձութիւն էր տիրել
ինձ։ Ինչո՞ւ, մի՛թէ պատճառը Լիզայի աչքերն էին, որ
ծառերի ճիւղերի արանքով նայում էին ինձ վրայ։
«Մատանան տանի ձեզ», ասացի ինքս ինձ և, կար-
ծես, քնից զարթնելով, բարձրացայ նստարանից։ Այդ
ժամանակ ես սովորութիւն չունէի երեկոները ընթրե-
լու, վերադարձայ տուն, որ պարապեմ։ Չըկարողա-

ցայ պարապել, Գէորգ, ինչ ուզում ես ասիր, չըկա-
րողացայ, թէև երկու ժամի չափ աշխատեցի։ Պառկե-
ցի քնելու, քունս չըտարաւ, և ես տրորվում էի ան-
կողնում փորացաւ ընկածի պէս։ Տեսնելով, որ գիշերն
անցնում է, սկսեցի թուել մաքում մէկից մինչև հա-
զար և յետ։ Այսպիսով մոռացութեան մէջ ընկայ, և
քունը, վերջապէս, ինձ յաղթեց։

Առաւօտը զարթնեցի զուարթ և առ..... ո...փի...
քըհը, քըհը, փիհ։

Արզաս Պետրովիչը չըկարողացաւ չարունակել, դա-
դեցնելու թռաւ կատկին և սոխեց նրան մի քանի
վայրկեան հաղել և կըմկըմալ։ Վերջապէս, նա քիչ հան-
դարտեց և, թաշկինակը հանելով, սրբեց աչքերի ջուրը։

—Ձանճ մտաւ բողազս ինչ է,—չարունակեց նա,
թաշկինակը դնելով դրպանը։—Այո, Գէորգ, առաւօտը
զարթնեցի զուարթ և առողջ, ամեն ինչ մոռացած։ Այն
օրն ես անցկացրի հոգուոյ ուրախ տրամադրութեան
մէջ։ Մի քանի հիւանդներ ունէի, այցելեցի նրանց և
սովորականից քանի մի րոպէներ աւելի մնացի ամեն
մէկի մօտ։ Մի խօսքով, ես մի առանձին կենդանու-
թիւն էի ստացել այդ օրը։ Բայց մելամաղձութիւնը
տիրեց ինձ։ Լիզայի աչքերը դարձեալ եկան ներկայա-
ցան իմ առջև։ Մի կերպ անցկացրի այդ գիշերը։ Հե-
տևեալ օրը կիրակի էր։ Ես մոռացայ քեզ ասելու, որ
այդ օրուայ համար Մարաին Բուդդանիչն ինձ հրաւի-
րել էր ճաշի։ Առաւօտը թէյ խմելիս, ես մտածում
էի, «գնա՞լ, թէ չըգնալ»։ Վճռեցի չըգնալ։ «Ի՛նչ մի հե-
տաքրքրրւթիւն բան է ներկայացնում մի հին չինովնիկի
ընտանիքը», ասացի և վճռեցի կամ նամակ գրել կամ
ծառային ուղարկել՝ Բադամովից ներողութիւն խնդրե-



լու։ Բայց ինչ ես կարծում, Գէորգ, ես ոչ մէկն արեցի,
ոչ էլ միւսը, այլ... գնացի սափրավիրի մօտ, մազերս ուղ-
ղել տուեցի, եկայ տուն, զուգվեցի և հրաւիրված ժա-
մանակից էլ կէս ժամով առաջ գնացի Բադամովի տուն։

Գէորգը ժպտաց։

—Ի՞նչ է, երևի, մի փոքր նման է քո ռոմանին,—
նկատեց Արզաս Պետրովիչը,—ծիծաղիր, ծիծաղիր, բայց
տես, թէ վերջն ինչ եղաւ։

—Էհ, ինչ երկարացնեմ, Գէորգ, մենք նստեցինք
ճաշելու,—չարունակեց Արզաս Պետրովիչը, մի ծխա-
խոտ վառելով։—Զըդիտեմ ինչու, այս անգամ Լիզան
աւելի ուրախ էր և շատ էր խօսում, քան առաջին օրը։
Մենք խօսում էինք դէսից-դէնից, շատ հասարակ բա-
ների մասին, բայց Լիզան այնպէս տաքացած վիճա-
բանում էր, որ ես փոքր ինչ զարմացայ։ Կրասեր քոյ-
րը մի տեսակ կծու եղանակով նկատեց.

«—Օրը մինչև երեկոյ, աչքունքդ թթխաւորած,
դրքեր ես կարդում, ոչ խօսում ես, ոչ էլ ծիծաղում,
հիմայ ինչ եղաւ, որ սոխակ դառար։

Լիզան պատասխանելու փոխարէն, փոքր ինչ կար-
մրեց։

Ես հարցրի, ինչ գրքեր է կարդում նա։

«—Ինչ որ ասէք,—պատասխանեց Մարաին Բուդ-
դանիչն իր աղջկայ փոխարէն։

«—Պապա, մի՞թէ դուք կարծում էք, որ բոլոր
ձեր բերած գրքերը կարդում է Լիզան,—կրկին մէջ
մտաւ Եւգենիան, հեգնօրէն ժպտալով։—Ռոմաններից
մասին խօսք չունիմ, Լիզան նրանց կլանում է, միւս
գրքերը միայն թերթում է, որ ասի, թէ հա, ինքն էլ
այս ինչ լուրջ գրքերի հետ ծանօթ է։

Մարդս, շատ ժամանակ, Դէորդ, իւր սեպհական պակասութիւններն անդիտակցաբար ուրիշների մէջ է դանում։ Վերջերում ես իմացայ, թէ Եւգենիան սուտ է ասում, թէ Լիզան, բացի ռոմաններից, ուրիշ լուրջ հեղինակութիւններ ևս կարդացել է։ Իւր քրոջ նկատողութեան՝ նա ոչինչ չըպատասխանեց։ Ճաշից յետոյ մենք անցանք դահլիճ՝ քիչ զուարճանալու։ Մարտին Բուղդանիչն առաջարկեց Եւգենիային մի բան նուագել։ Օրիորդը հրաժարվեց, պատճառ բերելով, թէ դլուխը ցաւում է (կանանց դվսացաւին, Դէորդ, շատ էլ հաւատ չընծայես)։ Հայրն առաջարկեց մեծ աղջկան, և Լիզան, առանց հակառակելու, նստեց դաշնամուրի մօտ։ Ես այդ ժամանակ, և հենց հիմայ էլ, երաժշտութիւն չըգիտէի, բայց լսել—շատ էի սիրում։ Երբ Լիզան, իւր երկայն և նուրբ մատերով մի քանի անգամ զարնելով դաշնամուրի կլաւիշներին, անցաւ առաջին ակկօրդը—դահլիճի մէջ տարածվեցին մեղմ և քաղցր հնչիւններ։ Դա Շօպէնի այն մելամաղձոտ հիւսուածներից մէկն էր, որոնք շարժում են մարդկային սրտի հիւանդ թելերը։ Դահլիճի լուսամուտները բաց էին։ Ամարային մանիշակագոյն երկնքի երեսում այս ու այն կողմ սահում էին թեթևաշարժ ամպերը։ Ես, դաշնամուրի քաղցր ձայնով յափշտակված, նայում էի երկնքին։ Ինձ թւում էր, թէ այդ հնչիւնների արձակում են հեռու բարձրութիւնում լողացող սպիտակ ամպերը, և ես հոգով ձգտում էի դէպի վեր, բայց չէի կարողանում հասնել։ Զըգիտեմ որքան ժամանակ մնացի այդ կախարդված դրութեան մէջ, մի այն, երբ աչքերս դարձրի դէպի դահլիճ—Լիզան արդէն չկար։ Մարտին Բուղդանիչը ճերմակ բեղերի տակից դուրս էր թողնում ծխախոտի կապոյտ ծուխը։ Եւգենիան, նրա մօտ նստած, նայում էր երեսիս։

«—Ո՞ւր գնաց Ելիզաւետա Մարտինովնան,—հարցրի ես, մի փոքր չփոթվելով Եւգենիայի սուր հայեացքից։

«—Դուրս եկաւ,—պատասխանեց Մարտին Բուղդանիչն, երեսիս չընայելով։

Եւգենիան գնաց դուրս և, մի քանի վայրկեանից յետոյ վերադառնալով, յայտնեց, թէ Լիզայի գլուխը ցաւում է։ Այս ասելով, Եւգենիան իւր սուր և խորամանկ հայեացքը ձգեց ինձ վրայ, և ես նրա դէմքի վրայ նկատեցի մի կծու յանդիմանութիւն։ Ինչո՞ւ, ես ինչ էի արել։ Բայց յետոյ իմացայ, որ շատ բան եմ արել։ Արդէն երեկոյ էր, երբ ես դուրս եկայ։ Լիզան չըդուրս եկաւ ինձ հրաժարական տալու, և ես հեռացայ ինչ-որ ծանրութիւն ոչ կրծքիս վրայ, այլ կըրծքիս տակ։ Է՛հ, Դէորդ, ես չեմ պատմիլ, թէ դա ինչ ծանրութիւն էր, դու այժմ ինձանից լաւ ես զգում։ Բայց դու չըձանձրացա՞ր։

—Սմենևին,—պատասխանեց Դէորդը, մի ծխախոտ վառելով,—կարող ես մինչև լոյս խօսել։

—Դեռ իմ պատմութեան սկիզբն է դա, լսիր մինչև վերջը, մօտենում եմ նրա ծուծին։

Հետևեալ օրը չըհամբերեցի և կէսօրից յետոյ, գործերս աւարտելով, գնացի Բադամովի տունն։ Դա իմ կողմից մեծ համարձակութիւն էր, սակայն ես չըմըտածեցի և գնացի։ Ոըքան մեծ եղաւ իմ ուրախութիւնն, երբ Լիզային հանդիպեցի դահլիճում, դաշնամուրի դէմ նստած, նօտաների տետրերը դէս ու դէն թերթելիս։ Մարտին Բուղդանիչն այս անգամ ինձ ընդունեց աւելի քաղաքավարի, բայց ես նրա դէմքի վրա-

բայ նկատեցի մի տեսակ ճնշում։ Իսկ Եւգենիան սառնութեամբ ձեռը մեկնեց ինձ և դուրս եկաւ։

«—Ներեցէք, որ ես երէկ անքաղաքավարութեամբ ձեզ թողեցի դահլիճում և յանկարծ դուրս եկայ,— դիմեց ինձ Լիզան, տեղից բարձրանալով։

«—Անքաղաքավարութիւնն իմ կողմից էր, օրիորդ, —պատասխանեցի ես, համարձակօրէն նայելով Լիզայի երեսին։

«—Ինչո՞ւ։

«—Դուք հիւանդացաք, իսկ ես, իբրև բժիշկ, չ'առաջարկեցի իմ ծառայութիւնը։

«—Եւ այս էլ սոսկալի չէր ցաւում դուխս, որ քո՛ ժըշկի դիմելու կարևորութիւն ղդայի,—պատասխանեց Լիզան և յետոյ, դառնալով հօրը, հարցրեց.— պապա, կըկամենա՞ք, որ ձեր սիրած եղանակներից մի՞նը ածեմ։

«—Միայն երեկուայ պէս կիսատ չըթողնես ու փախչես,—պատասխանեց Մարտին Բուդդանիչը լըրջօրէն։

Լիզան նստեց դաշնամուրի դէմ և, ճակատից մազերը յետ դարսելով, սկսեց մի ուրախ եղանակ։ Բայց ուրախ եղանակն այս անգամ ինձ վրայ սխուր տպաւորութիւն գործեց։ Ես նայում էի Լիզայի արագաշարժ մատներին, որոնք, թեթևութեամբ բարձրանալով վեր և կրկին իջնելով, դուրս էին մղում դաշնամուրից քնքոյշ հնչիւններ։ Ես ղդում էի, թէ Լիզայի մատները իմ սրտին են դիպչում, և այդ հնչիւնները արձակում է իմ սիրտը։ Ջէ, Դէօրդ, աննկարագրելի են այդ րոպէները։ Ես մոտիկ էի անում Լիզայի մատներին, մոտիկ էի անում նրա կռնակներին, իրանին, գլխին, պարանոցին,



ուսերի վրայ թափված չագանակագոյն մազերին, և դրանք ինձ մագնիսի զօրութեամբ մղում էին դէպի այդ կակը։ Ոչ մի բան նոյն րոպէներում ինձ համար գոյութիւն չունէր, ոչ մի բան—բացի Լիզայից։ Նոյն իսկ դաշնամուրի ձայնն ես Լիզայի մէջ էի տեսնում մարմնացած, և ես վայրկեան առ վայրկեան յաղթվում էի Լիզայի առջև։ Վերջապէս, նա դադարեց և, դաշնամուրի կափարիչը յետ ձգելով, հարցրեց ինձ, արդեօք, հաւանեցի նրա խաղը։ Դուցէ Լիզան լաւ չէր ածում դաշնամուրի վրայ, միայն ես հիացած էի և նոյն րոպէին չըկարողացայ գտնել խօսքեր, որոնցով արտայայտէի իմ հիացումը։ Նա նայեց իմ դէմքին և իսկոյն հասկացաւ, թէ որքան ազդել է իւր խաղն ինձ վրայ։

Երկու ժամի չափ միացի Բագամովի տանն և շատ ուրախացայ, որ Մարտին Բուդդանիչն ինձ այս անգամ աղատ թողեց քաղաքական հարցերից։ Զարմանալի բան. մի քանի օր առաջ ինքս դուցէ մեծ բաւականութեամբ պատրաստ էի վիճել նրա հետ այդ հարցերի վերաբերմամբ։ Իսկ նոյն օրը, եթէ նա ըսկսէր վիճել, համոզված եմ, որ առանց այլևայլի կըհամաձայնվէի նրա մտքերի հետ, միայն թէ նա դադարէր լուրջ վիճաբանութիւն անելուց։ Այս անգամ վերադարձայ տուն բոլորովին յաղթված։

Անցաւ մի ամիս։ Ես առել առել այցելում էի Բագամովներին։ Ես գնում էի երեք օրը մի անգամ և, եթէ չամաչէի, Դէօրդ, կըգնայի ամեն օր։ Բնական է, որ այդպիսի յաճախ այցելութեան պատճառը վաղ թէ ուշ պիտի յայտնվէր Մարտին Բուդդանիչին, և յայտնվեց էլ։ Բայց նրանից առաջ իմացաւ Եւգենիան։ Այդ խորամանկ օձն իւր սուր հայեացք-

ներով և հեգնական ժպիտներով կատարելապես հա-
լածում էր ինձ։ Ինչ վերաբերում է Լիզային—դու
պիտի հասկացած լինես, Գէորգ, որ նա հէնց առա-
ջին օրից էր նկատել իմ զգացումները։ Այդ կողմից
և միայն այդ կողմից կինն ունէ դիտողութիւն, և
զարմանալի ճիշտ դիտողութիւն։ Նա շատ անգամ հէնց
առաջին հայեացքից կարող է նկատել, թէ ինչ է զգում
տղամարդը դէպի ինքը։ Երբ մարդու ուղեղը, ուշ ու
միտքը կենտրոնացած են լինում մի բանի վրայ, մա-
նաւանդ, երբ նա այդ բանումն է տեսնում իւր գոյու-
թեան խնդիրը, ոչ մի հոգեբան չէ կարող այստեղ նրա
հետ հաւասարվել։ Դա իմ խորին համոզմունքս է, և
հաւատի եմ, որ չեմ սխալվում։ Դու ժպտում ես,
Գէորգ, դու ծիծաղում ես, որ ես այդպէս շուտ եզ-
րակացութիւններ եմ անում, բայց համբերիր, և ինքդ
սեպհական փորձերով կըգաս նոյն եզրակացութեան։
Ինչ և իցէ։ Որտեղ մնացի՞, հա, ես գիտէի, որ Լիզան
դուշակում է իմ զգացումները։ Բայց ինչ է զգում ին-
քը, Լիզան դէպի ինձ—դա ինձ համար առաջին ամիսը
թէև պարզ էր, այնու ամենայնիւ, ես չէի համարձակ-
վում հաւատալ, թէ յիրաւի նա անտարբեր չէ դէպի
ինձ։ Ես կասկածում էի. մի գուցէ ինձ պարեցնում
է, մի գուցէ կամենում է յաղթել ինձ, դուրս մղել
ինձնից մի խոստովանութիւն և յետոյ, մերժելով,
ղուարճանալ իւր կանացի հերոսական յաղթութիւնով։
Բայց այն ժամանակ ես չեռ հաւատ ունէի դէպի
կնոջ անկեղծութիւնը։

—Իսկ այժմ,—ընդհատեց յանկարծ Գէորգը։

—Մեռել է և երբէք յարութիւն չի առնիլ,—պա-
տասխանեց Արշակ Պետրոսիչը։—Այսպէս, Գէորգ, ես



հաւատում էի կնոջ անկեղծութեանը և հաւատի էի,
որ Լիզան թեթևամիտ կոկետուհիներից չէ, որ ուզե-
նայ ինձ խաղալիք դարձնել իւր ձեռքում։ Ինչ-
պէս ասացի, մի ամիս էր արդէն, որ ես այցելում էի
Բադամովներին։ Այդ մի ամսուայ ընթացքում ես բա-
ւական մօտիկ ծանօթացայ այդ ընտանիքի պատմու-
թեանը։ Ահա նա։—Մարտին Բուդդանիչի հայրը թո-
ղել էր ժառանգութիւն մի տուն և մի թեթև գու-
մար։ Ապրելով բաւական համեստ, Մարտին Բուդ-
դանիչն այդ գումարի վրայ տարէց տարի աւելացրել
էր և իւր ուռճիկի մի մասը։ Քանուհինդ տարուայ
ընթացքում, թեթև գումարը, չահվելով, դարձել էր
մի պատկառելի թուանշան։ Թէ ինչպէս էր աշխատել նրա
հայրն այդ գումարը և տունը—ես չիմացայ, բայց ի-
մացայ, որ Մարտին Բուդդանիչը ինքը ծառայութեան
ժամանակ իւր պաշտօնը վարել էր բարեխղճաբար (ու-
զում եմ ասել կաշառք չէր կերել)։ Նա պաշտօնը թո-
ղել էր ինքնակամ, անմիջապէս կնոջ մահից յետոյ։
Մարտին Բուդդանիչն, այդ չըլուսաւորված հոգ լուսա-
ւորված զաւակն, իւր աղջկերանց կրթութեան համար
ոչինչ չէր խնայել։ Նրանք անցել էին գիմնազիական
կրթութիւնն և տնային ուսուցիչների միջոցով սով-
րել էին երաժշտութիւն, պար և ֆրանսերէն, մի խօս-
քով, ինչ-որ հարկաւոր է ժամանակակից օրիորդներին։
Կնոջ մահից յետոյ, Մարտին Բուդդանիչն իւր փողը
վաղօրօք բաժանել էր աղջկերանց, իբրև ապագայ ա-
մուսնական օժիտ։ Իսկ տունը թողել էր, որ, ինչպէս
ինքն ասում էր, մեռնելու ժամանակ կնոջ և իւր յի-
շատակին նուիրի մի բարեգործական նպատակով։ Երբ
այս բոլոր մանրամասնութիւնները իմացայ պարզ-

սիրա Մարտին Բուղդանիչից, զգացի այնուհետև ինձ նրա ընտանիքին ամենամօտ անձ։ Կարծես, կար մի անբեւոյթ կապ իմ և նրա մէջ։ Ի սէր Աստուծոյ, Գէորգ, չըկարծես, թէ ես բոպէ անգամ մտածում եմ օժիտի մասին։ Կրկնում եմ, այն ժամանակ ուրիշ մարդ էի, իսկ այժմ ուրիշ մարդ եմ։ Այն ժամանակ մի փոքր պակաս էր այստեղ, իսկ այստեղ շատ վատ (Արզաս Պետրովիչը ձեռը խփեց նախ ճակատին, յետոյ ձախ կողքին)։ Ինչ և իցէ, ես չափազանց ընտելացայ Բաղամովի ընտանիքին։ Իսկ թէ Եւգենիան ինձ սուում էր—դա ինձ համար այս կանթեղի նման պարզ էր։ Այս հանգամանքն ինձ մի փոքր նեղն էր դնում, որովհետև, ինչ և իցէ, այդ աղջիկն, եթէ կամենար, կարող էր խոչնդոտ լինել, բայց միւս կողմից Լիզայի և Մարտին Բուղդանիչի համակրութիւնն ինձ խրախուսում էր։ Անտանելի օրեր էին ինձ համար այդ օրերը, Գէորգ։ Ես ինձ կորցրել էի, ոչ մի միտք գլխումս եւել չէի կարողանում։ Գնում էի ծառայութեան, պաշտօնիս փոխարէն Լիզան էր կանգնած իմ առջև, դնում էի հիւանդի մօտ, հիւանդի փոխարէն Լիզային էի տեսնում իմ դէմ։ Գլխաւորից մի քանի անգամ յանդիմանութիւն ստացայ, հիւանդներից մի քանիսի տերերն ինձ քաղաքավարութեամբ մերժեցին։ Իսկ հասարակական գործերը տակնուվրայ էին։ Ընկերներս ինձ ծաղրում էին, թէ ինչպէս առաջ տաք տաք կապ գործին և ինչպէս շուտ սառայ։ «Որովհետև բոլոր քո եռանդը կեղծ էր»,—ասում էին նրանք։ Բայց ես ուշադրութիւն չէի դարձնում ոչ ոքի խօսքի վրայ և շարունակում էի օրից օր աւելի ու աւելի թուլանալ։

Մի գիշեր, վերջապէս, խելքս գլուխս ժողովեցի և սկսեցի լուրջ քննել իմ դրութիւնը։ Շատ անմխիթար դատայ նրան, Գէորգ, և տեսայ, որ, եթէ այդպէս երկար շարունակվի, ես միանգամայն կըզրաւնամ մի անպէտք լաթ։ Վճռեցի այլ ևս չայցելել Բաղամովներին և դուրս բերել գլխիցս ու սրտիցս Լիզա ասված էակին։ Եւ ինչ ես կարծում, Գէորգ, միայն տասն օր կարողացայ չըտեսնել Լիզայի երեսը։ Թէ որքան թանգ նստեց ինձ այդ տասն օրը, ես հրաժարվում եմ պատմել, որովհետև շատ կ'երկարի պատմութիւնս։ Մանր և վշտալի օրեր էին ինձ համար այդ օրերը։ Բայց մի բան պիտի աւելացնեմ, Գէորգ. թէև վէպերում ես շատ էի կարդացել, թէ այդպիսի դրութեան մէջ սիրահարվածի ախորժակն ու քունը փախչում են, իմ ախորժակը երբէք չէր կապվում, ես ուտում էի առանց յուայ պէս և քնում էլ էի։ Միայն գործել չէի կարող, ոտանաւորներ էի գրում. «Իմ սիրելի»—ֆլան, ֆլտան։ Գիտես էլի... Տատնումէկերորդ օրն էլ չըկարողացայ համբերել։ «Ինչ-որ լինելու է, թող լինի»,—ասացի ինքս ինձ—կըգնամ և բացարձակապէս կըպարզեմ իմ սիրոտը Լիզայի առջև, կընդունի—լաւ, չի ընդունիլ—այնուհետև հողը գլուխս, մի կերպ կըտանեմ ցաւս»։

Այս ասացի, ցիլինդրս դրեցի գլխիս և գնացի։

Արզաս Պետրովիչը մի փոքր լռեց, դարձեալ մի քիչ գարեջուր խմեց և, մի ծխախոտ վառելով, շարունակեց.

—Իրիկնադէմ էր։ Մարտին Բուղդանիչը տանը չէր, բարեբաղդաբար։ Եւգենիան մոտիսում էր Լիզան, պատշգամբի վրայ նստած, նայում էր քաղաքի շրջակայ տարերին։ Ինձ տեսաւ թէ չէ, իսկոյն վեր թռաւ տեղից և ձեռը մեկնեց։ Ես նրա դէմքի վրայ

նկատեցի անսպասելի ուրախութեան մի արտայայտութիւն, որ նա իզուր աշխատում էր թաղցնել։ Մի քանի վայրկեան մենք չկարողացանք խօսել։ Ես սեղմեցի նրա ձեռը և նատեցի դէմ ու դէմ։

«—Ո՞րտեղ էք մնացել,—հարցրեց, վերջապէս, Լիզան։

«—Սաստիկ զբաղված էի գործերով,—սուտ ասացի ես։

«—Իսկ մենք կարծում էինք, որ հիւանդացել էք։

«—Մի՛թէ։

«—Քանի անգամ ծառային ուղարկել ենք, բայց ձեր բնակարանը չի գտել։

«—Շնորհակալ եմ ձեր հոգածողութեան համար։

«—Հայրս է ձեր մասին շատ հարցնում,—շտապեց աւելացնել Լիզան։

«—Շնորհակալ եմ, ինչպէս է Մարաին Բուղդանիչը։

«—Լաւ է։ Երէկ այգումը երկու ժամու չափ ես և մենիան պարեցինք ձեզ և ոչ մի տեղ չըտեսանք։

Այս անգամ չկարողացայ ինչպէս յայտնեմ իմ շնորհակալութիւնը։ Մի քանի անգամ «շնորհակալ եմ» բառը իրարուետևից կրկնելը, ինձ անհամ էր թւում։

«—Դուք ինչպէս էք,—վերջապէս, հարցրի ես, յանկարծ մտաբերելով իմ սխալը։

«—Շատ տխուր, մի շաբաթ է չըգիտեմ ինչ է պատահել ինձ, գլխերնները չեմ կարողանում քնել։

Այս ասելով, Լիզան գլուխը թեքեց կրծքին և մատներով սկսեց ուղղել հանդերձի փեշերը։ Նայեցի վերևից ցած նրա երեսին և նկատեցի ոչ թէ անքնութիւն, այլ մի ինչ-որ ծանր մտածողութիւնից առաջացած փոփոխութիւն։ Ոչ նրա աչքերի կոպերն էին ուռած և ոչ էլ նրանց սպիտակոցն էր դեղնած։ Անքնութեան այս հետքերը չէին Լիզայի դէմքի վրայ, կար միայն մի թեթև դեղնութիւն։ «Չէ՛մ, իմ բացատրութիւնը իզուր չի անցել»,—մտածեցի ես, ուրախանալով։

«—Գուցէ հիւանդ էք, թոյլ տուէք չօշափել ձեր երակը,—ասացի ես։

Լիզան զգուշութեամբ մեկնեց ինձ իւր բազուկը։ Ես անյապաղ ոչ թէ բռնեցի, այլ խելագարի պէս ճանկեցի այդ բազուկը։ Մի վայրկեանում նա դողաց իմ ձեռի ափում, և Լիզան դուրս խլեց նրան արագութեամբ։

«—Թողէք, ես առողջ եմ,—ասաց նա, կարմրելով և երեսը ինձանից շուռ տալով։

Ես զգացի մի ինչ-որ ցնցում, ամբողջ մարմնովս անցաւ հաճելի դողդոջ։ Ես չփոթվեցի և կամենում էի բերանս բանալ չըգիտեմ ինչ ասելու։ Բայց այդ վայրկեանին ներս մտաւ Մարաին Բուղդանիչը։ Լիզան չփոթվեց և վերկացաւ տեղից։

«—Օ՛օ, Արդաս Պետրովիչ, Արդաս Պետրովիչ,—գիմեց ինձ Մարաին Բուղդանիչը, չըգիտեմ ինչու, այս անգամ անունս սովորականից աւելի կոշտ արտասանելով։ Նա մօտեցաւ և ձեռս սեղմեց։

«—Բարով, բարով, քանի ամառ է, քանի ձմեռ է, որ մեզ մոռացել էք,—շարունակեց նա, անխնայ քերելով իւր կոկորդը СКОЛЬКО բառը ասելիս, որ չորս անգամ դուրս բերի К տառը։

Մենք գնացինք ներս։ Ներկայացաւ և զուգված, զարդարված Եւգենիան անփոփոխ հեգնական ժպիտը իւր խորամանկ երեսին։ Մենք սկսեցինք խօսել Մար-

ան Բուղդանիչի սիրեցեալ քաղաքական հարցերի մասին։ Բայց, զարմանալի բան, որքան աշխատում էի, այս անգամ ծերունին բանը չէր երկարացնում։ Իսկ Եւգենիան երեսիս անգամ չէր նայում։ Լիզան աչքերի տակով նայում էր ինձ ու ժպտում, երբեմն էլ ծածուկ ծիծաղում։ Երբ նա ժպտում էր, ես ևս ժպտում էի, իսկ երբ ծիծաղում էր, չէի համարձակվում ծիծաղել։ Նա մերթ ընդ մերթ նայում էր իւր քրոջ և հօր երեսին և յետոյ ինձ վրայ ձգում թափանցող հայեացքներ։ Պարզ էր, որ նա կամենում էր իմանալ, ինչ տպաւորութիւն է անում ինձ վրայ հօր և քրոջ այն օրուայ սառնութիւնը և, մի և նոյն ժամանակ, կարծես, նրանց փոխարէն ամաչում էր ինքը։ Տեսնելով, որ բանս մի քիչ լաւ չէ, ես շտապեցի դուրս գնալ։ Եւ դուրս եկայ թեթևացած։ Լիզայի սէրը այս անգամ ինձ համար անկասկածելի էր։ Փա՜հ, ինչ շուտ է չորանում կոկորդս։

Արդար Պետրովիչը կրկին գարեջրից մի փոքր կում արեց։

—Այսպէս, Գէորգ,—շարունակեց նա, բերանը սրբելով,—ինձ համար մասամբ պարզվեց Լիզան։ Մնում էր միայն մի բան, դա էլ շուտով կատարվեց։ Միւս օրն երեկոյեան ես գնացի կլուբ։ Ընդհանրական երեկոյ էր։ Ես ի բնէ չէի սիրում պարել, այս պատճառով, մի անկիւն քաշված, ականջ էի դնում երաժշտութեան։ Յանկարծ յետ նայեցի և տեսնեմ—Լիզան, հովհարը ձեռին, կանգնած։

«—Հայրս ընթերցասիրում կարդում է, Ժենիան էլ պարում է, ես մենակ եմ»,—ասաց նա։

Յայտնի բան է, ես իսկոյն ուրախութեամբ քնկերացայ Լիզային։ Երաժշտական խումբը նուա-



գում էր։ Լիզայի առաջարկութեամբ մենք գնացինք այդի ղբօսնելու։ Այստեղ ոչ ոք չըկար. ամենքը ռեստորացում ժողովված, մոխիկ էին անում պարողներին։ Խաղաղ և զով երեկոյ էր։ Մի քանի շրջաններ անելուց յետոյ, չգիտեմ ինչպէս, յանկարծ ինձ Լիզայի հետ տեսայ մի մութ ծառուղիում, ուր ոչ ոք չէր երևում։ Մենք նստեցինք կանանչ նստարաններից մէկի վրայ, իարու քով։ Նա լուռ էր, ես էլ լուռ էի։ Նա ասում էր, թէ երաժշտութիւն է լսում, ես հաստատում էի, թէ յափշտակված եմ գեղեցիկ երկնքով։ (Ո՛վ գիտէ, այն րոպէին գուցէ երկինքը իսկի գեղեցիկ էլ չէր)։ Երկուսս էլ իրարու խաբում էինք, և երկուսս էլ գիտէինք, որ սուտ ենք ասում։ Իմ միտքը զբաղված էր նրանով, նրա միտքը զբաղված էր ինձանով։ Ուրիշ ոչինչ. ոչ երաժշտութիւն և ոչ էլ երկինք։ Աւելի յարմար ժամանակ չէի կարող գտնել իմ սիրտը պարզելու համար (թէև տեղը այնքան էլ յարմար չէր)։ Ես շտապեցի օգտվել դէպքից։ Եւ գիտես ինչպէս, ոչ խօսակցութիւն, ոչ բանաստեղծական ճարտարաբանութիւն, ոչինչ։ Ահա ինչպէս։—Լիզայի ձեռում կար մի վարդ։ Ես խնդրեցի այդ վարդը նրանից։ Նա առաջարկեց ինձ և կրկին յետ քաշեց իւր ձեռը։ Ես բռնեցի նրա ձեռից, որ այժմ խլեմ վարդը։ Նա դիմացաւ, բայց վարդը մօտեցրեց քթիս, որ ես հոտ առնեմ։ Ես բռնեցի նրա բազկից և, մի տաք համբոյր կպցրի նրա մատներին։ Նա ձեռը արագութեամբ յետ խլեց։ Ես, ալ ձեռով գրկելով նրա մէջքը, այս անգամ համբուրեցի երեսը։ «Ի՛նչ էք անում, խելագարվել էք, ինչ է»,—ասաց նա, իբրև թէ աշխատելով ձեռից դուրս պրծնել, մինչդեռ ինքը մօտենում

էր ինձ։ Ես ուզեցի խօսքերով արտայայտել իմ զգա-
ցումը։ Լիզան ձեռը դրեց բերանիս, որ լռեմ։ «Մնա,—
ասաց նա,—գիտեմ ինչ ես ուզում ասել, դուցէ ու-
մանների մէջ հազար անգամ գրված միատեսակ բա-
ներ»։ Ես լռեցի և սկսեցի իրարու հետից համբոյրները
դրոշմել նրա ձեռներին, թշերին, վզին, գլխին և մինչև
անգամ հագուստին։ Այս բոլորը կատարվում էր լուռ։
Նա քիչ դողում էր, իսկ իմ շրթունքները ցուրտ կըտ-
րած պէս կպչում էին ատամներիս։ Դրաղ կըզամ, որ
նոյն ժամին իմ դէմքը շատ յիմար պիտի լիներ։ Ան-
ցել էր մի ժամու չափ, մենք ուրախութեամբ այդ
դրութեան մէջ կըմնայինք մինչև լոյս։ Բայց այդ չէր կա-
րելի, և Լիզան առաջինը յիշեցրեց, թէ հարկաւոր է
գնալ, եթէ ոչ՝ հայրը կըկասկածի։ Ես հարցրի, երբ
կարող ենք տեսնվել։ Պատասխան ստացայ, թէ կարող
եմ ամեն օր այցելել իրանց տունը։

«—Միայն առաւօտները, ժամը տասնումէկից յե-
տոյ,—ասաց Լիզան,—այդ ժամանակ հայրս կլուբ լրա-
գիրներ կարդալու է դնում մինչև երկու ժամը»։

«—Իսկ Եւգենիա Մարտինովնան,—հարցրի ես։

«—Հեշտ է, նրա գաղտնիքն էլ իմ ձեռքում է,—
պատասխանեց Լիզան ծիծաղելով և մենք բաժանվե-
ցինք։

Արդարև, Եւգենիան մի յիմար ռոման ունէր մի
ինչ-որ լպստած ֆրանսի հետ, որին ես մինչև այդ
ժամանակ մի անգամ տեսել էի Բադամովի տանը։

Հետևեալ օրը, նշանակեալ ժամին, ես Լիզայի
մօտն էի։

Մարտին Բուդդանիչը իսկապես տանը չէր։ Եւ-
գենիան տանն էր, ինչպէս յետոյ Լիզան ասաց, բայց



իմ ներկայութեամբ չերևաց։ Լիզան նստած էր դահ-
լիճում, մի հայերէն գիրք ձեռքում բռնած։ Երբ ես
ներս մտայ, նա, շփոթված, գիրքը մի կողմ ձգեց։

«—Մի՞թէ հայերէն գիտես»,—եղաւ իմ առաջին
հարցը։

«—Շատ քիչ, բայց ուզում եմ սովորել։

«—Չէի սպասում։

Մենք նայեցինք իրարու և հասկացանք միմեանց
միտքը։ Կէս րոպէի չափ մենք լռեցինք։

«—Արշակ,—ընդհատեց նա լռութիւնը, առաջին
անգամ արտասանելով իմ հայերէն անունը։

Եւ այդ Արշակ բառը նա արտասանեց այնպիսի
լուրջ եղանակով, որ ես մի քիչ վախեցայ։

«—Արշակ,—շարունակեց նա,—ես կարծում եմ,
որ այսուհետև կարող ենք դէն ձգել մեր դիմակները
և խօսել պարզ ու անկեղծ։

«—Մի՞թէ մինչև հիմայ մենք դիմակներ ունէինք,—
հարցրի ես զարմացած։

—«Ո՛չ դիմակ, այլ մի թեթև քող, որի տակից շատ
պարզ երևում էր մեր իսկական դէմքը։ Մենք վաղուց
էինք իրարու սիրում, դա դու էլ գիտէիր, ես էլ, բայց
դարձեալ այդ քողը պահում էինք։ Նա անհրաժեշտ է
սիրահարվածներին մինչև երեկոյայ ժամը, այնուհետև
աւելորդ է։ Լսիր, ես կամենում եմ քեզ ծանօթացնել
Լիզայի հետ, որին դու սիրում ես, յետոյ պահանջե-
լու եմ քեզանից, որ դու էլ ծանօթացնես ինձ Արշա-
կի հետ, որին ես սիրում եմ։

Մենք համբուրվեցինք։ Լիզան շարունակեց.

«—Երեկ տուն վերադառնալով, ես մինչև գիշերուայ
կէսը մտածում էի քո մասին։ Մտածում էի, արդեօք,

քո սէրը հաստատ է, թէ ոչ։ Զբկարծես, որ վայրկեան անդամ մոռացել եմ, թէ մի գուցէ դու ևս պատկանում ես այն թերհաւատների շարքին, որոնք, հարուստ հարստացուի առջև դիմակ հագած, ծաղրածուի դեր են կատարում փոխուկ օժիտի համար։—Ամենևին։ Ես միայն մոռացում էի, արդեօք, սիրում ես ինձ, թէ դա մի ժամանակաւոր յափշտակութիւն է քո կողմից, որ շուտով պիտի անցնի։ Բայց վերջի այս ամիսս կէսուայ մեր ծանօթութիւնը, քննեցի առաջին օրից մինչև այժմ քո վերաբերութիւնը դէպի ինձ և ըզգացի, որ քո սէրը հաստատ է և անկեղծ։ «Զգացի» եմ ասում, որովհետև ես մեծ հաւատ ունիմ դէպի իմ զգացումների անսխալութիւնը։ Ի՛ս խորհրդաւոր հայեացքները, քո դոյնի փոփոխութիւնը, վերջապէս, տաճն օրուայ քո բացակայութիւնն, իբրև զօրեղ վկաներ, կենդանացան իմ առջև, և վերջը վճռեցի այն, որ ահա ես քեզ հետ եմ։

Ես Լիզայի խօսքն ընդհատեցի չերմ համբոյրով։

«—Սպասիր, մի տաքանար,—շարունակեց նա։—Չեմ թագցնում, որ հէնց առաջին անդամից, երբ քեզ տեսայ, մի ինչ-որ զգացում ծագեց իմ մէջ։ Ես զգացի քո մէջ մի այժ, որ ինձ մղում էր դէպի քեզ։ Դաշնամուրից վախչելուս, քո բացակայութեան ժամանակ տխրելուս (ես սուտ էի ասում, թէ հիւանդ եմ) պատճառը դու չէիր, այլ այն այժը, պարզ չըգիտեմ։ Մինչև այն օրն իմ ծանօթ տղամարդիկ բոլորն էլ ինձ համար մի մի աննշան էակներ էին, որոնց մէջ չէի գտնում այդ գրաւիչ զօրութիւնը, որ միանգամից գերեց իմ սիրտը։ Արշակ, շատերն են ինձանով գրաւել։ Ես չեմ ասիլ, թ հարկէ, որ ամենքն էլ իմ յիսուն հազարի օժիտը գրել են կշռի մի թաթում, իսկ ինձ—միւս թաթում։—Ո՛չ, եղել են և՛ անկեղծ սիրողներ, բայց ոչ մէկը նրանցից չի կարողացել հպատակեցնել ինձ։ Կրկնում եմ, Արշակ, չըգիտեմ, ինչ է այդ զօրութիւնը, ես նրան դնում էի միայն վիպական հերոսների մէջ։—Բայց այժմ համոզված եմ, որ կըպարզվի, երբ դու կըպատմես ինձ քո անցեալը, ներկան, քո դաշտավարները, նպատակները, մի խօսքով, բոլորը, բոլորն, առանց մի որ և է մանր կէտ թագցնելու։ Լսում ես, դու պիտի բոլորն ինձ համար պարզես։

Այս խօսքերից յետոյ, Լիզան աչքերը յառեց աչքերիս։ Նա սպասում էր, որ ես մի քանի րոպէում պատմեմ բոլոր իմ, ինչպէս ինքն էր ասում, «անցեալը, ներկան, ապագան, դաշտավարները, նպատակները»։ Հեշտ է ասել։

Ես պատասխանեցի, թէ առաջներիս ժամանակ շատ կայ և ես պատրաստ եմ պարզել իմ կեանքը։

«—Հէնց այսօրուանից,—հրամայեց նա։

«—Հէնց այսօրուանից,—համաձայնվեցի ես։

Յետոյ սկսեցի պատմել, թէ ովքեր են իմ ծնողները, ինչ կրթութիւն եմ ստացել, և այլն և այլն։

«—Իսկ ինչ դաշտավարական նպատակներ ունիս,—հարցրեց Լիզան, երբ ես աւարտեցի իմ պատմութիւնը։

Ես ասացի, թէ դժուար է միանգամից պատասխանել այդ հարցին, քանի որ շատ խնդիրներ դեռ ինձ համար մութ են։

«—Քանի՞ տարեկան ես,—հարցրեց նա յանկարծ։

«—Քսան և ութերորդումն եմ։

«—Մի՛թէ այդ հասակում դեռ քեզ համար մութ խնդիրներ են մնում։

«—Կեանքը շատ բարդ բան է, Լիզա, նրան ուսումնասիրելու համար տասնեակ տարիներ են հարկաւոր:

«—Որոշ նպատակներ և դաղափարներ ունեցող մարդը, կեանքը չուտ է ըմբռնում: Պէտք է միայն տեսակէտ ունենալ:

Ես սկսեցի մանրամասն բացատրել, թէ դրա համար հարկաւոր է ունենալ ձիրք, այսինքն դիտողական ձիրք: Խոստովանեցի, թէ ինձ նման հասարակ մահկանացուները դեռ շատ սխալ ապրեն, որ ճանաչեն կեանքը, թէ նոյն իսկ տաղանդաւոր մարդիկ մեծ մասամբ սխալվում են, երբ շտապ եզրակացութիւնները են անում կեանքի երևոյթների մասին, Մի խօսքով, երկու ամբողջ ժամեր ես տաքացած բացատրեցի իմ միտքը Լիզային: Արդէն ուշ էր, Մարտին Բուդդանիչի ճաշին վերադառնալու ժամանակը մօտեցել էր: Բարձրացայ տեղիցս, ու հրաժարական տամ: Լիզան պահեց:

«—Լսիր,—ասաց նա,—դու չես նեղանում, որ քեզ դաստիարակողի եմ ընդունում ինձ մօտ:

«—Ամենևին, եթէ քաշվում ես հօրիցդ:

«—Ես նրանից չեմ քաշվում, միայն յարգում եմ նրան, և առ ժամանակ պիտի այդպէս տեսնվենք: Հայրս կորցրել է իւր հաւատը դէպի մեր երիտասարդները: Նրան յայտնի է մեր փոխադարձ համակրութիւնը: Բայց նա կասկածում է, մի գուցէ դու էլ ինձ վրայ օժիտի կողմից ես նայում: Սակայն նա քեզ գովում է, և դու կարող ես երեք-չորս օրը մի անգամ նրան այցելել:

Մենք բաժանվեցինք: Ես սկսեցի մտածել Լիզայի առաջների մասին: Այն ինչ մի զօրութիւն է իմ մէջ, որ հպատակեցնում է նրան: Ո՞րտեղ է սովորել Լիզան



այդպէս դատել, դրքերից, թէ կեանքի փորձն է նրա մէջ յղացրել այդ ամենը: Ո՞վ է Լիզան, ինչ տեսակ էակ է, որ մինչև այժմ ոչ ոքի չի հպատակվել և այժմ իւր սիրտը տալիս է ինձ, ոչ թէ ինձ, այլ այն զօրութեանը, որ իմ մէջ զգում է: Քանի այդ հարցերն ինձ զբաղեցնում էին, այնքան Լիզան իմ աչքում բարձրանում էր և դառնում մի անհասկանալի էակ:

Ես ամեն օր տեսնում էի իմ սիրեցեալին, իսկ երեք-չորս օրը մի անգամ, նրա պատուէրով, Մարտին Բուդդանիչին: Ծերունին, երևի, զգալով իմ կողմից ևս—թեթև սառնութիւն դէպի ինքն, այս անգամ ինքը ընկաց նորից մօտենալ ինձ: Նրա խօսակցութեան և վիճաբանութեան համար, մի ահագին և հետաքրքրելի ասպարէզ էր բացվել: Դա ռուս-տաճկական պատերազմն էր, որ այն ժամանակ նոր էր ծագել: Իսկ Եւգենիան շարունակում էր ինձ հալածել իւր ծաղրող հայեացքներով: Այդ օրիորդը քանի գնում, այնքան աչքիցս ընկնում էր, նամանաւանդ այն օրից, երբ ես տեսայ նրա հաւանած փեսացուին: Դա մի լպստած ֆրանտ տղայ էր, փոքրիկ շամամաճև գլխով, որից միշտ Violet de parme-ի հոտ էր գալիս: Ինչ գործի էր այդ տղան, և ով էր—ես չըգիտէի և չեմ էլ հետաքրքրվում, բայց հպատակից-բանից երևում էր, որ հարուստ մարդու որդի է: Կարճահասակ, աչքերը նեղ և երկայնաձև, ճակատը տափակ, երեսը սափրած ու ականջների առջև մի մի մատաչափ մազեր թողած, իւղած սև մազերը նեղ ճակատի վրայ երկու կողոպտած և գլխի կաշին կպցրած—ահա նրա կերպարանքը: Մի բան, որ ինձ ամենից աւելի էր վրդովեցնում, այդ նրա նեղ պատրիպատարի վարդիկն էր: Ամեն ան-

դամ, երբ նա նստում էր բազկաթոռի վրայ, ես ակա-
մայ նայում էի նրա ծնկներին, ապասելով, որ ահա
վարդիկը կըպատռվի։ Խօսակցութեան ժամանակ, նա
սովորութիւն ունէր ձեռներով զանազան բեմական
շարժումներ անել, կրծքին խփել և տեղ տեղ
մազերն ուղղել և այլն։ Մի խօսքով, ես այդ տղին
չէի սիրում։ Նա էլ ինձ չէր սիրում։ Բայց ուրախ էի,
որ Եւգենիան զբաղած լինելով այդ զարդարուն խա-
ղալիքով, չէր խանգարում մեզ, և ես ամեն օր կարո-
ղանում էի Լիզայի հետ առանձնանալ դահլիճում և
երկար խօսել։ Օրից օր իմ սէրը տաքանում էր դէպի
Լիզան, և ես աւելի ու աւելի սերտ կապով էի կապ-
ւում նրա հետ։ Լ՛Հ, երեխայութիւն, երեխայութիւն։
Մի ծխախոտ տուր, Գէորգ, իմս վերջացել է։

Քանի մի վայրկեան լուռ ծխելուց յետոյ, Արղամ
Պետրովիչը շարունակեց.

Առաջ ես, Գէորգ, այնքան էլ չէի սիրում խօսել
և աւելի լուռ, մռայլ մարդ էի, քան թէ զուարճախօս
և ուրախ։ Բայց Լիզայի հետ բացատրվելուց յետոյ,
դառել էի շատախօս կաչաղակ։ Զըկարծես, ամենքի
հետ։ Ո՛չ, միայն և միայն Լիզայի հետ։ Եւ ոչ թէ այն
պատճառով, որ իմ սիրեցեալն ինձ պատուիրել էր
պարզել իմ մտքերը, այլ հէնց ես ինքս ղգում էի մի
տեսակ ներքին պահանջ։ Ես անհնարին էի համարում
Լիզայից թագցնել մինչև անգամ մի աննշան կէտ իմ
իմացածից։ Այս պատճառով, ոգևորված, ժամերով խօ-
սում էի և չէի յոգնում։ Այսպէս թէ այնպէս, մի ամ-
սուայ ընթացքում Լիզան բոլորովին ծանօթացաւ ինձ
հետ։ Այլևս չունէի դա դանիք, որ նրան յայտնի չըլի-
նէր։ Բայց անցաւ առաջին ամիսը մեր սիրահարու-



թեան, և այնուհետև, սիրելի Գէորգ, սկսեց ամեն
ինչ փոխվել, տանիրավայ լինել։ Ահա թէ ինչպէս։—

Արղամ Պետրովիչը դատարկ չիբուխը վերցրեց և դըր-
խիվայր պահեց։ Յետոյ նա չիբուխը դրեց սեղանի վրայ,
մի քանի վայրկեան լռեց և ծիծաղելով ասաց.

—Գէորգ, պարսկական դերվիշները հիանալի սով-
րութիւն ունին։ Հէքեաթ ասելիս, յանկարծ նրանք ամե-
նահետաքրքիր տեղում լռում են։ Ժողովուրդն անհամ-
բերութեամբ նայում է նրանց բերանին, իսկ դերվիշը
իւր քեաշկուլը պահելով ունկնդիրների առջև, ասում
է. «Նաղլըմի սովան չախս հաղրաթի Ըբրաս եօլնդա
գոյ բիր զաթ սալսուն բուրա»։ Դու թրքերէն գիտէս։

—Ոչ,—պատասխանեց Գէորգը։

—Ասում է. «պատմութիւնս հասանող անձը, մոռ-
դարէ Աբրահամի անունով թող մի բան ձգէ այստեղ»։
Եւ դերվիշը չի շարունակում հէքեաթը, մինչև իւր
ուզած դումարի ստանալը։ Հասկացար։

Արղամ Պետրովիչը, ժպտալով, ցոյց տուեց գարե-
ղրի դատարկ չիբուխը։ Գէորգը, ծառային կանչելով, հրա-
մայեց մի չիբուխ ևս գարեղրուր բերել։ Ծառան բերեց
չիբուխը, և Արղամ Պետրովիչը մի բաժակ լցրեց ու մի
անգամից դատարկեց։

—Ну-съ, իմ սիրելի Գէորգ,—շարունակեց նա,
բերանը սրբելով մետաքսեայ թաշկինակով,—ինչպէս
ասացի, ես պարզեցի իմ գլուխն ու սիրտը Լիզայի առ-
ջև, այսինքն՝ արեցի մի աննկարելի յիմարութիւն, որ
ինձ շատ վնասեց, բայց շատ էլ օգուտներ տուեց վեր-
ջը։ Թէ ինչ օգուտներ—այդ յետոյ կ՛իմանաս ինքդ,
ես կըպատմեմ միայն թէ ինչպէս վնասեց։ Երբ Լի-
զան, մինչև, այսպէս ասած, ոսկորներիս ուղեղն ինձ

ճանաչեց, այնուհետև ես նկատեցի նրա մեջ ինչ-որ փո-
փոխություն: Դա սառնությունն չէր դեպի ինձ, այլ ինչ-
որ անորոշ վերաբերմունք: Թուում էր, որ Լիզան ինձ
առաջուայ պէս սիրում է, բայց առաջուայ պէս այլ ևս
չի հրճվում ինձանով: Շատ անգամ, խօսակցելու ժա-
մանակ, նկատում էի նրա դէմքի վրայ մի ժպիտ, որ
արտայայտում էր մի տեսակ կասկած դէպի իմ խօսքերի
ճշմարտությունը: Այդպիսի րոպէներում ես չարունակ
նայում էի նրա երեսին, որ հասկանամ միտքը և կար-
ծում էի որ նա կըշտութվի այդ հայեացքից և ինքը
կըղջայ իմ առջև իւր կասկածի մասին: Բայց ոչ ես
էի նրա միտքը լաւ հասկանում և ոչ էլ իմ սուր հայ-
եացքներն էին նրա վրայ ազդում: Այս նկատելով, ես
ինքս էի սկսում ղջալ: «Ի՛նչ մանրակրկիտ մարդ եմ»,
—կրկնում էի ինքս ինձ և, միևնոյն ժամանակ, դար-
ձեալ սկսում էի կասկածել: Պիտի ասեմ, Դէորդ, որ
մինչև այդ կասկածանքն իմ մեջ յղանալը, մեր բացա-
տրութիւնից յետոյ, ես էլ փոքր առ փոքր փոխվում
էի դէպի Լիզան: Միայն այդ փոփոխութիւնն այն չէր,
ինչ-որ Լիզայինը: Մի փոքր առաջ նկարագրեցի Լիզայի
կերպարանքը, և դու տեսար, որ նա, թէև ոչ շատ
դեղեցիկ, բայց հրաշալի էակ է: Նա յափշտակեց ինձ,
կուրացրեց միանգամայն, և ես, հիացած, չըգտայ ոչ
մի պակասութիւն նրա մեջ: Առաջին անգամ իմ մեջ
ծագեց մի ցանկութիւն. «Երանի թէ քեզ հետ խօ-
սեմ»,—ասացի մտքումս: Երբ Լիզան երկրորդ անգամ
դաշնամուրի վրայ ածում էր, իսկ ես նայում էի նրա
մատներին՝ մտածեցի. «Երանի թէ կարողանամ գրաւել
քեզ, Լիզա»: Երբ մի փոքր համոզվեցի, որ գրաւել եմ
Լիզային, «Երանի թէ կարողանամ համբուրել քո ձե-



ռը», ասացի ինքս ինձ: Իսկ երբ ստացայ իրա-
ւունք նրա ձեռներն էլ, թշերն էլ, շրթունքներն էլ
անթիւ անգամ համբուրել, այն ժամանակ միայն ես
կասեցի զննել Լիզայի դէմքն և շատ պակասութիւններ
գտայ այդ դէմքի վրայ: Մի օր ինձ թւաց, թէ նրա
քիթը կարճ է, միւս օրն ես նկատեցի, որ նրա ծնօտը
մի փոքր մեծ է և չի համապատասխանում դէմքի ու-
րիշ մասերին: Եւ այսպէս, ես ամեն օր մի մի ֆիզի-
քական պակասութիւն էի գտնում Լիզայի մեջ: Այս ա-
մենն ես յայտնում էի իրան, միևնոյն ժամանակ, իմ
սերը դրանով չէր պակասում, ընդհակառակը, օր ըստ
օրէ նա զօրեղանում էր: Բայց մի զարմանալի բան,
Գէորգ, որի վրայ արժէ մտածել:—Երբ իմ մեջ ծա-
գեց կասկած, թէ Լիզան մի քիչ փոխվել է դէպի ինձ,
նրա դէմքի այդ բոլոր պակասութիւնները իսկոյն ան-
հետացան իմ աչքում, և դարձեալ Լիզան թւաց ինձ
աննման հրեշտակ: Թէ ինչու և ինչ պատճառներից էին
առաջանում այդ փոփոխութիւնները—չեմ կարող բա-
ցատրել:

Այսպէս, Գէորգ, ես Լիզայի մեջ նկատեցի մի տե-
սակ փոփոխութիւն դէպի ինձ: Կարծղ էի գուշակել, որ
այդ փոփոխութիւնն արմատապէս պիտի փոխէր իմ
կեանքը, հիմնայատակ անէր կնոջ վրայ կազմած բոլոր իմ
դաղափարները, այնպէս, որ այսօր ես նրա վրայ նա-
յէի բոլորովին թշնամական աչքով: Բայց այսպէս եղաւ,
Գէորգ, և ուրիշ կերպ չէր կարող լինել: Իմ նշանա-
կութիւնը թուլացաւ Լիզայի աչքում այն ժամից, երբ
նա ճանաչեց ինձ, նրա համար պարզվեց իմ, հասարակ
մահկանացուիս կեանքը: Ազատասիրական դաղափար-
ներով յափշտակված, ես աշխատում էի նայել Լիզայի

վրայ իբրև ինձ հետ հաւասար մի էակի վրայ։ Ես չէի օգտվում իմ մտաւոր զարգացման առաւելութիւնից և չէի ձգտում բարձրից նայել նրա մտաւոր կարողութեան վրայ։ Թէև մենք շատ բաներում համաձայն չէինք իրարու մտքերով և ես շատ անգամ հերքում էի նրա հայեացքները կեանքի վերաբերմամբ, բայց յարգում էի այդ հայեացքները և երբէք, երբէք չէի արհամարհում նրանց։ Եւ, հաւատացիր Գէորգ, ոչքան յարգում էի և որքան խոնարհվում էի Լիզայի առջև, նոյնքան նա աշխատում էր ինձ վրայ բռնանալ և նոյնքան ձգտում էր արհամարհել իմ մտքերը։ Այս բոլորն ես Աբգոսի աչքերով տեսնում էի և ոչ մի կէտ բաց չէի թողնում, տեսնում էի և, միևնոյն ժամանակ, չէի կարողանում պատճառը դտնել։ Որպէս դի վերջ տամ Լիզայի այս անախորժ վարմունքին դէպի ինձ, վճռեցի մի համարձակ քայլ անել։ Կամենում էի միանգամից իմանալ նրա միտքը։

«—Լիզա,—հարցրի մի օր, երկար վիճաբանութիւնից յետոյ,—երբ պիտի վերջնականապէս վճռվի մեր վիճակը։

Այս հարցն առջարկեցի յանկարծ։ Լիզան չըհասկացաւ նրա միտքը։ Նա զարմացած նայեց երեսիս և հարցրեց,

«—Ի՞նչ ես ուզում ասել։

«—Կամենում եմ իմանալ, թէ երբ պիտի պսակվենք, պատասխանեցի ես համարձակօրէն և շտապով, որպէս դի յետոյ չըվհատվեմ և չըփոշմանեմ։

Լիզան աչքերը խոնարհեցրեց և պատասխանեց.

«—Չըգիտեմ։

«—Իսկ ես կարծում եմ, որ միայն դու գիտես։

«—Մի՛թէ հօրդ կողմից արդելք կայ։



«—Ես յանձնված եմ իմ իրաւունքին, ոչ ոք չի կարող իմ կամքին հակառակել։

«—Որեմն, էլ ինչ պատճառ կայ սպասելու։

«—Դեռ համբերիր,—կրկնեց Լիզան մի այնպիսի հրամայողական եղանակով, որ ես այլ ևս չըհամարձակվեցի երկարացնել։

Նոյն օրն ես բաժանվեցի Լիզայից տխուր և աչքունքս թաւիած։ Եկայ տուն։ Լիզայի անորոշ պատասխանն ինձ սկսեց տանջել։ Այո, Գէորգ, տանջել։ Ինչ տեսակ էակ է Լիզան, մտածում էի ես։ Ինձ թւում էր, Գէորգ, թէ նա ինձանից հեռանում է, ինչպէս երկնքի երեսին շարժվող ամպերի ստուերը։ Ես ձգտում էի հասնել ստուերին, պահել նրան, չըթողնել առաջ շարժվելու։ Սակայն չէի կարողանում, հարկաւոր էր նախ ամպերը պահել, որպէս դի նրանց ստուերը կանգնի, իսկ ես շատ հեռու էի ամպերից։ Նրանք երկնքումն էին, իսկ ես երկրի երեսին։—Դա Լիզայի անդուլ սիրան էր։ «Ի՞նչ պիտի անեմ, ինչ կարող եմ անել»,—կրկնում էի անդադար, գլխիս մազերը փետտելով։ Երկար ժամերով մտածում էի այս մասին և ոչ մի իմ սրտին նպաստաւոր եղրակացութեան չէի հասնում։ Օրըստօրէ ինձ համար աւելի ու աւելի պարզվում էր, որ Լիզայի սէրը թուլանում է դէպի ինձ։ Ինչո՞ւ, ինչ էր պատահել, ինչ մի չար զօրութիւն յանկարծ փոխեց Լիզայի սիրտը կամ ինչ մի աներևոյթ ոյժ ինձ կերպարանափոխեց Լիզայի աչքում։ Մի՛թէ ես նախկին Արշակը չէի, որի մէջ նա զգում էր ինչ-որ ձգտող զօրութիւն։ Ճշմարի՛տ էր ասում նա, թէ կեղծաւորում էր կամ գուցէ դա մի ժամանակաւոր յափշտակութիւն էր նրա կողմից։ Բայց չէ, մի՛թէ Լիզան կարող է յափշտակ-

վել, այն Լիզան, որի սիրտը մինչև քանուվեց տարեկան հասակը, ոչ մի երիտասարդի համար չէր բաբախել։ Եհ, գուցե բաբախել էր, բայց Լիզան դիմակ էր հագնում իմ առջև, ստում էր ասում, որ իմ աչքում իրան ցոյց տայ իբրև մի հերոսուհի։ Կարող ես ղգալ, Գէորգ, թէ որքան ինձ տրորում էին, չարչարում էին այդ չարագուշակ հարցերը։ Ես չեմ կանգնել երկար օրերն քեզ նկարագրելու, թէ ինչ էի ղգում այդ օրերում։ Այսքանը կ'ասեմ, որ իմ աչքում ամեն ինչ անհետացել էր, բացի Լիզայից։ Իմ ուղեղը կաշկանդված էր նրանով։ Ես սկսեցի ատել ամեն ինչ, նոյն իսկ ինքս ինձ, բացի Լիզայից։ Ես ատում էի մինչև անգամ անմեղ բնութիւնն և նրա գեղեցկութիւնը։ Լուսին երեկոներին ես, հակառակ իմ սովորութեան, չէի դուրս գալիս փողոց։ Առաջ, այդ երեկոները ինձ վրայ թէև ծանր, բայց ախորժելի ազատութիւն էին անում, իսկ այժմ աննկարագրելի դառն ազդեցութիւն էին գործում։ Այդպիսի երեկոներին ես փախչում էի տուն, փակվում սենեակումս, որ չըտեսնեմ լուսնի երեսը։

Այսպէս անցաւ, Գէորգ, մօտ մինչև երեք շաբաթ,—շարունակեց Արդաս Պետրովիչը,—ես շարունակում էի տեսնվել Լիզայի հետ, բայց միշտ նրա դէմքում նկատում էի նոյն կասկածաւոր ժպիտը, միշտ նա իմ հարցերին տալիս էր անորոշ պատասխաններ կամ ամենևին չէր տալիս։ Վերջապէս, մի օր... Բայց թոյլ տուր, Գէորգ, մի քիչ հանգստանալ։

Անցան մի քանի րոպէները, Արդաս Պետրովիչը հանգցրեց ծխախոտը և շարունակեց.

—Մի օր, իրիկնադէմին, ես գնացի Բազամովների տուն։ Այդ այցելութիւնը պատկանում էր Մարտին Բուղդանիչին։ Քանի ժամանակ էր նրա երեսը չէի տեսել։ Ես ծառային հրամայեցի յայտնել իմ ժամին, և քանի մի վայրկեանից յետոյ, նա, վերադառնալով, մի հեգնական, ժպիտ երեսին (գուցե ինձ այնպէս թւաց) հրաւիրեց ինձ դահլիճ։ Մարտին Բուղդանիչը, մէջքը բազկաթոռին տւած, ծխում էր իւր երկայն չիբուխը։ Նրա աջ կողմում նստած էր Եւգենիան իւր լաստածի հետ, որ մի ինչ-որ գիրք էր թերթում ձեռքում։ Լիզան, նստած դաշնամուրի դէմ, չատպով դէս ու դէն էր թերթում նոտաների տետրը։ Մարտին Բուղդանիչի դէմ ու դէմ նստած էր մի, ինձ համար անծանօթ, հիւր։ Երբ ես ներս մտայ, Մարտին Բուղդանիչը բարձրացաւ տեղից ինձ բարևելու։ Լիզան կէս պաշտօնական քաղաքավարութեամբ մօտեցաւ և հարցրեց չատպով. «ինչպէս եք»։ Ես ամենին ձեռ տուեցի։ Երբ հերթը հասաւ Եւգենիային, նա ինձ վրայ ձգեց առաջուանից աւելի հեգնական և, կարող եմ ասել, անպատկառ մի հայեացք։ Իսկ նրա ֆրանսը իւր յիմար ընդերքը բաց արաւ և նեղ ճակատի տակից նեղ աչքերն ինձ վրայ յառեց։

«—Սերգէյ Միխայլովիչ, ներկայացնում եմ ձեզ բեկամիս, բժիշկ Արդաս Պետրովիչ Մագաուտեանին»,—ասաց Մարտին Բուղդանիչը։

Բազկաթոռը ճրճռաց, Գէորգ, և նրա միջից բարձրացաւ մի վիթխարի։ Նա, մի փոքր իմ կողմ շուռ գալով, քթի տակ մրմրթաց իւր ազգանունը և լայն ու երկայն ձեռը մեկնեց դէպ ինձ։ Ես սեղմեցի այդ հսկայական ամուր ձեռն և հազիւ հազ լսելով նրա

աղջանուն «Սեթեան», տեղաւորվեցի բազկաթոռներից մեկի վրայ։ Վիթխարին, ուղղելով իւր սև սիրատուկի երկայն փեշերը, կրկին թաղվեց բազկաթոռի մէջ։ Դա մօտ երեսունհինգ տարեկան, պարթև հասակով, լայն թիկունքներով, երկայն բազուկներով, խոշոր աչքերով և դեղեցիկ, բայց մռայլ դէմքով մի տղամարդ էր։ Ես նայեցի նրա կարճ խուզած սև մազերին ու միրուքին, թանձր բեղերին, որ հովանաւորում էին նրա սեղմված շրթունքները, նայեցի նրա հայկական արծուանման քթին և, չգիտեմ ինչու, մտքումս ասացի «լաւ է»։ Լիզան դաշնամուրը թողեց, որի վրայ մինչև իմ գալը պատրաստվում էր ածելու, և եկաւ նստեց մեր շարքում, հակայի դէմ ու դէմ։ «Ինչո՞ւ իմ դէմ չընտրեց», անցաւ իսկոյն մտքովս, բայց ես իսկոյն էլ մոռացայ այդ։

Մարտին Բուդրանիչը համառօտ ծանօթացրեց ինձ և նոր հիւրին իրարու հետ։ Ես նրա հատ ու կտոր բացատրութիւններից իմացայ, որ Սեթեանն իւր ամենահին բարեկամներից մեկի որդին է, նոր է վերադարձել Գերմանիայից, ուր ուսումնասիրել է ինչ-որ մանադիտութիւն և այժմ մտադիր է Թիֆլիսի շրջակայքում գործարան բանալ։ Թէ ինչ էր նրա մասնագիտութիւնն և ինչ գործարան պիտի բանալ — չիմացայ։ Ինքը Սեթեանն էլ ոչինչ չասաց։ Փոքր առ փոքր խօսակցութիւնը տաքացաւ։

Սեթեանը լուռ էր, միայն երբեմն Մարտին Բուդրանիչն այս կամ այն հարցին պատասխանում էր «այո» կամ «ոչ» և ուրիշ ոչինչ։ Նա ոչ ոքի երեսին չէր նայում։ Բայց երբ թանձր բեղերը բարձրացնում էր, որ արտասանի իւր «այո»-ն կամ «ոչ»-ը, ամենը նայում



էին նրա երեսին։ Որովհետև ամենի հայեացքները կենտրոնը նա էր, ուստի ես էլ քնաղդաբար նրան էի մտիկ անում։ Իրաւ, Գէորգ, աշխէր նայել այդ առնական դեղեցիկ, մռայլ և գրաւիչ դէմքին։ Բայց ես այնքան հաւատ չէի ընծայում այդ դէմքին և ղժում էի, որ նրա գօրութիւնը լռութեան մէջ է և երբէք Սեթեանը սկսի չատ խօսել, իսկոյն կըկորցնի բոլոր իւր նշանակութիւնը։ Ես ներում էի ամենին և նոյն իսկ ինձ, որ այդպէս սոսկաբար հպատակվում էինք այդ մտադրին, բայց չէի կարողանում ներել միայն Լիզային։ Ինչո՞ւ է նա այդպէս խոր մտիկ անում այդ նոր հիւրին, մինչդեռ սա արժանի էլ չի համարում նոյն բանը շուռ տալ նրա կողմը։ Դեռ այս ոչինչ. ինչո՞ւ Լիզան ինձ վրայ չի ուզում նայել։ Ինչո՞ւ, երբ նա մեզ մի հարց է առաջարկում և երբ ես եմ պատասխանում այդ հարցին, ուշադրութիւն չի դարձնում ինձ վրայ։

Կասկածը դարձեալ սկսեց որդնի նման ուտել իմ սիրտը, ծագեց իմ մէջ մի նոր, մինչև այդ ժամանակ անծանօթ զգացում, որ աւելի վտանգաւոր էր, քան թէ հասարակ կասկածը։ Դա այլ զգացումն է, Գէորգ, որ մի քանի իմաստասէրներ հերքում են զարգացած մարդու մէջ։ Ըհ-հա-ամ, Գէորգ, ասա է, այդ մարդիկ, իրանք, երևի, չէր սիրահարվել և այդ պատճառով չըգիտեն, որ ինչ տեղ կայ սէր, այնտեղ կայ նոյնպէս և՛ խանդ։ Մէկն առանց միւսի անհնարին է և որքան գօրեղ է մէկը, նոյնքան գօրեղ է և՛ միւսը։ Է՛հ, ինչ երկարացնեմ, ես տանջվում էի, բայց անում էի Լիզայի վրայ, տաքանում էի ինքս իմ մէջ, չփոթվում էի։ Լիզան հասկանում էր այդ, բայց, միևնոյն ժամանակ, կարծես, իմ մէջ այդ նոր զգացումն ա-

լի զօրեղացնելու համար, չէր փոխում իւր վարմունքը։ Վերջապէս, մեր խօսակցութիւնը դարձաւ բժշկականութեան վրայ։ Այդ տարի Թիֆլիսում կար մի ինչ-որ վարակիչ հիւանդութիւն, որ ընդհանուր խօսակցութեան առարկայ էր։ «Ահա, վերջապէս, իմ ասպարէզը,—մտածեցի ես.—այժմ ես կըզառնամ ամենքի ուշադրութեան կենտրոնը, բոլորն ինձ կըլսեն, իսկ քեզ, Լիզա, ցոյց կըտամ, թէ ո՛վ է յաղթողը»։

«—Արդա՜ս Պետրովիչ,—դիմեց ինձ, վերջապէս, Մարաին Բուդդանիչը,—ինչպէ՞ս էք կարծում, ինչու՞ բժշկականութիւնն անկարող է այդպիսի հիւանդութիւնների առաջն առնել։

«—Դա առողջապահութեան գործն է և ոչ թէ բժշկականութեան,—պատասխանեցի ես, ամեն մի բառն առանձին շեշտելով, որպէս զի ունենամ իմ ցանկացած ազդեցութիւնը։

Ես նայեցի Լիզային, բայց նա երէսը շուռ տուեց ինձանից։ Դա ինձ չվոթեց, բարկացրեց և յուզեց։

«—Մինչև հիւանդութեան երևալը, բայց երբ նա երևում է,—կրկին հարցրեց Մարաին Բուդդանիչը։

«—Այնուհետև, ի հարկէ, բժշկականութեան գործն է,—պատասխանեցի ես տաքացած,—իսկ թէ ինչու չի կարողանում բժշկականութիւնը վերջ տալ այդպիսի հիւանդութիւնների, դա նրանից է, որ այդ հիւանդութիւնների մասին դեռ շատ մութ խնդիրներ կան նրա համար չըպարզված։

Այս ասելով, անդիտակցաբար նայեցի Սերեանի երեսին։ Ինչո՞ւ—ինքս էլ չըգիտէի։ Իսկ նա դարձեալ ոչ ոքին չէր նայում, դարձեալ լուռ էր և, կարծես, վճռել է բնաւ չլսօսել։



Մարաին Բուդդանիչը, չըբաւականանալով իմ պատասխանով, դիմեց նոր հիւրին.

«—Ձեր կարծիքն ինչ է, Սերգէյ Միխայլովիչ։

Սերգէյ Միխայլովիչ Սեթեանը գլուխը թեքեց բազկաթոռի մէջքին, ձեռները տարածեց ալ ու ձախ, բեղերը դանդաղութեամբ շարժեց և խորհրդաւոր եղանակով արտասանեց չորս խօսք.

«—Բժշկականութիւնը դրական գիտութիւն չէ։

Այնուհետև նա կրկին գլուխը թեքեց կրծքին, բեղերը հաւաքեց և լռեց։ Ամենքն իրանց հայեացքները բևեռեցին նրա բերանին, կարծես, սպասելով, որ նա չարունակի։ Բայց նա լռեց։ Ես մոիկ արեցի նրա երեսին, և նա այս անգամ ինձ վրայ մի ահագին ժպտի տպաւորութիւն գործեց։ Թւում էր, թէ ոչ ոք այժ չի կարող նրանից աւելի խօսք դուրս քաշել։ Բայց ինչ ասաց նա, ոչինչ—դրեթէ միևնոյնը, ինչ որ ես ասացի մի քիչ առաջ։ Ինչո՞ւ ոչ ոք չըննայեց ինձ վրայ, ոչ ոք նշանակութիւն չըտուեց իմ պատասխանին։ Ինչո՞ւ այժմ Լիզան սարկաբար նայում է նրա երեսին, կարծես, սպասելով, որ այդ ժպտը դոնէ մի թեթև հայեացք ձգի իւր վրայ։

«—Ի հարկէ,—շարունակեցի ես Սեթեանի փոխարէն,—բժշկականութիւնը մաթեմատիկական գիտութիւն չէ, նա չունի որոշ և անսխալ ֆօրմուլներ, որոնց հիման վրայ կարողանար անհերքելի եզրակացութիւններ անել։ Բայց նա, այսու ամենայնիւ, գիտութիւն է և շատ օգտաւէտ գիտութիւն...

Այս վերջին խօսքերն աւելացրի տաքացած և ձայնս բարձրացնելով։ Ինչպէս տեսնում ես, Գէորգ, անտեղի էին այդ խօսքերը, բայց ես չըհամբերեցի և,

զգալով, որ Սեթեանը ծաղրում է իմ ամենապիտու-
թիւնն, ուզեցի ինձ պաշտպանել։

«—Այն ինչ գիտութիւն է, որ որոշ եղրակացու-
թիւններ չզգիտէ անել,—մէջ մտաւ Լիզան, մի սպա-
նող հայեացք ձգելով ինձ վրայ, որն իսկոյն մեղմաց-
նելով, դարձրեց դէպի Սեթեանը։

Արիւնս գլխովս տուեց։

«—Բժշկականութիւնը ես չեմ սիրում,—աւելա-
ցրեց լպստած ֆրանսն, իւր կարմիր ընդերքը ցոյց
տալով ինձ։

«—Շատ շահասէր մարդիկ են բժիշկները, նա-
մանաւանդ հայ բժիշկները,—ներս սրծաւ աւելի Եւ-
գենիան, իւր արհամարհական հայեացքը ձգելով ինձ
վրայ։

Գուցէ, եթէ զսպէի ինձ, կարողանայի տանել այդ
ինկվիզիցիան, բայց ես, Գէորգ, չզսպեցի, և ոչ թէ
այդ կոպիտ նկատողութիւնների պատճառով։—Ո՛չ, ես
կարող էի Եւգենիայի և Ֆրանսի նման իդիոտների
կարծիքն արհամարհել, բայց չկարողացայ մարսել
Լիզայի նկատողութիւնը։ Ամենից առաւել ես նրա
դէմ վրդովուեցի։

«—Զարմանում եմ,—ասացի ես, բարկութիւնից
կարմրելով և շրթունքներս կրծոտելով,—զարմանում
եմ, ինչպէս են համարձակվում մարդիկ դատողու-
թիւն անել այնպիսի բանների վրայ, որոնց մասին գրօ-
շի հասկացողութիւն չունեն։

Լիզան ժպտաց։ Սեթեանն աչքի տակով սառնու-
թեամբ նայեց երեսիս։ Եւգենիան քըթըքըթ անամօթ
սկսեց ծիծաղել։ Լպստած ֆրանսը հեռուեց նրան։ Մա-
րին Բուդրանիչը դարձաւ ինձ և ասաց մեղմութեամբ.



«—Արդար Պետրովիչ, ներեցէք, ես կարծում եմ,
որ Եւգենիան և Իվան Տարասիչը (լպստածի անունն
այսպէս էր) ձեզ վիրաւորելու նպատակով չասացին այդ։

Աւելի չիմար դրութիւն չէր կարող լինել։ Ինձ
մարդն իմ տեղն իսկոյն գդակը կրվերցնէր և դուրս
կըգար։ Այն ինչ՝ ես կէս ժամու չափ ևս նստեցի, որ-
պէս զի մի կերպ կարողանամ վրէժս հանել ինձ վի-
րաւորողներից։ Բայց այլ ևս ոչ ոք չլսեսեց։ Մարտին
Բուդրանիչն, այդ անախորժ դէպքի տպաւորութիւնը
չնչելու նպատակով, խնդրեց Լիզային դաշնամուր
նուագել։ Այս անդամ Եւգենիան կարեց քրոջ առաջը,
որ ինքը խաղայ։ Ես մի փոքր լսեցի և յետոյ գլխարկս
վերցրի ու չախչախված սրտով դուրս եկայ, չընայելով
Մարտին Բուդրանիչի հրաւէրին՝ թէյի սպասելու։

Թէ ինչպէս անցկացրի մնացեալ օրն ու գիշերը,
ես չեմ պատմիլ քեզ, Գէորգ։ Հետևեալ առաւօտ վճ-
ռեցի գնալ և Լիզայից բացատրութիւն պահանջել։

Սովորական ժամանակն էր, երբ ես մտայ նրա
մօտ։ Բարեբաղդաբար, նա մենակ էր։ Մարտին Բուդ-
դանիչը կլուբում լրագիրներ էր կարդում, իսկ Եւգե-
նիան իւր լպստածի հետ չզգիտեմ ինչ տեղ էր կորել։
Լիզան ընդունեց ինձ սառնութեամբ և, հազիւ հազ
իւր մատների ծայրերը շփելով ձեռիս, հրաւիրեց նըս-
տել։ Ես վճռեցի իսկոյն և եթ սկսել։

«—Լիզա, ես եկել եմ քեզանից բացատրութիւն
խնդրելու,—ասացի ես։

«—Ա՛ա՛։

«—Ի՞նչ էր նշանակում երեկուայ քո վարմունքը։

«—Ես չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել։

«—Մի թագցնիլ, Լիզա, ուղիղն ասա, ինձ սի-

բում եմ։

Լիլան լռեց։

«—Ձեռս սիրում, նրանն եմ սիրում։

Լիլայի դէմքը շառագունեց։ Եմ այնքան յուզված էի, որ Սեթեանի անունը չէի կարող յիշել։

—Սիրում եմ, սիրում եմ նրան,—հարցրի եմ, բռնելով նրա թևը։

«—Ո՞ւմ համար եմ ասում,—հարցրեց, վերջապէս, Լիլան, թևը վրդովուած խլելով ինձանից։

«—Սեթեանի,—պատասխանեցի, հաղիւ հաղ կարողանալով արտասանել այդ չարագուշակ անունը։

«—Ձգիտեմ ինչ հիման վրայ ես դու այդպէս կարծում։

«—Հեռնվելով երեկուայ քո վարմունքի վրայ։

«—Օրինա՞կ։

«—Դու ամբողջ ժամանակ նայում էիր նրա երեսին։

«—Մի՞թէ արգելված է մարդուն՝ նայել մարդու երեսին։

«—Բայց ինչո՞ւ ինձ վրայ չէիր նայում։

«—Հա հա հա—ծիծաղեց Լիլան։

Ես աւելի վրդովուեցի։

«—Դու ծիծաղո՞ւմ ես ինձ վրայ, Լիլա, դու ծաղրում ես ինձ,—ասացի ես, կրկին բռնելով նրա թևը։

«—Կան հարցեր, որոնց պատասխանը միայն ծիծաղն է,—պատասխանեց նա, կրկին թևը խլելով ձեռիցս։

«—Ուրեմն իմ հարցը չա՞տ յիմար հարց է քո կարծիքով։

«—Ձգիտեմ, ինքդ դատիր։



Մի քանի վայրկեան ես լռեցի։ Չը գիտէի ինչ ասել։

«—Լիլա, պարզիր ինձ քո միտքը,—կոսեցի ես, վերջապէս։

«—Ի՞նչ ես ուզում։

«—Ինձ սիրո՞ւմ ես։

Լիլան դուխը թեքեց կրծքին, մի քանի վայրկեան մտածեց և յանկարծ, կրկին բարձրացնելով, վճռողական եղանակով ասաց.

«—Ձեմ սիրում։

«—Պատճա՞ռը։

«—Պատճառը... չգիտեմ,—արտասանեց Լիլան...

«—Բայց ես քեզանից բացատրութիւն եմ պահանջում։

«—Ես ասացի քեզ, որ չեմ սիրում։

«—Պատճառն եմ հարցնում։

«—Լսիր... լսեցէ՛ք։ Ես քո, ներողութիւն... ես ձեր մէջ այլ ևս չեմ տեսնում այն ոյժը, որ ինձ յափշտակեց, ինձ, որ մինչև քանուվեց տարեկան հասակս ոչ ոքով չէի յափշտակվել։

«—Ինչո՞ւ, մի՞թէ ես փոխվել եմ։

«—Չգիտեմ, գուցէ դուք միևնոյնն էք, բայց այն օրից, երբ ես ձեզ բոլորովին ճանաչեցի, դուք իմ աչքում հատատարվեցիք հասարակ մարդկանց հետ։

«—Մի՞թէ դու կարծում էիր, որ ես հասարակ մահկանացու չեմ։

«—Այնքան էլ թեթեւամիտ չեմ, որ ձեզ անմահի տեղ ընդունէի։ Բայց ես ձեր մէջ չեմ տեսնում այն գօրութիւնը, որ հպատակեցնում է կնոջը, որ ստրկաց-

նում է նրան: Տղամարդը պէտք է ունենայ այդ յատկութիւնը:

«—Ախար դա ինչ զօրութիւն է, Լիզա, որ դուրս ինքդ էլ բացատրել չես կարողանում,—հարցրի ես խեղդված ձայնով:

«—Առայժմ չըգիտեի ինչ զօրութիւն է, այժմ պարզ վեց ինձ համար: Դա այն զօրութիւնն է, որ տղամարդին պահում է կնոջ համար մի անհատանելի բարձրութեան վրայ: Կինը միշտ պիտի ձգտի մօտենալ այդ բարձրութեան, բայց չկարողանայ հասնել: Հէնց որ հասաւ, այնօրուանից տղամարդը կընկնի նրա աչքում, և նա այլ ևս չի կարող սիրել տղամարդին, ինչպէս այժմ ես չեմ կարող սիրել ձեզ, պարոն Մախսուտեան:

«—Լիզա, դու հերոս ես որոնում, ախ, ոչ, ներողութիւն, դուք, դուք հերոս էք որոնում:

«—Դիցուք թէ հերոս եմ որոնում, մի՞թէ չի կարելի դառնալ:

«—Հերոսները դադրութիւն ունին միայն վէպերում: Վիպասանի երևակայութիւնն է ստեղծում նրանց: Դուրս բերէք ձեր գլխից այդ ցնորքը:

«—Քաղաքավարութեան սահմանից մի դուրս գաք,—ընդհատեց ինձ յանկարծ Լիզան հրամայողական ձայնով: Ես ցնորված չեմ, ոչ էլ յափշտակված վիպասանների երևակայութեան պատուղներով: Լսեցէք: Մարդը բնութիւնից ծնված է կամ ըստ երկու էակների, դիցուք այր և կին, միանում են բաղատարուկ լինելու կամ ստրկացնելու ձգտումներով: Երբ ստրուկ լինելու, ապրելու համար, նրանցից մէկը պիտի լինի ստրուկ, միւսը՝ նրա տէրը: Ուրիշ կերպ անհնարին է, որ նրանք բաղդատուր լինին: Նրանց միացնող կապը չի կարող առանց դրան ամուր լինել:



«—Այսինքն այնպէս, ինչպէս ասիական ընտանիքներում, ուր մարդը կնոջ տէրն է,—հարցրի ես, աւելի ու աւելի զարմանալով:

«—Ամենևին, — պատասխանեց Լիզան,—ամենևին: Այնտեղ տիրում է բռնակալութիւն և ոչ թէ ստրկութիւն: Այնտեղ կինը հպատակվում է մարդու արտաքին իրաւունքներին: Ես խօսում եմ այն բարոյական և հոգեկան առանձնայատկութիւնների մասին, որոնք մի էակին անգիտակցաբար հպատակեցնում են միւսին: Լաւ լսեցէք, անգիտակցաբար եմ ասում և ոչ թէ գիտակցաբար:

Այս խօսքերից յետոյ Լիզան լռեց:

«—Բայց ինչո՞ւ պիտի միայն տղամարդն ունենայ իւր մէջ այդ ձեր ասած հոգեկան զօրութիւնը,—հարցրի ես:

«—Ես ղգում եմ, որ կնոջ համար աւելի դիւրին է և քաղցր հպատակվել, քան թէ հպատակեցնել: Հէնց այդ հպատակութիւնն է, որին մարդիկ սխալմամբ անուանում են կնոջ սէր: Ես այսպէս եմ հասկանում:

«—Դա սխալ գաղափար է, օրիորդ,—ընդհատեցի ես:

«—Սխալ թէ ուղիղ, բայց իմ համոզմունքն է:

«—Եւ դուք երբէք չէք փոխելու:

«—Երբէք:

«—Ուրեմն իմ մէջ չկայ այդ զօրութիւնը:

«—Չըգիտեմ, բայց, ոմն դիտէ, դուցէ կայ—ես չեմ ղգում: Սակայն ինձ թւում է, որ եթէ ղգայի, այս խօսակցութիւնը մեր մէջ չէր լինել և ես կըհետևէի ձեզ անգիտակցաբար, ուր որ գնայիք:

«—Բայց ո՛ւմ մէջ էք ղգում,—հարցրի ես:

«—Բաւական է,—պատասխանեց Լիզան խստութեամբ։

«—Ուրեմն ձեր սէրը դէպի ինձ...

«—Ես պատասխանեցի արդէն այդ հարցին,—ընդհատեց խօսքս Լիզան և, ձեռով մի վճռողական շարժում անելով, բարձրացաւ տեղից։

Ես սչխարի պէս մի րոպէ ապշած նայեցի նրա երեսին, յետոյ կոկորդիս մէջ զգացի մի ճնշում։ Կարծես, մէկը խեղդում էր ինձ։

Լիզան նայեց ինձ և ասաց.

«—Դուք արտասվում եք, դա թուլութիւն է...

Իրաւ որ ես յիմարս արտասվում էի, Դէորգ, և շատ դառն էի արտասվում։ Բայց Լիզայի յանդիմանութիւնը մի րոպէ իմ մէջ վառեց առնական ինքնասիրութիւնս։ Ես գլխարկս վերցրի և ասացի.

«—Մնացէք բարով։

«—Գնացէք բարով, կարող էք այցելել, եթէ ուզում էք,—պատասխանեց Լիզան, ձեռը մեկնելով ինձ։

«—Ոչ, յաւիտեան, յաւիտեան,—կրկնեցի ես և շտապով դուրս եկայ։

Այստեղ Արզաս Պետրովիչը յանկարծ լռեց և, գրպանից թաշկինակը հանելով, սրբեց ճակատը, ուր քրտինքի նշոյլ անգամ չկար։ Նա այնպիսի արագութեամբ և ամուր էր քաշում թաշկինակը, որ, կարծես, այդպիսով ուզում էր հեռացնել իրանից անցեալի վշտալի յիշատակները։ Դէորգը, որ մինչև այդ ժամանակ լուռ ու մունջ, աչքերը յառած իւր բարեկամի երեսին, խորին ուշադրութեամբ լսում էր նրա պատմութիւնը, անհամբերութեամբ հարցրեց.

—Ետո՞յ։



—Ետոյ, էլ ինչ յետոյ,—պատասխանեց Արզաս Պետրովիչը, խորը հառաչելով։ Ետոյ, բարեկամս, ընկայ այն դրութեան մէջ, որից դուրս գալու համար միայն երկու ելք ունէի—կամ ինքնասպանութիւն կամ մոռացութիւն։ Բարեբաղդաբար, կարողացայ դիմել երկրորդ միջոցին։ Հանգամանքների բերմամբ կառավարութիւնն ինձ պաշտօնով փոխադրեց ուրիշ քաղաք։ Այստեղ ինձ յաջողվեց մի տարուայ ընթացքում դուրս բերել սրտիցս Լիզային։ Լիզայի հետ իմ մէջ մեռան և՛ սիրոյ զգացումը, և՛ հաւատը դէպի կին ասված էակը։ Իսկ թէ որքան ծանր և տաժանելի եր ինձ համար այդ մի տարին, ես չեմ պատմիլ, Դէորգ, որովհետև առանց այն էլ պատմութիւնս խիստ երկարացաւ։

Արզաս Պետրովիչն արագութեամբ բարձրացաւ տեղից, ժամացոյցին նայեց և ասաց.

—Բարի գիշեր։

—Սպասիր,—պահեց նրան Դէորգը,—դու դեռ չես աւարտել քո պատմութիւնը, ուր ես շտապում։

—Ես աւարտեցի,—ասաց Արզաս Պետրովիչը, գլխարկը դնելով։

—Իսկ Լիզա՞ն։

—Մինչ այդ հետաքրքրելի է։

—Գոնէ ինձ համար խիստ հետաքրքրելի է։

—Յիշում ես այն երեկոն, երբ Մոշտայիդում ես ու դու զբօսնում էինք։

—Յիշում եմ,—պատասխանեց Դէորգը, նոյնպէս բարձրանալով տեղից։

—Յիշում ես, երբ մենք նստած թէյ էինք խըմում, մեր առջևով անցաւ մի առողջ գոյդ, որին ես

բարևեցի։

—Այն գեղեցիկ կինն և այն բարձրահասակ տղամարդը,—հարցրեց Գէորգը հետաքրքրվելով։

—Գեղեցիկ կինը Լիզան էր, բարձրահասակ տղամարդը—ժռայլ Սեթեանը։

—Ուրեմն...

—Պահվել են վաղուց։

—Բայց ինչպէս են ապրում։

—Զըգիտեմ, միայն համոզված եմ, որ Սեթեանն այժմ էլ լռում է և Լիզայի տասը հարցին մի պատասխան չի տալիս։ Տասը հարցին մի պատասխան չի տալիս և իւր դլուխն ու սիրտը չի պարզում նրան, ինչպէս ես արեցի յիմարաբար։

—Տասին մէկ պատասխան չի տալիս,—կրկնեց Գէորգը։

—Տասին մէկ։

—Ուրիշ ոչինչ։

—Ուրիշ ոչինչ։ Բարի գիշեր, արդէն տասներկու ժամն է։

—Սպասիր, իսկ Եւգինեան, լպստածը, Մարտին Բուղդոնիչը,—հարցրեց իրարու հետևից Գէորգը։

—Hy, դա հետաքրքրելի չէ։ Բարի գիշեր, քունս տանում է։

---

Արդաս Պետրովիչը հեռացաւ։ Գէորգը մնաց մենակ։

—Ողորմելի մարդ,—ասաց նա,—միայն մի փորձով կնոջ վրայ այդպիսի գաղափար է կազմել։

Այնուհետև նա մի քանի վայրկեան ընդհատ մտածման մէջ և յետոյ, ձեռը ճակատին խփելով, աւելացրեց.

—Բայց արժէ մտածել Լիզայի փիլիսոփայութեան մասին։

Թիֆլիս, 1884 թ.

# ՓԱԹՄԱՆ ԵՒ ԱՍԱԴԸ

*Պատկեր Թուրքերի կեանքից*

I

Շահարի-Շերվանի ցերեկուայ հեղձուցիչ տօթից թմրած կեանքն իրիկնադէմին կենդանութիւն էր ըստացել: Բազարում սիրում էր անասելի աղմուկ: Մըրգավաճառները, կանաչեղէն և կաթն ու պանիր ծախողները, ձայն ձայնի տուած, արևելեան զարդարուն խօսքերով գովաբանում էին իրանց ապրանքը: Վաճառականների և արհեստաւորների խանութները փակվում էին, հայ ու թուրք վերադառնում էր տուն:

Հեռուում զօրանջում էին քրիստոնէական եկեղեցիների զանգերը, իսկ Ջումա-մասճիթի մինարէթի դագաթից մօլլա Խալիլ ազանի [1]) սուր ելևէջները քարասիրտ միսուլմանի սիրտն անգամ բորբոքում էին աստուածային հրով: Բարեպաշտները խորին ջերմեռանդութեամբ սալաւաթ [2]) էին քաշում իրանց երեսին, նամազ [3]) էին անում և, մասճիթների աւազանների մօտ կըկզած, դեաատամազ [4]) էին անում: Ամենքը փառաբանում էին մէն մի Ալլահին և նրա մէն մի մարգարէին:

Մռայլ և անտարբեր էր նոյն ժամին մի երիտասարդ անցորդ: Եւ նրա մռայլութիւնը չէր նմանում ոչ տաժանակեաց մուրացկանի թշուառութեանը, ոչ նաւը խորտակված վաճառականի թախծութեանը և ոչ հինգ նամազից մէկն էլ չըկատարած միսուլմանի անձկութեանը:

Նա անցնում էր միջին բազարով, բարձրանում էր դէպի քաղաքի Իմամլու կոչված թաղը: Ոչըք և ոչինչ չէր դրավում նրա ուշադրութիւնը: Եւ նրա ուղղափառ միսուլմանական զգացումները չէին վրդովվում երևելի դարվիշ Ասադի դէմ, որ, հայերին շողոքորթելու համար, իւր ոգևորիչ ձայնով երգում էր.

«Յիսուս իմ աւետ վայր—երկնքից, նա լուր բերեց —այն աշխարհից... (Իսա գեալդի—սամավաթտան, խաբար վերդի—դիամաթտան...):

Երիտասարդը գնում էր մոլոր քայլերով, գլուխը կրծքին թեքած և աչ ձեռը խրած մէջքի արծաթեայ գօտիի մէջ: Կասես, նա անբաղդ Մեաջնունն էր, որ, իւր հօր տունը թողած, գիմում էր Արաբիայի ամայի և հրակէզ դաշտերը, երգելով իւր սէրը Լէյլիին: Նա նման էր և՛ մեծ մարգարէի սիրեցեալ Քէյբին, որ, ե-

---

[1]) Մօլլայի կոչը—միսուլմաններին աղօթքի հրաւիրելը:

[2]) Սալաւաթ նշանակում է այն, երբ միսուլմանները Մահամմէդին յիշեցնում, իրանց երեսը աչ ձեռով չփում են:

[3]) Աղօթք:

[4]) Լուացումն: Միսուլմանները աղօթելուց առաչ լուանում են իրանց երեսը, բազուկները և ոտները: Այս արարողութիւնն անուանվում է «դեաատամազ»:

բևակայութեան ոչխիանոսը խորասուզված, յօրինում էր մինն այն դրախտային երգերից, որոնցով արաբ չահիրը [5]) ախորժանք էր նուիրում մարդաբէից մարդաբէի սրբազան լսելիքին:

Անցաւ նա բազարն, անցաւ Իմամլուի կէսը և, ծռվելով մի նեղ փողոց, կանգ առեց մի կիսաւեր տան առջև: Փողոցում մարդ չէկար, միայն հեռվում խաղում էին մի խումբ երեխաներ և մի ոտաբոբիկ, կիսամերկ մարդ հաւաքում էր բաղնիսի պատերից քաշ արած ճերմակեղենը:

Նա հանեց աչ ձեռը գօտիի միջից, ուղղեց ուղտագոյն չուխայի և մահուդեայ մեխակագոյն կարճ արխալուղի լայն փեշերը, շփեց նորաբոյս, սևաթոյր ընչացքը: Դա մի հսկայաձիպ տղամարդ էր: Շերվանի յայտնի տղամարդներից մեկը, յայտնի իր առնական դէմքով, իր բարձր հասակով, իր վայելուչ կազմուածքով, իր անվեհեր սրտով: Մի խօսքով, դա սարի-թորփաղցի Ասադն էր:

Ձեռները չուխայի տակ մէջքին դրած, նա երկար ժամանակ մնիկ էր անում դէմ ու դէմ, դէպի մի փոքրիկ նորաչէն տան մուգ-մոխրագոյն դռները: Նրա մերթ ընդ մերթ հառաչելը, կրակոտ աչքերի արտասուոր փայլն և անհամբեր շարժուձևերը ցոյց էին տալիս, որ նա մեկին սպասում է:

Յանկարծ նրա ախորամած դէմքի վրայ փայլեց մի ուրախ ժպիտ: Մուգ-մոխրագոյն դռներից մեկը հանդարտ բացվեց, երևաց մի երիտասարդ կնոջ դէմքս, ծածկած մետաքսեայ ճուտիխով (գլխոց) և ճա-

[5]) Բանաստեղծ:



կատը զարդարած տաճկական ոսկիների շարքով:

Ասադը թռաւ առաջ, մօտեցաւ նորաչէն տանը:

Մարդ չատ նուրբ լսելիք պիտի ունենար, որ կարողանար ըմբռնել երիտասարդ կնոջ չչնչիւնը:—Այնքան թոյլ էր նա, երկչոտ և կցկտուր:

Եւ Ասադի լսելիքն ունէր այդ նրբութիւնը, ունէր լոկ այդ վարդագոյն շրթունքների համար, որ սիրում էին դէպի նա երկնային երջանկութեան բուրմունքը: Նա կանգնած էր մուգ-մոխրագոյն դռներից հինգ քայլափ հեռու, մէջքը տուած պատին՝ պատահական անցորդի անհամեստ հայեացքից աննկատելի մնալու համար:

Ինչ էին չչնչում նրանք, գիտէ միայն Նա, Որ քննում է մահկանացուների սիրտն և Որի համար գաղտնիք չկայ: Իսկ մենք մեզանից կլլինինք ճշմարտութեան դէմ, եթէ ասենք, թէ չչնչիւնը տևեց հինգ րոպէից աւելի:

Մուգ-մոխրագոյն դռները կրկին փակվեցին, և տաճկական ոսկիներով զարդարված գլուխն անյայտացաւ, տանելով իր հետ Ասադի խորին հառաչանքը: Նա դարձեալ մնաց միայնակ: Այժմ նրա դէմքն այլայլված է, աչքերն արիւնի հոսանքից կարմրած, իսկ առնական լայն կուրծքը յորդոր շնչառութիւնից ուժգին բաբախում է:

—Ամենակարող Աստուած, տուր ինձ համբերութիւն,—արտասանեց նա ինքն իրան:

Եւ այս խօսքերը չկարողացան թափանցել ամուր փակված դռներից ներս:

Նա դարձեալ սպասում էր, բայց, աւաղ, մուգ-մոխրագոյն դռները հեռզհետէ մթնանում էին և ոչ

բացվում։ Նա, քաղցած գայլի պես, քթի տակ խուլ մռնչալով, ամայի փողոցում շրջում էր յետ ու առաջ։

Մութը թանձրանում էր, կապտագոյն երկնքում փայլում էին պայծառ աստղերը, տիրում էր թախծալի լռութիւն, բազարը խաղաղվել էր։

Հեռուից լսվեց քայլերի ձայն, փողոցի անկիւնում երևեց մի մթին պատկեր։ Ասադը չարունակ անցուդարձ էր անում։

Պատկերը փողոցի մէջտեղով դանդաղութեամբ շարժվում էր առաջ։ Ասադը չէր լսում նրա ոտների ձայնը։ Պատկերը բոլորովին մօտեցաւ։ Նոյն վայրկեանին, երբ Ասադը յետ դարձաւ, նրա ծխախոտի կրակի աղօտ ճառագայթը լուսաւորեց... մէջահասակ, գէր մարմնով, կարճ և հինայած մէրուքով մի մարդու։ Մարդը, Ասադին ճանաչելով, զայրացաւ և տեղն ու տեղը մնաց բևեռված։

Ո՞վ էր նա...

## II

Եօթն անգամ լուսինը շրջան էր գործել այն օրից, երբ Ասադի աչքը կպաւ Իսմայլուցի մօլլա Ղանիի աղջկան, Ֆաթմային։ Առաջին անգամ նա տեսել էր նրան Սարի-Թորփաղ թաղում։ Ֆաթման հիւր էր իւր Բադիմ անունով քրոջ մօտ, որ սարի-թորփաղցի խաւիլ աղայի կինն էր։

Նոյն պահին, երբ Ֆաթման իւր քրոջ տան բակում առանց շալի նստած էր, Ասադն իրանց տան կարում աղաւնի էր թռցնում։ Նա տեսաւ Ֆաթմային, և իսկոյն նրա սիրտը կրակ ընկաւ։



Եւ ո՛ր պարսիկը անտարբեր կըմնար, եթէ մի վայրկեան տեսնէր Ֆաթմային—նրա սաթի պէս սև աչքերը, կամարակապ ունքերը, ճակատի կոլորիկ խալը, երկայն թերթերունքները, կարմիր թշերը, սպիտակ, լիք-լիք կոկորդը, մանաւանդ բարակ դանակուզ շապկի տակ թագնված այն երկու նռները, որ շախ-շախ դողդողում էին, երբ Ֆաթման սիգաճեմ քայլում էր։

Այդ օրից սկսած Ասադը գիշեր ու ցերեկ տանջում էր իւր մօրը, որ սա անպատճառ հարանախօս գնայ Ֆաթմայի մօր մօտ։ Պառաւ Նուրջհանը մի անգամ փորձեց Բադիմի մօտ ակնարկութիւն անել, բայց մի այնպիսի պատասխան ստացաւ, որ ստիպվեց այլ ևս յանիսեան չբերնել այդ մասին։

Ֆաթման գեղեցիկ էր և բաւական հարուստ. շատ բէգեր ու հաջիներ կըկամենային նրան կին ունենալ։ Բայց, իբրև վճռված բան, խօսում էին Հաջի-Ալեաքպարի մասին։ Հաջին Իսմայլու թաղի ամենահաջին մարդն էր։ Իսկ ո՞վ էր Ասադը։—Մի հասարակ արծաթագործ...

Բայց նա չըյուսահատվեց։ Հաջի Ալեաքպարի եղբայր ահագին քարվանսարաների և մեծ անուան դէմ նա միայն մի զէնք ունէր—իւր առնական գեղեցկութիւնն և քաջասրտութիւնը։ Եւ նա վճռեց այդ զէնքի բոլոր ուժով մրցել Հաջիի հետ։

Մի անգամ Ֆաթման դարձեալ իւր քրոջ տանն էր։ Ասադը դարանամուտ եղաւ իրանց տան կողմում և այնտեղից աչքունքով սկսեց նետեր արձակել գեղեցկուհու սրտին։ Ֆաթման լսել էր նրա անունը, գիտէր, որ նա գեղեցիկ տղամարդ է, քաջասիրտ է և Սարի-Թորփաղի երիտասարդների պարագլուխը—յա-

բացվում։ Նա, քաղցած գայլի պես, քթի տակ խուլ մռնչալով, ամայի փողոցում շրջում էր յետ ու առաջ։

Մութը թանձրանում էր, կապտագոյն երկնքում փայլում էին պայծառ աստղերը, տիրում էր թախծալի լռութիւն, բազարը խաղաղվել էր։

Հեռուից լսվեց գայլերի ձայն, փողոցի անկիւնում երևեց մի մթին պատկեր։ Ասադը չարունակ անցուդարձ էր անում։

Պատկերը փողոցի մէջտեղով դանդաղութեամբ շարժվում էր առաջ։ Ասադը չէր լսում նրա ոտների ձայնը։ Պատկերը բոլորովին մօտեցաւ։ Նոյն վայրկեանին, երբ Ասադը յետ դարձաւ, նրա ծխախոտի կրակի աղօտ ճառագայթը լուսաւորեց... մէջահասակ, գէր մարմնով, կարճ և հինայած միրուքով մի մարդու։ Մարդը, Ասադին ճանաչելով, զայրացաւ և տեղն ու տեղը մնաց բևեռված։

Ո՞վ էր նա...

## II

Եօթն անգամ լուսինը շրջան էր դարձել այն օրից, երբ Ասադի աչքը կպաւ Իմամլուցի մօտ Ղանիկ աղջկան, Ֆաթմային։ Առաջին անգամ նա տեսել էր նրան Սարի-Թօրփաղ թաղում։ Ֆաթման հիւր էր իր Բագիմ անունով քրոջ մօտ, որ սարի-թօրփաղցի խալիլ աղայի կինն էր։

Նոյն պահին, երբ Ֆաթման իր քրոջ տան բակում առանց չալի նամած էր, Ասադն իրանց տան կտրում աղաւնի էր թռցնում։ Նա տեսաւ Ֆաթմային, և իսկոյն նրա սիրտը կրակ ընկաւ։



Եւ ո՛ր պարսիկը անտարբեր կըմնար, եթէ մի վայրկեան տեսնէր Ֆաթմային—նրա սաթի պէս սև աչքերը, կամարակապ ունքերը, ճակատի կոլորիկ խալը, երկայն թերթերուկները, կարմիր թշերը, սպիտակ, լիք-լիք կոկորդը, մանաւանդ բարակ գանաուզ շապկի տակ թաղնված այն երկու նռները, որ չախ-չախ դողդողում էին, երբ Ֆաթման սիգաճեմ քայլում էր։

Այդ օրից սկսած Ասադը գիշեր ու ցերեկ տանջում էր իւր մօրը, որ սա անպատճառ հարսնախօս գնայ Ֆաթմայի մօր մօտ։ Պառաւ Նուրջհանը մի անգամ փորձեց Բագիմի մօտ ակնարկութիւն անել, բայց մի այնպիսի պատասխան ստացաւ, որ ստիպվեց այլ ևս յանիւեան չբիւսել այդ մասին։

Ֆաթման գեղեցիկ էր և բաւական հարուստ. շատ բէգեր ու հաջիներ կըկամենային նրան կին առնել։ Բայց, իբրև վճռված բան, խօսում էին Հաջի-Ալեաքպարի մասին։ Հաջին Իմամլու թաղի ամենաառաջին մարդն էր։ Իսկ ո՞վ էր Ասադը։—Մի հասարակ արծաթագործ...

Բայց նա չըյուսահատվեց։ Հաջի Ալեաքպարի եբեք ահագին քարվանսարաների և մեծ անուան դէմ նա միայն մի զէնք ունէր—իւր առնական գեղեցկութիւնն և քաջասրտութիւնը։ Եւ նա վճռեց այդ զէնքի բոլոր ուժով մրցել Հաջիի հետ։

Մի անգամ Ֆաթման դարձեալ իւր քրոջ տանն էր։ Ասադը դարանամուտ եղաւ իրանց տան կտրում և այնտեղից աչքունքով սկսեց նշաններ արձակել գեղեցկուհու սրտին։ Ֆաթման լսել էր նրա անունը, գիտէր, որ նա գեղեցիկ տղամարդ է, քաջասիրտ է և Սարի-Թօրփաղի երիտասարդների պարագլուխը—ջա-

հիլբաշին—է։ Ֆաթմանն տեսաւ Ասադին, ծիծաղեց, կարմրեց և փախաւ ու մտաւ տունն։

Դա բարեդուշակ նշան էր։ Ասադի յոյսերն ամրացան։ Բորբոքված սրտով նա չատ անգամ, երբ Ֆաթմանն երկար միջոց իր քրոջ տանը չէր երևում, գալիս էր Իմամլու թաղը։ Գալիս էր՝ դէթ հեռուից տեսնելու իր սիրածին, որ գիշերը կարողանայ խաղաղ քնել։ Բայց այդ նրան յաջողվում էր ոչ ամեն անգամ. միշտ փողոցը դատարկ չէր լինում և միշտ Ֆաթմանն—անզդոյշ, որ իր դլուխը դռներից դուրս հանի։

Հաջի-Ալեաքպարը Ֆաթմայի և Ասադի այս գաղտնի և առ այժմ անմեղ յարաբերութիւնն իմացաւ, մի անգամ էլ ինքն իր աչքով տեսաւ Ասադին իրիկնադէմին Ֆաթմայի տան դռների դէմուդէմ։

Նա երդվեց Ասադի յիմար այցելութիւններին վերջ տալ։ Եւ ահա իրիկնային մթան մէջ պատահմամբ երկու ախոյեանները կանդնած էին դէմ յանդիման։

—Բեռ՛ի,—արտասանեց Հաջի-Ալեաքպարը, աջ ձեռը տանելով չուխայի տակ դէպի մէջքը։

Ասադը լուռ էր։ Եթէ մի փոքր լոյս լինէր, կարելի էր նկատել այն խորին արհամարհական հայեացքը, որ նա ձգեց Հաջիի վրայ։ Այն ինչ՝ Հաջին, աւելի ու աւելի մօտենալով, վերջապէս, բոլորովին կորեց նրա ճանապարհը։

—Սալեամ մեալիքըմ [6]),—ասաց Ասադը, զսպելով իր յուզմունքը։

[6]) Միւսուլմանների բարևը.



Առանց նրա ողջոյնին «ալիքիմի սալեամ» պատասխանելու, Հաջին մի քանի քայլ յետ դրեց և խրոխտ ձայնով արտասանեց.

—Վկայ է Աստուած, ես քեզ ճանապարհ չեմ տալ, մինչև չես երդուիլ այսուհետև ոտ չդընել այս փողոցները։

Ասադը հեգնօրէն ծիծաղեց։

—Երդուի՛ր, քեռիդ,—կրկնեց Հաջին,—այնուհետև ճանապարհը բաց և դու մի անառակ քած։

—Հաջի,—պատասխանեց Ասադը հանդարտ ձայնով,—Ասադն իւր կեանքում արիւն չի թափել, չի էլ ուզում թափել։

—Արի՛ւն,—գոչեց Հաջին կատաղած,—դու ինչ մարդ ես, որ արիւն թափես։ Իսէր Աստուծոյ, նայեցէք,—շարունակեց նա, երեսը մի կողմ դարձնելով, չընայելով, որ փողոցում բացի երկու հակառակորդներից ոչ ոք չկար,—սարիթօրփաղցի մի լկտի երեխայ յանդգնում է Հաջի-Ալեաքպարի ձեռքից աղջիկ խլել։ Էֆ, ինքն Ալլահն իմ ձեռքից մօլլա Սադըղի աղջկան առնել չի կարող, իսկ քեզպէս...չները...

Ասադի արիւնը դլխովն ուեց։ Բայց նա տակաւին այժ ունեցաւ զսպելու իր կատաղութիւնն և ասաց.

—Ֆաթմանն նրան կըզնայ, ում սիրում է։

—Հա, հա, հա, Ֆաթմանն սիրում է արծաթածործ Ասադին, հա, հա, հա...

—Աստծուն է յայտնի... բաւական է, Հաջի, երկուսն արդէն ունիս, բաւական է, ազահութիւնը տուն է քանդում, Հաջի։

—Բառասուն կնիկ էլ ունենամ, էլի չեմ թողնիլ,

որ Ֆաթմային քեզ նման լրբերը տանեն։

Աստղի համբերութիւնը հատաւ։ Այլ ևս նա անկարող էր տանել իւր հակառակորդի անվայել յիշողները։

—Հարամ լինի քո դէմին հայհոյութիւնդ, աննամուս,—գոչեց նա կատաղած.

—Ձայնդ կտրիր, քեաֆը.. քէօ...

Վերջին բառը չաւարտած, Հայի-Ալեաքպարը մի քայլ ևս յետ դրեց և չուխայի տակից արագութեամբ մի ինչ-որ սև բան հանեց։ Աստղը մթան մէջ նշմարեց նրա չարագուշակ շարժումը։ Նա յարձակվեց Հայիի վրայ, բռնեց նրա թևերից և այնպէս սաստիկ հրեց, որ նա, տասը քայլ հեռու մղվելով, թաւալվեց գետնին։ Մինչ նրա ուշքի գալը, մինչ «օգնեցէք, օգնեցէք» գոռալով բարձրանալը, Աստղը վերցրեց գետնից տարճանակը, ձգեց դիմացի տան կտուրն և, քայլերն ուղղելով դէպի վերև, անյայտացաւ խաւարի մէջ...

## III

Դարձեալ երեկոյ էր, դարձեալ մուէզինները աղան էին տալիս և քրիստոնեաների զանգերը հրաւիրում էին Աստուծոյ տունը հաւատացեալներին։ Քաղաքի արևմտեան կողմից փչում էր մի հով զեփիւռ։ Եւ որքան դիւրեկան լիներ այդ զեփիւռը, կարծես, նա զաբրիստաններից [7]), մեռելների այդ մռայլ աշխարհից, հնչեցնում էր մահու սոսկալի ձայնը.

[7]) Գերեզմանատուն։



«Մի հպարտանար, ով Ինսան [8]), վասն զի քո վերջին ապաստանարանը այստեղ է»։

Իսկ Ինսանը հպարտանում էր, իմամլուցիները—նամանաւանդ։

Հայի-Ալեաքպարի բարձրաշէն տան առջև խըմբվել էին թուով մօտ տասը պարագլուխ—երիտասարդներ։ Մէջտեղ կանգնած էր ինքը Հային, ուսերին ձգած գեղնագոյն մեռաքսեայ աբան և ձեռին բռնած մի երկայն կարմրակեղև չիբուխ։ Երիտասարդները, ձեռները գօտիների վրայ դրած, խորին պատկառանքով լսում էին Հայիի հետևեալ տրամաբանութիւնը.

—Ամեն մի մարդ իւր թաղի պատուի նախանձախնդիրը պիտի լինի։ Մենք, իմամլուցիներս, մեր պապերի պապերից սկսած, հպարտ և պատուախնդիր ենք եղել, այժմ նամանաւանդ պիտի լինինք։ Ցայտնի է Աստծուն, որ արիւնս երակներիս մէջ բորբոքվում է, երբ յիշում եմ այն քեաֆրի տղայ քեաֆրի այս փողոցներն այցելելը։ Թքեցէք Հայի-Քեաբիմի որդի Հայի-Ալեաքպարի երեսին, որ նա այն երեկոյ լրբի փորը ծխով չըլեցրեց։ Բայց, ինչ անեմ, անիրաւը նապաստակի նման փախաւ ձեռքիցս։ Ես, բարկացած, տարճանակս ձգեցի կտուր։ Վերջապէս, անցածն անցել է, «ետևից արձակողը գարշապարին կըխփէ», ասում է առածը։ Այժմ պատիւը ձերն է, սարիթօրփաղցի տղայի մէկը յանդգնում է ձեր Թաղի անունը խայտառակել, ձեր պարտքն է նրա ոտը կտրել այս տեղից։ Վալլահ, Բիլլահ, Հայի չըլինէի, այս րոպէիս, մեռաքսեայ աբաս դէն ձգելով, մի փայտ վերցնելով,

[8]) Մարդ։

մէն միայնակ կըգնայի ամբողջ Սարի-Թօրփաղի դէմ։ Բայց ամօթ է, ձեզպէս երիտասարդները կանգնած, ինձ չըպիտի թողնէք, որ միրուքս անպատուեմ։ Ճըշ-մարիտ եմ ասում։

—Այո, այո, Հալի, ինչ ասել կուզի, որ իսկակ ճշմարիտն էք հրամայում,—ասաց խորոված ծախող Հէյբաթը, որի մի աչքը դուրս էր եկել Մահառռամի կռուի ժամանակ։

—Լսում էք, ջահիլներ, ամօթ մեր շիր ու չնոր-քին,—մէջ բերեց Մէյթին, Իմամլուի ամենալաւ փայտ խփողներից մէկը։

Թռչնորս Սակեաբը, որ երևելի քար գցող էր և երկու մարդու աչք էր հանել, մէկի էլ ոտը գօսաց-րել, ասաց, թէ յետաձգելը երկչոտութիւն է, թէ հէնց այսօր իսկ պիտի թաղակռիւ սկսել Սարի-Թօր-փաղի հետ։ Այս միտքը բոլորն ընդունեցին։ Բայց Հալին չէը շտապում. նա, պարագլուխ երիտասարդ-ներին մէկ մէկ ծխախոտ նուիրելով, ասաց.

—Մի վռազէք, բոլորովին մի վռազէք, այսօր չը-լինի—վաղը լինի, զանազանութիւն չունի։ Բայց մի բան կայ։

—Հրամայեցէք, Հալի, հրամայեցէք, — ասացին միաբերան բոլոր պարագլուխները, ձեռները կրծքնե-րին դրած, գլուխ տալով նորին Հալիութեան։

—Դիցուք հէնց հիմայ թաղակռիւ է,—շարունա-կեց Հալին, չիբուխը բերնից հանելով և միրուքը շը-փելով,—իմ կարծիքով, մեր կռիւը մի կոպեկի ար-ժէք չի ունենալ, եթէ այդ կռուից անմնաս դուրս կըգայ ինքը, սկզբնապատճառը։

—Ասածդը,—հարցրին միաբերան բոլորը։



—Այո, Ասածը,—պատասխանեց Հալին,—երդ-վում եմ Ալիի սուրբ անունով, որ ձեր սրբազան պարտքն է նրան ոչնչացնել, ինչպէս լինի, ոչնչացնել։ Հէյբաթ, նախ և առաջ փայտդ նրա գլուխը պիտի ջարդ ու փշուր անի։ Սակեաբ, քար ձգելիս, նշաւակ պիտի վերցնես նրան, նոյնպէս և ձեզանից իւրա-քանչիւրը։ Լսում էք։

—Բար չէշմա, բար չէշմա (աչքիս վրայ),—ասա-ցին ամենը մի առ մի, ձեռները դնելով իրանց աչ-քերի վրայ և գլուխ տալով Հալիին։

—Կեցցէք, ջահիլներ, կեցցէք, դուք իսկական տղամարդիկ էք,—հաւանեց Հալին գոհ սրտով։—Հիմայ շնորհ արէք դնանք մեր տուն չայ խմելու։ Այնտեղ մենք կըխորհրդակցենք կռուի մասին։

Պարագլուխները, ամաչելով, քաշքշվելով, միմեանց երեսին նայելով, հետևեցին Հալի-Ալեաքպարին և մը-տան նրա տունը։

## IV

Առաւօտ էր։ Սարիթօրփաղցի ինքը - մահանաի Մահմուդը, իր խանութի առջև կանգնած, Շիրազի պիսակաւոր մորթուց կարած մի դգակ էր թրջում և ճիպոտով ծեծում։ Այդ միջոցին իմամլուցի դգակ կա-րող Մէյթին դիտմամբ անցաւ նրա առջևով։ Մահ-մուդն անգիտակցաբար մի քանի կաթիլ չուր սրսկեց նրա վրայ։ Մէյթին կանգնեց և բերանից բաց թողեց մի շատ անվայել յիշոց։ Մահմուդը ներողութիւն խնդրեց։ Մէյթին, որ երեկոյեան Հալի-Ալեաքպարին և իր ընկերներին խօսք էր տուել կռուի առիթ տալու,

մի աւելի սուր յիշող արտասանեց Մահմուդի երեսին։ Մահմուդը նամուսով մարդ էր, Մէյթիին պատասխանեց ըստ կարգին և փոխարէնը վերջինից ստացաւ մի պինդ ապտակ։

Իմամլուցիները պատրաստ էին, մի վայրկեանում թափվեցին Մահմուդի վրայ։ Միւս կողմից եկան մի քանի սարիթօրփագցիներ, և սկսվեց մի թեթև կռիւ։ Իսկոյն գդակ կարողների խանութները փակվեցին։ Ծեծված, ջարդ ու փշոր եղած սարիթօրփագցիները շտապեցին իրանց թաղը։ Ձանապարհին նրանք անցքը պատմեցին արծաթագործ Աւադին, որ կռուի սկզբնապատճառն էր։

Աւադը կռուելու տրամադրութիւն չունէր, բայց պարագլուխ էր, պարտաւոր էր միջամտել իր ընկերների վիրաւորված պատիւը վերականգնելու համար։

Կայծակի արագութեամբ ամբողջ բազարում լուր տարածվեց, թէ քաղաքի Իմամլու և Սարի-Թօրփաղ թաղերը ոտքի են կանգնել միմեանց դէմ, տեղի պիտի ունենայ կատաղի կռիւ։ Ոչ միայն կռվող թաղերի բնակիչները, այլ և շատերը միւս թաղերից կոչպեցին իրանց խանութները եթէ ոչ կռուին, գոնէ հանդիսին մասնակցելու համար։ Դա չամախեցիների հնաւանդ սովորութիւնն է։

Հաջի-Ալեաքպարը, մեծ փողոցի անկիւնում կանգնած, խրախուսում էր երիտասարդներին, որոնց թըւումն էր և՛ Ֆաթմայի եղբայր Հաշիմը։ Նախ, իրանց չուխաները հանած և թևերի վրայ իբրև վահան փաթաթած, երկու կողմերից ասպարէզ մտան պատանիները։ Շատ չանցած՝ մէջ մտան մեծերը, և թաղակռիւը սկսվեց։



Քաղաքի միջին շերտը ծածկվեց խուռն ամբոխով։ Ներկայ էին և՛ քրիստոնեաները, հեռուում հաւաքված կամ բարձր կտուրների վրայ կանգնած, նրբանք ականատես էին, թէ ինչպէս երկու արիւնակից և կրօնակից համայնքներ աշխատում են միմեանց արիւնը թափել։

Կռիւը տեղի ունէր միջին, ամենաընդարձակ փողոցում։ Հաղարաւոր քարեր երկու կողմից տեղում էին կռվողների գլխին։ Բոլորը զինված էին երկայն փայտերով, բայց «փայտակռիւը» դեռ չի սկսվել, որովհետև ախոյեանները տակաւին հեռու էին միմեանցից։ Կոտրատվող ապակիների ղրնկոցը, ոտների տրոփիւնը, կանանց և մանուկների ճիչը, չահիլների վայրենի աղաղակները քանի գնում աստիճանում էին և՛ ահռելի դառնում։

Մի քանի պօլիցիականներ միջամտեցին, որ կըռվողներին բաժանեն, բայց, փայտի մի քանի հարուածներ ստանալով, յետ մղվեցան և փախան, մտան հանդիսականների մէջ։ Անզօր անցաւ և՛ աղասխականների (ծերունիների) խրատն ու սպառնալիքը։

Թռչնորս Աակեարն իր գնդակի նման արձակած քարերով արդէն երկուսի կուռը թուլացրել էր և փայտը ձեռից գցել։

Խորոված ծախող Հէյբաթը կատաղի գոռում էր, փայտը զարկելով գետնին, չուխա-վահանը բարձրացնելով և վեր ու վայր թռչկոտելով։

Ցանկարծ Իմամլուն թնդաց, գդակ կարող Մէյթին, Շիրազի փափաղը աչքերին քաշելով, կարկտի պէս թափվող քարերի տակ վազեց առաջ։ Նրան հետևեցին Հէյբաթն և Ֆաթմայի եղբայր Հաշիմը։

Հակառակ կողմից, աւելի կատաղի դոռալով, վազեց ընդառաջ դէմակ կարող Մահմուդը, նա, որ Մէլթիից ապտակ էր ստացել։

Փայտի կռիւը սկսվեց։

Օդի մէջ ֆռֆռում էր մի կարմիր աստառով չուխա։ Ամենի հայհոյքները յառված էին նրա վրայ, ամենի ուշադրութեան կեդրոնը նա էր։ Նա գոռում էր առիւծի պէս, և նրա ձայնի դղրդոցը տարածվում էր հեռու ու հեռու։

Իմամլուն դրոհ տուեց, Սարի-Թօրֆաղը յետ մղվեց։ Ընկան մի քանի վիրաւորվածներ։ Կանանց ճիչը աստակացաւ. մայրերը ողբում էին, հայրերն անիծում իրանց փուչ զաւակներին։ Թիֆան էր։

Եւ այս բոլորն ինչո՞ւ։—Մի աղջկայ համար։ Բայց ո՛ւր էր նա, ինչ էր անում այդ սարսափելի րոպէին։

Ահմադ աղայի բաղնիսի կորում հաւաքված էին մի խումբ կանայք և, դժբէթների եաւում կուչ եկած, դիտում էին կռիւը։ Ամենից առաջ, կատրի ծայրում, աներկիւղ, համարձակ կանգնած էր Ֆաթմանն, այո, ինքը Ֆաթման։ Ախ, լաւ է, որ մայրերը չէգիտէին, թէ նա է կռուի բուն պատճառը, եթէ ոչ պատառ պատառ կանէին նրան իրանց սիրեցեալ որդիների համար։ Աչքատում էին Ֆաթմային յետ քաշել, չէին կարողանում։ Եւ ո՛վ կարող էր, քանի-որ անյաղթելի զօրութեամբ նրա ուշք ու միտքը, հոգին ու սիրտը բևեռված էին մի կէտի վրայ... կարմիր-չուխան։

Ահա ամենը փախան, ասպարէզ բացվեց և մենամարտ ճնշց կարմիր-չուխան։ Իմամլուները սրնթաւոլով վազեցին դէպի նա, ամենից առաջ Հէյբաթը, Մէլթին ու Հաշիմը։ Արդեօք, կըփախչի՞ կարմիր-չուխան, թէ



կըդիմանայ միայնակ այդ կատաղած ամբոխին. արդեօք, Հաշիմը կենդանի դուրս կըգա՞յ այդ կռուից։ Ինչո՞ւ Ֆաթմայի եղբայրն էլ է մասնակցում. եթէ նա չըլինէր, այն ժամանակ թող բոլոր իմամլուցիները կոտորվէին և մատաղ դառնային կարմիր-չուխայի մի մազին։

Մինչ գեղեցիկ Ֆաթման տանջվում էր այս մրաքերից, կռիւը սաստկանում էր ու սաստկանում։ Սրբիւրափաղցիները, օգնութիւն ստանալով, հարիւրաւոր բազմութեամբ վազում էին առաջ։ Հէյբաթը, Մէլթին և Հաշիմը չըկապատեցին կարմիր չուխային։ Ֆաթման ակամայ ճչաց, րոպէն վտանգաւոր էր։ Նա տեսնում էր, թէ ինչպէս իւր եղբայրը, Հաշիմը փայտի հարուածները տալիս կարմիր չուխայաւորի գլխին։ Մի-ւս կողմից խփում էին Հէյբաթն և Մէլթին։ Ֆաթման նկատեց, որ կարմիր չուխան ուշադրութիւն չի դարձնում Հաշիմի վրայ և միայն պատասխանում է մի-ւս երկու ախոյեանների հարուածներին։ Անշուշտ նա խնայում է Հաշիմին։ Ֆաթմայի սիրտը թռթռաց. այսպիսի վեհանձնութիւն միայն Ասադը կարող է ունենալ, ուրիշ ոչ ոք։

Մէլթիի ձեռից փայտը վայր ընկաւ և նա ինքը վրդովվեց Ասադի ոտների տակ. նոյն վիճակին արժանացաւ և՛ Հէյբաթը։ Կեցցէ՛ կարմիր չուխան։ Նոյն վայրկեանին Ասադի ճակատում փայլեց մի կարմիր գիծ, որ, վայր իջնելով, արագ-արագ ծածկեց նրա ամբողջ երեսն ու կուրծքը։ Դա թուշնօրս Ասկեարի քարի հետքն էր։ Ֆաթմայի ոտները թուլացան։ Բայց ահա Ասադը, մի քիչ տատանվելուց յետոյ, գրպանից հանեց մի սպիտակ բան, փաթաթեց ճակատին և արիւնաշա-

ղախ երեսով, մռնչալով, աւելի կատաղի զօրութեամբ թռաւ առաջ։

Իմամլուն փախաւ։ Փաթման բնազդմամբ յետ նայեց, բաղնիսի կոուրը դատարկվել էր, կանայք փախել էին։ Նա մոխիկ արեց ներքև. սարիթօրփաղցինները մօտենում էին ու մօտենում։ Ասադի փայտը որին դիպչում էր՝ նա թաւալվում էր գետին։ Յանկարծ նա չքացաւ։ Փաթմայի աչքերը մթնեցին. սպասնեցին, արդեօք, նրան։ Նա բարձր ձայնով օդնութիւն կանչեց և նստեց կոուրի ծայրում։

Մի քանի մարդիկ փողոցից մի երկայն սանդուխտ դրեցին բաղնիսի պատին։ Փաթման տեսաւ, որ ներքևից Հալի-Ալեաքպարի ծառաները բարձրանում են վերև։ Նրանք արդէն հասել էին սանդխտի ծայրին և աղաչում էին Փաթմային, որ մօտենայ, բայց նոյն վայրկեանին սանդուխտը նրանց ոտների տակ դողաց և ճռճռալով ընկաւ փողոց, իր հետ տանելով Հալիի ծառաներին։

Այդ պահին Փաթման զգաց, որ ետևից երկու ձեռներ դրկեցին իրան։ Ինչպէս յանկարծակի որսած մի ճնճղուկ, նա մի վայրկեան ճիգն արեց դուրս պրծնելու երկաթէ ունելիքի պէս ամուր սեղմած ձեռներից։ Սակայն այժերը դաւաճանեցին նրան, և նա, թուլացած, անձնատուր եղաւ անյայտ ձեռների զօրութեանը...

## V

Եթէ ոչ ոստիկանութիւնն և աղասխկալները, գոնէ բնութիւնը կարողացաւ կուիւը ընդհատել։ Վրայ



հասաւ իրիկնային մութը, ջահիլների կատաղութիւնը չիջաւ։ Փոքր առ փոքր կռուին անմասնակից հանդիսականների բազմութիւնը ցրվեց, կռվողները յոգնած, չարդուփշուր եղած, յետ քաշվեցին։

Յալթող հանդիսացաւ Սարի-Թօրփաղը, բայց Իմամլուն պարծենում էր արծաթագործ Ասադի կռուի ասպարիզից անյայտանալու լուրով։ Երկու կողմից վիրաւորվել էին քանուհինգ մարդ, որոնցից երեքի դրութիւնն անյուսալի էր։

Ջահիլները, խումբ-խումբ փողոցների անկիւններում հաւաքված, միմեանց հաղորդում էին կռուի մանրամասնութիւնները։ Հալի Ալեաքպարին հաւատացրին, թէ արծաթագործ Ասադը սպանվել է կամ դոնէ վիրաւորվել։ Հալին հրամայեց ջահիլներին չարքաշ բաժանել։

Մինչ նրանք խմում էին շաքարախառն ըմպելիքը, մօլլա-Ղանիի անից լսվեց յուսահատ ողաղակների ձայն, և մի կին, մազերը վեռատելով, ոտաբաց, գլխաբաց վազեց փողոց։

Դա Փաթմայի մայրն էր։

—Մարդիկ, աղջիկս չըկայ, մարդիկ, աղջկաս փախցրել են,—գոռում էր խեղճ Զէյնաբը, ողբալով իր գեղեցիկ դատեր կորուսը։

Այժմ միայն պարզվեց կռուի ասպարիզից Ասադի անյայտանալու պատճառը։ Ուրիշ ոմն կարող էր Փաթմային փախցնել, եթէ ոչ նա։

Իմամլուցիների գլխին սառն ջուր մաղվեց, ամենքն ամօթից չիմացան ուր թագցնեն իրանց գլուխը։

Իսկոյն ջահիլների միջից քանի չափ կամաւորներ առաջ եկան, խոստացան անպատճառ գտնել Փաթ-

մային և տուն բերել։ Բայց դրա համար նախ անհրաժեշտ էր մուտք ունենալ Սարի-Թօրփաղ։

Մի քանի աղասխականներ գնացին և Թշնամի բանակի աղասխականների հետ ժամանակաւոր հաշտութեան դաշն կապեցին, որ հակառակորդները իրաւունք ունենան անարգել անցնել միմեանց փողոցները։

Մեծ պետութիւնների պատերազմն իւր կանոններն ունէ, չամախեցիների թալակռիւն էլ ունէ իւր կանոնները, չըգրված, այլ պապերից աւանդօրէն յարգված և պահպանված։ Թշնամութիւնը, նրանց մէջ դործով երևան է գալիս միայն կռուի ասպարիզում, խաղաղութեան և պինադուլի ժամանակ հակառակորդները դէթ արտաքուստ յարգում են միմեանց։

Սակայն որոնող չահիլները Փաթմային Աադի տանը չըգտան և ոչ էլ իրան, Աադին։ Որտեղ էին նրանք—իմացողները չասացին, չիմացողները ուրախացան, լսելով իրանց պարագլխի նոր հերոսութիւնը։ Իմամլուցիների պատիւը պահանջում էր, ինչպէս և իջէ, այն գիշեր և եթ գտնել Փաթմային։

—Ով ինձ սիրում է, թող հետևի ինձ,—գոչեց գունաթափված Հաչիմը։

Նա իսկոյն վազեց տուն, իւր ձին թամբեց, դցեց ուսովը հրացանը, կապեց մէջքին ատրճանակն ու խանչալը և դուրս եկաւ։ Բոլոր կամաւորներից նրան հետևեցին միայն տասնուչորսը։

—Ադա, դուք էլ գնացէք,—հրամայեց Հաչի-Ալեաքպարը իւր երկու արաբ ծառաներին։

Սևամորթ խափչիկները ոտոտալով վազեցին տուն, մի-մի ահագին փայտ վերցրին՝ կոլտրակ, գընդականման, բևեռաձ ծայրերով և մոտն կամաւորների շարքը։ Խումբը բաժանվեց երկու մասի. մէկին պիտի առաջնորդէր Հաչիմը, միւսին ղումարբազ [9]) Հասանը։ Վերջինը քաղաքի բոլոր խուլ ու մթին անկիւնները լաւ ուսումնասիրած էր, քանի տարի շրջնակ «երեք-վեց» (իչ-աշըղ) ասված խաղը խաղալով Շամախու բոլոր սրիկաների հետ։

Ամեն ինչ պատրաստ էր։ Ղումարբազ Հասանն իւր խումբն առաջնորդեց քաղաքի դէպի ստորին մասը—Սեարդարի այգու կողմը, իսկ Հաչիմն իւր խմբով դիմեց հակառակ կողմը։ Հաչիմը համոզված էր, որ Աադը Փաթմային տարել է կամ խաների գմբեթաշէն շիրիմների կողմը կամ թթենիների այգինները։

Ամբողջ դիշեր Իմամլու թաղում տիրում էր մի խուլ աղմուկ։ Շատերն անքուն նստեցին փողոցում, իրանց տան դռների առջև, որ տեսանեն՝ չահիլների արշաւանքն ինչ ելք կունենայ։

Անքուն էր և՛ Հաչի-Ալեաքպարը։ Եւ նրա անքնութիւնը միայն մի պատճառ ունէր. նրա պատիւը և անունը չարաչար վիրաւորված էին. նա ամբողջ թաղի դժդոհութեան և խուլ որոտունջների առարկան էր դարձել։ Դոքթի էութիւնն ամենին յայտնվել էր, ամենը գիտէին, որ կռիւ յորդորողը նա է եղել և ինչից դրդված։

—Անէծք քեզ, չար Սաթայէլ, անէծք քեզ, չար Սաթայէլ։ Լահ իլլահ իլլալահ, Մահամմադի Ռասուլ Ալլահ,—կրկնում էր նա անդադար, յուզված անցուդարձ անելով իւր տան պատշգամբի վրայ։

Հաչիի աւագ կինը, Գիւլնիզարը, ամուսնուց թոյլ

[9]) Խաղորդ, խաղամոլ, игрокъ.

տուրքին ստացած, գնացել էր իւր ծնողների մօտ դիշերելու։ Նա սառնարիւն չէր կարող այդ գիշեր մի յարկի տակ մնալ այն մարդու հետ, որ, երկրորդը բառական չհամարելով, ուզում էր երրորդին ևս բե-րել և այն էլ այդպիսի խայտառակութեամբ։

Կէս գիշերից անց լուր տարածվեց, թէ Ֆաթ-մային գտել են և բերում են։ Արթուններըը քնածնե-րին ևս արթնացրին, և ամենը, դուրս թափվելով, դիմեցին մօլլա-Ղանիի տան կողմը։ Լուրը ստա էր։ Վերադարձել էր ղուժաբբազ Հասանն իւր խմբով և պատմում էր, թէ քաղաքի ստորին կիսի բոլոր ան-կիւնները պտտել է, Ասադի և Ֆաթմայի հետքն էլ չըկայ։

Հաշիմի խումբը դեռ չէր վերադարձել։ Նրա մայրն ընկաւ Հասանի ոտներին, աղերսեց, որ սա իւր խմբով օգնութիւն հասնի իւր որդուն։ Ջահիլնե-րից մի քանիսը, սաստիկ յոգնած լինելով, գնացին քնելու։ Նրանց փոխարէն դուրս եկան ուրիշ կամա-ւորներ, և Հասանը ուղեկիցների մեկ ու կէս անգամ աւելի թուով արշաւեց քաղաքի վերին կողմը։

## IV

Վաղուց Ասադի գլխում միտք էր ծագել Ֆաթ-մային փախցնելու, եթէ խաղաղ միջոցով ձեռք բե-րելը չըյաջողվէր։ Անակնկալ կռիւը խորտակեց նրա վերջին յոյսը. նա գիտէր, որ կռուից յետոյ այլ ևս անկարելի էր սպասել, որ Ֆաթմայի մայրն ու եղ-բայրն և մանաւանդ Հաջի-Ալեաքպարը որ և է զիջո-ղութիւն անեն։



Ուրեմն պէտք էր դիմել ծայրայեղ միջոցի։ Հէնց որ կռիւը սկսվեց, Ասադը թամբեց իւր նժոյգն և վերցրեց երկփող հրացանը, պարաբինա—սուրճանակը և դաղստանցի Թէյմուրի չինած «եափունջի կիսող» խանչալը։ Այս բոլորը նա յանձնեց գիժ Բեանդալիին և, մի մանէթ բաշխելով, պատուիրեց, որ հեռուից հետևէ նրան կռուի ժամանակ։

—Եթէ հարցնող լինի, ոչինչ չըպատասխանես, գի-տես,—հրամայեց նա գիժ Բեանդալիին, որ իսկապէս պատասխանելու ընդունակութիւն էլ չունէր։

Իւր յանդուգն մտադրութիւնը նա յայտնեց ա-ժենամօտիկ ընկերներին և խնդրեց, որ օգնեն ձեռ-նարկութեանը։

—Ուրախութեամբ կեանքներս կըտանք,—ասա-ցին հաւատարիմ ընկերները, գովելով Ասադի հերո-սութիւնը։

—Դուք միայն կռուի ժամանակ,—պատուիրեց Ասադը,—աչք դցեցէք կռուրներին և Ֆաթմային ցոյց տուէք ինձ։ Մնացեալն իմ գործն է։ Դուք խօմ ճա-նաչում էք, տեսել էք նրան քրոջ տունը գալիս։ Նա անպատճառ դրսում կըլինի...

Այս պայմանադրութիւնից յետոյ, Ասադը թռաւ կռուի ասպարէզը։ Նա ինքն ամենից առաջ տե-սաւ Ֆաթմային։ Հէնց որ սարիթօրփագիները գրոհ տուեցին, հէնց որ Մէյթին ու Հէյբաթը յարձակեցին, նա, կռիւը տարած համարելով, վազեց Ախմադ աղա-յի բաղնիսի ետևը, գտաւ ճանապարհն և բարձրացաւ կռուր։ Նա հրեց և ձգեց մի կռուրից միւս կռուր ընդդիմադրող բաղնիսպանին, վազեց և... դիտենք ինչ արաւ։

Օրն արդէն մթնել էր, երբ Աւագը, իւր թանգագին կողոպուտը ձիու վրայ դրած, հասաւ սարի-Թօփաղցի Հաջի-Բախիշի այգին:

Այգեպան քեայբլահի Աբդուլլան շատ չար ու բարի տեսած, կեանքի բովով անցած մի փորձառու ծերունի էր: Նա ճանաչում էր Աւագին և միշտ տեսնելիս մտաբերում էր նրա հօրը, որի հետ էր անցուցել իւր փոթորկալից երիտասարդութիւնը:

—Տղայ, այդ ինչ է,—հարցրեց նա զարմացած, տեսնելով Աւագին երեան արիւնոտ, դէմքը վախթած և դրկում մի անչնչացած աղջիկ բռնած:

Աւագը համառօտ պատմեց եղելութիւնը, հինաւուրց «իգիթը» (քաջը) հրաւիրեց նրան իջնել ձիուց ու իւր թանգագին կողոպուտի հետ թագնվել նրա խրճիթում:

Մինչ այգեպանի ջուր բերելը, Ֆաթման ուշքի եկաւ, սթափվեց, աչքերը բաց արեց և կրծքից արձակեց մի խորին հառաչանք:

—Ես եմ, Ֆաթմա, մի վախենար,—խրախուսեց Աւագը մեղմ և քնքոյշ եղանակով, որքան թոյլ էր տալիս նրա կոշտ ձայնը:

Ֆաթման սարսափած ոտքի կանգնեց և դղդված ժպտերով, դունաթափ, ձեռները դէմին խփելով, բացականչեց.

—Վայ մայր, վայ եղբայր...

Նա վազեց դէպի դուրս: Աւագը յառաջեց նրան և ձեռներից բռնեց:

—Ի զուր մի տանջիր ինքդ քեզ. մայրդ էլ կենդանի է, եղբայրդ էլ, քոյրերդ էլ:



—Ինչու՞ ես ինձ բերել այստեղ,—դոչեց Ֆաթման:

Ինչու՞, մի՞թէ Ֆաթման չգիտէ ինչու, մի՞թէ կարծում էր, որ Աւագը թոյլ կըտար նրան ուրիշի կին դառնալու, մի՞թէ...

Ֆաթման փոքր առ փոքր հանգստացաւ և սկսեց անխօս մնալ: Իսկապէս նրա յուսահատ աղաղակները կիսով չափ արուեստական էին: Նա հոգով ուրախ էր կատարված անդքին. նրա երևակայութիւնը վաղուց ստեղծել էր մի այդպիսի հերոսութիւն Աւագի կողմից, և նա ցանկանում էր իրագործված տեսնել իւր երևակայածը: Միայն ծերունի այգեպանի ներկայութիւնը դրդեց նրան մի փոքր աղմուկ բարձրացնել, որպէս զի պատկառելի քեալբլահին չկարծէ, թէ երիտասարդ միսուլմանուհին զուրկ է ամօթխածութիւնից:

Այսպէս է Շիրվանի թրքուհու բնաւորութիւնը:

Այգեպանը նրանց համար ընթրիք պատրաստեց, —հաց, պանիր, վարունգ և կանաչեղէն: Ամբողջ օրը թէ Ֆաթման և թէ Աւագն անօթի էին անցուցել, ուստի այգեպանի համեստ իրիկնահացը նրանց համար Օրուջ-բայրամի «կաթնով փլաւից» համեղ էր:

Փոքրիկ խրճիթը լուսաւորված էր հնադարեան չիրագի (ճրագի) ազօտ լուսով: Ծերունի քեալբլահին աշխատում էր իւր հիւրերին զուարճացնել, պատմելով օրուայ եղելութեանը համանման դէպքեր իւր կեանքից: Աւագը սպրդնած էր: Գլխի վերքը սաստիկ ցաւ էր պատճառում, բայց նա աշխատում էր զսպել իրան, թէև մեծ գժուարութեամբ:

—Տղայ, ինչու՞ շրթունքներդ դողդողում են,—հարցրեց այգեպանը,—չլինի վերքդ նեղացնում է քեզ:

Սպասիր, սպասիր, Թաշկինակի տակից արիւն է հոսում: Պէտք է դեղ դնել, որ դադարի:

Այս ասելով, Ծերունին իսկոյն իւր հնամաշ արխալուղի աստառից մի կտոր պատռեց, վառեց ճրագի բոցի վրայ և ձգեց դեռանին: Երբ կտորը բոլորովին այրվեց, նա սև մուրը հաւաքեց, սրսկեց Աստղին բաց անել ճակատն և մուրը Թաշկինակով կապեց վէրքի վրայ:

Արիւնն արդարև դադարեց:

Այս դորձողութեան ժամանակ Փաթման օգնում էր Ծերունուն, անդադար պատելով վիրաւորեալի շուրջը:

—Այժմ քնիր,—ասաց այդեպանը հայրական խնամքով,—ինչ վերաբերում է ապագային—վաղը կըմտածենք: «Երեկոյեան բարիքից, առաւօտեան չարիքը լաւ է», ասում է մեր պապերի խօսքը:

Դիշերը խաղաղ էր, մուգ-կապտադոյն երկնքում պայծառ փայլում էին աստղերը, հեռուից ժամանակ ժամանակ լսվում էին քաղաքային դիշերապահների աղաղակները: Նրանց ձայնակցում էին Սարի-Թօրփաղի շները, դուշերը դէպի երկինք բարձրացրած, աստղերի վրայ պոռալով: Ծերունի այդեպանը, անհաւատութիւնից դրդված, վճռեց արթուն մնալ և ամբողջ դիշեր դերսից խրճիթը պահպանել. շների պոռալը վատ բան էր գուշակում:

Փաթման, չորերը հագին, Աստղի չուխայի մէջ փաթաթված, քնած էր խրճիթի մի անկիւնում:

Միւս անկիւնում, այդեպանի անկողնում պառկած էր Աստղը: Մի ձեռը յենած հրացանի վրայ, միւս ձեռը գլխատակին դրած, նա ոչ քնած էր, ոչ արթուն, այլ մի տեսակ թմրած դրութեան մէջ էր: Նրա վէրքը դարձեալ ցաւում էր և ցաւում էր աւելի սաստիկ: Բայց նա աշխատում էր ոչ հառաչել և ոչ տնքտնքալ Փաթմային չըզարթեցնելու համար: Նրա գլխում պտտում էին ցերեկուայ անցքերը: Մերթ նա երևակայում էր իրան կռուի ասպարիզում, ալ ու ձախ շրջապատված թշնամիներից, անձրևի նման տեղացող քարերի տակ, մերթ բաղնիսի կտրում, Փաթմային յափշտակելիս և մերթ ձիու վրայ, իւր կողոպուտը դրկած, ապշած ամբոխի միջով արշաւելիս:

Յետոյ նա սկսեց խորհել ներկայի և ապագայի մասին: Ինչ պիտի անէ նա վաղը, այդեպանի խրճիթում երկար թագնվել անկարելի է, անշուշտ իմաստուհիները հանգիստ չեն մնալու, անշուշտ նրանք ամեն ջանք գործ կըդնեն Փաթմային գտնելու, որ Աստղի արիւնի գնով իրանց թագի պատիւը վերականգնեն:

Նա մտքում վճռեց լուսաբացին վերցնել Փաթմային, գնալ մօտակայ թուրք գիւղերից մինը, այնտեղ մի ձօլլա գտնել և քեաբին անել (պսակվել):

Շուտով նրա ամբողջ. մարմինը սկսեց դողալ: Նրա ատամներն ակամայ զարնվում էին միմեանց, նա ցուրտ էր զգում: Յուրան անցաւ, և նրա մարմնին տիրեց թմրեցուցիչ տաքութիւն: Նրա միտքը պղտորվեց. նա քնեց կամ, ուղիղն ասած, սկսեց զառանցել: Ահա Փաթման, գլխաբաց, ոտաբաց, ձի է նստում, Աստղին էլ հրամայում է նստել: Նրանք արշաւում են հեռու ու հեռու, անծանօթ տեղեր: Մի ամայի դաշտում, դեռանից, երկայն և ձիւնի պէս ճերմակ միրուքով մի մարդ է դուրս գալիս, մօտենում է և իւր ձեռում բռնած մի կարճ, սև փայտով խփում նրան օձին: Փաթման և Աստղը մի ակնթարթում տեղափոխվում

են մի փառաշէն տուն։ Այստեղ սկսվում է նրանց հարսանիքը։ Հիւրերը ղուարճանում են, երաժիշտները նուագում են, պարիչները պարում են, ծառաները շարքաթ են բաժանում։

Այդ միջոցին ներս է մտնում մի ոսոխական, յետոյ երկրորդը, և բոլոր բարեկամ հիւրերը դառնում են թշնամի իմամլուցիներ։ Փաթմային յափշտակում են, Ասադի ոտներն ու ձեռները կապում են, երեսը դէպի յետ դնում են մի աւանակի վրայ և երեսին մուր քսում։ Նրան տանում են Իմամլու։ Թշնամիները, շրջապատելով, քարեր են արձակում նրա վրայ, ծաղրում են, չարացնում, թքում են երեսին։ Մօտենում է Փաթմայի եղբայր Հաշիմը, յետոյ դդակ կապող Մէյթին և մի քանի ապտակ են տալիս։ Ո՛հ, սարսափելի անպատուութիւն, ախ, եթէ նրա ձեռները բաց լինէին, բոլորի պատասխանը կըտար։ Բայց ահա ոսոխականապետը խփում է նրա ուսին մտրակով, խըփում է մէկ, երկու, երեք անգամ...

Ասադն աչքերը բաց է անում...

## VII

Խրճիթը տակաւին մութն է, բայց դռներից երևում է, որ արևելքը շառագունել է։ Ծանրացած դըլուխը մի կերպ բարձրացնելով, Ասադն իւր դէմ ու դէմ տեսնում է մի մարդ։

—Ո՞վ ես դու,—հարցնում է նա։

—Ծառայիր, տղայ, վեր կաց, գալիս են,—պատասխանում է մի ծանօթ ձայն։

Ասադը ոտքի է թռչում հրացանը ձեռին, վազում է խրճիթի միւս անկիւնը և տեսնում է, որ Փաթման դեռ քնած է։

—Ո՞վ է գալիս,—հարցնում է նա։

Ծերունի այգեպանը նրա ձեռից բռնում է և խրճիթի դռների մօտ տանում։ Առաւօտեան աղօտ լուսով Ասադը հեռուում, այգու դրեթէ միւս ծայրում նկատում է ինչ-որ մարդիկ, լսում է ինչ-որ խօսակցութիւններ։ Մարդիկ աւելի ու աւելի մօտենում են, ձայները աւելի ու աւելի պարզ են լսվում։ Ահա ծառերի բների եռակից փոքր առ փոքր որոշվում են եկողների դէմքերը. մի մասը ձիաւոր է, միւս մասը հետևակ, բոլորն էլ թրքեր են և իմամլուցիներ։ Մէկը ոտով շտապում է ամենից առաջ։

Ասադը ճանաչում է Հաշիմին։

Մի ակնթարթում նա թռչում է ներս, հաւաքում է ծնացեալ զէնքերն և, Փաթմային քնած թողնելով, դուրս է գալիս. խրճիթը կողպում է, թիկն է տալիս դռներին և կանգնած՝ սպասում է եկողներին։ Փախչել և Փաթմային փախցնել անկարելի է. թշնամիները մօտիկ են, պէտք է պաշտպանվել։ Բայց ո՞ր մէկի դէմ պաշտպանվել. նրանք մօտ տասնուհինգ հոգի են, իսկ Ասադը միայն մի ծերունի օգնական ունէ, որի միակ զէնքը յիսնամեայ ժանգոտված խանչալն է։ Փոյթ չէ, թող գան, ոչ ոք չի կարող Ասադի ձեռքից Փաթմային խլել, քանի նրա շունչը բերանումն է։

Վերջապէս, իմամլուցիները դուրս եկան ծառերի եռակից և կանգ առնելին, խրճիթի դէմ ու դէմ կիսաշրջան կազմելով։ Հաշիմն արագութեամբ հանեց ուսովը գցած հրացանը և, նշաւակ դնելով Ասադի կուրծքը, գոչեց.

—Անշարժ կաց։

Նրա օրինակին հետևեցին «դումարբաշ» Հասանը, իննըմաանանի Սէյֆուլլան, շեկ Հէյդարը, սև Բաղիրը, քոռ Միթալիմը և մի քանի ուրիշները։ Եւ Ասադն իր դէմ ու դէմ տեսաւ տասնից աւելի սև խողովակներ, որոնց մէջին, մահաբեր ծակերը նայում էին ահռելի կերպով, ինչպէս տարտարոսից վռնդված դևերի աչքեր։

Ծերունի այդ ժամանակ վազեց առաջ, սկսեց կատաղած իմամլուցիներին խրատել, հաշտութեան հրաւիրել, բացատրելով, միևնոյն ժամանակ, թէ աղամարդութիւն չէ մէկի դէմ քսան հոգով դուրս գալը։

Մէկը մի քար ձգեց նրա վրայ և հայհոյելով ասաց, որ չխառնվի գործին։

—Հեռո՛ւ, քեաֆիթաո չուն,—գոչեց շէկ Նուրուլլան,—եթէ ոչ-հոգիդ սատանայի բաժին կըդարձնեմ։

Ծերունին յետ քաշվեց, ափսոսալով, որ ձեռին հրացան չունէ, եթէ ոչ ցոյց կըտար յանդուգն «երեխաներին», թէ ով է քեաբլահի Աբդուլլան։

Հաշիմը պահանջում էր, որ Ասադն իր ձեռքով Փաթմային խրճիթից դուրս բերի և յանձնի նրան։ Ասադը սկզբում փորձեց ազդել նրա խելքի, սրտի և միասլմանական զգացմունքի վրայ։ Նա յիշեցրեց կրօնի մութիւնն և Ղուրանի պատգամները, որ արգելում են ուղղափառին՝ ուղղափառի արիւն թափել։ Բայց Հաշիմը ոչինչ չէր ուզում լսել։ Նա մի բերան պահանջում էր, որ Ասադը կամաւ վերադարձնի նրա քրոջը։

—Իսկ եթէ չըտամ,—գոչեց Ասադը, վերջապէս, յուսահատված։



—Դիակդ ոտնատակ անելով կանցնեմ և կվերցնեմ,—պատասխանեց Հաշիմը վճռողաբար։

Այս ասելիս հրացանը նրա ձեռում դողաց։

Այդ ժամանակը յորդորում էր Ասադին խնայել իր երիտասարդ կեանքն և Փաթմային կամաւ յանձնել եղբօրը։ Ասադը չէր լսում նրան։ Ձակատը թաչկինակով փաթաթած, երեսն արիւնի չորացած կաթիլներով, կուրծքը կիսով չափ բաց, մի ձեռը հրացանին կռթնած, միւսը կողքին յենած, մէջքը խրճիթի դռներին թեքած, նա կանգնած էր մի և նոյն տեղ և, կարծես, սպասում էր վերջին վճռական րոպէին։ Նրա աչքերը կարմրած էին, դլուխը ծանրացել էր, ոտներն ու ձեռները դողում էին սաստիկ տաքութիւնից։

—Էյ անխիղճ, խնայիր ինքդ-քեզ, ափսոս է քո երիտասարդութիւնը,—գոչեց իմամլուցիներից մէկը, որ, ակամայ հիացած յանդուգն սարի-թօրփաղցու առնական դեղեցկութիւնից, չկարողացաւ զսպել իր ներքին ձայնը։

—Նրա ինչն է ափսոսալի, ադա, լեցրու չան բերանը ծխով,—ընդհատեց նրա խօսքը մի խռպոտ ձայն։

Իսկոյն իննըմաանանի Սէյֆուլլայի հրացանը պայթեց։ Ծնդակը, դռների ճեղքից փչող աշնանային քամու պէս, վղղալով, անցաւ Ասադի դլխի վրայով և մտաւ խրճիթի յետևի թթենիներից մէկի բունի մէջ։ Իմամլուցին դրանով կամենում էր յամառ սարի-թօրփաղցուն վախեցնել։ Սակայն, իզուր. Ասադը պատրաստվել էր պաշտպանվել մինչև վերջին շունչը։

## VIII

Հրացանի ձայնը Փաթմային ղարթեցրեց։ Դռնեբըն ուժով բացվեցին, երիտասարդ աղջիկը դուրս վազեց, խիտ ու երկայն մազերն ուսերի վրայ անկանոն թափած, կուրծքն եղունդներով անխնայ պատըռտելով և բարձրաձայն դոռալով։ Նա վազեց և կանգնեց Ասադի առջև, երեսը դեպի իմամլուցինները։

—Ձգիչ,—հրամայեց Հաշիմն իւր ընկերակիցներին, հրացանը ցած դնելով։

—Կոտորվէք դուք, կոտորվէք դուք,—աղաղակում էր Փաթման, արդէն մոռացած իւր սովորական ամօթխածութիւնը։

—Վազիր այս կողմը,—ղոչեց Հաշիմն, առաջ դիմելով, որ տանի իւր քրոջը։

Բայց Փաթման, աւելի մօտենալով Ասադին, պաշտպանելու մտքով, կանգնեց նրա առջև և պատսխանեց եղբօրը.

—Մի մօտենար, մի մօտենար, ես չեմ թողնիլ, որ նրա մի մազն էլ վնասվի։ Նա մեղաւոր չէ, ես ինքըս եմ փախել նրա հետ, այո, ես ինքս, իմ կամքով։ Հաշիմ, մի մօտենար, ես չեմ թողնիլ, չեմ թողնիլ...

Տեսարանը սրտաշարժ էր։ Երկու թշնամիների մէջտեղ կանգնած էր մի անյաղթելի պատնէշ, առանց որին խորտակելու, անկարելի էր որ և է ճակատամարտ։

Երբէք Հաշիմը չէր կարող երևակայել, թէ Փաթման այդչափ պաշտպան կըհանդիսանայ իւր առևան-



դողին։ Նա հաւատացած էր, որ իւր քոյրն ակամայ է ընկել Ասադի ձեռքը, թէ նա մի տկար զոհ է, ուրին փրկելու համար պիտի թշնամու արիւնը խմել։ Այժմ, տեսնելով Փաթմայի յամառութիւնը, տեսնելով նրա յուսահատ պաշտպանութիւնը, միաց ապշած։ Մի վայրկեանում վրէժխնդրութեան կիրքը նրա սրտում տեղի տուեց ակամայ խղճահարութեան։ Նա, որ մի րոպէ առաջ պատրաստ էր ամենայն սառնութեամբ ժամհաբեր դնդակն ուղղել յանդուգն առևանդողի կրծքին, այժմ երեսը յետ դարձրած, երկմտութեան մէջ լուռ նայում էր իւր ընկերակիցների երեսին։

Ինքը, զոհ համարվածը ներում է յանցաւորին, և յանցաւորն այնքան վեհանձն է, այնքան անվեհեր, որ պատրաստ է մինչև վերջին շունչ պաշտպանել իւր փախցրած աղջկան։ Ուրեմն ամարդութիւն չի լինիլ, արդեօք, ձեռք բարձրացնել մի այդպիսի երիտասարդի վրայ և սպասել նրան իւր սիրեցեալի աչքի առջև։ Այս էր արտայայտում Հաշիմի դէմքը։ Եւ լուռ ակնարկութիւններ հասկացող չիրվանցիները, իսկոյն դուշակելով նրա միտքը, մտիկ արեցին միմեանց երեսին։

Ել Նուրուլլան առաջինը վստահացաւ յայտնել ամբոխի լուռ վճիռը։ Նա քշեց ձին և բարձրաձայն արտասանեց.

—Հաշիմ, նամուսդ մի մոռանար։

Իմամլուցինների մէջ բարձրացաւ մի խուլ աղմուկ։ Նրանք վրդովված էին Հաշիմի մեղմանալուց։ Ի՞նչպէս կարելի է ներել մի յանդուգն թշնամու, մի մարդու, որ անպատուել է ամբողջ Իմամլուի անունը, փախցնելով թաղի ամենագեղեցիկ աղջիկներից մէկին։ Ի՞նչ

կասեն իմամլուցիները, ինչ կասեն ուրիշ թաղեցինե-
րը։—Ո՛չ, ո՛չ, երբեք չի կարելի գործը հաշտութեամբ
վերջացնել։ Միթէ այս նպատակով են բոլոր իմամլու-
ցիներն երեկ ամբողջ օրը կռվել, միթէ դրա համար
են քանի մարդ ամբողջ գիշեր անքուն թափառել քա-
ղաքի շրջակայքում։ Պէտք է թշնամուն պատժել, պէտք
է վրէժը հանել, առանց արիւնի անկարելի է Իմամ-
լուի պատիւը վերականգնել։

—Արիւն, արիւն,—գոռացին բոլոր կիսավայրե-
նիները միաբերան։

Հաշիմը հասկացաւ այդ կատաղի ամբոխի տրա-
մադրութիւնը։ Նա ղգաց, որ եթէ Ասադին ինքը նե-
րի, միւսները չեն ներիլ, չեն ներիլ գուցէ և՛ իրան։
Բայց ինչպէս հեռացնի Ասադից Փաթմային, որ մի-
անգամայն կպել է նրան անբաժան, այնպէս որ թըշ-
նամուն ուղղուած ամեն մի հարուած նախ կարող է
նրան հասնել։

Մինչ նա այս լոպէական տատանման մէջ էր,
իմամլուցիներից երեք հոգի աննկատելի կերպով բա-
ժանվեցին խմբից և, ծառերի տակ թագնվելով, շըր-
ջան տալով, եռևի կողմից մօտեցան Ասադին։

Այդ նկատեց այգեպանն և, իր ժանգոտած
խանչալը հանելով, կանգնեց վերջինի եռևում, վճռե-
լով պաշտպանել նրան իր կեանքի գնով։

Այն ինչ՝ Ասադն աշխատում էր ասպարիզից ան-
վնաս հեռացնել Փաթմային, որ ինքը միայն կռվի
թշնամիների հետ։

Ծերունու և երեք իմամլուցիների մէջ կռիւ բաց-
վեց։ Ասադն երեսը յետ դարձրեց և իսկոյն հրացա-
նըն արձակեց։ Լսվեց մի արաբական յիշող, և Հայի-



Ալեաքպարի սև խափչիկներից մէկը, ալ ձեռով ծուն-
կը բռնած, գոռալով նստեց գետնի վրայ։ Ասադն
արձակեց երկրորդ անգամ, բայց—անօգուտ։

Նոյն վայրկեանին նա իւր մէջքի վրայ ղգաց մի
սաստիկ սառնութիւն, որ թափանցեց ներս։ Նա ամ-
բողջ մարմնով դողաց, ակամայ գոռաց և ընկաւ ու-
ղիղ Փաթմայի ոտների տակ։

—Ալլահ, Ալլահ,—լսվեց նրա խուլ ձայնը, և նրա
աչքերի բիբերը, տարօրինակ կերպով պտտելով չրջա-
նակների մէջ, դարձան Փաթմայի վրայ։

Այսքանը միայն կարողացաւ լսել և տեսնել խեղճ
աղջիկը, ուրիշ՝ Ասադը ոչինչ չասաց և ոչ մի չարժուեց
չարեց։

Երբ իմամլուցիները, վայրենի կերպով գոռալով,
առաջ վազեցին, որ իրանց վրիժառութեան արդիւն-
քը մօտիկից տեսնեն, երբ Հաշիմը մօտեցաւ իւր քրո-
ջը վերցնելու, Փաթման ընկած էր Ասադի վրայ և
դառն ողբում էր...

Թիֆլիս, 1889 թ.

# ԹԱՆԳԱԳԻՆ ԿԱՊԱՆՔ

Պատկեր

Օրն ամառային էր և իրիկնադեմ։ Այրի Հռիփսիմէն իւր ամուսնուց ժառանգած սեպհական տան պաշգամբի վրայ թէյ էր պատրաստում։ Սմբատը, նրա միակ որդին, մի կողմ նստած, նայում էր դէպի դաշտը, որ զարդարված էր վոքրիկ գեղեցիկ պարտիզով։

Որդին տխուր էր և, կարծես, ինչ-որ մտատանջութեան մէջ. մի բան, որ հաղիւ էր պատահում։ Ժամանակ առ ժամանակ նա հառաչում էր և իւր անորոշ հայեացքը դարձնում դէպի պարզ-մանիշակագոյն երկինք, ուր դանդաղօրէն սահում էին ամառային նոսր ամպերը։

Մայրն արդէն նկատել էր որդու տխրութիւնը, բայց ինչ էր պատճառը—չըգիտէր։ Թէյի բաժակը դնելով նրա առջև, ինքն էլ նստեց դէմ ու դէմ և իւր հայեացքը յառեց որդու կիսադէմքին։ Որքան երկիւղ, անհանգստութիւն և, միևնոյն ժամանակ, քնքոյշ սէր էր արտայայտում այդ հայեացքը։ Թուում էր, և այդ ճիշդ էր, որ մայրն ամեն վայրկեան պատրաստ է իւր կեանքը զոհելու, միայն թէ որդու տխրութիւնն որ և է ծանր պատճառ չունենայ, միայն թէ այդ լինի րոպէական անցողիկ տրամադրութիւն։



Սմբատը դատարկեց թէյի բաժակը, բարձրացաւ տեղից և, շարունակ լռելով, դիմեց դէպի իւր սենեակը։

—Սմբատ,—դարձաւ նրան մայրն անվստահ եղանակով։

Սմբատը յետ նայեց և կանգնեց։ Դատ[illegible] ոչ ոք չկար, բացի ծառայից, որ հեռուում ցնցուղով ջրում էր պարտիզի ծաղիկները։ Մայր ու որդի կարող էին խօսել, վստահ, որ ոչ ոք չի լսել նրանց։

—Ի՞նչ ես ուզում,—հարցրեց որդին։

Որքան էս աշխատէր մեղմ արտասանել իւր հարցը, այսու ամենայնիւ, նրա ձայնի մէջ մայրը զգաց անսովոր խստութիւն։

—Ուզում եմ, տխրութեանդ պատճառն ինձ էլ յայտնես։

—Ես տխուր չեմ։

Աւաց որդին և անմիջապէս չուռ եկաւ, որ գնայ, բայց մայրը խնդրեց նստել։

—Դու ինձանից թագցնում ես միտքդ,—յանդիմանեց Հռիփսիմէն,—միթէ չես իմանում, որ ինձ վշտացնում ես։

—Շատ հետաքրքիրն ես,—պատասխանեց որդին տհաճութեամբ, և այս անգամ նրա ձայնի կոշտութիւնն աւելի զգալի էր։

—Սմբատ...

Մի անսովոր դառն ժպիտ պատեց որդու շրթունքները, երբ մայրը կասկածելի հայեացքով չափեց նրան ոտից մինչև գլուխ։

—Այդ, վերջապէս, անտանելի է,—գոչեց նա, նստելով իւր աթոռի վրայ,—այդ կեանք չէ, մայր, որ ես քաշում եմ։ Ձեր կասկածները ինձ հալածում են։

«Սմբատ, ինչո՞ւ ես ախուր, Սմբատ, ինչո՞ւ ես լուռ, Սմբատ, ինչո՞ւ չես ուտում, ինչո՞ւ չես խմում»: Խոստովանվում եմ, այդ բոլորն ինձ արդէն ձանձրացրել է:

Մայրը աթոռը առաջ քաշեց և, աչքերը լայն բացնալով, յառեց որդու երեսին: Նա սպասում էր, որ վերջինը չարունակի:

—Ես ախուր եմ, որովհետև դու ինքդ ես ինձ սիպում ախրել, — չարունակեց որդին սրամտութեամբ,—ամեն քայլափոխում խնամք, խնամք ու խնամք, մինչև ՛րբե: Գիշերն ուշ եմ վերադառնում—լաց ես լինում, մի տեղ գրօսնելու եմ գնում—խրատներով ես ճանապարհ դնում: Չեմ ուտում—սիպում ես ուտել, չեմ ուզում քնել, պահանջում ես որ քնեմ, մի դիրք եմ վերցնում կարդալու—լալում ես ձեռքիցս, թէ «աչքերիդ վնաս է», ընկերներիս նամակ եմ ուզում գրել—չես թողնում, թէ «կուրծքդ կըցաւի»: Ա՛հա, այդ քո հիւանդոտ սէրն է, որ, վերջապէս, ինձ ախրեցնում է: Դու ինձ սարուկի պէս ճնշում ես քո սիրով, դու քո կեանքը կապել ես իմ կեանքի հետ, դու ուզում ես, որ քսանուչորս տարեկան երիտասարդը ծծկեր երեխայի պէս ապրի: Դա մայրական սէր չէ, դա բռնութիւն է:

Այս խօսքերը Սմբատն արտասանում էր ակընյայտնի դառնութեամբ և հեգնեակ աւելի ու աւելի յուզվող ձայնով: Պարզ էր, որ վաղուց նրա մէջ եռում էր այդ դառնութիւնը և վաղուց նրա սրտում պատրաստվել էր մի թոյն, որ ձգտում էր դուրս հոսալու:

Մայրը զարմացած, երկիւղած և լուռ մոխիկ էր անում նրա երեսին, աշխատելով մի բառ անգամ բաց չըթողնել նրա ասածից:



—Կարո՞ղ եմ մայրական սէր անուանել այն, որ ամեն րոպէ ճնշում է իմ ազատութիւնն և խոչնդոտ դառնում ինձ, — շարունակեց Սմբատը, աչքերի դրդռվելով մօր լուռթիւնից: Դու ինձ չըթողիր Ռուսաստան գնալու, որ ուսումս չարունակեմ, կարծում էիր, որ այնտեղ հասայ թէ չէ—իսկոյն պիտի մեռնեմ: (Մայրը մի ցնցում գործեց): Դու ինձ հեռացրիր իմ ընկերների շրջանից և աքսորականի պէս դատապարտել ես յաւիտեան մի քաղաքում ապրել քո աչքի առջև: Կրկնում եմ, այդ մայրական սէր չէ. Թող ինձ մի փոքր ազատ շունչ քաշեմ, բաւական է, որքան խանձարուրի մէջ պահեցիր ինձ:

Նա լռեց և, տեղից բարձրանալով, սկսեց յուզված անցուդարձ անել, ձեռները վարտիկի գրպանները դրած:

—Որդի՛,—խօսեց մայրը, վերջապէս, ուշքը վրէն հաւաքելով,—ՙրբե եմ ես քեզ արդեօք եղել: Ինչ ուզում ես—արա, ինչպէս կամենում ես—ապրիր, ահա քեզ տուն, տեղ, հարստութիւն. քոնը չէ՞ էլ ինչ ես ուզում.—հոգի՛ս... Կըտամ, չեմ խնայիլ, Աստծուն է յայտնի:

Սմբատը դառնութեամբ ժպտաց:

—Հոգիդ,—կրկնեց նա, կանգնելով մօր առջև,—հէնց այդ է, որ ես չեմ ուզում, ինչի՛ս է պէտք քո հոգին: Աւելի լաւ կըլինէր ինձ համար, որ դու խնայէիր ինքդ քեզ և իմ մասին քիչ մտածէիր: Հաւատացիր, մայր, որ ես աւելի բաղդաւոր կըլինէի, եթէ դու ինձ պակաս սիրէիր կամ չըսիրէիր միանգամայն: Այո, մի սիրիր ինձ:

—Քեզ չըսիրե՞մ, ե՛ս, քեզ չըսիրեմ,—կրկնեց այրին դրեթէ զայրացած այս անհնարին և անբնական

առաջարկութիւնից։

—Գոնէ, փոխիր սիրելուդ ձևը։

Հռիփսիմէն այլ ևս չկարողացաւ զսպել իւր արտասուքը, որ քանի րոպէ արդէն խեղդում էր նրա կոկորդը։ Նա սկսեց բարձրաձայն հեկեկալ։

Սմբաթը ճնշված սրտով մտաւ իւր սենեակն և սկսեց հագնվել։ Նա զգաց, որ իւր յանդիմանութիւնն աւելի խիստ ձևով արտայայտեց, քան թէ հարկաւոր էր և խղճաց մօրը, տեսնելով նրա բուռն հեկեկանքը։ Մի և նոյն ժամանակ, նա արդարացի էր համարում իրան. ծանր էր թւում նրան սիրոյ այն կապանքը, որով մայրը կաշկանդել էր նրա անհատականութիւնը։ Այդ սէրը նա համարում էր մի տեսակ ստրկութիւն մօր կողմից, թէկուզ այն արտայայտվեր անձնազոհութեամբ։

Յանկարծ նա լսեց մի ձայն, յետ նայեց և տեսաւ մօրը, որ գաղտնի դիտում էր որդու շարժուածքը դռների արանքից։ Խեղճ կինն, նրա սէրն և կասկածանքն այն աստիճանին էին հասել, որ վախենում էր, մի դուցէ որդին յուզված դրութեան մէջ մի բան անէ... Այդ պարզ էր Սմբաթի համար։ Նա արագ արագ հագաւ շորերն և շտապով դուրս գնաց, առանց սովորական բարևն ասելու։ Սակայն, դուրս գալիս, նա չհամբերեց, յետ նայեց։ Մայրը, պատուհանի առջև կանգնած, նայում էր նրա եռանից, ձեռները ծոցին դրած և գլուխն ուսին թեքած։ Նրա յետքն այնքան տխուր էր, երկիւղած և ազդու, որ դրոշմվեց Սմբաթի սրտին, թէև չըատիպեց նրան յետ դառնալ և ներումն խնդրել. մի բան, որ հոգով ցանկանում էր։

Երբ նա հեռացաւ, Հռիփսիմէն անմիջապէս կանչեց Ծառային։



—Գասպար,—ասաց նա ընչասպառ, որպէս թէ մի մեծ անբաղդութիւն պատահած լինէր,—այս րոպէիս պարոնդ դուրս եկաւ շատ չարացած, չըգիտեմ ում վրայ։ Իսկոյն վազիր եռանից, բայց չըմօտենաս, հետն ու հետը գնա այնպէս, որ դու նրան տեսնես, նա քեզ չըտեսնի։ Աչքդ չհեռացնես, հասկանում ես...

—Աչքիս վրայ,—ասաց Գասպարը, որ Բարսեղ-մեհենների տան վաղեմի հաւատարիմ ծառան էր։

—Կաց, այս լաւ է. ծխախոտամանը թողել է, եթէ քեզ տեսաւ, կասես, որ դրա համար ես եկել։ Դէհ, գնա, թէ չէ—չես գտնիլ։

Ծառան վազեց։ Հռիփսիմէն նստեց սեղանի մօտ, գլուխը դրեց կռնների վրայ և դարձեալ սկսեց լացլինել։ Յետոյ նա, թաշկինակով սրբելով աչքերը, վերկացաւ և գնաց հարևան Մարիամի մօտ՝ մի կերպ ժամանակը մոռանալու։ Փոքր ինչ անցած՝ նա վերադարձաւ և երկար ժամանակ լսրվածք դրութեան մէջ, հառաչելով, անցուդարձ էր անում մի սենեակից դէպի միւսը, անդադար նայելով սեղանատան պատի ժամացոյցին։ Իւրաքանչիւր մի անցնող րոպէ աւելացնում էր նրա վիշտն և սպառում համբերութիւնը։ Գոնէ, արդեօք, Գասպարը նրան, կըվերադառնայ, արդեօք, նա այս գիշեր, թէ...

Նա յանդիմանում էր ինքն իրան, որ առիթ տուեց իւր միակ որդուն՝ բարկանալու։ Նա իրան համարում էր անպայման մեղաւոր. նա չըպիտի հակաճառէր, չըպիտի լար, չըպիտի զարմանար, չըպիտի խօսէր անդամ։

Նա նայում էր մերթ դէպի փողոց, մերթ դէպի

գաւիթ, ականջները լարում էր լսելու դրսից մի ձայն, և երբեմն սրտի սաստիկ բաբախումը խաբում էր նրան։ Հեռվհեռէ փողոցում անցորդների ձայները ընդհատվեցին, կառքերի դղրդիւնը դադարեց, հարևանների ճրագները մի առ մի սկսան հանդչիլ, իսկ Սմբատը չկայ ու չկայ և ոչ էլ ծառան։

Մի վայրկեան Հռիփսիմէի մէջ ցանկութիւն ծագեց՝ գնալ և վնտռել որդուն, բայց ո՞րտեղ... Նա փակեց դռները, չալը գցեց գլխին, դուրս եկաւ փողոց և կանգնեց դռների մօտ։

Արդէն կէս գիշերից անց էր, երբ, վերջապէս, մի կառք երևաց փողոցի ծայրում։ Հռիփսիմէն շտապեց ներս և մտաւ իւր սենեակը։ Նա գիտէր, որ եթէ որդին տեսնէ իրան ոտքի վրայ անհանգիստ— կըբարկանայ։ Թող չկարծի, թէ մայրը սպասում էր իրան...

Եկողն արդարև Սմբատն էր։ Նա մտաւ ներս թէ չէ, իսկոյն դիմեց մօր սենեակը. նա նկատել էր նրան գաւթից ներս մտնելիս։

—Դու քնած չես,—ասաց նա, — հաւատացիր, մայր, լաւ բան չես անում, որ եաևիցս լրտես ես ուղարկում։

Ինչ ուզում է, թող ասի Սմբատը, միայն թէ թոյլ տայ Հռիփսիմէին իւր ուրախութիւնն արտայայտելու մի համբոյրով։ Եւ որդին թոյլ տուեց. նա տրամադրված չէր բարկանալու։

—Բայց լրտեսդ ճարպիկ չէ,—ասաց նա, հեգնելով,—յիմարը կարծում էր ես նրան չեմ տեսնում։ Այդու դռների մօտ նկատեցի և իսկոյն հասկացայ, որ դու ես ուղարկել։ Թագուն հրամայեցի դռնապա-



նին ներս թողնել։ Մի ծաղրելի էր։ Խեղճ մարդ, ամբողջ երեկոյ, մութ ծառուղում նստած, դիտում էր ինձ, կարծելով, որ չատ յաջող է կատարում իւր դերը։ Բայց եթէ դու ինձ ստիպեցիր շուտ վերադառնալ, ես էլ Գասպարին պատժեցի։ Ես կառքով եկայ, նրան չըհրամայեցի նստել, ստիպվեց եաևիցս վազել խելագարի պէս։ Չէի ուզում ամաչացնել նրան, թէ նրա լրտեսութիւնը նկատել եմ...

Պատշգամբի վրայ երևաց Գասպարը, քրտնած, չնչասպառ և փոշոտ։

—Ահա, եկաւ առաքեալդ,—հեգնեց Սմբատը,—էհ, Գասպար, ես քեզ խելօք մարդ էի համարում, բայց դու ինձ երկու տարեկան երեխայի տեղ ես դնում։ Ամօթ է... Բայց դու մեղաւոր չես, ես քեզ կըվարձատրեմ մօրս փոխարէն։

Այս ասելով, նա պատուհանից ձգեց ծառային մի հատ երեք ռուբլանոց և իսկոյն սկսեց հագուստը հանել։

Հետևեալ օրը նա զարթնեց ուրախ, զուարթ և սկսեց մօր հետ կատակ անել։

—Քնած ժամանակս էլ հանդիստ չես թողնում ինձ,—ասաց նա, ծիծաղելով,—գիշերը չորից ես վերամակս դէն էլ ձգել, առաւօտ զարթնում եմ ու տեսնում, որ էլի գցել ես վրէս ու այնպէս փաթաթել, որ տաքից խեղդվում էի։

Նա վճռել էր միայն այս ձևով ազդել մօր վրայ, որ դուցէ կարողանայ մի կերպ զսպել նրա «քնքոյշ բռնակալութիւնը», ինչպէս անուանում էր ինքը։ Հռիփսիմէն հասկացաւ նրա միտքը, որոշեց զգաստանել և, մի և նոյն ժամանակ, աշխատել ոչ մի կերպ

չընդդիմանալ որդու կամքին։ Բայց և այնպէս, ճաշի ժամանակ նա չկարողացաւ զսպել իւր կիրքը դարձած հոգատարութիւնը։ Նա ինքն իւր ձեռով նրա ափսէի մէջ դրեց «կօտլետի» մի լաւ կտոր։

—Իսկ եթէ չկամենամ ուտել այդ կտորը,—ասաց Սմբատը, ծիծաղելով։

—Դու դիտես,—պատասխանեց մայրը,—ես քեզ չեմ զօրում։ Շատ քիչ ես ուտում, սիրտս... Լաւ, էլ չեմ խօսիլ...

Եւ մինչև ճաշի վերջը նա լռեց, աչքի տակով դաղտնի դիտելով որդուն, ուտում է, արդեօք, նա։

Երեկոյեան, իւր կատակները չարունակելով, Սմբատը, մինչ դուրս դալիս, յայտնեց թէ դարձեալ ուշանալու է։

—Գասպարին չուղարկես եռևիցս, թէ չէ մաս-դրութիւն չունիմ նրա համար թատրոնի տոմսակ դնելու, որ ինձ լրտեսի։

—Դու դիտես,—պատասխանեց մայրն անսահման խոնարհութեամբ,—բայց...

—Հը՞մ...

—Լաւ կանես, որ վերարկուդ վերցնես, երեկոները ցուրտ է։

Այս անգամ Սմբատը վերադարձաւ աւելի ուշ, քան նախընթաց երեկոյ։ Երբ նա եկաւ, մայրը, սև չալն ուսերին դցած, անցուդարձ էր անում դաս-թում անլսելի քայլերով, անշունչ ուրուականի պէս։ Սմբատը զգաց խղճի սուր խայթոց և, միևնոյն ժամանակ, դարձեալ բարկութիւնից, խառնվեց նրա արիւնը։ Նա վրդովվեց իւր դէմ, որ առիթ էր տալիս մօրն՝ այդքան տանջվելու, վրդովվեց և՛ մօր դէմ, որ



այդքան զգայուն էր։

Այդ օրից մայրը լուռ էր, անտրտունջ և համբե-րութեամբ խոնարհ իւր ճակատագրին։ Նա ոչ մի յան-դիմանութիւն չէր անում, ոչ մի անգամ չէր հարցնում որդու կամքը և ոչ մի ցանկութիւն չէր յայտնում։ Նա միայն աշխատում էր լուռ ու մունջ գուշակել որ-դու ամեն մի չնչին հաճոյքն և անվրէպ կատարել։ Բայց որքան թանգ է նստում նրան այդ յամառ լռու-թիւնը։ Սմբատը նկատում էր, որ անքուն գիշերները և անխօս մտատանջութիւնը օրից օր մաշում են մօրը և օրից օր փութացնում նրա ծերութիւնը։ Այդ աւելի անտանելի էր նրա համար, քան եթէ հանդիպէր մօր կողմից բուռն և բացարձակ յանդիմանութեան։

Նա փոխեց իւր վարմունքը, սկսեց երեկոները տանը անցկացնել, աշխատելով զուարճացնել մօրն ա-ռաջուայ պէս։ Այդ ևս չօգնեց։

Մի օր նա տուն եկաւ սաստիկ վրդովված և դոյնը թռած։ Հռիփսիմէն, դողդողալով, ձեռները ծո-ցին դրեց, գլուխը թեքեց դէպի ուսը, կանգնեց ու նայեց որդու աչքերին։ Այնտեղ նա ձգտում էր կար-դալ նրա գոնաստութեան պատճառն առանց խօսել համարձակվելու։

—Դու ուրեմն չես հասկանում, թէ ինչ ես ա-րել,—դոչեց որդին, չկարողանալով զսպել իւր կա-տաղութիւնը։—Դու ինձ բոլոր ընկերներիս մէջ խայ-տառակել ես և չես իմանում, չես իմանում։

—Սմբա՜տ... կարողացաւ միայն արտասանել մայրը։

—Ոչ, այդ արդէն չափազանցութիւն է, դու ա-մեն կողմից ինձ թշնամու պէս պաշարել ես, ամեն ճանապարհ կապել ես իմ առջև։ Բաւական չէր ծա-

ռան, այժմ դու ընկերներիս ես ինձ վրայ լրտես նըշանակել...

—Ես... ես... ոչինչ... տատանվեց մայրն և չըկարողացաւ շարունակել, երկիւղածութեամբ յետույետ քաշվելով։

—Այո, Սերգօ Քեթխուդեանին դու չես խընդրել, որ քեզ պատմի այն ամենը, ինչ-որ ես անում եմ դրսում։ Իրոյդ որդուն, Աբգարին, դու չես պահանջել վրէս, որ ես մի քայլ անգամ չանեմ առանց նրան։ Աւելի՛ Սերգօն և Աբգարն ինձ լաւ են ճանաչում, գիտեն, որ իմ կեանքը դրսում մի վայրկեան չունէ, բայց ինչու՛ ես ինձ ամաչացնում։ Այդ դեռ ոչինչ. ասա, խնդրեմ, ես ինչպէս չըգրգռվեմ, որ դու չըվստահիլների պարագլուխ Մելիխովին անգամ ինձ համար լրտես ես նշանակել։ Բայց արդէն բաւական է, չափը լրացաւ։ Լսի՛ր, ինչ եմ ասում, մայր, դու գիտես, որ վաղուց ես մտադիր էի Ռուսաստան գնալու, գիտես, որ ես ուզում եմ համալսարան մըտնել...

Մայրը գլխով մի չարժումն արաւ, լուռ հառաչելով, առանց տեղից շարժվելու։

—Ուրեմն չըզարմանաս—ես երկու շաբաթից յետոյ ուղևորվում եմ... Պետերբուրգ։

Հռիփսիմէն մի ճիչ արձակեց և ուժասպառ, թուլացած, նստեց պատի մօտ դանվող թախտի վրայ։ Այո, նա վաղուց գիտէր որդու մտադրութիւնը։ Դեռ երկու տարի առաջ, երբ աւարտեց գիմնազիոնը, նա անվիճակաէս պատրաստվեց ուղևորվելու։ Բայց Հռիփսիմէն ընկաւ նրա ոտներին, աղերսեց, որ թողնի իր մտադրութիւնն և ապրի մօր հետ։ Ի՞նչ է անում նա



բարձր ուսումը, քանի որ նրա առողջութեանը ջնասակար է։ Եթէ ուսումն առնում են նրա համար, որ աշխարհում ապրելու միջոց ունենան, Սմբատն այդ կողմից ամենից բաղդաւորն է։ Հայրն այնքան թողել է, որ որդուց որդի բաւական է։ Ոչ միայն ուսում, այլ և ոչ մի դործով չըպիտի պարապվի. նա միայն պիտի ապրի ու ապրի... Այս էր Հռիփսիմէի ուզածը։ Եւ յանկարծ Սմբատը վճռողաբար յայտնում է, թէ երկու շաբաթից յետոյ գնում է։ Հռիփսիմէն կարող է ապրել առանց տարիներով որդու երեսը տեսնելու, նա, որ երկու ժամ որդուն չըտեսնելիս տանջվում է այնքան։

Հռիփսիմէն անցաւ իր սենեակը, դռները փակեց և երկար ժամանակ լաց եղաւ, յիշելով անցեալը, իր հանգուցեալ ամուսնուն և հանգուցեալ որդիներին։ Այն ժամանակ նա երջանիկ էր, այն ժամանակ նա կըհամաձայնվէր մէկից բաժանվել, միւսով մխիթարվել։ Իսկ այժմ... Երբէք, նա կըսպանի ինքն իրան և չի համաձայնվիլ միակ որդուց բաժանվելու։ Իսկ եթէ Սմբատը յամառութիւն անէ, այն ժամանակ...

—Կըթողնեմ տուն ու տեղ, ամուսնուս ու որդուս դերեզմանները և կըդնամ նրա ետևից, —ասաց Հռիփսիմէն ինքն իրան լսելի ձայնով,—կըդնամ, թէկուզ աշխարհի միւս ծայրը։

Սակայն մի րոպէ չ'անցած, այս միտքը նրան սարսափեցրեց։ Ի՛նչ, միթէ նա կարող է իր սիրեցեալների դերեզմանները մոռանալ, թողնել և հեռանալ օտար աշխարհ։ Ո՛չ, այդ անտանելի կըլինի։

Ամբողջ օրը նա ոչինչ չ'ասաց որդուն, միայն հետևեալ առաւօտը դարձաւ նրան.

—Որդի, երէկ հանաք էիր անում, չէ՞...

—Ի՞նչ հանաք,

—Թէ պիտի գնաս։

—Բարեբաղդաբար, ոչ։ Ամսոյս վերջին ինձ բարի ճանապարհ մաղթիր։

—Այդ ինչպէս կըլինի,—արտասանեց Հռիփսիմէն, կմկմալով։

—Այնպէս կըլինի, որ կընատեմ կառք, կըգնամ և ամեն ամառ կըգամ մօրս տեսնելու, ինչպէս ուրիշները են անում։

—Ուրիշները շատ որդիք ունին, ես մէկն ունիմ։

—Մեր հարևան այն աղքատ կինը քանի՞ ունի. չէ որ մէկը, ինչո՞ւ է թողնում նրան գնալու։ Բեզ նման շատերը կան, մայր, հասատացիր։ Ես մի ուրիշ ընկեր ունիմ, նրա մայրը հինգ որդի ունէ, հինգն էլ նրանից հեռու են ապրում, նա կին չէ՞ քեզ պէս...

—Ես չեմ կարող... չեմ կարող... կրկնեց մի քանի անգամ Հռիփսիմէն փղձկալով։

Սմբատի պարզ-մեհեակագոյն աչքերը փայլեցին տհաճութեամբ։ Նա մի ծխախոտ վառեց, որ իւր՝ մի վայրկեանում լրված՝ ջղերը փոքր ինչ թմրեցնի։ Այդ մի սովորական միջոց էր, որին դիմում էր բարկութեան րոպէներին։ Նա թուլացած նստեց աթոռի վրայ. նա տեսնում էր, որ դժուար էր ազատվել այդ կապանքից, որ ծերունի կինն առանց իրան անկարող է շարունակել իւր գոյութիւնը,.. այնքան հոգով ու սրտով ծուլվել է նա իւր զաւակի հետ։

—Լաւ,—ասաց նա,—եթէ անպատճառ ուզում ես տաներ ու ձեռներս չզիայած ունենալ, արի, քեզ էլ տանեմ հետս, ուր որ գնում եմ։ Միայն թէ մի ո-



չնչացնիր իմ ապագան։

Հռիփսիմէն ոչինչ չըպատասխանեց. նա լալիս էր, արտասանելով իւր հանգուցեալ որդիներից մերթ մէկի մերթ միւսի անունը։ Սմբատը չըկարողացաւ երկար կրել այդ դառն տեսարանի ծանրութիւնը, թողեց և հեռացաւ միւս սենեակ։

Այնուհետև նա մի քանի օր աշխատում էր համոզել մօրը, թէ իւր գնալն անհրաժեշտ է, թէ Թիֆլիսի կեանքն և անդործութիւնը նրան ձանձրացրել են, թէ նա մտաւորապէս բթանում է, բարոյապէս աղաւաղվում, միշտ միատեսակ կեանք վարելով, թէ, վերջապէս, անդործութիւնը պատիւ չի բերում տղամարդին։ Նա օրինակ էր բերում իւր նախկին ընկերներին, համեմատում էր իրան նրանց հետ և ամաչում այդ համեմատութիւնից։ Ամեն մէկը մի անհատ է, մի աղատ մարդ իւր ուժով, կամքով, խելքով, իւր սեպհականութեամբ։ Իսկ ինչ է ինքը. համարեա թէ ոչինչ. փողով ապրող, փայփայված մի երեխայ, որին եթէ վաղն աղատութիւն տան իւր ոտքով չըկարողանայ չըլինի, ով գիտէ չըկարողանայ չըլնել։ Ո՛չ, այսպէս չի կարելի, նա արդէն ծիծաղելի է դարձել իւր ընկերների աչքում, նրանք ծաղրում են նրան, արժանի չեն համարում մի լուրջ բանի վրայ հետը խօսելու։ Իսկ ով անկեղծ է, խորհուրդ է տալիս ուսումը շարունակելու։

—Խնդրում եմ, մայրիկ, արդեօք մի լինիր ինձ, մի կապիր ճանապարհս...

Բայց բոլոր այս պատճառաբանութիւնները ակնթարկ ապարդիւն էին անցնում։ Ճշմարիտ է, Հռիփսիմէն լսում էր որդու տասնները խորին ուշադրութեամբ, չէր հակառակում, համաձայնվում էր, բայց, մի և նոյն

ժամանակ, միշտ կրկնում էր.

—Առանց քեզ մի օր չեմ ապրիլ։

Սմբատը շուարված էր մնացել, չըգիտեր ինչ անել։

«Վերջապէս, մի կերպ պետք է լուծել այդ կապանքը, թէ չէ»,—մտածում էր նա։

Նա վճռեց փոխել իւր վարվողութեան ձևը։ Մինչև այժմ նա դեռ շարունակում էր մեղմ վարվել մօր հետ, որին թէ սիրում էր և թէ խղճում։ Այժմ նա սկսեց ցոյց տալ, որ ատում է նրան և մտադրութեամբ իւր յարաբերութիւնները կոշտացրեց։ Նա չէր պատասխանում մօր ոչ մի հարցին, ճաշում էր առանձին, քնում էր իւր առանձնասենեակում, ուր չէր թոյլ տալիս մօրը ոտք դնելու, տեղի ու անտեղի ծառայի վրայ բարկանում էր, մուրացկաններին վռնդում էր դռներից, թափառաշրջիկ երաժիշտներին ու երգիչներին չէր թողնում երգել և նուագել դաւթում։ Մի խօսքով, անում էր այն, ինչ-որ գիտէր, թէ դուր չի գալիս մօրը։ Այսպիսով նա կամենում էր մօր սրտումատելութիւն յղացնել դէպի ինքը, մի ծայրայեղ զգացմունքի տեղ—հակառակը ներշնչել։ Այն ժամանակ մայրը, վերջապէս, կը՛ձանձրանայ որդուց և բարւոք կը՛համարի, դէթ մի առ ժամանակ, բաժանվել նրանից։

Սակայն զուր, բոլոր այս միջոցները հակառակ արդիւնք ունեցան Սմբատի համար։ Որքան նա բռնի ատելութիւն էր ցոյց տալիս, նոյնքան մօր սէրը զարդանում էր, կոյր հնազանդութիւնը ամրանում։ Նա շարունակ լուռ ու մունջ դիմանում էր որդու քմահաճութիւններին, առանց դէթ մի անգամ թեթև յանդիմանութիւն անելու։



Մի օր Սմբատը նկատեց, որ մայրը գաղտնի մի արծաթէ դրամ տուեց մեկ կոյր երգչի, որին նա վռնդել էր։ Հետևեալ օրը նա պատահմամբ, դռների մօտով անցնելիս, տեսաւ, որ մայրը նստած լաց է լինում իւր ամուսնու սենեակում։ Այդ ստիպեց նրան մի կողմ ձգել կեղծ ատելութեան դիմակը, որ այնքան ծանր էր նրա համար։

Այժմ մնում էր մի վերջին միջոց—լինել անզգայ, թողնել անուշադիր մօր լացն ու հառաչանքները և գնալ ու հեռանալ։ Նա լաց կըլինի, լաց կըլինի և դուցէ վերջը կամայ ակամայ կըհնազանդվի իւր ճակատագրին։

Ամառուայ վերջերին մի օր նա սառն եղանակով յայտնեց մօրը, թէ վաղը չէ միւս օրը ճանապարհ է ընկնելու։

—Ո՞ր քաղաք... հարցրեց մայրը։

—Դու նամակ կըստանաս Ռուսաստանից կամ, ով գիտէ, արտասահմանից։

Հռիփսիմէն ոչինչ չ'ասաց, մի հառաչանք անգամ չ'արձակեց, նրա դէմքի մկանունքներն անգամ չըշարժվեցին։ Այդ օրերը նա նիհարել էր, աչքերը խորն էին ընկել, այտերի ոսկորները դուրս էին ցցվել երեսի թաւամած կաշուի տակ։ Նա լուռ ու խոնարհ երեսը շուռ տուեց, գնաց իւր սենեակն և ամբողջ օրն այնտեղ մնաց։

Միւս օրն երեկոյեան Սմբատը սովորականից վաղ տուն վերադարձաւ, հրամայեց Գասպարին իւր հագուստեղէնը կապել, ասաց, թէ վաղը երիկնադէմին ճանապարհ է ընկնելու, թէ արդէն կառքի տոմսակ է վերցրել։

—Բաս աղջիկ պարոնը,—հարցրեց ծառան զար-

մացած։

—Ի՞նչ կայ։

—Նա հիւանդ է։

—Հիւանդ է,—գոչեց Սմբատը, զուր աշխատելով չկորցնել առնասրտութիւնը։

—Այսօր մինչև երեկոյ պառկած է եղել. ասացի, աղջիկ պարոն, թող գնամ, Սմբատին դանեմ, բժիշկ կանչենք։ Չուզեց ու չուզեց... Պառկած է ու լաց է լինում... գնում էք այնտե՛ղ. Աստուած սիրէք, չ՛ասէք Գասպարն ասաց։ Նա կըբարկանայ վրէս, եթէ իմանայ, որ ես եմ ձեզ յայտնել։

Հռիփսիմէն արդարև հիւանդ էր և ծանր հառաչում էր, պառկած խաւար սենեակում, երբ Սմբատը ներս մտաւ։

—Ի՞նչ է պատահել, հիւանդ ես, ինչո՞ւ ես մընում պառկել,—կրկնեց միմեանց հետևից իւր հարցերը Սմբատը։

Գասպարը նրա հրամանով իսկոյն ներս բերեց վառած կանթեղը։ Հռիփսիմէն պառկած էր, երեսը պատին դարձրած, գլուխը սև շալով ծածկած, առանց վերմակի, ձեռում սեղմած մի բան։

Սմբատը զգուշութեամբ մօտեցաւ նրան։

—Նայիր, մայրիկ, ես եմ...

Նրա ձայնը դողում էր, դողում էին և նրա ձեռները երկիւղից և խղճի հարուածից։ Հռիփսիմէն արագութեամբ, որքան, իհարկէ, այժ ունէր, բարձրացաւ և նստեց անկողնի վրայ։

—Դո՛ւ ես,—արտասանեց նա քնից նոր սթափվողի պէս,—էհ, ոչինչ, գլուխս քիչ ցաւում էր, անցաւ։

Այս ասելով, նա շտապով և դողդոջ թաղցրեց



բարձի տակ մի բան։

—Այդ ինչ ես թաղցնում, ցոյց տուր...

Որդին կասկածանքով ձեռը մեկնեց և բարձի տակից հանեց թաղցրած բանը։ Դա նրա հանգուցեալ եղբայրների և հօր լուսանկարներն էին։ Նայեց նրանց վրայ Սմբատը, յիշեց այն երջանիկ օրերն, երբ նրանք կենդանի էին, յիշեց մեկի որդիական և միւսի ամուսնական սէրը։ Չէ որ այժմ չըկան նրանք և մօր միակ սփոփանքն ինքն է այսօր։ Չէ որ ինչպէս մայրն է իւր բոլոր սէրը նուիրել որդուն, նա ևս պարտաւոր է իւր հօր և եղբօր փոխարէն սիրել նրան...

Նա ուշադրութեամբ նայեց մօր երեսին։ Ո՛րքան նա փոխվել է վերջին ժամանակ, թառամել, դալկացել և դրեթէ կմախք դարձել։ Մի վայրկեանում բուռն զօրութեամբ զրդռվեց նրա որդիական սէրը, խանդն խղճահարութեան և ցաւակցութեան հետ։ Ձնչված սրտով, խորը զգացված, նա բռնեց մօր ձեռը, հպեց իւր շրթունքներին և յուզված ձայնով արտասանեց.

—Ներիր, մայրիկ, գիտեմ ինձ համար ես այդքան վշտանում. քո տկարութեան պատճառն ես եմ միայն... Բայց ահա ես քո մօտն եմ և չեմ... հեռանալ... Չե՛մ հաւատում...

Նա վազեց իւր սենեակն և իսկոյն յետ դարձաւ ճանապարհի տոմսակը ձեռին։

—Տես, ահա, պատռում եմ տոմսակս և չեմ գընում...

Մայրը թռաւ ոտքի և բռնեց նրա ձեռը։

—Ոչ, սպասիր, եթէ ինձ սիրում ես, մի պատռիր, շատ լաւ ես արել որ վերցրել ես։ Գնա, որդի, գնա, ես ինքս եմ խնդրում, գնա, աշխարհ տես, մարդ-

տես, թող միտքդ բացվի։ Լսո՛ւմ ես, ես քեզ խնդրում եմ, գնա՝ է՛հ, ես յիմար կին եմ, չէի հասկանում, հակառակում էի։ Հիմայ հանգիստ կաց, առանց քեզ կարող եմ համբերել, ինչու չէ, կարող եմ...

Նա խօսում էր հաստատ ձայնով և համոզված մարդու եղանակով։ Ոչ մի կեղծ հնչիւն կամ թագցրած դժգոհութիւն չէր զգացվում նրա ասածի մէջ։ Սմբատը հակառակեց, նա սկսեց հաւատացնել, որ այժմ այլ ևս ինքը չունի ոչ ուսման ցանկութիւն և ոչ Թիֆլիսից դուրս գնալու միտք։ Բայց դժուար էր համոզել Հռիփսիմէին։ Նա անյողդողդ կրկնում էր, թէ շատ կըվշտացնի Սմբատը նրան, եթէ չըկամենայ դընալ, թէ այդ իւր ներմ ցանկութիւնն է և այլն։

Հետևեալ օրը Սմբատը պատրաստվեց ճանապարհ ընկնելու։ Հռիփսիմէն ուրախ էր և աշխոյժ։ Նա Սմբատի աչքում բաւական փոխվել էր ու անհամեմատ առողջ և զուարթ էր երևում քան նախընթաց երեկոյ։ Նա օգնում էր Սմբատին, աշխատելով, որքան կարելի է, նրա բեռը ծանրացնել զանազան պիտանի ու աւելորդ հագուստներով և տոպրակով անպատճառ իւր հետ վերցնել տեսակ տեսակ ուտելեղէն ճանապարհի համար։

Սմբատը մեծ հաճութեամբ կատարում էր նրա ամենաչնչին ցանկութիւնն անգամ։ Բայց, զբաղված լինելով իւր նոր սկսվող կեանքի մտքերով, չէր նկատում այն խորին և տարօրինակ թախծութիւնը, որ թագնված էր մօր զուարթութեան ներքոյ և որ մերթ ընդ մերթ փայլում էր նրա աչքերի մէջ կամ արտայայտվում ձեռների դողոցով։

Հռիփսիմէն մի փառաւոր ճաշ պատրաստել



տուեց իւր որդու համար։ Ներկայ էին նրա քոյրը, քեռորդին և ուրիշ մի քանի ազգականներ, որ եկել էին ճանապարհ դնելու Սմբատին։ Մայրերը բացարձակ, Սմբատի ներկայութեամբ, յանդիմանում էին Հռիփսիմէին, որ նա թողնում է իւր միակ որդուն օտար աշխարհ գնալու։ Հռիփսիմէն, ծիծաղելով և կատակներ անելով, պատասխանում էր, թէ Թիֆլիսում արժանաւոր հարս նացու չըկայ Սմբատի համար, թէ նա գնում է ուրիշ երկրում պսակվելու և թէ շուտով կըվերադառնայ մի գեղեցիկ կնոջ հետ։

Ճաշն աւարտվեց ուրախ, անթիւ անգամ խմեցին Սմբատի կենացն և բարի ճանապարհ մաղթեցին։ Մօտեցաւ ուղևորութեան ժամը։ Գասպարն իրեղէններըը տարեց փոստային կայարան։ Սմբատը մօր հետ մի կառքով գնաց։ Նրանց ետևից գնացին բարեկամները։ Եղանակը աստիկ շոգ էր, անհնարին էր արեգակի տակ մնալ։ Հռիփսիմէն աստէղ-աստէղ սրբում էր իւր ճակատի քրտինքը, ծանր հառաչելով...

Կայարանում նա ուշադրութեամբ դիտեց այն կառքը, որ պիտի տաներ նրա որդուն, մտքում ցաւեց, որ Սմբատը պիտի այդ չորս կողմից բաց կառքում նստի, ով գիտէ, ինչ մարդկանց հետ։ Բայց նա արտաքուստ հաւանութիւն ցոյց տուեց, մինչև անգամ ասաց, թէ լաւ է, որ նա փակ կառքի տժտսակ չի վերցրել այդ շոգում։

Վերջապէս, հասաւ բաժանման տագնապալի րոպէն։ Կօնդուկտօրը առաջարկեց կառք նստել։ Սմբատըն ընկաւ մօր գիրկը, և երկար ժամանակ նրանք չէին անջատվում միմեանցից։ Հասաւ և՛ ուրիշների հերթը՝ Սմբատին համբուրելու։

Բոլոր կանայք արտասվեցին, բացի... Հռիփսիմէից։ Նա անվրդով էր։ Նա ժպտում էր։

Կօնդուկտօրը Սմբատին չտապեցրեց։ Նա բռնեց իւր տեղը մի ռուս կնոջ և մի պառաւ հրէայի մէջ, որ աշխատում էր բարեկամական ցոյցեր անել իւր ուղեկցին։ Կառավարը բարձրացրեց ձիերի սանձերը։ Կօնդուկտօրը հնչեց իւր փողը, ձիերը շարժվեցին։ Սմբատը դադակը վերցրեց վերջին բարևները տալու մօրը, որ կանգնած էր անշարժ մի և նոյն դիրքում, մի և նոյն տեղում, կառքի մօտ։

—Մնաք բարև,—ասաց պառաւ հրէան, քաղցր ժպտալով կառքը շրջապատողներին, որոնց մէջ նա ոչ մի ազգական, ոչ մի բարեկամ, ոչ մի ծանօթ չուներ։

Լավեց մի սուր, տարօրինակ դառոց, նման յուսահատ խոյլ բառանչելուն սպանդադործի դանակի տակ։ Եւ մի ինչ-որ սև բան փռվեց գետնին ուղիղ կառքի առջև։ Ձիերը խրտնեցին, սլակողմինը փոքր էր մնում, որ ոտը դնի գետնի վրայ տարածվածի կրծքին։

Ամենքը չփոթված նայեցին դէպի այն կողմ։ Կառավարը ամուր սեղմած ունէր իւր ձեռներում ձիերի սանձը։ Սմբատը վախեցած նայեց դէպի ցած... և բանը պարզվեց նրա համար։ Այնտեղ, գետնի վրայ, իւր ոտների տակ, փոշիի մէջ տարածված էր իւր մօր անշունչ մարմինը, մի կողմ սև լաթի պէս։ Նա վայր ցատկեց կառքից, մօտեցաւ և գունաթափ, դողդողալով, թեքվեց մօր վրայ։ Նա բռնեց նրա թևից, բոռալով.

—Մայրիկ, մայրիկ։

Մայրիկն անշարժ էր, կենդանութեան ոչ մի նըշոյլ չէր արտայայտում նրա նիհար պարզ-մոխրագոյն դէմքը։ Ազգականները օգնեցին որդուն՝ բարձրացնել մօր անշնչացած մարմինն և դնել պատշգամբի վրայ, ուր հաւաքված էր ճամբորդներ ուղեկցողների մի մեծ խումբ։ Մէկը մի շիշ ջուր բերեց և սկսեց սրսկել Հռիփսիմէի երեսին։ Տեղի ունեցաւ խիստ իրարանցում, ազգական կանայք բարձրացրին անասելի աղմուկ։ Հռիփսիմէի քոյրը բարձր ձայնով լալիս էր. նա կարծում էր, որ հարուածը մահացու է։ Սակայն սառն ջրի ազդեցութիւնից դանդաղօրէն յետ շարժվեցին ուշաթափվածի կոպերը։ Նա աչքերը բաց արեց և, մի անգամ արտասանելով որդու անունը, կրկին թուլացաւ և ընկաւ Սմբատի դիրկը։

—Պարոն, ներեցէք, մենք սպասել չենք կարող,—լսեց Սմբատն իւր ետևից կօնդուկտօրի անվրդով ձայնը։

Արդարև, կառքը սպասել չէր կարող, ճանապարհորդներն արդէն տրտնջում էին։ Իսկ այստեղ տակաւին դրեթէ անշունչ ընկած էր նրա մայրը։

Նա դարձաւ կօնդուկտօրին.

—Թողէք, իջեղիններս ցած բերեն։

Նոյն վայրկեանին Հռիփսիմէն բոլորովին սթափվեց։ Նրան կառք դրեցին՝ տուն տանելու։ Նա կըրկնում էր.

—Մի գնար, մի գնար։

Եւ Սմբատը պատասխանեց.

—Ո՛չ կարող եմ գնալ...

Յետոյ, երեսը մի կողմ դարձնելով, որ աչքերի արտասուքը թաղցնի, ցածր ձայնով, այնպէս որ միայն ինքը կարող էր լսել, արտասանեց.

—Այս թանգագին չղթան անկարելի է փչրել...

Թիֆլիս. 1889 թ.

# ՅԱՄՆՈՀՀՆԴ ՅԱՐԻ ԱՆՑԱԾ

*Պատմուածք*

—Դատաւորները գալիս են . . .

Ամբոխը միահամուռ ոտքի կանգնեց, խուլ չչըն-չիւններն ընդհատվեցին, ծայրէ ի ծայր լիքը դահլիճում թագաւորեց լռութիւն։

Պահապան զինուորներն աւելի մօտիկացան վանդակապատին, որի եռևում կանգնած էր օրուայ տըխուր հերոսը։ Նրա ոտներն ու ձեռները չղթայած էին։ Նա դեռ պատանեկական հասակումն էր, բարակ, նորաբոյս ընչացքը հազիւ հազ ծածկում էր նրա ատորին չուրթը. նա գեղեցիկ էր, թուխ աչքերով, փոքրիկ ձեռներով և բաւական նուրբ կազմուածքով։ Նրա երեսի գծագրութիւնը չէր արտայայտում եղեռնագործի հոգի։

Առաջ ներս մտաւ նախագահը, յետոյ քննիչ անդամները, յետոյ դատախաղը, յետոյ քարտուղարները։ Նրանց դէմքերը սառն էին, անտարբեր և, միևնոյն ժամանակ, ահարկու հարիւրաւոր ամբոխի համար։

Ցանցաւորն իւր հայեացքը յառեց դէպի այն կողմ և մի րոպէ չանցած լսվեց նախագահի անյողդողդ ձայնը.

—Բազուի նահանգական դատարանի քրէական բաժինը Դլիդոր Խանղադեանցին, մեղադրելով Սէյիդ-Ազիմի որդի Ղուրբան Ալիի սպանութեան համար, դատապարտեց...

Ցանցաւորը մի ցնցումն զգաց. նրա ձեռների չղթան մի թեթև չաչիւն արձակեց։ Ամբոխը, ինչպէս մի անճնաւորութիւն, զսպեց իւր շնչառութիւնը։

—Դատապարտեց՝ զրկել բոլոր անհատական և սոցիալական իրաւունքներից, ենթարկել տաժանակիր աշխատանքի Տօմսկի նահանգի գաւառներից մէկում տասն ու երկու տարի ժամանակով, այնուհետև յաւիտենական բնակութեան Ռուսիայի հեռաւոր նահանգներում։

Մինչ թարգմանն այս խօսքերը կրկնում էր յանցաւորին, դահլիճի մի անկիւնից լսվեց կանացի մի սուր ճիչ։

Ցանցաւորը ոչինչ չըպատասխանեց նախագահի հարցին, թէ, արդեօք, գոհ է այդ վճռով։ Պահապանները բաց արին վանդակապատը, և նա թուլացած, սպրդնած ցած իջաւ սանդուղքով։ Նրա դողդոջուն ոտը դահլիճի յատակին չըհասած, կականելով առաջ վազեց և նրա պարանոցին փաթաթվեց ասիական հագուստով մի կին։

Դա դատապարտվածի հարազատ մայրն էր, որ իւր թևերի տակ գգուելով մեծացրել էր նրան տասնուվինը տարի, մինչև այն ժամանակ, երբ որդին բոլորովին անճնատուր եղաւ կեանքի մոլուրթիւններին։ Եւ երկու տարի չանցած երկրորդ տարվան ձգեց նրան փորձութեան մէջ։

Ո՛չ ամբոխի խնդիրքը, ո՛չ ոստիկանների խօսքը, ո՛չ սուինների սպառնալիքը չկարողացան մօրը բաժանել իւր անդրանիկ որդուց։ Նա խղճալի էր, բայց

շատերն աւելի խղճում էին երիտասարդ դատապարտ-
վածին։ Ո՞վ չէր ճանաչում նրան N. քաղաքում, ո՛ր
մայրը չէր նախանձել նրա մօրը, ո՛ր աղջիկը տասն
անգամ չէր դիտել նրան դռների եռևից, ասիական
համեստութեան և ամօթխածութեան թանձր քօղի—
շալի տակից, երբ սիրուն տղան անցնում էր փողոցով,
գլուխը բարձր պահած, դէմքը անփոյթ կերպով ձախ
ականջի կողմը թեքած, կուրծքը դուրս ցցած, ճա-
կատը բաց, դէմքը յանդուգն, կրակոտ։ Եւ նա, շա-
տերի նախանձի այդ առարկան, յանկարծ զոհ դար-
ձաւ իւր մոլի կրքերին, հասարակական սոր խաւի
ծնունդ մի անառակ թրքուհու ոտքի տակ դնելով
ծնողների նամուսն և իւր ծաղիկ կեանքը։

Երբ Անթառամն ուշքի եկաւ, իւր շուրջը կանգ-
նած տեսաւ միայն մերձաւոր ազգականներին։ Նա
անզգայաբար թոյլ տուեց, որ իրան կառք նստեցնեն
և տանեն։ Նա կըգնայ դատաւորների մօտ, կաղերսի,
որ վճիռը փոխեն, եթէ չեղաւ՝ նա կըգիմէ աւելի
բարձր դատաւորներին։ Նա մինչև անգամ ոտաբաց
կըգնայ Թագաւոր Կայսեր մօտ, կընդնի Նրա ոտնե-
րին։ Նա բարի է, Նա չի թոյլ տալ, որ մի մայր
զրկվի իւր որդուց և այն էլ ինչ որդուց...

—Տաներկու տարի, տասներկու տարի, անխիղճ
մարդիկ...

*
* *

Մարտ ամսի վերջն էր։ Վոլգա գետի ստորին
մասերի սառոյցն արդէն կոտրվել էր և Բագուի ու
Ռուսիայի մէջ նաւագնացութիւնը սկսվել։



Եղանակը բաւական ցուրտ էր. մանր, փոշիանման
անձրև էր գալիս, ծովը խաղաղ էր, միայն նրա հե-
ռաւոր հորիզոնը ծածկված էր մոխրագոյն թանձր
մշուշով։ Փորձառու մարդիկ հաւատացնում էին, թէ
խորքում, ափերից շատ հեռու փոթորիկ կայ։ Իսկ
«Կասպիյ» շոգենաւի յանդունդն նաւապետն արհամար-
հում էր թէ բնութեան սպառնալիքն և թէ մարդ-
կանց խորհուրդները։

—Շտապեցէք,—հրամայում էր նա անվրդով ձայ-
նով նաւաստիներին,—կէս ժամից յետոյ պիտի խա-
րիսխը հանենք։ Բոլոր ապրանքները բարձված են։

—Բարձված են։

—Ո՞րտեղ են ճանապարհորդները։

Նաւապետը վերջին բառն արտասանեց հեգնա-
կան եղանակով։

—Ահա...

Նաւահանգստի ծայրում հաւաքված էր մի-
տեսակ մոխրագոյն կապոյտ վերարկուներ հագած ազ-
ականների խումբը, թուով տասը հոգի, շրջապատ-
ված կրկնապատիկ զինուորներով։ Հացի կապոցները
ձեռներին բռնած, թշուառները մռայլ ու խոշոր հա-
յեացքով նայում էին ջրի անհուն տարածութեանը, որ
այն օրուանից առ միշտ պիտի անջատէր նրանց հայ-
րենիքից։ Նրանք բոլորն օտար քաղաքներից էին բեր-
ված։ Զրկար մէկը, որ արտասուքով կամ դէթ ցա-
ւակցական հառաչանքներով ճանապարհ դներ նրանց։
Ո՛վ գիտէ, նահանգի ո՛ր գաւառում և ո՛ր գիւղում
էին այդ րոպէին ողբում նրանց մայրերն ու քոյրերը։
Մտածում էին նրանք այդ մասին, թէ ոչ—Անտարբեր
էր յայտնի։ Երբեմն նրանց տիրում էր մի կատարեալ

զուարճութիւն։ Նրանք միմեանց հրում էին, կատակներ էին անում, հրըհրու ծիծաղում էին։ Կարծես, առաջիկայ ճանապարհորդութիւնը մի զուարճալի զբօսանք էր խոստանում նրանց։ Բոլորն էլ աւազակներ էին, ով գիտէ, քանի անմեղների արիւնի մէջ թաթախած իրանց ձեռները։

Միայն մէկն էր բացառութիւն ներկայացնում այդ աքսորականների մէջ իւր հոգեկան դրութեամբ։ Նա կանգնած էր խմբից մի փոքր հեռու, ամենից տեսքով և ամենից երիտասարդ։ Զինւորների չղթաակապ շաղթի եռւում կանգնած էր նրա մայրն իւր յմի քանի ազգականների հետ։

Երբ իւր բոլոր յոյսերից զրկվեց, տեսնելով, որ աղի աղերսանքներն ոչ օգի վրայ չազդեցին, Անթառամին մնում էր հաշտվել իւր վիճակի հետ։ Երեք ամիս չանցած Գրիգորին դուրս բերեցին իւր ծննդեան քաղաքից։ Անթառամը հետևեց նրան մինչև Բագու։ Եւ ահա վերջին անգամն էր նա տեսնում իւր որդուն։

Գրիգորն աշխատում էր երևալ ուրախ, զուարթ և ճիգն էր թափում մխիթարել իւր մօրը։ Բայց նրա ամեն մի մխիթարական խօսքը կրկնապատկում էր Անթառամի տանջանքը։

Կուրծքը կիսով չափ բաց, աչքերը արտասուքից ցամաքած, նա իւր հոգեկան վիշտն արտայայտում էր միայն գլխի տարօրինակ շարժումներով։ Եւ այդ շարժումներն աւելի ազդու էին, քան առաջուայ արտասուքը, հեկեկանքն և գոռումները։ Նա ձգտում էր առաջ, ուզում էր մի անգամ ևս փաթաթվել իւր սիրեցեալի պարանոցին։ Բայց բաւական է, վինւորական կարգապահութիւնը սրան թոյլ զեղումներ չի սիրում։



Սուինների սպառնալից շարքը մի անխորտակելի պատնէշ է մօր և որդու միջև։ Եւ որքան գեղեցիկ էր նա այն օրն իւր մօր աչքում, նոյն իսկ աքսորականի տգեղ հագուստով, մի տարօրինակ հոգեկան և մարմնական զրկանքներից յետոյ։

Շոգենաւի սուլիչի առաձգական ձայնը լսվեց։ Անթառամի աչքերը մթնեցին։ Աքսորականներին հրամայեցին առաջ գնալ, և մոխրագոյն խումբն անցաւ շոգենաւի տախտակամածի վրայ։

Բարակ անձրևը շարունակվում էր։ Ի՞նչ, նա, որ վեճացել է ծնողների խնամող յարկի տակ, գիշերը պիտի անցուցանի բաց օդում, ծովի անհուն տարածութեան մէջ, անձրևի՛ ներքոյ։ Ոչ երբեք, թողէք Անթառամին ծովը դէմ իրան, խեղդվի, որ չըտեսնի որդուն այդ դրութեան հասած։ Բայց ով կըթողնի և ինչո՛ւ. չէ՞ որ Աստծու ձեռին ոչինչ անհնարին չկայ և միթէ չի՞ կարող Նա ազատել Անթառամի որդուն։

Իսկ շոգենաւը մեղմիկ սահում էր և նաւահանգստից հեռանում։ Անչատող պատնէշն այժմ ծովի խորութիւնն էր, այնքան խոր որ բնութիւնը։

Եւ որքան արագ էր մեծանում այդ պատնէշը։

Ահա խարխափը բարձրացաւ ծովի յատակից, շոգենաւն իւր կուրցը ծռեց դէպի հակառակ կողմը. աքսորականների մոխրագոյն գլխարկներն են միայն երևում։ Մի կարմրագոյն լաթի կտոր այդ գլխարկներից վեր սաւառնում է օդի մէջ։ Դա Գրիգորի վերջին բարևն է։

Զքացաւ կարմիր թաշկինակն ևս, և ամեն ինչ ծուլվեց, դարձաւ մի անորոշ սև գունդ, որից բարձրանում էր թանձր նաւթային ծուխն և ափռվում

մուդ կապտադոյն ծովի տատանվող մակերևոյթի վրայ . . .

*
* *

Անցան առաջին ամիսները։ Անթառամն արդէն վերադարձել էր իւր ծննդեան քաղաքը, այնտեղ, ուր յանցանք էր գործել և ուր դատապարտվել էր յաւիտենական աքսորանքի նրա որդին։

Օր օրի վրայ նա սպասում էր նամակի։ Առաջին նամակը ստացաւ միայն լինը ամիս անցած։

Գրիգորը նկարագրում էր նախ ծովային վտանգալից փոթորիկը, բացօդեայ կեանքը, յետոյ ընդարձակ Ռուսիայի լայնատարած դաշտերը, ցուրտը, անձրևները, ձիւնը, բուքը, մի խօսքով, բնութեան և մարդկութեան արհաւիրքը, որ կրել էր նա իւր հնդամսեայ ճանապարհորդութեան ընթացքում։ Վերջապէս, նրանց բերել են աքսորատեղին։ Դա մի փոքրիկ աւան է քաղաքից հեռու։ Այստեղ կան արքունական հանքեր և մի գործարան, ուր բոլոր աշխատաւորներն աքսորականներ են։ Ահա այս հանքերում և գործարանում պիտի աշխատի և՛ Գրիգորը, ինչպէս մի բեռնակիր մշակ, միշտ և անդադար, ամբողջ ցերեկը, ստորերկրեայ մթին և խոնաւ հանքերում, առանց իրաւունքի գործարանի շրջապատից դուրս ոտք դնելու։

Տասն անգամ Անթառամն իւր երկրորդ որդուն ստիպեց այդ նամակը կարդալ։ Նա այն օրն, ինչպէս ասում էր ինքը, թաղում իւր որդուն։ Նա հրաւիրել էր բոլոր իւր մօտիկ ազգականուհիներին, որ իւր ցաւին ցաւակից լինին։ Եւ այդ կանայք, փոխանակ մխիթարելու, աւելի դրդռում էին նրա վիշտն իրանց կեղծ և անկեղծ



հառաչանքներով, իրանց կարեկցական դարձուածներով։ Նամանաւանդ կեղեքվում էր նրա սիրտը, երբ այդ կանանցից իւրաքանչիւրը յիշեցնում էր Գրիգորի սիրուն կերպարանքը, հարաւային բորբոքուն երեւակայութեամբ նկարագրելով նրան կրկնակի գեղեցիկ գոյներով։

Յետագայ ամեռը ստացվեց երկրորդ նամակը։ Այս անգամ Գրիգորը մռայլ նկարագրութիւններ չէր անում։ Երևում էր, որ նա արդէն սկսել է ընտելանալ աքսորականի վիճակին, մխիթարում էր իւր մօրը, յիշեցնում էր, թէ Սիբիրն էլ մի մարդաբնակ աշխարհ է, թէ այնտեղ էլ մարդիկ են ապրում և այլն և այլն։ Եւ իւր դրութիւնն աւելի թեթև ցոյց տալու համար դիմում էր համեմատական նկարագրութիւնների իւր բաղդակիցների կեանքից։ Մանաւորապէս նա գրում էր մի նախկին հայ պաշտօնեայի մասին, որ աքսորված է քսան տարով իբր թէ կաշառակերութեան և եղեռնագործներին, գողերին ու աւազակներին գաղտնի ակակցելու համար։ Թէ ինչ է եղել այդ մարդն առաջ, Աստուած գիտէ, բայց երեք տարի աքսորականի կեանքի դառնութիւնները ճաշակելուց յետոյ, նա շատ մեղմ, բարեսիրտ և խեղճ մարդ է դարձել։

—Այսպիսիներին տեսնելիս սիրտս մխիթարվում է,—աւելացնում էր Գրիգորն իւր նամակում։

*
* *

Տարին անցնում էր տարու ետևից, ժամանակն Անթառամին ևս ընտելացնում էր իւր վիճակին, հար-

կաւ, արտասուքն և լացը նրա կեանքի անհրաժեշտ պահանջը դարձնելով: Ամեն անգամ, որ նա յիշում էր (և երբ չէր յիշում) այն լոպէն, երբ որդու կարմիր թաշկինակը սաւառնեց օդում, նրա կրծքից դուրս էր հնչում ծանր հոգոց, և աղի կաթիլները ողողում էին նրա նիհարած այտերը: Բայց այդ լոկ մի դառն երազ էր համեմատութեամբ այն պատկերի, որ միշտ կանգնած էր Անթառամի աչքի առջև, որ միշտ հալածում էր նրան:

Ահա նա, ուրախ, անհոգ դէմքով, բայց ճակատով, երիտասարդական հրով վառված աչքերով: Որքան ուրախացնում էր Անթառամին որդու այդ կերպարանքը, որքան հպարտանում էր և զմայլվում, տեսնելով նրան ընկերների շրջանում բոլորից սիրուն, բոլորից կայտառ, բոլորից աշխոյժ: Այո, ամբողջ Թաղի մէջ չկար մի ուրիշը նրա նման: Եւ այդ լոկ մայրական երևակայութեան արդասիք չէր, այլ մասամբ և իսկութիւն: Քանի-քանի ազդական կանայք ատիպել են Անթառամին՝ թալիսմաններ կապել Գրիգորի վզին, որ նա զերծ մնայ չար աչք դիպչելուց: Զօդնեցին նրան այդ թալիսմանները:

Արդեօք, նո՞յնն է մնացել Գրիգորը Սիբիրում, թէ փոխվել է. չէ որ արդէն անցել է եօթը տարի նրա աքսորվելուց: Սակայն Անթառամի երևակայութիւնը կենդանի պատկերացնում էր քսան ու իննը—երեսուն տարեկան Գրիգորին այնպէս, ինչպէս նա տեսել էր առաջ և ինչպէս անջնջելի դրոշմվել էր նրա յիշողութեան մէջ—տակաւին պատանի, թարմ, քսան ու մէկ տարեկան Գրիգորին: Յերեկն երևակայութեամբ, դիշերն երազում, միշտ և անդադար այդ պատկերը



կանգնած էր նրա աչքերի առջև:

Եօթը տարի անցաւ, ուրեմն մնում է հինգ տարի: Անթառամը համբերութիւն կունենայ հինգ տարի ևս կրել իւր վիշտը: Նա օրեր և դիշերներ էր հաշւում, թէ երբ պիտի լրանայ որոշված ժամանակն և երբ յիշում էր, որ տաժանակիր աշխատութիւնից ազատվելուց յետոյ ևս Գրիգորը չի կարող վերադառնալ հայրենիք, դլուխը թեքում էր կրծքին և անշարժ մնում:

Որդին աքսորվելուց յետոյ նա մի առ ժամանակ Աստծուց երես էր դարձրել, համոզված, որ Նա անարդար վարվեց իւր հետ: Բայց կարող էր նա երկար միջոց անհաշտ մնալ Նրա հետ, Որ մխիթարութեան և սփոփանքի անապառելի աղբիւր է ամենայն տեսակ թշուառների համար: Եւ ահա նա դարձեալ ամեն երեկոյ կանգնում էր եկեղեցու սիւներից մէկի առաջ, ձեռները բարձրացնում էր վերև, աչքերը յառում էր Աստուածամօր պատկերին և երկար, երկար ժամանակ անշարժ մնում մինչևյն դրութեան մէջ: Յանուն մայրական սիրոյ, նա աղերսում էր Աստուածամօրը՝ միջնորդ լինել, որ Աստուած նրան մի օր արժանացնի իւր որդու տեսութեանը:

—Զըմեռնեմ, մի անգամ էլ տեսնեմ նրան,—կրկնում էր նա բիւր անգամ կրկնած մի և նոյն դարձուածը:

*
* *

Այսպէս անցկացրեց Անթառամը տասներկու տարի, միշտ յուսալով, թէ պէտք է արժանանայ որդու

դու տեսութեանն և միշտ ապրելով միմիայն այս յոյսով։

Վերջապէս, նա ստացաւ վաղուց սպասած լուրը։ Երջանիկ օր, օր, երբ տաներկու տարուայ ընթացքում առաջին անգամ երևեցաւ ուրախութեան ժպիտ Անթառամի թառամած դէմքի վրայ։ Գրիգորն ազատվել է տաժանակիր աշխատութիւնից, ազատվել է առաւօտից մինչև երեկոյ մթին և խոնաւ ոտորերկրում աշխատելուց, ազատվել է եղեռնագործների, դահղերի, աւազակների և կոպիտ գինուորականների հասարակութիւնից, նրանց հետ մի բնակարանում ապրելուց, մի ամանից ուտելուց, մի ամանից խմելուց, մի խօսքով, աքսորականի կապանքներից։

Իսկ ա՛յժմ...

Ահա ինչ էր աւելացնում Գրիգորն իւր նամակի վերջում.

«Հէնց որ ժամանակս վերջացաւ, կամանդիրը թուղթ տուեց, ազատվեցի անիծված դժոխքից, ելայ քաղաք։ Հաց չունէի, շոր չունէի, համարեա տկլոր էի, ասեցի ինչ անեմ։

«Իտեղ մէկ մարդ կայ քեարխուչի (աղիւսի) զաւոդ (գործարան) ունի. աղաչեցի, պաղատեցի, վայնասչարի տեղ տուաւ ինձ։ Ի հարկէ, նրա էլ խիղճն եկաւ ինձ, ինչու որ ինքն էլ առաջ ինձպէս կատօրժնիկ (աքսորական) է եղել։ Հիմայ, գոհութիւն Աստուծոյ, ես պրիկաշչիկ (գործակատար) եմ զաւոդում, գլուխս մի կերպ պահում եմ, երէկ ինձանից հարցնես, ողջ, առողջ եմ, սիրելի ծնող, շատ էլ ֆիքր մի անիր։ Մէկել, սուտ-ղորթ, ասում են, որ նոր թադաւորը թախտ (գահ) նստելու օրը մանիֆեստ (հրովարտակ) է դուրս բերել կատօրժնիկների համար։



Աստուած հաստատ պահի։ Իսկը չեմ իմանում՝ որ կատօրժնիկների համար է թագաւորի ողորմութիւնը։ Երէկ ընկերներից մէկն ասում էր, ես էլ յոյս Աստուծոյ, որ ազատվողների մէջ լինիմ։ Կամանդիրին հարցրի, ասեց մանիֆեստը մինչև օրս չի հասել, չեմ իմանում կայ, չկայ։ Նպէս իմանաք։ Հէնց որ հասաւ, իսկոյն կիմանամ, կըգրեմ։ Գոհութիւն Աստուծոյ։ Կրկին ազաչանքս է, որ շատ էլ սիրտդ չըմաշես, աղօթք արա նես մեզքերիս համար, ժամ գնաս, ջուխտ-ջուխտ (զոյգ-զոյգ) մոմ վառես։ Սիրելի մայր, Մխակին, Թադուհին, Սէյրանին և այլ բարեկամաց ու հարցանողաց շատ շատ բարև։ Յաւիտեանս յաւիտենից ամէն։

Մնամ քեզ կարօտ, հարազատ որդի սիբիրնիկ՝
Գրիգոր Խանզադեանց»։

Սակայն անցաւ մի տարի ու կէս ևս, իսկ Գրիգորի յետադայ նամակների բովանդակութիւնը դրեթէ անփոփոխ էր մնում։ Կայսերական մարդասէր հրովարտակը տակաւին սպասվում էր։ Գրիգորը սրան նրան հարցնում էն, ոչ ոք մի որոշ պատասխան չէր տալիս։ Բայց նա դարձեալ մխիթարում էր մօրը, դարձեալ յոյս էր տալիս իւր վերադառնալու մասին։

Եւ Անթառամն անհամբեր սպասում էր. օրերը նրա համար անցնում էին անտանելի դանդաղութեամբ, մինչ կըրտնար այն ժամանակամիջոցը, որ տևում էր բնականաբար Գրիգորի մի նամակից յետոյ մինչև միւսի ստանալը։ Ստացվում էր յաջորդ նամակը, և դարձեալ նոյն անորոշ բովանդակութեամբ։

*
* *

Մի ամառային օր, իրիկնադեմին, Անթառամը նստած գաւթում, քառասուն ու երկու սևացած ու չորացած սիսեռների վրայ դուշակում էր տպագան։ Ճանկարծ չնչասպառ ներս վազեց նրա երկրորդ որդին, Միխակը, և ուրախ ուրախ գոչեց.

—Ի՞նչ կըտաս, որ ասեմ...

Անթառամը, չընայելով իւր ծերութեանը, աշխուժութեամբ թռաւ ոտքի, խլեց որդուց նամակը, որ սա բռնած ունէր իւր ձեռքում։ Նա մոռացաւ, որ ինքը կարդալ չգիտէ։

—Շուտ արա, հոգիս մի հանիր, կարդա՛,—գոչեց նա, նամակը վերադարձնելով որդուն։

Կարդաց։ Նամակը գրած էր Գրիգորի սիրոջ կողմից։ Սա յայտնում էր, թէ Գրիգորն արդէն ապաստուերիւն է ստացել և իսկոյն ուղարկվել հայրենիք և թէ շուտով, երևի, տեղ կըհասնի։

Ճի՛շտ է, արդեօք։ Մի գուցե դրողը մի չար թըշնամի է, որ կամեցել է դառն կատակ անել, մի գուցե «ապաստուերիւն» բառը մի այլ, խորհրդաւոր նշանակութեամբ է գործածված նամակի մէջ։

Բայց Անտուած լսել էր Անթառամի աղերսանքը. նա չըպիտի մեռնէր, մինչև որ տեսնէր իւր որդուն։ Զանցաւ նամակ ստանալու օրից մի շաբաթ, Միխակը մի օր դարձեալ տուն վազեց չնչասպառ և այս անգամ ձեռքումը մի հեռագիր... Գրիգորից։ Համառօտ խօսքերով նա յայտնում էր, թէ հասել է N... նահանգական քաղաքը և աներևոյթ մի ամսից յետոյ կըլինի իւր ծննդավայրում։



—Մի ամիս, մի ամիս, չըմեռնեմ ու տեսնեմ, չըմեռնեմ ու տեսնեմ...

Այս խօսքերը կրկնելով, Անթառամն այն գիշեր համարեա մինչև լոյս չըկարողացաւ քնել, այնքան նա յուզված էր ուրախութիւնից։ Ի՞նչպէս. մինթէ արդարև տասնուհինգ տարուց յետոյ նա կրկին պիտի գըտնէ իւր մեռած ու կորած որդուն։

*
* *

Օրը կիրակի էր։ Անթառամի որդիները—Միխակը և Սէյրանը ճաշից յետոյ գնացել էին քաղաքի շրջակայքը՝ զբօսնելու։ Նա նստած էր միայնակ թախտի վրայ, պատուհանի առջև և, ձեռները կրծքին դարսած, իւր մռայլ ու անորոշ հայեացքը յառել էր երկնքի հեռաւոր հորիզոնին, ուսկից նա, կարծես, մի բան սպասում էր։

Նա մի քանի րոպէ առաջ դարձեալ հմայել էր քառասուն ու երկու սիսեռների վրայ և երեք կարդի բաժանած սիսեռների միջին կարգը դուրս էր հանել—չորս, երկու, մէկ-մէկ իրարու ետևից, որ ասել է ճանապարհ։

—Չըմեռնեմ, մի անգամ էլ տեսնեմ, չըմեռնեմ, մի անգամ էլ տեսնեմ,—արտասանում էին դարձեալ նրա ցամաքած շրթունքները։

Այն ինչ նրա անորոշ հայեացքը շարունակ յառած էր երկնքի հորիզոնին, ուր փոքր առ փոքր բարձրանում էին ամպային բամբակագոյն ամպերի կոյտերը և դիզվում միմեանց վրայ։ Անդադար շարժվելով, այդ ամպերը զանազան ձևեր էին ընդունում—

մերթ բարձրագագաթ լեռներին, մերթ հրեշաւոր կեն-
դանիներին։ Եթէ քառասուն ու երկու սիսեռների դու-
շակութիւնը պիտի կատարվի, թող ամպերն էլ դու-
շակեն, թող նրանց բազմաթիւ կոյտերից մինը
կառքի ձև, ձիու կամ ուխտի կերպարանք ներկա-
յացնի, այն ժամանակ Անթառամը կիմանայ, որ
ճանապարհը դադարիկ չէ։ Եւ ահա, հաղիւ անահաւատ
կնոջ մտքով անցել էր այս խորհրդաւոր ցանկութիւ-
նը, երբ կապտագոյն հորիզոնի վրայ ձգվեց մի սպի-
տակ գիծ, այնուհետև նա ծռվեց այս կողմ, այն կողմ
և պատկերացաւ... մի հսկայական ձիւնագոյն թա-
փանցիկ ձի քուլա-քուլա ամպերից։ Անթառամի
սիրտը սկսեց ուժգին բաբախել. կարելի՞ բան է, որ
այս բոլոր դուշակութիւնները ապարդիւն մնան։

Մի ամբողջ ժամ նա այս դրութեամբ անշարժ
նստած էր. վոքր առ վոքր նրա ջղերին տիրեց թու-
լութիւն և նա ընկղմուեց մի տեսակ թմրութեան
մէջ։ Երբեմն երբեմն նա ցնցվելով սթափվում էր,
նայում էր աջ ու ձախ, ականջ էր դնում դէպի դուրս
և կրկին գլուխը թեքում կրծքին։

Յանկարծ նա ուժգին ցնցվեց, վեր ցատկեց տե-
ղից և սկսեց ականջ դնել։ Նրան թւում էր, թէ լը-
սում է ինչ-որ զանգակների թոյլ հնչիւն, յետոյ ո-
չինչ չի լսում և տիրում է դարձեալ միևնոյն լռու-
թիւնը ըղձակայքում։ Բայց ոչ, եթէ նրա ուղեղը խան-
դարված չէ, եթէ նրա լսելիքը չի խաբվում, արդարև
լսվում է փոստային կառքի զանգակների ձայն և
լսվում է հետզհետէ աւելի պարզ ու որոշ։ Ահա այն,
վերջապէս, բոլորովին մօտեցաւ և, կարծես, հնչում է
պատուհանի տակ։ Յանկարծ զանգակների ձայնին



խառնվեց կառքի անիւների դղրդիւնը. խուլ փողոցն
աղմկվեց մի քանի վայրկեան և ամեն ինչ դարձեալ
լռեց...

Անթառամի ոտները ներքին յուզմունքից սկսե-
ցին դողալ։ Նա վազեց դուրս, որքան կարող էր շտա-
պով ցած եկաւ փոքրիկ սանդուղքով, ձեռներով ծնկ-
ները բռնած։ Դաւթի մէջտեղում կանգնած էր մի
անծանօթ մարդ և կասկածանքով նայում էր դէս ու
դէն...

* *
*

Այդ մարդը հագած էր սևագոյն և կոպիտ
մահուդից ռուսական ձևով կարած կապայի նման մի
կարճ բան, հաստարակ գինուորականի կօշիկներ երկայն
անկարուրդով և կոշտ կտաւից կարած լայն վարտիկ։
Նա գլխին դրած էր սպիտակ ոչխարենուց կարած
բոլորակ գդակ, որի բաւական երկայն մազերը ծած-
կել էին նրա ճակատն ամբողջովին։

Այդ մարդը նիհար էր, կուրծքը ճնշված, ներս
ընկած, մէջքը կորացած, մի ուսը միւսից նկատելի
կերպով բարձր, երեսը խորշոմած, միրուքը գդգված,
աչքերը խորն ընկած, այտերը, ծնօտը և կոկորդի ոս-
կորը նիհարութիւնից դուրս ցցված։ Նրա ձեռները
ոսկորոտ էին, կոշտ ու պինդ, ինչպէս որմնադրի կամ
տարին տասներկու ամիս քար կրող մշակի ձեռները,
կապոյտ ջղերը որոշ գծաւորված երկաթագոյն և կու-
կուչված կաշուի տակից, մատների յօդերը դուրս ցցե-
ված, այնպէս որ յիշեցնում էին մոխրախառն կրակի
մէջ խորոված շագանակներ։

Նրա ոտները ներքևի կողմից երևում էին ծուռ և երբ նա, իւր ձեռնափայտի վրայ յենվելով, մի քանի քայլ առաջ եկաւ, նշմարվեց, որ կաղում է փոքր ինչ. կարելի էր կարծել, որ նրա ոտների ոլոգները իրանց տեղումը չեն կամ գարշապարներն ուռած են: Անախորժ, վերին աստիճանի անախորժ և, միևնոյն ժամանակ, կասկածաւոր ու երկիւղալի տպաւորութիւն էր գործում այդ մարդու ամբողջ կերպարանքն առաջին հայեացքից: Նրան տեսնողն և՛ կըխղճար և՛ կըսարսափէր ակամայ, իսկ եթէ լսէր, որ ողորմութիւն է աղերսում, կըմերժէր կամ եթէ ողորմել կամենար, չէր ժամենալ նրան, հեռուից կըձգէր փողն և կըհեռանար:

Անթառամը շտապելով և հաղիւ հազ իւր դողդոջուն քայլերը փոխելով, անցաւ այդ մարդու մօտով, առանց ուշադրութիւն դարձնելու նրա վրայ:

Անծանօթը խորը խորշերի մէջ թաղված աչքերով ոտից ցըգլուխ չափեց նրան ուշադրութեամբ: Տարօրինակ և զարմանալի էր այդ աչքերի արտայայտութիւնը: Կարծես, նրանք վաղուց ըրկվել էին կենդանութիւնից, կարծես, նրանց խոշոր բիբերն անշարժ էին, սպիտակ շրջանակները սառած, հողագոյն կոպերը քարացած:

Նա նայեց Անթառամի ետևից, նայեց ալ ու ձախ, հատաբուն թթենուն, տան փոքրիկ վայտեայ պատշգամբին, կիսաւեր շրջապարսպին և դլուխն երկմտօրէն շարժեց: Թւում էր, որ նա տատանման մէջ է. չըգիտէ ինչ անէ, խօսէ թէ լռէ, առաջ գնայ թէ յետ դառնայ, բարկանայ թէ ուրախանայ:

Այն ինչ Անթառամը հասաւ դրսի դռներին, նա-



յեց դէպի փողոց և կրկին չփոթված յետ դարձաւ: Այս անգամ նա նկատեց անծանօթին և, չըմտենալով նրան, յուզված ձայնով հարցրեց.

—Դո՛ւ ես կառապանը:

Անծանօթը լուռ էր:

—Կառապանը դո՛ւ ես:

Անծանօթը լուռ էր:

—Բաս ինչո՛ւ կանգնեց մեր դռների մօտ... Ուրիշ է եկողը... Նա չեկա՛ւ...

Անծանօթը փայտի օգնութեամբ մի քայլ առաջ դրեց: Նա դարձեալ լուռ էր և միայն իւր կիսակենդան և երկմիտ հայեացքը չէր հեռացնում Անթառամի երեսից:

—Ողորմած Աստուած, ինչո՛ւ ես ինձ ծաղր անում,—գոչեց Անթառամը դառնութեամբ,—ես սպասում եմ... Չէ, կանգնիր, այ մարդ, դու, ո՛վ ես... Տէր Աստուած... աւազակ... ինչ ես ուզում ինձանից...

Այստեղ անծանօթն երկու ձեռները յենեց փայտի վրայ, մէջքը քիչ թեքեց և հառաչելով արտասանեց հեւհեւալ խօսքերը.

—Կատարվեց ասածս... ոչ ես ճանաչեցի, ոչ նա է ճանաչում...

Անթառամը սարսափած և անգիտակցաբար յետ կանգնեց: Այդ մարդու ձայնը նրա հոգու խորքում զարթեցրեց վաղուց թմրած մի բան: Մի թոյլ յիշողութիւն լուսաւորեց նրա հոգին: Այդ նրա տատանութ տարի առաջ մեռած և մոռացված ամուսնու ձայնն է, այո՛, իսկ և իսկ այն թոյլ, խեղճ, ողորմելի ձայնը, միայն աւելի տկար: Բայց ինչպէս, կարելի՞ բան է, որ մեռելը վերկենայ տատնութ տա-

բուայ դերեզմանի խորքից։ Միթէ նա երազո՞ւմն է կամ գուցէ ցնորվո՞ղ է։

—Ես Գրիգորն եմ... ճանաչեցի՛ր...

Ձի՞շտ լսեցին, արդեօք, Անթառամի ականջները թէ՞ դարձեալ շարունակվում է նրա զառանցանքը։ Սակայն նա կարող է երազում լինել, կարող է անգամ ցնորված լինել, բայց որ չըճանաչի իւր Գրիգորին, որ կարողանայ մազու չափ խաբվել նրան տեսնելիս, դա անկարելի բան է։ Եւ ոչ միայն նա, այլ և ամենքը, որ մի անգամ տեսել են նրա գեղեցկադէմ, նրբակազմ որդուն, մի՛թէ երբ և իցէ կարող են չըճանաչել թէկուզ տասնուհինգ տարուց յետոյ։

Ինչպէս քնից նոր զարթնած նա չփեց ձեռնեռով աչքերը, որ աւելի պարզ դիտէ իւր առջև կանգնած տարօրինակ անձնաւորութիւնը։ Եւ կար մի անխուսափելի, մի անբաժան երևոյթ, որ խանգարում էր նրան տեսնել իսկութիւնը։

Դա Գրիգորի, նախկին Գրիգորի սիրուն կերպարանքն էր, այնպէս, ինչպէս տպաւորվել էր նրա յիշողութեան մէջ։ Սա է ահաւասիկ Անթառամի իսկական որդին, այս սիրուն պատկերը, որ տասնուհինգ տարի շարունակ վառ պահել է նրա երևակայութիւնը, որ ձուլվել ու միացել է նրա հոգու հետ, որ դիշերը խլել է նրա քունը, ցերեկը հանգստութիւնը։ Եւ յանկարծ այդ միւսը, այդ աւազականման տգեղ, այլակերպ անծանօթը յանդգնում է...

Դա մի օդերևոյթ է . . .

—Եթէ իմանայի, որ մայրս էլ է ինձ մոռացել, Սիբիրը ինձ համար աւելի լաւ կըլիներ...

Բնական և խորին թախծութեամբ արտասանված



պարզ բողոքը յանկարծ սթափեցրեց մոլորված կնոջը։ Ջօրն ընկաւ նրա աչքերից, խաբուսիկ պատկերը չքացաւ, դառն իրականութիւնն ամենայն մերկութեամբ երևան եկաւ մինչև այդ վայրկեան ցնորք համարված այլանդակ էակի կերպարանքով։

Նա ճանաչեց իւր որդուն, ճանաչեց նրա ձայնը, նրա աչքերը։ Նրա ոտները թուլացան. հարուածն անսպասելի էր և սաստիկ։ Նրա գլուխը պտտեց, աչքերը մթնեցին, գուցէ նա տեղն ու տեղը գետին ընկնէր, եթէ որդու նիհար, ոսկորոտ ձեռները նոյն վայրկեանին չըգրկէին նրան։

Այս ամբողջ տեսարանը կատարվեց մի քանի վայրկեանում միայն։

Երբ որդին ալ կուռը վերցրեց մօր ուսից, նրա կապայի թևը մի փոքր յետ քաշվեց։ Երևեցաւ նրա բազուկը, որի վրայ երկաթէ կապանքը անջնջելի կերպով դրոշմել էր իւր կոշտ հետքը սև և լայն ապարանջանի ձևով։

—Հիմայ ճանաչո՛ւմ ես,—ասաց նա, պարզելով իւր բազուկը Անթառամի աչքի առջև։

Այդ բազուկի վրայ կար ծննդեան մի մեծ և բոլորակ խալ։

Անթառամը բաց թողեց որդուն իւր գրկից, նայեց նրա ոտից մինչև գլուխ աղճատված կերպարանքին, ձեռները բարձրացրեց վեր և, իւր ալեզարդ գլուխին մի ուժգին հարուած տալով, գոչեց դառն ձայնով.

—Երանի մեռնէի և քեզ չըտեսնէի . . .

Թիֆլիս, 1889 թ.

# ԽԵՂԱԳԱՐԸ

*Սարաֆեանի պատմութիւնը։*

Մենք նստած էինք Գարեգին Սարաֆեանի մօտ։ Զեմ յիշում ինչպէս, խօսք բացվեց զանազան հոգեւոր հիւանդութիւնների մասին։ Տանտէրը չէր մասնակցում խօսակցութեանը, նա զբաղված էր մեզ համար թէյ պատրաստելով, թէեւ ուշադրութեամբ լսում էր խօսակցութիւնը։

—Պարոններ,—յանկարծ դարձաւ նա մեզ,—եթէ կամենաք լսել, կըպատմեմ ձեզ մի իրողութիւն, որ տեսել եմ իմ կեանքումս։ Նիւթը վերաբերվում է ձեզ հետաքրքրող խնդրին։

Երեկոն ամերային էր. դուրսը ձիւն էր գալիս, իսկ վառարանում ուրախ ուրախ վառվում էր կրակը։ Հաճելի էր մեզ համար նստել տաք սենեակում և թէկուզ մինչև լոյս զբաղվել ընկերական զրոյցներով։

Սարաֆեանը մի քանի փայտ աւելացրեց վառարանի մէջ, մի ծխախոտ վառեց, նստեց բազկաթոռի վրայ և այսպէս սկսեց իւր պատմութիւնը։—

---

Այն ժամանակ, պարոններ, ես նոր էի սկսել ուսուցչութիւն անել։ Դուք գիտէք հայ վարժապետի



դրութիւնը. ռոճիկս այնքան քիչ էր, որ հազիւ կարողանում էի չոր գլուխս պահել։ Այս պատճառով ես ապրում էի ամենաաղքատ սենեակներում, ճաշում էի ամենաէժան պանդոկներում։

Մի անգամ ստիպված էի բնակարանս փոխել։ Պաշտօնակիցներիցս մէկն ասաց, թէ մի աղքատ հայ ընտանիք մի աւելորդ սենեակ ունի, կարող եմ էժան վարձել և մեծ բարութիւն արած կլինեմ այդ ընտանիքին։ Խնդրեցի նրան ցոյց տալ այդ սենեակը։

Պաշտօնակիցս առաջնորդեց ինձ քաղաքի (թէ՛ր քաղաքի, այդ ինքներդ գուշակեցէք) կենտրոնից հեռու մի նեղ փողոց։ Մենք մտանք մի կեղտոտ բակ, որի խորքում շինված էր երկյարկանի մի տուն։ Փայտեայ նեղ, ծուռ ու մուռ սանդուղքներով բարձրացանք վերին յարկը։ Պաշտօնակիցս ասած աղքատ ընտանիքն այստեղ էր բնակվում։ Նա տարաւ ինձ մի շատ մութ տեղ։ Առաջին նուագ, պարոններ, ես ոչինչ չէի տեսնում։ Հազիւ կարողանում էի խարխափելով հետևել առաջնորդիս։ Բայց երբ աչքերս ընտելացան, նշմարեցի որ գտնվում եմ մի լայն և երկայն նախագաւթում, որի առաստաղը ցածր էր, յատակը կեղտոտ, պատերը փոշոտ, սարդի ոստայններով ծածկված։ Ձախ կողմերում երևում էին դռների ձևով մութ խորշեր, իսկ մի տեղից կտուրի միջով թափանցում էին լուսոյ բարակ շողեր։

Պաշտօնակիցս բաց արաւ նախագաւթի ծայրում գտնվող ապակեայ դռները, ինձ հրաւիրեց ներս։ Նոյն միջոցին ձախ կողմի ուրիշ դռներից դուրս եկաւ մի մարդ։ Դա մօտ քսանուհինգ տարեկան երիտասարդ էր կարմիր երեսով, չէկ մազերով և մանր

անդուրեկան աչքերով։

—Սերգո, բարով,—դարձաւ պաշտօնակիցս նրան,—պարոնը սենեակ է ուզում։

Սերգօ կոչվածը, ռուս մուժիկի պէս ուսերը ծռելով, մօտեցաւ և այնպէս ամուր սեղմեց ձեռս, որ, կարծես, ուզում էր ջգացնել տալ ինձ իւր ոյժը։

Երևակայեցէք, պարոններ, հինգ քայլ երկայնութեամբ, երկու քայլ լայնութեամբ, մարդու հասակից մի թիզ բարձր մի արկղ և դուք կիմանաք ինչ էր այդ սենեակ ասված բանը։ Առանց երկար խօսակցելու վարձեցի ես այդ արկղը, որովհետև նախ՝ ես այդ օրն անպատճառ ստիպված էի նախկին սենեակիցս դուրս գալու, երկրորդ՝ արկղը շատ էժան էր—ամսական եօթը րուբլի տալք սամօվարով։

Մի ժամից յետոյ ես կոտրած չեմոդանս տեղափոխեցի և, յարմարվելով նոր բնակարանիս, շարունակում էի խաղաղ կեանքս։ Բացի Սերգօյից առայժմ ոչ ոքի երես չէի տեսնում։ Միայն առաւօտները մշեցի մի մշակ գրասեղանի տեղ ծառայող սեղանիս վրայ դնում էր ժանգոտված սամօվարը, արկղը սրբում և գնում էր։ Առաւօտեան ութ ժամին գնում էի ուսմնարան, դասերս աւարտում երկուսին, ճաշում էի պանդոկում և զբօսնում, իսկ մութն ընկնելիս տուն էի վերադառնում։ Ովքեր էին բնակարանիս տէրերը և ինչ մարդիկ—չգիտէի և չէի էլ ուզում իմանալ։ Գիտէի միայն, որ նրանք կենում են սենեակիս ալ ու ձախ պատերի ետևում, լսում էի երբեմն կանանց և տղամարդկանց խառն ձայները, ուրիշ ոչինչ։

Անցել էր մի շաբաթ։ Մի երեկոյ ես շատ զբաղ-



ված էի։ Սեղանիս վրայ հաւաքվել էին աշակերտներիս ձեռագրները։ Այդ երեկոյ պէտք է կարդայի և ուղղէի տետրակների մի մեծ կապ։ Արդէն կէս գիշերից անց էր, երբ գործս վերջացրի, պառկեցի քնելու, սովորութեանս համեմատ կանթեղը նախապէս հանգցնելով։

Շատ էի քնել թէ քիչ—չգիտեմ, պարոններ, բայց յանկարծ մի տարօրինակ բան ինձ զարթեցրեց. այո, տարօրինակ և երևակայալի բան։ Ճակատիս վրայ ես զգացի սառն ու խոնաւ մի ծանրութիւն և ամբողջ մարմինս ցնցվեց։ Ես աչքերս բաց արի և ինչ տեսայ... ուղիղ անկողնակալիս մօտ, անշարժ և անխօս, կանգնած էր մի պատկեր։ Փոքրիկ լուսամուտից ներթափանցող դիշերային աղօտ լոյսը հազիւ լուսաւորում էր այդ պատկերը։ Նա ոտից մինչև գլուխ համազած էր սպիտակ, թափանցիկ հագուստ։ Նրա կուրծքը բաց էր, երկայն մազերն անկանոն սփռված էին ուսերին։

Ձեզ յայտնի է, պարոններ, ես շատ էլ վախկոտ մարդ չեմ և ոչ էլ այնքան անհաւատ, որ հաւատայի դիշերային ոգիների այցելութեանը։ Իսկ այն ժամանակ ես ունէի աւելի ամուր նեարդեր, քան թէ այժմ։ Սակայն դարձեալ սարսափն ինձ համրացրեց։ Դա երազ չէր. ես լեզուս կծելով ցաւ էի զգում, ոչ, երազ չէր։ Այն ինչ՝ ճակատիս ծանրութիւնն աւելի ճնշում էր ինչպէս սառոյցի ահագին բեկոր։ Ես փորձեցի գլուխս բարձրացնել, նա կպել էր բարձին. ես փորձեցի գոռալ, ձայնս չէր հնազանդվում իմ կամքին։ Օ՛, տասը տարի է անցել այն օրից և այդ տեսարանն այժմ էլ յիշելիս սարսուռ եմ զգում։

Ականջիս հասաւ մի բարակ և նուաղ ձայն։

—Տաքութիւնը սաստկանում է, այս գիշեր դու չորս անգամ կըմեռնիս . . .

Ձայնը պատկանում էր գլխիս մօտ արձանացած պատկերին, իսկ այն խոնաւ, սառն և ամուր բանը, որ ճակատիս կպել էր, նրա ձեռն էր։

Մի ուժգին շարժումով հեռացրի այդ ձեռը. ուզում էի վեր կենալ։ Նոյն վայրկեանին սենեակիս դռները բացվեցին, ներս սահեցին երկու ինչ-որ մութ, սև պատկերներ։ Մի ակնթարթում այդ մութ պատկերները գրկեցին գլխիս մօտ կանգնած սպիտակ արարածին և անյայտացան, ինչպէս դերեզմանային ուրուականներ։

Այս բոլորը կատարվեց աւելի կարճ միջոցում, քան ես պատմում եմ։ Այնուհետև սենեակումս տիրեց երկիւղալի լռութիւն, լսվում էր միայն իմ ծանր շնչառութիւնը։

Գաղտնիքը, պարոններ, մի գրաւիչ յատկութիւն ունի, գրաւիչ մանաւանդ երբ նա սարսափելի է։ Այդ արտաքին ոյժ չէ, նա բնակվում է մեր մէջ—դա հետաքրքրութեան անյաղթելի ոգին է, որ ոչ մի վտանգաւոր անիմացականութեան առջև կանգ չի առնում։

Ես վախեցած էի, ես դողում էի, ատամներս սաստիկ զարկվում էին միմեանց, ինչպէս ցրտից կաշկանդված, բայց, միևնոյն ժամանակ, ներքին ոյժը դերդում էր ինձ իմանալ ինչ է կատարվում իմ շուրջը։ Ես մօտեցայ սեղանիս, խաւարի մէջ մի կերպ գտայ լուցկիամանը և կանթեղս վառեցի։ Առանց մի բան հագնելու, միայն գիշերային հագուստով մօտեցայ կիսով չափ բաց դռներին։ Ես նայում էի դէպի նա-



խագաւիթ մի ձեռումս կանթեղը, իսկ միւս ձեռով դուռն այնպէս բռնած, որ եթէ դրսից մի բան սպառնայ, իսկոյն ծածկեմ։

Մի տարօրինակ գործողութիւն էր կատարվում այնտեղ, նախագաւթի խորքում։ Կարծես, յատակի վրայ քաշքշում էին մի ծանր մարմին։ Խուլ աղմուկի միջից լսեցի կանացի մի սուր ճիչ։ Այնքան աղգու և յուսահատական էր այդ ճիչը, որ, կարծես, մեկին այնտեղ խեղդում էին։ Հետաքրքրութեան նոյն անյաղթելի ոյժից դրդված դուրս եկայ սենեակիցս։ Կանթեղիս լոյսը ուղղել էի դէպի առաջ և քայլում էի դէպի այն կողմը, որտեղից լսվում էր սուր ճիչը։

Տեսարանը պարզվեց խաւարի մէջ։ Երկու սև պատկերները մի անկիւնում ձգել էին այն սպիտակ պատկերին, մեկն ամուր բռնել էր ձեռները, միւսն անընդհատ հարուածներ էր տալիս։ Սպիտակ մարմինը յատակի վրայ թաւալվում էր այս ու այն կողմ, աղաղակում էր, ծվվում, դոռում, աշխատում էր դուրս պրծնել ծեծողների ձեռից։ Ես բոլորովին մօտեցայ։ Դա մի երիտասարդ առողջ կին էր, գիշերային հագուստով, գլխաբաց, ոտաբաց։ Սև պատկերներից մեկն ալեխառն մազերով նիհար մարդ էր։ Իսկ միւսն ինձ ծանօթ էր. դա այն Սերգօ կոչվածն էր, որ իմ ձեռս այնպէս ամուր սեղմեց։ Այժմ այդ կոպիտ երիտասարդն իւր բռունցքի ամբողջ ոյժը ցոյց էր տալիս յատակի վրայ թաւալվող կնոջ ուսերի վրայ։

—Ինչո՞ւ էք ծեծում,—գոռացի ես, բռնելով նրա ձեռը։

Նա կանգ առաւ, նայեց երեսիս, ծերունին նոյնպէս, և երկուսն էլ, կարծես, ամաչելով, գլուխնե-

րը թեքեցին երանց կրծքին։ Երիտասարդ կինը, յատակի վրայ սողալով, յետոյետ քաշվեց և կպաւ պատին։ Նա դժուարութեամբ էր շնչում. բերանից փրփուր էր գալիս, դէմքը թղթի պէս գունատ էր, իսկ աչքերը, կարմրած, վառված աչքերն անմիտ հայեացքով ուղղված էին դէպի ինձ։

—Դա էր, այ, դա էր,—սկսեց նա գոռալ,—դուք ուղում էիք նրան քաշ տալ կառուրում, խեղդել, կաշին հանել, միսը խորովել, ահա՛ Անասունաձներ, ինչո՞ւ էք ծեծում ինձ, թողէք վազեմ, չորերս բերէք... լանդօն սպասում է...Ալբերտ, հողեմ գլուխդ, Ալբերտ, ինձ թողիր հո՛ւա, փախար հո՛ւա։... Հայրիկ, փեշերդ սրբիր, պա, պա, պա, ինչ սիրուն տղայ ես... չորերը... վահ, ամօթ ձեզ, ես տկլոր եմ, ցուրտ է...Մածկեցէք ինձ...

Եւ նա, շապկի եղրերը քաշելով, ծածկեց սպիտակ կուրծքն և աւելի սեղմվեց պատին։ Ես տակաւին ապշած նայում էի, թէև կիսով չափ գուշակում էի սոսկալի տեսարանի իմաստը։

—Պարո՛ն,—ասաց ինձ ալեխառն մազերով մարդը,—դա իմ աղջիկն է, մի քիչ...ըը... տակար է...

—Ներեցէ՛ք,—կոշտ ձայնով աւելացրեց Սերգօն,—քոյրս ձեզ անհանգստացրեց, ես մոռացայ ձեզ ասել, որ գիշերները ձեր սենեակի դռները կողպած պահէք։

Այս ասելով, նա աքացի տուեց քրոջն և գոռաց.

—Վե՛ր կաց, փչացած, վե՛ր կաց, կորի՛ր սենեակդ։

Բանը պարզվեց։ Խելագարին պահում էին առանձին սենեակում, որի մուտքը նախագաւթի ձախ կողմի դռներն էին՝ իմ դռներին կից։ Գիշերը յան-



կարծ նրա կատաղութիւնը դրդռվում է, նա դուրս է փախչում և մտնում իմ սենեակը։

Ոչ ոք ինձ չէր զգուշացրել այդ վտանգաւոր արարածի մասին, եթէ ոչ, հարկաւ, ես կամ չէի տեղափոխվիլ կամ տեղափոխվելուց յետոյ զգոյշ կըլինէի։

Մի կերպ խաղաղացրի դժբաղդին։ Նա իւր կամքով հանդարտ վեր կացաւ և գնաց, փակվեց իւր սենեակում։ Այս անսպասելի տեսարանը չքսվեց իմ քունը, ես կարողացայ քնել։ Միւս օրը մտածում էի—մնալ թէ տեղափոխվել ուրիշ բնակարան։ Վճռեցի մնալ, բայց զգոյշ լինել։

Ես երբեմն պատահում էի խելագարին նախագաւթում։ Այնտեղ նա, ուսերին մի սև շալ գցած, միշտ բաց գլխով անցուդարձ էր անում ծանր և անլսելի քայլերով, ինչպէս մի մռայլ ստուեր։ Խաղաղ դրութեան մէջ նա բաւական դեղեցիկ էր։ Նա միջահասակ էր, դէմքի գոյնը թարմ, անխմաստ աչքերը խոշոր, մոխրագոյն։ Դեղեցիկ էին նրա յօնքերն ու ճակատը։ Երկար ժամանակ անլուայ մնալուց և չըսանրուելուց նրա թանձր մազերը խճճվել էին և նմանում էին ոչխարի բրդի, իսկ կոկորդն և պարանոցը ծածկված էին կեղտի ծալքերով։

Նրա լռութիւնը, անմիտ հայեացքները և դէմքի ծռմռվելն ինձ վախեցնում էին, ուստի բարեաւ էի համարում հեռը խօսել։ Բայց նա ինձ չէր պատասխանում, միայն քթի տակ ինչ-որ մրթմրթում էր և, յետ ու յետ դնալով, մտնում սենեակը։

Մի անգամ տուն վերադառնալիս նախագաւթի դռների մօտ նա ինձ տուեց քառակուսի ծալած թղթի մի կտոր և ասաց.

—Կարդա, Ալբերտի նամակն է։

—Ալբերտն ո՞վ է,—հարցրի ես, կամենալով դէթ մօտաւորապէս իմանալ նրա իդէ-ֆիքսը։

—Ալբերտն իմ ծնողների աչքը հանեց,—պատասխանեց նա,—քո հոգին էլ պիտի հանի, բաս, բաս, Ալբերտը... կարդա նրա նամակը...

Այս ասելով, նա ծալ տուեց և ոստոստալով վազեց իւր սենեակը։ Ես չտապեցի բաց անել նրա տըւած թուղթը։ Մատիտով ծուռ ու մուռ տառերով գրված էին այնտեղ մի քանի անվիա բառեր, որքան յիշում եմ այսպէս... «ուղղական հոլով մարդ, սեռական հոլով Ալբերտ, աղաւնին աղաւնուն պաշում էր, ինձ էլ պաշեց»։ Ցետոյ նկարված էր մի մարդու դըլուխ և տակին գրված. «Միծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ... Ալի գեղեցիկ...»

Հարկաւ, ոչինչ հասկանալ չէր կարելի այս խօսքերից։ Բայց մի բան ինձ շատ հետաքրքրեց—այդ Ալբերտ անունն էր։ Խելագարն, երբ ամեն անգամ խօսեցնում էի նրան, այդ անունն էր կրկնում և ինձ էլ այդպէս էր անուանում։ Ալդեօք, օրիորդի խելագարութիւնը կապ չունի այդ անուան հետ, մտածում էի ես։ Մի օր փորձեցի նրա հետ խօսել Ալբերտի մասին։ Նա ինձ հայհոյեց, ասելով, թէ ես սատանայ եմ, ուզում եմ իրան խաբել։

Երբեմն Սերգօն գալիս էր ինձ մօտ։ Հետաքրքրութիւնը դրդում էր ինձ խօսել նրա հետ քրոջ մասին, բայց ամօթը զսպում էր լեզուս։ Ես տեղեկացայ նրանց կեանքի մի քանի հանգամանքներին։ Ընտանիքն ապրում էր շատ աղքատ։ Տանն ամեն ինչ, որ արժէք ունէր, ծախված էր կամ գրաւ դրված։ Նրանց եկամուտի միակ աղբիւրը Սերգօյի մեծ եղբայրն էր, որ Բագւում գործակատար էր և այնտեղից օգնում էր ծնողներին։ Իսկ Սերգօն անգործ էր և, ինչպէս երևում էր, վերին աստիճանի ծոյլ և ինքնահաւան արարած էր։ Նրա՝ տարիքով տակաւին երիտասարդ մայրը ժամանակից առաջ թառամել էր ծանր հոգսերի տակ։ Նա էր կատարում տան գործերը։ Երբեմն գալիս էր նրան օգնելու նրա մեծ քոյրը, որն ամուսնացած էր մի դերձակի հետ։

Մի օր ցերեկով, նստած սեղանիս մօտ, բարեկամներիցս մէկին նամակ էի գրում։ Այն սարսափելի տհաճութիւնից յետոյ ես սենեակիս դռները ցերեկներն էլ կողպած էի պահում։ Իմ ուշքը գրաւեց մի ձայն, նայեցի, խելագարը, կրծքին մի հրացան սեղմած, խողովակի բերանը դրան ապակիի միջով ուղղել էր դէպի ինձ։ Վեր թռայ տեղիցս. մէջքս կռացած մօտեցայ, բայց արի դռներն և ամուր բռնեցի նրա ձեռները։ Հրացանը դատարկ էր, չախչախված ու ժանգոտ։

Մի ուրիշ անգամ ես կարդում էի, մոռացել էի դռները կողպել։ Յանկարծ մէկն ամուր քաշեց մարդերս։ Անկոչ հիւրը ներս էր մտել և, մի բութ դանակ ձեռքին բռնած, ասում էր թէ պէտք է գլուխս կորի։ Բայց այդ մի դատարկ սպառնալիք էր, խելագարի կատակներից մէկը։ Նրա դանակն, եթէ երեք օր էլ մի բանի քսէիր, մազի չափ չէր կարել։ Նա բարձր ձայնով ծիծաղեց, կրկնելով.

—Վախկոտ, վախկոտ։

Ես հրաւիրեցի նրան նստել։ Այդ օրը նա երկար խօսեց ինձ հետ վայր ի վերոյ, այնուհետև մենք բա-

բեկամացանք։ Ես գտել էի նրա հետ վարվելու ե-
ղանակը։ Ինչ-որ ասում էր, ինչ անմիտ բանի վրայ խո-
սում էր, ես լսում էի նրան խորին ուշադրութեամբ։ Ես
չէի հակառակում նրան, ոչ մի կասկած չէի յայտնում
մանաւանդ չէի ծիծաղում։ Այդ դիւր էր գալիս նրան,
և նա արժանի էր համարում ինձ իւր հետ խօսել,
դուցէ ինձ իրան հաւասարը համարելով։ Պատա-
հում էին րոպէներ, երբ, կարծես, նրա գիտակցու-
թիւնն արթնանում էր, խաւար միտքը պարզվում էր
կայծակի անցողիկ լոյսի պէս։ Այդ րոպէներին նրան
տիրում էր մի տեսակ թախիծ և նա լուռ նայում
էր լուսամուտի միջով հեռու, հեռու, դէպի այն անվերջ
հորիզոնը, որ երևում էր իմ անկուղք սենեակից։ Ցե-
տոյ նա ինքն իրան կրկնում էր։

—Ես շատ լաւ աղջիկ էի... ես շատ լաւ աղ-
ջիկ էի...

Եւ հառաչում էր։ Ո՛րքան ծանր էր ինձ համար
այդ հառաչանքը, որքան սիրտ թափանցող։ Ես ցան-
կանում էի իմանալ, արդեօք, այդ վայրկեանին ղգում
է նա իւր դժբաղդութիւնը, ղգո՞ւմ է իւր ուղեղի հի-
ւանդութիւնը։

—Դուք այժմ էլ լաւ աղջիկ էք,—ասացի ես մի
անգամ։

Նա ծիծաղեց, բերանը լայն բանալով և ցոյց տա-
լով սպիտակ առաջների շարքը։ Յետոյ ուսից խփեց
և, կրկին ժռտենալով լուսամուտին, ասաց բարձր ձայնով.

—Իմ ոտք ու ձեռքը կապել են, ինձ բանդ են
ձգել։ Ալբերտն այնտեղ է, ա՛յ, ես էլ եմ ուզում, հե-
ռո՛ւ, այն սարերի վրայ, այն անտառներում վազել,
վազվզել։



Եւ նա, գուցէ կարծելով թէ իւր ցանկացած տե-
ղերումն է, սկսեց կատաղի պոռոտներ գործել, երբե-
մն դիպչելով փոքրիկ սենեակիս պատերին։

Պարբերաբար ամիսը մի անգամ Մարթան կա-
տաղում էր։

Երկու երեք օր շարունակ նրա առջևը կանգնել
չէր լինում։ Ինչ որ ընկնում էր ձեռքը, կոտրում էր ու
փշրտում, շպրտելով սրա ու նրա վրայ։ Նրա սենեակին իմ
սենեակին կից էր. մեղ բաժանում էր միայն մի չատ
բարակ միջապատ։ Ես լսում էի երբեմն նրա ողորմե-
լի ճիչը, երբեմն կատաղի քրքիջը և երբեմն ոտների
սաստիկ դրմբոցը։

Մի օր նրա մայրը գոնաթափված մտաւ սենեակս։

—Ողջի,—ասաց նա, — նեղութիւն քաշիր, եկ,
կարելի է քեզանից ամաչի։

Շտապեցի հետևել նրան։ Խելագարն իւր վրայի
հագուստը պատռել էր, այժմ կրծոտում էր մատները։
Սենեակում, բացի նրա եղբօրից և ծնողներից, գտըն-
վում էին նրա մեծ քոյրն և մի անծանօթ նիհար ե-
բիտասարդ։

Սերգէյն, մի խարտեաշ ձեռին, անգութ կերպով
հարուածում էր դժբաղդին։ Նա նոյն րոպէին ինձ ա-
ւելի խելագար թւաց, քան թէ իւր խելագար քոյրը,
իսկ նրա հայրը ճիգն էր թափում բռնել կատաղած
աղջկայ ձեռները։ Վերջինս երեսից արիւն էր հո-
սում։ Մարթան, ինչպէս և է, ձեռք էր գցել վառա-
սում։ Մարթան, ինչպէս և է, ձեռք էր գցել վառա-
րանի երկաթեայ խառնիչն և խփել հօր գլխին։ Ես
աներկիւղ մօտեցայ կատաղածին և բռնեցի նրա թե-
վերը։

—Ամօթ է, Մարթա, խելօք կաց։

Յետոյ վրդովված հրեցի նրա եղբօր կրծքին, որն այնքան անգութ հարուածում էր դժբաղդին։ Մարթան ձեռը բարձրացրեց լինչ խփելու, յետոյ փոշմանեց և սկսեց մի ոտքի վրայ պտտել և ոստոստալ։ Այդ գործողութիւնը տևեց այնքան ժամանակ, մինչև որ խելագարը բոլորովին յոգնեց։ Նա թուլացած ընկաւ անկողնակալի վրայ և փոքր անցած, կարծես, քնեց։ Մենք զգուշութեամբ դուրս եկանք և դռները դրսից կողպեցինք, եաևում հաւաքելով մի քանի կտրած ա-թոռներ, փայտեայ տաշտեր։ Խելագարի հայրը հարցնում էր ինձ, ինչպէս վարվել նրա հետ և առհասարակ ինչպէս ազատվել այդ դժբաղդութիւնից։ Ի՞նչ պէտք է պատասխանէի։ Ես լսել էի, որ արտասահմանում երբեմն յաջողվում է այդպիսիներին բժշկել. բայց այդ խորհուրդն իմ կողմից կըլինէր մի տեսակ ծաղր.—խելքերը հազիւ օրական ապրուստ էին հայթայթում, ուր մնաց իրանց աղջկայ համար այդքան մեծ ծախսեր անելը։ Միակ ելքը հոգևկան հիւանդների կայարան ուղարկելն էր, այն ժամանակ դոնէ ամբողջ ընտանիքը չէր չարչարվիլ մէկի համար։

—Ո՛նց, ես իմ աղջկան գժատո՞ւն ուղարկեմ,—գոչեց մայրը զայրացած,—Աստուած խելքս առե՞լ է։

—Ուրեմն, ի՞նչ պիտի անէք, այդպէս թողնել խօմ չի կարելի,—ասացի ես։

—Թէ որ փող ունենայի, ես գիտէի,—պատասխանեց մայրը,—իմ աղջիկը շուտ կըլաւանար։

Ես հեռաքրքրվեցի, արդեօք, ինչ միջոցով նա կըլաւացնէ իւր աղջկան։

Մայրը խորին ջերմեռանդութիւնով աչքերը վերև բարձրացրեց, երեսը խաչակնքեց և հառաչելով



արտասանեց.

—Գանձակի սուրբ Գէորգը կըփրկէ իմ աղջկանը, մեռնեմ նրա սուրբը զօրութենին։

Նկհար, անծանօթ երիտասարդը հեգնօրէն ժըպտում էր։ Պարզ էր, որ նա ծիծաղում էր անհաւատ կնոջ յոյսերի վրայ։

Այդ երիտասարդի հետ ես ծանօթացայ և հրաւիրեցի իմ սենեակը։ Գալֆայեանը—այսպէս էր նրա ազգանունը—վաղուց ծանօթ էր խելագարի ընտանիքի հետ։ Նա Մարթային տեսել էր առողջ ժամանակը։

—Ուրեմն, քանի՞ տարի է նրա դժբաղդանալը—հարցրի ես։

—Չորս տարի կըլինի,—պատասխանեց Գալֆայեանը,—եթէ տեսած լինէիք ինչ գեղեցիկ, ինչ կրակոտ օրիորդ էր, ասելի կըսոսկայիք նրան։

—Բայց դիտէք, արդեօք, ինչից է պատահել նրա խելագարութիւնը։

—Այն ժամանակ ես Թուլատանում էի. տասը մեն են սկիզբը սիրահարվելուց է։ Այո՛, Մարթան մէկին սիրում էր։

Հարցն ասելի հետաքրքրելի էր դառնում։ Գալֆայեանը չարունակեց.

—Ես այն տղային ճանաչում էի, սպասեցէք, նրա անունը...

—Ալբերտ էր,—ընդհատեցի ես։

—Ո՛չ, Ալբերտ անունը խելագարի խանգարված մտքի պտուղն է, իսկ նրա անունն Աբշալ Աթաբեկեան էր։ Նա ուսանող էր, մի շատ գեղեցիկ ու առողջ տղայ։ Մարթան ծանօթանում է նրա հետ և շուտով

յափշտակվում։ Երիտասարդը ցոյց է տալիս փոխա-
դարձ սէր, խոստանում է մինչև անգամ ամուսնա-
նալ ուսումն աւարտելուց յետոյ։ Բայց հէնց որ ու-
սումն աւարտում է, մոռանում է իւր սէրը, իսկ օ-
րիորդի սէրը աւելի ևս բորբոքվում է։ Այս անալոդ
սէրն են համարում նրա խելագարութեան պատճառը։
Այո, բայց այդ մի թոյլ հիմք է եղել և ոչ թէ իսկա-
կան պատճառ։

—Ինչպէ՞ս, ուրեմն, դուք չէք հաւատում, որ ա-
նալոդ սիրուց կարելի է խելագարվել։

—Ոչ այնքան, որքան ուրիշները։ Լսեցէք, պարոն,
այն օրից երբ Մարթան խմացել է իւր սիրածի դար-
շելի դաւաճանութիւնը, խօսք չըկայ, սկսել է տրտմել։
Նէ՛, հառաչանք, արտասուք, ախ ու վախ, հոգեկան
խռովութիւն, այս բոլորը յայտնրդել են միմեանց։ Բայց
այդ դեռ չի նշանակում խելագարվել։ Ծնողներն խմացել
են իրանց աղջկայ տրտմութեան պատճառը։ Այդ դէպ-
քում ինչ էր հարկաւոր անել. պէտք էր աշխատել
յրուել դժբաղդի թախիծը, զբաղեցնել նրա միտ-
քը ուրիշ բաներով, մի խօսքով, չըթոյլ տալ նրան մի
բանի վրայ կենտրոնանալ մտքով։ Բայց այսպէս չի
եղել։ Կոպիտ հայրն և այդ ինքնահաւան Սերգօն,
տգէտ մայրն և աւելի տգէտ ազգականները, մի խօս-
քով, նրա բոլոր շրջապատողները սկսել են նրան հա-
լածել հէնց այն կէտում, որից, եթէ խելօք լինէին,
պէտք է խոյս տային։ Երբ դժբաղդը լռել է, նրանք
խորհրդաւոր կերպով միմեանց երեսին են նայել, երբ
արտասվել է, նրանք յանդիմանել են, հեռևել են նրա
ամեն մի քայլին և ամեն րոպէ յիշեցրել նրան իւր
դժբաղդութիւնը։ Ասել են, որ նա առաջուանը չէ, ո-



նա փոխվել է, դեղնել է, քիչ է ուտում. քիչ է քը-
նում, նրա հոգին խռովուած է։ Փորձեցէք, պարոն,
մի աւենաառողջ մարդու ասել, թէ նրա դէմքը դու-
նատ է, թէ նա հիւանդ է, թող նոյնը կրկնի երկրոր-
դը, երրորդը, ամենքը, և դուք կըտեսնէք, որ այդ
առողջ մարդն իրաւ սկսում է կասկածել, թէ ինքը
հիւանդ է։ Այո՛, պարոն, հէնց այդ երևակայութիւնը
նրան կըհիւանդացնի։ Փորձեցէք խելքը գլխին մար-
դուն դցել մի այնպիսի չրջան, որտեղ ամենքը կաս-
կածում են նրա ուղեղի առողջութեան մասին և ի-
րանց կասկածն ամենակոպիտ կերպով ամեն րոպէ
յայտնում են, և դուք կըտեսնէք, որ այդ խելքը գըլ-
խին մարդը հետզհետէ կըխելագարվի։ Այսպէս են
վարվել և այդ խեղճ աղջկայ հետ։ Գիտէք, պարոն,
չատ անգամ հասարակութիւնը կամ չրջանը խելագար-
նելը է ստեղծում, բաւական է, որ խելագարվողը իւր
ուղեղում ունենայ մի տկար շերտ, այո, մի թոյլ սերմ։
Մի սերմ, որ ոչինչ դժ և հեռևանք չէր ունենալ,
եթէ նրա վրայ ուշք չըդարձնէին, այսպէս ասած, չը-
ջրէին, չըպարարատացնէին նրա հողը։ Բայց, առացէք
խնդրեմ, մեծ է այն մարդկանց թիւը, որ իրանց ու-
ղեղում չունին այդ սերմն այս կամ այն ձևով։—
Շատ փոքր է, ես աւելին կասեմ, չըկայ և ոչ մէկը,
այո, և ոչ մէկը, որովհետև մեզանից ամեն մէկի ու-
ղեղում մի հիւանդութիւն կայ։ Մենք ամենքս խելա-
գարութեան առաջին աստիճանի վրայ ենք, կանա-
չութիւնն այն է, որ չրջանը մէկին հալածում է,
բարձրացնում է վեր, իսկ միւսին պահպանում։

—Ձեր վերջին մտքի հետ համաձայնվել չեմ կա-
րող,—ասացի ես,—ինչ վերաբերվում է Մարթային,

անշուշտ չըլլանը որևէ դեր կատարել է նրա խելագարութեան մէջ։ Գուցէ նա փութացրել է այդ խելագարութիւնը, որ վաղ թէ ուշ պիտի կատարվէր։

—Երբէք, երբէք չէր կատարվիլ, — ընդհատեց Գալֆայեանը տաքացած,—կրկնում եմ, ուրիշ չըլլանում Մարթան փրկված կըլինէր։ Այդ յիմարները միջոցներ ունէին նրա միտքը ցրելու, նրան զբաղեցնելու, կարող էին նրան ճանապարհորդութեան ուղարկել։

—Ի՞նչպէս, իմ տանտէրերը առաջ հարուստ են եղել։

—Հարուստ չէին, բայց մի բան ունէին։ Մարթայի հայրը վաճառական էր, նոր է սնանկացել։ Այժմ եթէ մի կտոր հացի կարօտ չըլինէին, կարելի էր դարձեալ յուսալ, որ Մարթան կառողջանայ, եթէ մի քանի միջոցներ գործ դնէին։

—Արտասահմանն ուղարկել։

—Ո՛չ, արտասահմանը հեռու է, կայ աւելի մատչելի միջոցներ և իմ կարծիքով երկու ամենագլխաւորները։ Լսեցէք. մի փոքր առաջ, երբ Մարթայի մայրը յիշեց սուրբ Գէորգի անունը, ես մտքումս ծիծաղեցի։ Բայց ես մասամբ սխալվեցի։ Այժմ կարծում եմ, որ սուրբը կարող է օգնել։

—Ի՞նչպէս,—գոչեցի ես զարմացած։

—Դուք նկատե՞լ էք, որ խելագարն ուզում է միշտ դուրս փախչել և խօսում է սարերի, ձորերի, անտառների մասին։

—Նկատել եմ։

—Դանջի սուրբ Գէորգ ասված տեղում ես եղել եմ։ Դա մի հրաշալի վայր է։ Այնտեղ խելագարը կըտեսնէ իւր սիրած սարերը, ձորերն և անտառները։



Կարելի է նրան ազատութիւն տալ այնտեղ, և ով գիտէ գուցէ արձակ բնութիւնը բարերար ազդեցութիւն գործէ նրա վրայ։ Այս մեկ միջոցը,—կայ և երկրորդը, որ նոյնպէս պէտք է գործ դնել։

—Ա՞յն է։

—Մարթայի այժմեան խելագարութիւնը, բացի ասածիցս, ունեցել է և՛ երկրորդ պատճառ, ոչ թէ պատճառ, այլ, եթէ կարելի է այսպէս ասել, մի տեսակ օժանդակող տարր... Դա կնոջ ֆիզիօլոգիական յատկութիւնն է... Է՜հ, պարզ ասեմ... նրա պահանջատկութիւնները... Տեսնում էք, պարոն, այդ խելագարը որքան առողջ է, որքան կենդանի։ Խելօք ժամանակ նա աւելի առողջ էր և աւելի վառվռուն։ Նրա աչքերից, կարծես, ջրիւն էր կաթում, շրթունքները միշտ բացէին, այտերը միշտ վառված... Է՜հ, ինչ երկարացնեմ, նա հազիւ կարողանում էր իւր կիրքը զսպել... Վերջապէս, դուք իմ միտքն աւելի լաւ կըհասկանաք, եթէ մատնեմ, որ Մարթայի կատաղութիւնը կրկնվում է պարբերաբար, ամիսը մի անգամ։

Մեր խօսակցութիւնն ընդհատվեց Սերգօյի երեւալով։ Բայց Գալֆայեանի խօսքերը զրոյցվեցին իմ մտքումս։ Այնուհետև ես այդ երիտասարդից մի բան ևս իմացայ։ Մայրայեղ չքաւորութիւնը սպանել էր Մարթայի հօր մէջ հայրական սէրը, եղբօր մէջ եղբայրական զգացմունքը։ Այս վերջինս մի օր վինչև անգամ ուզեցել է սպանել Մարթային գաղանի կերպով, որպէսզի թէ ինքը և թէ մեւանները աղատվեն ծանր բեռից։ Իսկ մայրը. նա գեռ սիրում էր աղջկան և յոյս ունէր նրա առողջանալու մասին։

—Սուրբ Գէորգն իմ Մարթային կըփրկի, նա կը-

փրկի,—կրկնում էր նա, անդադար երեսը խաչակնքե-
լով։

Եւ նրա ձայնի մէջ այնպիսի խորին հաւատ և
անյաղթելի յոյս էր զգացվում, որ երբեմն ես էլ էի
հաւատում։

Մի անգամ ես Մարթային հարցրի.

—Կըգնաս սուրբ Գէորգ։

—Գիտես, դու գիժ ես, ախ, գիժ,—պատասխա-
նեց նա։ Բայց յանկարծ փոխվեց և դոչեց.

—Սուրբ Գէորգ կըգնամ, գնանք հէնց այս րո-
պէին։ Ինձ բաց թողէք, մենակ կըգնամ, ախ, այն-
տեղ, այն սարերը։ Ալբերտ, ազատիր ինձ այս բանտից,
Ալբերտ, ինձ այստեղ խեղդեցին։

Նա ձեռը տարաւ օձիքին այնպէս ծանր շնչելով,
որ կարծես յիրաւի խեղդվում էր։ Ես յիշեցի Գալ-
ֆայեանի խօսքերը։ Արդեօք, եթէ մի երևակայական
Ալբերտ վերցնի տանի նրան սարերը, անտառները,
նա չի՞ առողջանալ։

Իմ դրութիւնը միանգամայն անտանելի էր դառ-
նում։ Ոչ մի ընկեր կամ ծանօթ չէր ուզում գալ ինձ
մօտ։ Այն գիշերուայ տեսարանն ով որ լսում էր,
սարսափում էր և իսկոյն խորհուրդ տալիս տեղափոխ-
ուել այդ սենեակից։ Իսկ ես չէի ուզում վիրաւորել
խելագարի ծնողներին։ Բացի նրանից, որ իմ վճարած
ամսական եօթը րուբլի վարձը մի զգալի օգնութիւն
էր աղքատ ընտանիքի համար, ես համարվում էի
Մարթայի զսպող ոյժը։ Եւ իրաւ խելագարը ոչ ոքին
այնպէս չէր հպատակվում, որքան ինձ։

Գարնան սկզբին տանտիրուհիս ինձ ասաց, թէ
արդէն վող են ձեռք բերել և շուտով մտադիր են



գնալ սուրբ Գէորգ։ Նա ուրախ էր, ես էլ ուրախա-
ցայ։ Մի շաբաթ չանցած՝ ես բաժանվեցի ընտանիքից։
Այդ օրը խելագարը անդադար մտնում էր սենեակս
և դուրս գալիս։

—Մարթա, մնաս բարև, ես գնում եմ,—աս-
ացի ես։

—Գնաս բարև,—պատասխանեց նա։

Դուցէ ես սխալվում էի, բայց այդ րոպէին նա
ինձ շատ տխուր թւաց։ Կարծես, նրա խաւար մտքի
մէջ ես մի ուրախ յիշատակ էի զարթեցրել և այժմ
ղրկում էի նրան այս վերջին մխիթարութիւնից։

---

Անցել էր երեք տարի։ Այդ ժամանակուայ ըն-
թացքում ես ոչ մի անգամ չէի տեսել խելագարին,
նրա եղբօրն էլ չէի հանդիպում ոչ մի տեղ։ Արդէն
մոռացել էի նրանց մասին, երբ ճակատագիրը մեզ
նորից մօտեցրեց, այս անգամ բոլորովին ուրիշ հան-
դամանքներում։

Միևնոյն քաղաքում երկար տարիներ ապրելն ինձ
ձանձրացրել էր։ Ուստցչի պաշտօնով ինձ հրաւիրե-
ցին Բագու։ Ուրախութեամբ գնացի։ Արդէն մի ա-
միս էր այնտեղ էի։

Մի երեկոյ գնացի թատրոն։ Ադամեանը նոր
էր եկել Բագու և այդ երեկոյ պէտք է դուրս
գար Համլետի դերում։

Ներկայացումը դեռ չէր սկսվել։ Հանդիսական-
ներն անցուդարձ էին անում թատրոնի երկայն նա-
խագաւթում, որը բաղնիքի մուտքի էր նմանվում, ե-

բաժշտութիւնը թնդացնում էր թատրոն սաված մի քառակուսի անշուք շէնք։ Ես պատի տակ կանգնած դիտում էի անծանօթ հասարակութիւնը։ Յանկարծ իմ աչքի առջևով անցաւ մի ղոյգ։ Դա Թուխ և խոշոր դէմքով քառասուն տարեկան տղամարդ էր, եւրոպական տարազով հագնված, մի առողջ տիկնոջ հետ։

Առաջին նուագ ես ապշեցի։ Ոչ, անկարելի բան է։ Մի՞թէ դա Մարթան է, այն դժբաղդ խեղագարը։ Բայց նմանութիւնն անհերքելի էր—նոյն հասակը, նոյն կազմուածքը, նոյն աչքերը, նոյն մազերը, մի խօսքով, նոյն Մարթան, միայն աւելի դէրացած։ Կարող էի չըհաւատալ աչքերիս, տեսածս խաբուսիկ երևոյթ համարել, եթէ ղոյգի յետևից չըտեսնէի Մարթայի մօրն և Սերգօյին։

—Որդի, այդ դո՞ւ ես,—կանգնեց իմ առջև Մարթայի մայրը, թաւսակրաւն ուղղելով։

—Դո՛ւք, այստե՛ղ,—գոչեցի ես անկեղծ ուրախութիւնով։

Սերգօն ձեռս ամուր սեղմեց։ Թէ նա և թէ նրա մայրը հագած էին նոր հագուստ. առաջուայ աղքատութեան հետքը չէր երևում նրանց վրայ։ Մայրը, մի քանի հարց տալուց յետոյ, շտապով գնաց աղջկայ եռևից։ Իսկ որդին մնաց ինձ մօտ։

—Մենք այժմ այստեղ ենք ապրում,—պատասխանեց Սերգօն իմ զարմացական հարցին։—Մեծ եղբայրս մեզ այստեղ բերել տուեց, մեր գործերն այժմ յաջող են գնում, ես էլ հաշուապահ եմ մի բուժուսյի կանտորում։

Այդ բոլորն ինձ համար այնքան հետաքրքրական չէին, որքան Մարթայի վիճակը։ Նա առողջացել է, ինչպէս։ Ես ուզում էի հարցնել եղբօրը, բայց ինչպէս։

Ներկայացումն սկսվեց։ Սերգօն չուտով հեռացաւ։ Ես մտայ դահլիճ և, աչքերով որոնելով Մարթային, տեսայ նրան եռևի էժան օթեակներից մէկում նստած։ Արմունկը յենած օթեակի կողքին, նա մտիկ էր անում մերթ բեմին, մերթ պարտերի հասարակութեանը։ Իսկ օթեակի խորքում տեղաւորված էր այն խոշոր դէմքով տղամարդն և սև հագուստով մի կին։ Ի՛նչպէս փոխվել էր Մարթան, ինչպէս գեղեցկացել, դէմքն ինչ խելօք արտայայտութիւն ուներ։

Խաղամիջոցին ես նախագաւթում բռնեցի Սերգօյին։

—Ասացէք, խնդրեմ,—ասացի ես, վերջապէս, չըկարողանալով համբերութիւնս զսպել,—ձեր քոյրն ամուսնացե՞լ է։

—Այրէն վեց ամիս է։

Ես լռեցի։ Նա չարունակեց.

—Դուք, երևի, զարմանում էք, ի հարկէ, իրա՛ւունք ունէք։ Այո, այժմ նա առողջ է, բոլորովին առողջ։ Գիտէք, մայրս չէր սխալվում, սուրբ Գէորգը նրան օգնեց։

—Պատմեցէք, խնդրեմ, ես հետաքրքրութիւնից կեղդվում եմ,—գոչեցի ես, բոլորովին մոռանալով ամենայն համեստութիւն։

Նա սկսեց պատմել։ Այն օրն, երբ Մարթային յայտնում են, թէ գնում են սուրբ Գէորգ, նա սաստիկ ուրախանում է։ «Գնանք, չուտով գնանք», ասում է նա անդադար։ Մայրն ասում է, թէ եթէ խելօք կլինենայ, կըտանի; իսկ եթէ ոչ, այն ժամանակ նրան

կլկողպեն սենեակում, իսկ իրանք կըգնան առանց նրան։ Նա լսում է մօր խօսքը։ Մինչև այդ ժամանակ երկու երեք ամիսը մի անգամ հաղիւ կարողանում էին նրան տիպել երեսը լուանալ, իսկ դուրս գալու օրը նա ինքը լուացվում է և հագնում անդուկում պահած հագուստը։

—Մենք վախենում էինք,—շարունակեց Սերգօն նախագաւթի անկիւնում, ուր մեզ լսող մարդ չկար,—որ նրա կատաղութիւնը ճանապարհին կըբռնի. հայրս մեզ հետ չէր, ես էի և մայրս։ Ի՞նչ պէտք է անէի, հետս մի պարան էի վերցրել, հէնց որ սկսէր, պիտի վերցնէի և կապէի նրա ոտք ու ձեռքը։ Բայց մենք երկու օր ճանապարհ գնացինք, և այդ ժամանակ Մարթան ոչ մի աւելորդ չարժում չըգործեց, ոչ մի աւելորդ խօսք չասաց։ Համեստ երեխայի պէս նա լսում և կատարում էր մեր ասածը... վերջապէս, եկանք սրբատեղը։ Մարթան սկսեց դանդաղել, թէ դլուխը սաստիկ ցաւում է և թէ ուզում է ման գալ։ Գարնան ամենալաւ ժամանակն էր, սրբատեղը շատ գեղեցիկ ղբօսավայրեր ունի։ Սկզբում մենք վախեցանք, բայց յետոյ ես սիրտ առայ։ Գալիլեանը—դուք նըրան յիշում էք—գնալուց առաջ ինձ ընկերաբար խորհուրդ տուեց, որ սրբատեղում մենք Մարթային կատարեալ ազատութիւն տանք և երբէք չըյանդիմանենք կամ մի բանով չըսպառնանք նրան։ Ես հետևեցի նրա խորհրդին, վերջապէս, ձանձրացել էի գիշերը ցերեկ խելագարի յետևից ման գալուց։ Օրը մինչև երեկոյ Մարթան միայնակ ղբօսնում էր հով տեղերում, արեգակի տակ, սարերի և ձորերի մէջ և յետ էր գալիս այն ժամանակ, երբ յոգնում էր։ Մայրս ա-



մեն առաւօտ սոխպում էր նրան գնալ սրբի չիրմին երկրպագութիւն տալ, մոմ վառել, մինչև անգամ աղօթել։ Այս բոլորը նա կատարում էր հլու, հնազանդ, կարծես թէ ուխտուն տարեկան անհաւատ պառաւ լինէր։ Երբ վերջացնում էր ուխտը, դարձեալ բաց էր ընկնում և թափառում էր ուր ուզում էր։ Այսպէս անցաւ հինգ ամիս, և Մարթան ոչ մի անգամ չըկատաղեց։ Միայն մեզ շատ զարմացնում էր նրա լռութիւնը։ Ամբողջ օրը նա ոչ ոքի հետ չէր խօսում և ոչ էլ ինքն իրան հետ, ինչպէս լինում էր առաջ։ Մէկել մի բան. տղամարդ տեսնելիս երեսը ծածկում էր ու փախչում։ Մայրս ուրախութիւնից չէր իմանում ինչ անի։ Նա ցանկանում էր երկար ժամանակ մնալ սրբավայրում, բայց աշունն արդէն մօտենում էր, և մենք պէտք է տեղափոխվէինք։ Մենք վճռել էինք այլևս չըվերադառնալ այն քաղաքը, որտեղից դուրս էինք եկել։ Եղբայրս նամակով հրաւիրել էր մեզ այս-տեղ։ Մարթան ուրախացաւ։ Նա ասում էր, թէ շատ է յոգնել, ուզում է գնալ քաղաք։ Մենք եկանք այս-տեղ։ Մարթան համարեա առողջացել էր, բայց նրա լռութիւնը չարունակվում էր։ Մի շաբաթ եղբայրս ման ածեց նրան նաւթային հանքերը, գործարաննե-րը և մակոյկով ծովի վրայ։ Նրա լեզուն սկսեց բացվել, նա հետաքրքրված հարցնում էր ամեն մի նոր տեսած բանի մասին։ Անցաւ երկու տարի, և Մարթան բոլորովին առողջ էր։ Մի անգամ ծովափում նրան տեսել էր մի վաճառական և հաւանել։ Նա ինձ հետ ծանօթացաւ, եկաւ մեր տուն և ինքն իւր բերանով խնդրեց մօրիցս Մարթայի ձեռը։ Մենք համաձայնվեցինք, իսկ Մարթան թէև ոչինչ չասաց,

բայց երևում էր, որ համաձայն էր։ Ահա, պարոն Սարֆեան, այդ վաճառականն այժմ մեր վեճան է, չէ՞ք կամենալ, արդեօք, ծանօթանալ։

Յաջորդ խաղամիջոցին Սերգօն ինձ տարեց Մարթայի և նրա ամուսնու մօտ։ Մարթան նայեց ինձ և չճանաչեց։ Նա ինձ մոռացել էր, ես էլ ծանօթութիւն չըտուեցի։

Ամբողջ երեկոյ իմ միտքն զբաղված էր Մարթայով, ես անդադար նայում էի դէպի նրա օթեակը։ Հասաւ այն տեսարանը, երբ Օֆելիան խելագարվում է։ Բնաղդմամբ աչքերս յառեցի Մարթայի վրայ։ Երաժշտութիւնը նուագում էր ախուր մեղեդին։ Օֆելիան արտասանում էր իւր անկապ մտնոլորը։ Մարթան ուշադիր լսում էր։ Տեսարանը նրան գրաւել էր։ Օթեակի եռևում երևեցաւ Սերգօն։ Ես նկատեցի, որ նա ուզում է քրոջ ուշքը բեմից յետ դարձնել։ Հա, այժմ նա խելօքացել է, գիտէ՞ ինչպէս վարվել քրոջ հետ։ Բայց ինչո՞ւ է այդ երեկոյ թատրոն բերել, չէ՞ որ Մարթայի նեարդերը դրանից կարող են վտանգվել։ Ես մոքումս մեղադրեցի Մարթայի ամուսնուն, բայց յետոյ իմացայ, որ նա ոչինչ չըգիտէր իւր կնոջ ախուր անցեալի մասին։

Նոր տարի օրը Սերգոյի հետ Մարթային այցելութիւն արի։ Նրա բնակարանը բաւական ընդարձակ էր, տան կահկարասիքը նոր, մաքուր, երևում էր, որ նրա ամուսինն ունևոր մարդ էր։ Ամեն տեղ նկատելի էր կարգ ու կանոն, տանտիկնոջ օրինակելի անտեսութեան կնիքը։ Մարթայի ամուսինը, Պետրոս Գասպարեանը լեռնական գիւղացու որդի էր։ Մանկութիւնից ապրելով քաղաքում և առևտրական դո-



ծերով պտտելով Ռուսաստանում, նա իւրացրել էր քաղաքակրթական մի քանի արտաքին ձևեր։ Ժամանակից քաղաքացի երևալու համար նա կնոջը մի քիչ ազատութիւն էր տալիս, ծովափում նրա հետ թևանոցուկ զբօսնում էր, տանում էր թատրոն, ցիրկ և այլն։ Նկատվում էր, որ նա ներքուստ պարծենում էր Մարթայի դեղեցկութիւնով, եւրոպական ձևերով և անպայման հաւատում նրա ճաշակին։ Բայց, չընայելով այս բոլորին, նա բնաւորութեամբ մնացել էր տակաւին կոշտ, իսկ սրտով պարզ։ Մարթայի սկեսուրը մի նահապետական խստաբարոյ կին էր և իւր հալածին սիրում էր այն չափով, որ չափով հարսը կարող էր բաղդաւորեցնել նրա որդուն։ Նոյն աչքով էր նայում նրա վրայ և՛ Պետրոսի այրի քոյրը, որ ապրում էր եղբօր տանը։

Ես Մարթայի հետ վարվում էի ինչպէս հեռու և միանգամայն նոր ծանօթ և ոչ մի բանով առիթ չէի տալիս անցեալը յիշելու։ Պետրոսը սիրում էր նըրան և շատ խանդոտ էր երևում։ Գիտէի, որ մի ամենաչնչին բանն անգամ կարող էր նրա մէջ կասկած յղացնել։ Եօթն ամիս ես շաբաթը մէկ կամ երկու անգամ այցելեցի Մարթային և միշտ նրա եղբօր հետ։

Մի անգամ, պարոններ, նկատեցի, որ Մարթայի ամուսինն անսովոր տրամադրութեան մէջ է։ Կարծեցի, որ շուտով կանցնի, բայց ոչ, տրամադրութիւնը չարունակվում էր։ Ես իմացայ, որ պատճառը գործերը չեն. բաղդն այդ կողմից նրան յաջողում էր, և նա օր օրի վրայ հարստանում էր։ Միևնոյն ժամանակ, տեսնում էի, որ այդ փոփոխու-

թիւնը նրա մէջ զգում են և՛ Սերգօն ու նրա մայրը, ուսաի և շատ զգոյշ են վարվում նրա հետ։ Ես սկսեցի ուշ ուշ այցելել նրանց, որովհետև նկատեցի որ իմ ներկայութիւնը Մարթայի և Պետրոսի մօտ մի տեսակ դժգոհութիւն է պատճառում Սերգոյին և իւր մօրը։

Այն ինչ՝ Պետրոսն ինձ հետ սովորականից աւելի քաղաքավարի էր վարվում, բարեկամաբար յանդիմանում էր ուշ ուշ այցելելուս համար։ Նրա յարաբերութիւնը միայն Մարթայի հետ էր փոխվել։ Նա երբեմն խորհրդաւոր դէմքով գաղտնի նայում էր կնոջը, երբ վերջինս խօսում էր կամ մի բան անում։ Նոյն տեսակ խորհրդաւոր հայեացքներ փոխանակում էին միմեանց հետ և՛ նրա մայրն ու քոյրը։ Իսկ Մարթայի մայրը խղճալի դէմքով նայում էր նրանց և գաղտնի հառաչում։

Երկու ընտանիքներին սկսել էր բաժանել մի սև պատ։ Նրանք խորթ աչքով էին նայում միմեանց վրայ։

Օրը կիրակի էր։ Ես միայնակ ընթանում էի քաղաքային այգում։ Հեռուից տեսնելով ինձ, մօտեցաւ ու բարևեց Մարթայի ամուսինը և սկսեց հետս մանդալ։ Նկատելի էր, որ նա մտքում մի բան ունի, ուզում է խօսել, բայց չի վստահանում։ Վերջապէս, երբ մենք յոգնած նստեցինք մի նստարանի վրայ, նա դարձաւ ինձ.

—Պարոն Սարաֆեան, դուք շատ ժամանակ էք ապրել...քաղաքում։

Նա յիշեց այն քաղաքի անունը, ուր ես տեսել էի խեղաթար Մարթային։

—Վեց տարի,—պատասխանեցի ես։



—Ուրեմն, դուք իմ կնոջ ընտանիքին պէտք է այնտեղ տեսած լինիք,—ասաց նա, խեթ խեթ նայելով երեսիս,—դուք վաղուց ծանօթ էք նրանց հետ, ես դիտեմ...

Ես չգիտէի ինչ պատասխանել։ Պետրոսը լուեց, ձեռափայտի ծայրը ցնցողաբար խփելով գետնին,

—Պարոն Սարաֆեան,—սկսեց նա նորից, միայն ոչ հանդարտ, այլ յուզված ձայնով,—դուք աղնիւ մարդ էք, ես ձեզ շատ եմ յարգում... Ես էլ պարզ մարդ եմ, սուտ ասել չեմ սիրում։ Ասացէք, իմ կնիկը ազջիկ ժամանակ հիւանդ է եղել։

Պարզ մարդու պարզ հարցն ինձ դրեց նեղ դրութեան մէջ։ Ի՞նչ պատասխանէի։

—Ինչո՞ւ էք լռում, ասացէք, պարոն Սարաֆեան,—չարունակեց Պետրոսը։

Ես խոյս տուեցի ուղիղ պատասխանից։

—Հաւատացէք, չեմ իմանում, եղել է ձեր կինը հիւանդ թէ ոչ... ամեն մարդ իւր կեանքում հիւանդանում է, ինչո՞ւ նա չըպիտի հիւանդանար...

—Դուք իմ միտքը չըհասկացաք, պարոն Սարաֆեան,—ընդհատեց նա,—ես հասարակ հիւանդութեան մասին չէի խօսում... Է՜հ, ինչ եմ երկարացնում, դրուատը հարցնեմ. դուք տեսել էք իմ կնոջը դժուած ժամանակը։

—Ո՞վ է ասում, որ նա դժուած է եղել,—գոչեցի ես, կեղծ զարմանալով։

Սակայն ուղղասէր լեռնականին անկարելի էր չեղել իւր նպատակից։ Ոչ մի խորամանկ կամ վայր ի վերոյ պատասխան չըգոհացրեց նրան։ Բևեռի պէս նրա ուղեղում ցցվել էր մի հարց, և նա, ինչպէս և է,

ուզում էր լուծել այդ հարցը։ Նա ինձ հաւատացրեց, թէ ինքն ամեն ինչ լսել է, ամեն ինչ գիտէ։ Գիտէ, որ ես ապրել եմ նրանց ընտանիքում և եղել եմ խեղաթարին զոհողներից մէկը։ Թէ ով էր պատմել նրան այդ բոլորը, որ չար օձն էր թաւիշել նրա պարզ սրտի մէջ իւր թոյնը—նա այդ ինձ չասաց։

Խղճալի էր նոյն րոպէին այդ մարդը. շատ բան կը տայի, եթէ կարողանայի ցրել նրա սոսկալի կասկածը։ Բայց ինչպէս խաբէի նրան։ Ես թագցրի Մարթայի սիրոյ մասին Գալֆայեանից լսածս։ Աւագի միայն, թէ Մարթան ունեցել է հոդեկան թախիծ, ուրիշ ոչինչ, թէ նրա սիրտը պղտորված է եղել, բայց ուղեղն անվնաս, թէ այդ սովորական մի դէպք է, չարժէ դրա մասին մտածել, անցած գնացած բան է։ Ես սուտ չէի ասում. այն ժամանակ ես հաւատացած էի, որ Մարթայի ուղեղը ծանր հիւանդութիւն չի ունեցել, եթէ ոչ՝ կարծում էի, ոչ մի բան նրան չէր բժշկիլ։

—Շատ չնորհակալ եմ,—շատ չնորհակալ եմ, որ ինձ մխիթարում էք,—արտասանեց նա, ոտքի կանգնելով, և, ձեռս սեղմելով, աւելացրեց.—դուք իմ բարեկամն էք։

Աւագ նա և, գլուխը կրծքին թեքած, տխուր հեռացաւ...

---

Այնուհետև ես դադարեցի այցելել Պետրոսի ընտանիքը։ Ծանրալի էր ինձ համար տեսնել նրան այդ վտանգաւոր կասկածի մէջ։ Ես զգում էի, որ նա միշտ տանջվում է, որ իրան խաբված ու վիրաւորված է համարում։ Բայց աւելի վշտալի էր Մարթայի դրութիւնը։ Նա վաղ թէ ուշ պէտք է հասկանար, պէտք է նկատէր ընկերուհիների կասկածը։ Տէր Աստուած, մտածում էի ես երկիւղով, ինչ կըպատահի նրան այն ժամանակ, կըդիմանա՞յ, արդեօք, չարագուշակ փոթորկին, թէ կընկճուի դժբաղդ անցեալի յիշատակների ներքոյ։

Ինձ վախեցնում էր Պետրոսի պարզ և անշեղ բնաւորութիւնը, մանաւանդ նրա խստաբարոյ մօր նախապաշարմունքները։ Թող այդ մարդիկ լինէին խոհեմ—կըմոռանային ամեն ինչ, անուշադիր թողնելով չար մարդկանց ասածները։ Բայց յաւելին այն էր, որ նրանք չըգիտէին, թէ ինչ է մարդկային սրտի և հոգու օրէնքները։

—Ինչո՞ւ մեզ մոռացաք,—բռնեց ինձ Պետրոսը մի անգամ փողոցում,—ես ուզում եմ ձեզ շուտ շուտ իմ տանը տեսնել։ Արի, հէնց հիմայ գնանք։

Եւ նա ինձ սիրալից հետևել նրան։ Ճաշի ժամանակ էր։ Մարթան սեղանատունը զբաղված էր։ Նրա սկեսուրը և մարդու քոյրը նստած էին հիւրասենեակում։ Ինձ տեսնելով, նրանք չընչացին միմեանց մէջ, բայց և ուրախութեամբ ընդունեցին։

Ներս մտաւ Մարթան և, ինձ բարևելով, անցաւ սեղանատուն։ Զըգիտեմ ինչու, ես չէի կարողանում նրա երեսին ուղիղ նայել։ Կարծես, նրա առջև մի բան նով մեղաւոր էի։ Երբ նա երեսը դարձնում էր սեղանից, այն ժամանակ միայն նայում էի նրան, կամենալով զուշակել, արդեօք, մի բան հասկացրել են։ Նրա դէմքը մի քիչ դեղնած էր, յօնքերի մէջտեղում երևում էր մի նոր խորշ։ Նա սովորականից քիչ էր

խօսում, երբեմն բոլորովին չէր խօսում։ Բայց այդ փոփոխութիւնն ես վերագրեցի ուրիշ պատճառի. ես նկատել էի նրա իրանի անբնական ձևը...

Խօսակցութիւնը չէր կապվում։ Ես աշխատում էի Պետրոսին զբաղեցնել քաղաքային լուրերով։ Սակայն մի թեթև չչուկ, մի օրևէ շարժում կնոջ կողմից—խըլում էր նրա ուշադրութիւնն, և իմ խօսքը կիսատ էր մնում։ Դրութիւնս փափուկ էր, ղղջում էի այնտեղ դանվելուս համար։ Ջար կասկածը մի անգամ արդէն թափանցել էր նրանց սիրտը և այնտեղ կատարում էր իւր գործը։ Կարծէք էր Մարթայից անյայտ մնալ այդ կասկածը։ Պատահեց մի շատ սովորական դէպք։ Մարթան ափսէները ծառային տալիս անդադար շաբար ձեռքից գցեց յատակի վրայ։ Դա մի հասարակ անփութութիւն էր։ Նա շփոթված ոտքի թռաւ և գունատվեց։ Պետրոսը բնազդումով տեղիցը վեր կացաւ։ Նրա այրի քոյրը մի ճիչ արձակեց և նոյնպէս թռաւ տեղից։ Իսկ մայրն, աչքերը վեր բարձրացնելով, հառաչեց։ Նրա շրթունքների շարժումից երևում էր, որ մաքում աղօթում է։ Մարթան սաստիկ վախից դողում էր։ Ամենքն իրանց հայեացքը յառել էին նրա վրայ, իսկ նրա հոգին ճնշվում էր այդ ընդհանուր հայեացքի տակ, ինչպես մի սեղմիչի ներքոյ։ Յետոյ նա սկսեց կոտրված ափսէները հաւաքել։

Լռութեամբ սկսված ճաշը լռութեամբ էլ վերջացաւ։ Ես չտապեցի ազատվել այդ անախորժ տեսարանի ծանրութիւնից։

Նոյն օրն երեկոյեան ես գնացի Սերգոյի մօտ։ Նրա մայրը, ձեռները կրծքին ծալած, նստած էր թախտի վրայ։ Խեղճ կինը լալիս էր։ Ինձ տեսնելիս չփոթվեց։ Անմիջապէս Սերգոյին կանչեցի միւս սենեակ և պատմեցի կասկածս ու երկիւղս։

—Այո,—ասաց նա,—վեսաս ամեն բան իմացել է, չըգիտեմ, ով է պատմել նրան։

—Թող անիծվի այն չար լեզուն,—գոչեցի ես յուզված,—բայց այդ չէ կարևորը։ Այժմ հարկաւոր է մի բան անել. պէտք է այդ վատ կասկածը արմատախիլ անել թէ Պետրոսի և թէ նրա մօր ու քրոջ սրտից, եթէ ոչ Մարթային վտանգ է սպառնում։

—Այո, վտանգ է սպառնում, դիտեմ. նրանք կարծում են, թէ Մարթան հիմա էլ խեղաթար է. չըգիտէք ինչեր են խօսում։ Անցեալ օրն ես ինքս ականջովս լսեցի Մարթայի սկեսրոջ խօսքը. «սևանար այն օրը, երբ Աստծու պատիժը ոտք դրեց իմ տունը»։ Դուք գիտէք, Պետրոսն այժմ Մարթային ոչ մի տեղ չի տանում, այո, ոչ մի տեղ և հիւր էլ չի ընդունում. ես զարմանում եմ, որ նա ձեզ հրաւիրում է։ Իսկ մեզ հետ նա սկսել է արդէն բոլորովին կոպիտ վարվել։ Հինգ օր առաջ մի դատարկ բանի համար նրա մայրն իմ մօրը մի կոպիտ յիշոց տուեց։ Այժմ խեղճ կինը չի համարձակվում այնտեղ գնալ։ Ամեն օր նստած լաց է լինում։

—Իսկ Մարթան, նա ղժում է իւր չըմտածողների կասկածը։

—Ջղում է և մեկել օրն ինձ դանդատվում էր։ Այդ յիմարները մինչև անգամ վախենում են նրանից։ Գիշերները ոչ ոք չի համարձակվում նրա հետ միայնակ մնալ։ Նոյն իսկ Պետրոսը հանգիստ չի մընում նրա հետ։ Մարթան ասում է, որ երբեմն գիշերները նա մի քանի անգամ զարթնում է և զար-

մացած մոխիկ անում չորս կողմը։ Այս վերջին օրերս Մարթան ինքն էլ հանգիստ չի կարողանում քնել. նրան թւում է, թէ ուզում են իրան սպանել. նա շատ է վախենում։

—Ցաւալին այն է,—ասացի ես հոգով վշտացած,—որ Մարթայի դրութիւնը... հասկանում էք։

—Այո՛,—լրացրեց Սերգօն,—նա յղի է, հինգ ամիս է արդէն։

—Այդ վիճակում շրջապատողների վարմունքը աւելի է սպառնում նրա հոգեկան առողջութեանը։

—Հասկանում եմ, բայց ասացէք, ինչ կարող եմ անել ես։

—Դուք և ձեր մայրը միշտ պէտք է նրա մօտ լինէք, աշխատէք, որքան կարելի է, հեռու պահել նրան այդ շրջանի կասկածից մինչև որ տագնապն անցնի։

—Հեշտ է ասել... Այդ մարդիկ չեն ուզում մեր երեսն անգամ տեսնել, իսկ դուք ուզում էք մենք միշտ Մարթայի մօտ լինինք։ Մայրս քիչ է մնում խենթ լացարվի աղջկայ կարօտը քաշելով, իսկ ես... ես ինքնասէր մարդ եմ, չեմ կարող այն ոգեւոր դիւղացիների վիրաւորանքը տանել... Ոչ, ոչ, չեմ կարող, ես... կը-սպանեմ Պետրոսին։

Ես աշխատեցի այդ դառը արարածին համոզել, թէ այդպիսի դէպքերում նրա ինքնասիրութիւնը բո-լորովին աւելորդ է, թէ նա պարտաւոր է, չընայելով վիրաւորանքներին, պաշտպանել իւր քրոջը սպառնացող վտանգից։ Բայց նա մնաց անխախտ իւր ասածի վրայ։

Ես թողեցի և վշտացած հեռացայ։

Պարոններ, երկար կլինի պատմել ձեզ այն բոլո-



րը, ինչ-որ այնուհետև կատարվեց։ Ամեն բան ես ի-մանում էի Մարթայի կեանքից, մերթ ինքս տես-լով, մերթ Սերգօյից լսելով։ Պետրոսն, իւր խստաբա-րոյ մօր կամքով, ամբողջ օրը պահում էր Մարթային տանը փակված, չընայելով որ յղի կնոջ համար ազատ օդն և զբօսանքն անհրաժեշտ էին։

Մի օր Մարթան վշտացած հարցնում է սկեսրից, ինչու նա նրա եղբօր ու մօր հետ լաւ չի վարվում և ինչու չի ուզում որ նրանք այցելեն։ Կոպիտ և գը-ռեհիկ պառաւը պատասխանում է, թէ նրանք չատ տեան ոտք չդպիտի դնեն իւր տունը։

—Ինչո՞ւ,—հարցնում է Մարթան։

—Ինքնից հարցրու. ինչո՞ւ նրանք իմ որդուն ան-բաղդացրել են։

Յետոյ պառաւն ամեն ինչ պատմում է նրան և աւելացնում է.

—Դու խելագար ես։

Մարթան սւշաթափվում է և ընկնում։ Այն օրից նրան տիրում է մի ծանր տրտմութիւն, որ այլ ևս նրանից չի բաժանվում։ Մութ կերպով զարթնում է նրա ուղեղում տխուր անցեալը, ապա հետզհետէ բարդվում են բոլոր խաւար յիշատակները—մի ան-դադար հիւանդ եղած ուղեղը նորից սկսվում է պղտոր-վել և մթնել։

Մի օր Պետրոսը դարձեալ ինձ յանդիմանեց փո-ղոցում, որ այլ ևս իրան չեմ այցելում։ Ես նորը կերպով ակնարկեցի նրա անբնական դրութեան մասին։

—Կըդամ ձեր որդու կնունքին,—ասացի ես, ժըպ-տալով։

—Իմ որդո՞ւ,—կրկնեց նա,—Աստուած տայ, որ նրա

ծնունդը յայտ լինի։

Նա հառաչեց։ Նա տանջվում էր հոգեպէս և շատ ծանր էր տանջվում։ Ես սկսեցի նրա հետ պարզ խօսել, կամենալով մի անգամ և երթ ցոյց տալ նրա կասկածի անհիմն լինելը։ Նա դառն հեգնութեամբ լսում էր իմ ասածը։ Նրա վրայ ոչ մի համոզիչ խօսք չէր ազդում։ Նա դողեց վշտացած ձայնով.

—Պարոն Սարաֆեան, իմ կնոջ ցաւը դուք դիտէք, բայց միայն դուք էք իմացել, և այս գաղտնիքը թող ճնայ մեր մէջ։

—Կարող էք իմ համեստութեանը հաւատալ բոլորովին,—պատասխանեցի ես,—բայց հաւատացէք նոյնպէս, որ ձեր կինն առողջ է, կատարելապէս առողջ։

—Մարմնով շատ առողջ է, բայց այս տեղը...

Նա ձեռը տարաւ ճակատին և, կրծքից մի խոր հոգոց հանելով, գլուխը քաշ դցեց։

—Երէկ երեկոյեան, մայրս եկեղեցուց գալիս, նրան «աղօթքի Աստուած է» ասում։ Մտիկ է տալիս մօրս երեսին խէթ խէթ և պատասխանում. «դուք ինձ ուզում էք սպանել»։ Նա կարծում է, թէ քոյրս կամ մայրս թշնամացել են իւր հետ, ուզում են նրան անպատճառ թունաւորել։ Նա չայն էլ կասկածով է խմում, կերակուրն էլ կասկածով է ուտում։

—Դուք ինքներդ էք առիթ տալիս նրան կասկածելու, դուք զուր նրան հալածում էք, — ասացի ես վրդովված։

Նա ձեռով մի շարժում արաւ և յուզված հեռացաւ։

Ես հետաքրքրութիւնս չէի կարողանում զսպել։ Մի անգամ ևս գնացի Պետրոսի մօտ, կէսօրից յետոյ։



Մարթայի յղութեան վերջին ամիսն էր, օր օրէ վրայ սպասում էին կնոջ կեանքի խորհրդաւոր ժամերին։

Մայրը խնդրել աղաչել էր, և նրան թոյլ էին տուել այդ օրերին աղջկայ մօտ լինել։

Պետրոսն իւր քրոջ և մօր հետ նստած չչնչալով խօսում էր։ Մարթան իւր մօր հետ միւս սենեակումն էին։ Առաջին րոպէ ես ղէմացի այցելութեանս մասին։ Բայց Պետրոսն լինչ ընդունեց գրեթէ գրկաբաց, հրաւիրեց իւր սենեակը։ Ես վճռել էի վերջին փորձն անել՝ նրա կասկածը փարատելու։ Խնդրեցի նրան գոնէ այժմ Մարթայի հետ վարվել շատ մեղմ և ղէմացի, որովհետև օրերը տագնապալի էին։

—Այժմ մենք շատ ղէմացի ենք, շատ ղէմացի,—պատասխանեց նա,—երեխայի պէս ենք վարվում հետը։ Ինչ-որ ուզում է, անում ենք, ոչ մի բանում չենք հակառակում։ Բայց նա միշտ զարմացած խէթ-խէթ մտիկ է տալիս մեր երեսին և գլուխը շարժում։

Թէյի ժամանակ ամենքս միասին էինք։ Ողջոյնս փոխուել էր Մարթան վերջին ժամանակ. այո, ես առաջին հայեացքով հաղիւ ճանաչեցի նրան։ Ձիւմարիա է, Պետրոսը, նրա մայրն ու քոյրը շատ ղէմացի մեղմ էին վարվում նրա հետ, բայց այդ աւելի սաստկացնում էր Մարթայի թախիծը և աւելի կասկածամիտ դարձնում նրան։ Մի վայրկեան նա նայեց երեսիս, և այդ թախծալի աչքերի մէջ ես կարդացի նրա հոգու սոսկալի մրրիկը։ Մերթ նա շրթունքները սեղմում էր և երեսը չատ դարձնում, մերթ նայում էր մօր երեսին։ Նրա ձեռները թեթեւակի դողում էին։ Մայրն աչքը չէր հեռացնում նրա երեսից։ Իսկ միւս-

նեբը, չընայած իրենց զգուշութեանը, դարձեալ ե-
բեմն բոթում էին միմեանց և զանազան նշաններով
իրար հետ խօսում։ Ո՛չ, սարսափելի հալածանքն ա-
դէն մի անգամ սկսվել էր և որքան էլ փոխվէին
ձևերը—դարձեալ մնում էր հալածանք։

Այդ օրուայ իմ այցելութիւնը վերջինն եղաւ։

Մի շաբաթ անցած Մարթայի ծննդեան ժամերը
հասան։ Նա ապատվեց անփորձ, մինչև անգամ բժիշկ
հրաւիրելու կարիք չեղաւ։ Բայց հէնց այդ րոպէից ը-
կավեց նրա դառն փորձը և վերջացաւ այնպէս ող-
բալի...

Պարոններ, ով ծանօթ է կնոջ կազմի հետ, հարկաւոր
չէ նրան ասել, թէ որքան տագնապալի է նրա դրու-
թիւնն ամենայայտնի ծծնդից յետոյ անգամ։ Այո, ամե-
նաառողջ և ամենաամուր նեարդեր ու ջղեր ունեցող
կնոջ կեանքն անգամ այդ ժամանակ ենթակայ է վտանգի։

Իսկ Մարթան... կարող էր նրա վրայ չազդել
շրջապատողների այն լուռ հալածանքը, որ չարունակ-
վում էր աւելի ուժով։ Փորձը շատ ծանր է լինում,
որպէս զի անհետևանք մնար։ Բաւական է լինում
մի թոյլ նշան, և ահա դուշակվում է մօտալուտ կա-
տաղութիւնը։ Հէնց երկրորդ օրը երեկոյեան, կարծեմ,
Մարթան ուժաթափվում է։ Տաքութեան աստիճանն
սկսում է արագ արագ բարձրանալ։ Նա սկսում է զա-
ռանցել։ Մի շատ սովորական երևոյթ նրա դրութեան
մէջ դանվող բոլոր կանանց համար...Սակայն շրջապատող-
ների ամրացած կասկածն այդ զառանցանքները վե-
րագրում է ոչ թէ մարմնի տկարութեանը, այլ հոգու
հիւանդութեանը։ Մի ամբողջ օր տևում է զառան-
ցանքն, և ողորմելին իր բերանով պատմում է իր



տխուր անցեալի անյայտ մասն ևս։ Յետոյ նա մի փոքր
ուշքի է գալիս, սկսում է անիծել իւր կեանքը, իւր
շրջապատողներին։ Սկսում է լաց լինել, գոռալ և դրա-
գելով մի ապտակ է տալիս ամուսնուն։

---

Այստեղ Սարաֆեանը կանգ առաւ։ Մենք տա-
կուին ուշադիր սպասում էինք պատմութեան շարու-
նակութեանը։ Տխուր հառաչելուց յետոյ նա աւելաց-
րեց.

Մնացեալն այլ ևս չեմ պատմիլ։ Կաւելացնեմ մի-
այն, պարոններ, որ ճակատագիրն աւելի դժոխով վե-
րաբերվեց ցնորվածին։ Մարթայի տաքութիւնն աւե-
լի ևս սաստկանում է, նա ամբողջ մարմնով, կարծես,
սկսում է այրվել։ Բժիշկները չեն կարողանում օգ-
նել։ Իններորդ օրը խեղագարն ազատվում է իւր
տանջանքից, մահուան անկողնի մօտ լսելով իւր նո-
րածին մանկան լացը...

Թիֆլիս, 1891 թ.

---

# ԾՐՋԱՆԻՑ ԱՐՏԱՔՍՈՒԱԾՔ

*Պատմուածք*

## 1.

Գիմնազիայում Պետրոս Մարդանեանը յայտնի էր իբրև լուռ, անտարբեր պատանի։ Նա հեռու էր պահում իրան ընկերական շրջաններից, թատրոն էր գնում միայնակ, դասեր էր պատրաստում միայնակ։ Եւ այս պատճառով ընկերները նրան չէին սիրում։

Նոյնն էր նա և՛ մայրաքաղաքում։ Մտնելով համալսարան, նա ոչ մի կապ չհաստատեց կովկասցի ուսանողների հետ։ Հայերը աշխատեցին թեքել նրան իրանց կողմը—չեղաւ, վրացիները փորձեցին — դարձեալ անայողդ։ Առաջարկեցին նրան գրվել գոնէ ուսանողական գանձարանի անդամ—մերժեց։

—Թքենք նրա վրայ,—վճռեցին ուսանողները,—նա միշտ եղել է եսասէր, այդպէս էլ կմնայ։

Եւ բոլորն երես դարձրին նրանից։ Ինքն էլ երես դարձրեց ամենից։ Ապրում էր ընկերական բոլոր խաւերից հեռու, առանձնացած։ Ոչ ոք չէր ճանաչում նրա բնաւորութիւնը։ Ոչ ոք չգիտէր, թէ ինչ է անում, ինչով է պարապում դասերից ազատ ժամանակ։ Միայն մի քանի անգամ տեսան նրան լեհացի ուսանողների հետ։ Սկզբում ենթադրեցին, թէ օտարազգի-



ների հետ կապ ունի։ Այդ աւելի գրգռեց հայրենակիցներին։ Ո՞ր օտարազգի չրջանն է կարօտ որ և է Մարդանեանի մասնակցութեանը։

—Խոզ, խոզ—գոռում էին հայ ուսանողները, մանաւանդ աղքատները,—մենք փող չունինք, մեզանից հեռու է փախչում, վախենում է պարտք խնդրենք։ Թքել ենք, թող իւր հոտած եսի մասին մտածի։

Եւ ահա այդ եսասէր, անտարբեր և ժլատ համալսարանական երիտասարդն իւր ուսանողական կեանքի տարիների վերջին փոխվեց։ Նա այժմ աւելի խոյս չի տալիս իւր ընկերներից, ընդհակառակը, ձգտում է նրանց մօտենալ։ Սրան նրան հրաւիրում է իւր մօտ, խօսում է այն բաների մասին, որոնցով բնաւ չի հետաքրքրվել, հայրենի երկիր, ժողովուրդ, երիտասարդութիւն—այսպիսի բառեր են լսվում նրա բերանից։ Նա հարց ու փորձ է անում իւր ուսանող հայրենակիցների մասին, աշխատում է իմանալ ինչ ժողովներ են կազմում, ինչի մասին խօսում, գաղտնի։ Առանձին փափագով ուզում է իմանալ ուսուցիաւարտների ձգտումները։

—Էհէ, այդ ինչ է նշանակում,—զարմացած հարցնում էին իրարուց ուսանողները։

Ամենքը զանազան ենթադրութիւններ էին անում. մէկն ասում էր, թէ նա հաւակացել է իւր սխալը, ուզում է ուղղել, միւսը, թէ ընդհանուրի աւելութիւնը ծանր է թուացել նրան։

—Պարոններ,—ասաց մի օր Փիլոլոգ Գալումանը,—այդ մարդու անկեղծութեանը մի հաւատաք։ Ես գիտեմ, քամին ո՛ր կողմից է փչում։ Նա ուսումն աւարտած է, գիտէ որ այսուհետև իրանից ակնկալու-

թիւն չունինք։ Բայց չի ուզում իւր դիպլօմի հետ ընկերների աստղութիւնը հայրենիք տանել։ Նա աշխատում է այժմ մի կերպ շոյել մեր սիրտը, հասկացաք։

Աւետի ազատախօսները գոհ չըմնացին այդ բացատրութիւնից։ Ինագէտ Բարգամեանը, այդ կշտամբելի գիւղացին, իւր նօսր միրուքի ծայրը շփելով, ասաց.

—Ես կարծում եմ, որ Պետրոս Մարգանեանը մի տգեղ նպատակ ունէ։ Պարոններ, հեռու պահեցէք ձեզ նրանից։

Նա բազմախորհուրդ կերպով ժպտաց, թողնելով, որ իւր մտքի միւս կէսը գուշակէ ով ինչպէս ուզում է։ Նա ամենից աւելի էր դրդռված Մարգանեանի դէմ։ Բանն այն է, որ նա հայ ուսանողների շրջանում մի առանձին հեղինակութիւն էր վայելում։ Մարգանեանն էր միայն, որ չէր ընդունում նրա հեղինակութիւնը։

Այնուհետև այլ ևս ոչ ոք չէր մօտենում Մարգանեանին։ Մարգանեանը շահասէր է, Մարգանեանը խոզ է, անպիտան է, նրա նոր-նոր ցոյց տուած բարեկամութիւնը տգեղ նպատակ ունէ—ահա այն սոսկալի դարձուածները, որ պտտում էին ուսանողների շրջանում։ Ցիշում էին անցած-գնացած անախորժ դէպքերն և աշխատում բոլորի պատճառը Մարգանեանին վերագրել։ Այո, նա թէև հեռու է եղել ուսանողական շրջաններից, բայց գաղտնի շատ վատութիւններ է արել։

—Այս բոլորը դեռ ոչինչ,—աւելացնում էր աղնիւ համարված Բարգամեանը,—ես աւելի վատ բաներ գիտեմ, օօօ, դուք նրան դեռ լաւ չէք ճանաչում։

Իսկ թէ ինչ աւելի վատ բաներ գիտէր—նա երբէք ոչ ոքի չէր ասում, միայն խորհրդաւոր ժպտում էր։

—Այո, այո,—շատ գարշելին է,—աղաղակում էին մխաբերան սարսափելի քննադատները։

Եւ այսպէս, քանի գնում, այնքան բարդվում էին մեղադրանքները։ Զրկար մի ընկեր, որ մեղադրվողին պաշտպաներ։ Իսկ եթէ մէկը յանդգնէր պաշտպանել, իսկոյն պէտք է ընդհանուրի յարձակմանը ենթարկվեր և դուցէ ղրկվէր ընկերների համակրութիւնից։

Սակայն բոլոր դոռոզ-դոչողներն ղգում էին իրանց սրտում, որ եթէ մէկը փաստեր պահանջի խըրատ

նասիրութեան հիմքը: Նա ծնվել է գաւառից գաղթած մի փոքրիկ ընտանիքում, որ ոչ մի ազգակից, ոչ մի ծանօթ շրջան չի ունեցել Թիֆլիսում: Հայրը ժամանակ չի ունեցել զբաղվել իւր որդու կրթութեամբ: Մայրը, նոյնպէս առանձնասէր բնաւորութիւն ունենալով, սնել ու մեծացրել է նրան իւր անմիջական հսկողութեան ներքոյ: Չի թողել որ նա խաղայ հարևանների երեխաների հետ, միշտ ստիպել է նրան փակված մնալ տանը: Այդպիսով նա կամեցել է իւր որդուն ազատ պահել վատ ազդեցութիւնից, բայց յղացրել և զարդացրել է նրա մէջ եսասիրութիւն: Ընտանիքից ընկնելով ուսումնարան, նա չի ազատվել այդ եսասիրութիւնից: Աշակերտների շրջանը նրան սկզբից վախեցրել է: Մի գաղտնի երկիւղ ստիպել է նրան միշտ հեռու փախչել այդ շրջանից և ամփոփված մնալ իւր եսի մէջ:

Իսկ այժմ նա արդէն չափահաս տղամարդ է: Անկարելի է այդպէս առանձնացած մնալ: Այսօր թէ վաղը նա կեանքի մէջ է մտնելու, չէ՞ որ պէտք է ընտանեվանալ փոքր ինչ հասարակական կենցաղավարութեան: Այդ նրա համար անհրաժեշտ է: Նա նպատակ ունի և այդ նպատակն իւր եսին չի վերաբերվում: Ոչ, դուցէ այդ եսը բնաւ կարօտութիւն չզդար ուրիշների ընկերութեանը:

—Բայց ինչ անեմ, ես չեմ կարող իմ միտքը նրանց յայտնել: Նրանք չեն հասատալ, կըծաղրեն: Նրանք ինձ անընդունակ են համարում մի ուրիշ բանի մասին, բացի ինձանից, մտածելու, մի որ և է մտքով ոգևորվելու:

Հասաւ ուսանողական կեանքին հրաժեշտ տալու



օրը, նրա հետ ուսումն աւարտող հայրենակիցները խնճոյք սարքեցին, բայց նրան չհրաւիրեցին: Նա չվիրաւորվեց: Նա գիտէր արդէն, որ այդպէս էլ պէտք է լինի. ոչ ոք չզմաղթեց նրան կեանքի մէջ յաջողութիւն, բացի օտարազգիներից: Միայն մի քանի հայեր վերջին անգամ սառն կերպով սեղմեցին նրա ձեռն և ուրիշ ոչինչ:

Եւ Պետերբուրգից նա դուրս եկաւ այնպէս կըզգիացած, ինչպէս եկել էր:

Ճանապարհին նա մտաւ Մոսկվա, փորձեց դէթ այստեղի հայ ուսանողներին մօտենալ: Բայց նկատեց, որ ոմանք մեծ աչքով են նայում իւր վրայ: Նրա մասին տարածված վատ համբաւն այստեղ էլ հասել էր: Մի քանիսը մինչև անգամ պարզ յայտնեցին, թէ հեռուից հեռու նա անօգնելի է եղել:

—Վերջապէս, ասացէք, պարոններ, ինչ է եղել իմ մեղքը,—հարցրեց նա մի անգամ այնքան սառն, այնքան անխռով, որ, կարծես, խօսքը իւր մասին չէր:

—Մենք չենք իմանում, լսել ենք միայն:

—Ի՞նչ էք լսել:

—Որ դուք լաւ ընկեր չէք,—կոշտ ձևով պատասխանեց Պետրովսկայա Ակադեմիայի ուսանողներից մեկը:

—Որովհետև ուսանողական շրջաններում չեմ մասնակցել:

—Եւ ամսական հարիւր րուբլի ստանալով, ոչ ոքի չէք օգնել:

—Ես երբէք ամսական հարիւր րուբլու երես չեմ տեսել: Ես նոյնքան աղքատ եմ ապրել, որքան և ուրիշ ուսանողները: Զըզիտեմ ինչից էք եզրակացրել, որ ես հարուստ եմ:

—Ձեր դաշափարների աղքատութիւնից, — հա-

բուածեց անխնայ «Պետրովեցը» կոպտաբար։

—Դաղափարներ,—կրկնեց Մարդանեանը կիսա-հեգնաբար,—չատ դեղեցիկ, պարոններ, յուսով եմ, որ մօտիկ ապագան մեզ աւելի լաւ կըծանօթացնէ մի-մեանց հետ, քան այժմեան ֆրազները...

Այս եղաւ նրա վերջին խօսքն ուսանողների հետ։ Մի շաբթից յետոյ նա վերադարձաւ հայրենիք։

## II

Արդարև, Մարդանեանը նոյնչափ աղքատ էր ապրել, որչափ և միւս աղքատ ուսանողները։ Զանազանութիւնն այն էր, որ ոչ ոքի յայտնի չէր նրա աղքատութիւնը։

Նրա հայրը մի ժամանակ հարուստ էր եղել, բայց յետոյ սնանկացել էր։ Շատերը կարծում էին, թէ նա թագցրած փող ունի։

Այս կարծիքը պատում էր և՛ ուսանողների շրջանում։ Այստեղ ամենքը հաւատացած էին, թէ Պետրոսը խոշոր ամսական է ստանում ծնողներից։ Եթէ այդպէս չէ, ինչու նա ոչ մի անգամ մէկից պարտք չի ուզում։

Դա մի կոշտ սխալ էր. առանձնատէր ուսանողը ոչ թէ մի, այլ շատ անգամ փոքր կարօտութիւն էր քաշել։ Բայց խորին ինքնասիրութիւնն երբէք չէր թոյլ տալիս նրան ուրիշների օգնութեանը դիմել։ Նա ամօթալի էր համարում իր աղքատութիւնն երևան հանել։ Նա ատում էր այն ուսանողներին, որոնք ուրիշի մօտ մի տեսակ պարծենկոտութեամբ էին խօսում իրենց աղքատութեան մասին։ Այդպիսիներին նա համարում էր թուլամորթ և էժան գնով ուրիշների մօտ



իրանց հերոս ձևացնող։

Ծնողները, հարկաւ, Պետրոսին ընդունեցին ուրախութեան արտասուքով։ Վերջապէս, աւարտեց նա իր ուսումը, վերջապէս, կարող է օգնել նրանց։

—Բոլոր յոյսերս քեզ վրայ են,—ասաց հայրը,—ես ծերացել եմ, մեծ եղբայրդ չի կարողանում իր ընչին ռոճկով մեզ պահել։ Դու պէտք է ծնողներիդ և քոյրերիդ ազատես աղքատութեան ճանկերից։

Պետրոսը մխիթարեց ծերունուն ընդհանուր խօսքերով, բայց մի որոշ պատասխան չըտուաւ, թէ որքան ժեղ է, արդեօք, դործադրելու իր մանաւանդիտութիւնը։

Նա տխուր էր և մտաղրաղ։ Օրը մի քանի անդամ դուրս էր գալիս և միշտ յուղված տուն վերադառնում։ Ծնողները կարծում էին, թէ նա զբաղված է անձնական դործերով, իսկ մեծ եղբայրն ասում էր.

—Ոչ, նա ուրիշ դործով է յափշտակված։

Հայրենիքում երիտասարդութիւնն երես չըդարձրեց նրանից։ Նա ծանօթացաւ շատերի հետ և ընդունվեց մի քանի շրջաններում, որոնց հետ դեռ Ռուսաստանում վճռել էր յարաբերութիւն ունենալ։

Սակայն այդ յարաբերութիւնը շատ կարճ միջոց տևեց։ Շուտով մայրաքաղաքից վերադարձան նրան հալածող ուսանողները։ Եկան նոյնպէս փիլիսոփ Գալուձեանն և բնագէտ Բարդամեանը։ Ոչ ոք չէր մոռացել նախկին սաէլութիւնը։

—Ի՞նչ,—դոչեց Բարդամեանը զարմացած,—մի՞թէ, պարոններ, Մարդանեանի հետ կարելի է դործ ունենալ։

Դարձեալ սկսվեցին հալածանքները։ Բոլոր նո-

բաւարար ուսանողները պախարակեցին, ցեխի հետ հաւասարեցրին այն մարդուն, որ միայն մի բանով էր էր մեղաւոր—իւր առանձնասէր բնաւորութեամբ։ Հիմքը դրված էր—խայտառակ չինովնիկը չտապով կառուցվեց։ Հողմի արագութեամբ չար լուրերն անցան մի շրջանից միւս շրջան։ Մարդանեանի ազգանունը դարձաւ կծու խօսակցութեան, ծաղրի ևատելութեան նիւթ։

Այս անգամ բամբասանքներն աւելի բարդ էին և բազմակողմանի. մայրաքաղաքներում ստեղծվածներին աւելացել էին և՛ տեղականները, և ինչեր չէր հնարում ասիական պղտոր երևակայութիւնը։

—Ցիշո՛ւմ ես, յիշո՛ւմ ես,—ասում էր մեկը միւսին,—չէի՞ ասում քեզ, թէ այդ մարդն ինձ դիւր չի գալիս։

—Ես թագցնում էի, չէի ուզում ասել, բայց զգում էի, որ այդ մարդը լաւ պաուղ չէ։

—Բաւական է մի անգամ նայել նրա աչքերին և մարդ իսկոյն կարող է ճանաչել,—ասում էր մի ակնոցաւոր արտասահմանեան բժիշկ, որն ինքն իրան համարում էր անսխալ ֆիզիօնոմիստ։

—Երբէք ես նրա հետ անկեղծ չեմ խօսել, գիտէի ինչ մարդ պիտի լինի,—ասում էր չորրորդը։

Եւ այսպէս, ամենքը սրտագէտ էին, ամենքը հէնց առաջին անգամից ճանաչել էին Մարդանեանին։ Այն ինչ՝ մինչև այժմ նրանք ոչ մի որոշ կարծիք չէին յայտնել։ Թւում էր, որ իւրաքանչիւրը մի տեսակ զուարճութիւն է զգում Մարդանեանին պարսաւելում։ Այո՛, հազիւ թէ նրանք այնքան ոգևորված գովէին մի առաքինի մարդու, որքան ոգևորված դատափետում



էին մի մարդու, որի հետ ոմանք դեռ ծանօթ էլ չէին։

Դարձեալ Մարդանեանը մնաց միայնակ։ Երբէք նրան այնքան վիրաւորական, այնքան անտանելի չէր թւացել նրա դրութիւնը, որքան այժմ։ Հանդիպում էր իւր ծանօթներին—ոչ ոք չէր մտածում նրան և ոչ ոքին էլ ինքը չէր վստահանում մօտենալ։ Ընդունում էր սառն բարևներ և անցնում։

Օգտվելով նրա դրութիւնից, աշխատեցին նրա հետ ծանօթանալ մի քանի երիտասարդներ, որոնք նոյնպէս արհամարհված էին, բայց ոչ առանց հիմնաւոր պատճառների։

Այն ժամանակ չարակամների լեզուներն աւելի սրվեցին Մարդանեանի դէմ։

—Վերջապէս, նա գտաւ իւր շրջանը,—ասաց Բարեգամեանը,—երկուսն էլ նրան տեսայ պրօսպեկտի վրայ անբարոյական Մարգարեանի հետ, որը, դիտէք...

Բայց Մարդանեանն ինքը խոյս տուեց այդպիսի ընկերներից, ոչ թէ վախենալով նոր բամբասանքներից, այլ աւելութիւն ղգալով դէպի այդ մարդիկ։ Հարկաւ, այդ էլ չդիմեց նրան։ Հալածանքները քանի գնում, այնքան սաստկանում էին։

—Պարոններ,—ասաց մի օր դարձեալ նոյն Բարեգամեանը,—երևում է, որ այդ մարդը շատ է վիրաւորվել։ Իսկ դուք գիտէք, որ ամենքից վիրաւորված մարդը կարող է շատ վատ միջոցների դիմել իւր թշնամիների վերաբերմամբ։ Զգոյշ, զգոյշ և զգոյշ եղէք։

Նրան ձայնակցեցին շատերը, մանաւանդ այնպիսինները, որ ուրիշներին պարսաւելով կարողանում էին քօղարկել իրանց շատ խոշոր թերութիւնները։

Վերջապես, դանվեցին մի քանի բարեսիրտ երիտասարդներ, որոնց չատ անողոք թւացին Մարդանեանի կրած հալածանքները։

—Ո՛չ, պարոններ, այդքան էլ անգութ չի կարելի վերաբերվել մարդուն,—համարձակվեց ասել մեկը,—էհ մարդ է, ասենք թէ անցեալում սխալներ է գործել, բայց այժմ խօմ ուզում է քաւել իւր մեղքերը։ Մի՞թէ մենք պէտք է մինչև վերջը խստասիրտ լինինք։

Մեկ ուրիշը, որ աւելի համարձակ էր, աւելացրեց.

—Եթէ ինձ հարցնէք, ուղիղն ասած, չըգիտեմ, նա ինչ մեղք է գործել։

Ոմանք ծիծաղեցին այդ թերահաւատի վրայ, համարեցին նրան միամիտ, իսկ Բարդամեանը միանգամայն վրդովվեց։

—Կան յանցանքներ,—ասաց նա,—որոնց ապացուցանելը դժուար է և աւելորդ։ Մարդանեանն այդ տեսակ յանցաւոր է։ Ինայել նրան—կընչանակէ մեր երիտասարդութեան մէջ խրախուսել նեղ անձնասիրութիւնը և ինքասակար մարդկանց խաւար կրքերը, մըննացեալը դուք հասկացէք...

—Եթէ նրա բոլոր արածները մոռանանք,—աւելացրեց Ֆիլոզոֆ Գալումեանը,—անկարելի է մոռանալ յայտնի Մարգարեանի հետ յարաբերութիւն ունենալը։

Բարեսիրտները զսպեցին իրանց թոյլ զգացումը, թերահաւատները լռեցին։ Ծայրայեղներից մեկը Մարդանեանի չատ զղուելի ածականներին աւելացրեց և՛ մինը, ամենազզուելին—լրտես։ Եւ ոչ ոքի խիղճը չըբողոքեց այդ անարդարութեան դէմ։ Մինչև այժմ Մարդանեանն ատելի էր, այժմ դարձաւ քաղցելի և երկիւղալի։ Մինչև այժմ երես էին դարձնում նրանից, այժմ վախչում էին տեսնելիս։ Կարծես, նա մի թունաւոր սողուն էր, կարծես, նա մի վարակիչ ժանտախտ էր։

Այս բոլորը տեսնում և զգում էր Մարդանեանը։ Այլ ևս նա հաւատացած էր, որ իւր բարի անունը ընկել է անդունդ և ընկել է յաւիտեան, անվերադառնալի կերպով։ Ո՛չ, պէտք է վերջ տալ անզուսպ լեզուների անպատիժ զրպարտութիւններին։ Պէտք է, բայց ինչպէս։

Նա կորցրեց իւր նախկին սառնասրտութիւնը, այլ ևս անկարող էր կրել անիրաւ հալածանքը։

Հետզհետէ նա դարձաւ աւելի և աւելի զգայուն։ Թւում էր նրան, որ ամենքն անխաբեր ատում են իրան, ամենքը, նոյն իսկ անծանօթները, նոյն իսկ նրանք, որ երբեք չէին լսել նրա անունը։ Կասկածն օրից օր զարգանում էր նրա մէջ, նրբանում էր և հիւանդութեան աստիճանին հասնում։ Երբեմն նա կարծում էր, որ իւր անացինները, իւր հայրը, մայրը, եղբայրը, քոյրերն անգամ ատում են իրան։

Նա առանձնացաւ, փակվեց իւր սենեակում։ Նա չէր կամենում մարդկանց երես տեսնել։ Նա ինքն ըստ կսեց ատել ամենքին։

Յաճախ նա միայնակ իւր սենեակում, խորհրդակցելով ինքն իւր հետ, յուզվում էր, զբդռվում, արտասուում և անիծում իւր վիճակը։ Եւ այդ հոգեկան տանջանքներն անհետևանք չըմնային։ Նա նիհարում էր օրէցօր, գունատվում և ընկճվում մարմնապէս։

—Լհհ՛,—գոչեց նա մի երեկոյ, վերջապես, ուշքի

դալով,—այդ ինչ երեխայութիւն եմ անում։ Մի՞թէ այսքան տկար եմ, մի՞թէ ես մոռացայ պարտքս միայն նրա համար, որ ինձ վրայ հաչում են։ Ոչ, բաւական է...

Նա միանգամայն սթափվեց անընդհատ թըմրութիւնից։ Ծանր, մահացուցիչ վհատութիւնն անցաւ։ Նա զուարթացաւ, ջնջվեց նրա դէմքից տխրութեան դրոշմը, չքացաւ նրա աչքերի թախծալի փայլը։ Երգելով, շուացնելով, նա հանեց անկողնակալի տակից իւր ճանապարհային արկղն և սկսեց հագուստը կապկպել։

Հետևեալ առաւօտ կանուխ հայրը մտաւ Պետրոսի սենեակը մի կարևոր բանի մասին խօսելու։ Նա այնտեղ չէր։ Հայրն ապշած նայեց իւր չորս կողմը և տեսաւ սենեակն անկարգ դրութեան մէջ։ Պետրոսի շորերը չըկային։ Սեղանի վրայ դրած էր մի քառածալ թուղթ։ Նա վերցրեց այդ թուղթն և կարդաց հետևեալ տողերը.

«Ներիր, հայր, որ առանց ձեզ հնազ բարև ասելու գնացի։ Մի անյետաձգելի գործ ինձ ստիպեց խոյս բաժանվել ձեզանից։ Ըղձիտեմ, որքան կըտևի իմ բացակայութիւնը։ Նամակով կըյայտնեմ։»

## III

Մի քանի օրում Մարդանեանի անյայտանալու լուրը տարածվեց նրա ծանօթների շրջանում։

Սկսեցին ամեն տեսակ բացատրութիւն տալ այդ անսպասելի դէպքին։ Ոմանք ասում էին, թէ ընդհանուրի հալածանքը ստիպեց նրան, վերջապէս, փախչել։ Իսկ ոմանք կարծեցին, թէ նա մի տեղ պաշտօն է ըստացել ու գնացել։



Վերջին ենթադրութիւնը չուտով հերքվեց, որովհետև Մարդանեանի ծնողները սաստիկ անհանգիստ էին։ Ծերունի հայրը բռնում էր փողոցում այս ու այն երիտասարդին, հարց ու փորձ էր անում և ոչ ոքից վախթարական խօսք չէր լսում։

—Ո՞րտեղ կորաւ,—գոչում էր խեղճ մարդը վըշտացած։

—Որտեղ էլ որ գնացած լինի, կարծեմ, յետ չի գալ,—ասում էր նրա մեծ որդին։

Եւ ծնողները ողբում էին իրանց որդու կորուսաը։ Ողբում էին, որովհետև արդէն երկու ամիս էր անցել և Պետրոսից սպասված նամակը դեռ չէր ըստացվել։

Իսկ խստասիրտ հալածիչների լեզուները դարձեալ հանգիստ չէին մնում։

—Գիտէք, պարոններ,—ասում էր ֆիլօլօգ Գալումեանը,—եթէ ես նրա տեղը լինէի, վաղուց կամ խեղդվել էի կամ ատրճանակը կրծքիս արձակել։

—Շատ կարելի է հէնց այդպէս էլ է արել, միայն յայտնի չէ որտեղ,—նկատեցին աւելի ներողամիտները։

Բնագէտ Բարգամեանը դարձեալ խորհրդաւոր կերպով ժպտաց և, քմծիծաղ տալով, ասաց.

—Պարոններ, երեխայ մի լինիք, Պետրոս Մարդանեանը ոչ խեղդվող պատուղ է, ոչ էլ կախվող։ Ինքնասպանութեան համար կամ պէտք է լինել յիմար կամ աներկիւղ։ Նա ոչ այս է, ոչ այն։

Անցաւ մի ամբողջ տարի։ Մարդանեանը չէր երևում։ Նրա անունը հետզհետէ սկսեց մոռացվել հալածիչների շրջանում։ Անցաւ երկրորդ տարին, և այլ

Ես ոչ ոք չէր յիշում այդ անունը և եթէ յիշում էին— առանց նախկին վրդովմունքի։

Արդէն Մարդանեանի բոլոր ընկերները կեանքի մէջ հարթել էին իրանց ճանապարհն և ապրում էին խաղաղ և անխռով։ Երբեմն նրանք հաւաքվում էին մի տեղ ժամանակ անցկացնելու համար։ Խօսակցութեան առարկան պատահում էր, որ ուսանողական կեանքն էր լինում։

Մերթ ընդ մերթ լսվում էր Մարգանեանի անունը, բայց շատ աննկատելի կերպով։

—Գնաց ու անյայտացաւ մարդը,—ասում էր մէկը,—մօտ երեք տարի է անցել և՛ ոչ մի լուր չէ՛ կայ նրա մասին։

—Է՛հ, պարոններ, այսօր քէֆ պէտք է անենք— թէ չէ։ Հիւրասիրութեան հերթը Բարգամեանինն է, չէ որ նա տեսչի պաշտօն է ստացել։

Այդ համարեա վերջին անգամն էր, երբ յիշվեց Մարդանեանի անունը, այնուհետև չարաբաղդ մարդու անունը չնչվեց բոլորի յիշողութիւնից։

Գարնան վերջն էր։ Մի կիրակի օր, առաւօտեան տասը ժամին Մուշտայիդի այգու ճեմելիքներից մէկում նստած էին մի խումբ երիտասարդներ։ Նրանք տաք-տաք վիճաբանում էին օրուայ մի շատ նշանաւոր խնդրի մասին։ Առարկան այնպէս էր, որ շատ յաճախ լսվում էին «վաեմ դաղափարներ», «մարդասիրութիւն», «ղեպատն սիրա», «անձնազոհութիւն» և այլ մի շարք այսպիսի բառեր։

Ամենքը յուզված էին, մանաւանդ փիլիսոփա Գալումեանը, որ չուտով մի հարուստ մարդու հաշուով պիտի ուղևորվէր Եւրոպա։



Ճեմելիքի ծայրում երևաց Բարգամեանը։ Վերջին ժամանակ այդ երիտասարդն այնքան փոխվել էր, որ դժուար էր ճանաչվում։ Նա աւելի առողջացել էր, կարմրել և բաւականին աչքի ընկնող փոր դցել։ Նա ամբողջ օրը զբաղված էր թէ պաշտօնով և թէ «հասարակական գործերով»։ Հազիւ ժամանակ էր գտնում չաքաթը մի կամ երկու անգամ ընկերների հետ տեսնվելու։

Այսօր նա Գալումեանին խօսք էր տուել հասարակական այգիներից մէկում ընկերաբար զուարճանալու։ Ոչ օքի տակաւին չէր յայտնում, բայց իւր նոր մեռած հօրից նա բաւականաչափ ժառանգութիւն էր ստացել, մտադիր էր ամուսնանալ, ուստի կամենում էր ամուրի կեանքի վերջին հաճոյքները վայելել։

—Ի՛նչ էք միմեանց օձիքը պատռում,—ասաց նա, ծանր քայլերով մօտենալով խմբին։ Երևի, էլի մի որ և է թէօրիա ձեզ հանգիստ չի թողնում։

Պէտք է ասած, որ ընկերները Բարգամեանին վերջին ժամանակ աւելի էին յարգում և ընտրել էին նրան երկու ընկերութեան վարչութիւնների անդամ։

Մի քանիսը նոյն իսկ սկսել էին արդէն չաղոքրոքել նրան, ակամայ ենթարկվելով նրա օրից օր աչքի ընկնող հասարակական դիրքի ազդեցութեանը։

—Նստիր,—ասացին մի քանիսը, քաղցր ժպտալով,—հետաքրքրական է քո կարծիքն էլ իմանալ։

—Հասկացայ. դուք խօսում էք Զուխա-Դեղուկի դեպքի մասին։ Հա՛, պարոններ, դուք այստեղ վիճեցէք, իսկ տեսէք մարդիկ այնտեղ լինչեր են անում։

Նա հանեց ծոցից մի ինչ-որ լրագիր և, տալով Գալումեանին, աւելացրեց.

—Կարդա բարձր ձայնով, որ ամենքն էլ լսենան։

Բոլորը թողին վիճաբանութիւնն և շրջապատեցին Գալուստեանին։ Լեզուագէտն սկսեց կարդալ բնագէտի ցոյց տուածը։ Դա մի թղթակցութիւն էր, գրված ռուս-պարսկական սահմանագլխից։ Նկարագրված էր քուրդ աւազակների և հայ գիւղացիների մէջ տեղի ունեցած մի կռիւ։ Քուրդ աւազակապետը կամեցել է առևանգել մի աղջիկ։ Հայերը դիմադրել են։ Սպանվել են մի քանի քուրդեր և մի քանի գիւղացիներ։

—Է՜հ, սովորական դէպքեր են,—ընդհատեց լսողներից մէկը։

—Լսիր մինչև վերջը,—նկատեց Բարգամեանը բարկացած ձայնով։

Կռիւը նկարագրելուց յետոյ թղթակիցը խօսում էր մի հայ վարժապետի մասին։ Վէրջինը նկարագրված էր իբրև մի հազուագիւտ մարդ։ Շատ ժամանակ չէ նա յայտնվել է այդ տեղերում և կարճ միջոցում այնքան գործ է կատարել, որ ժողովուրդն սկսել է պաշտել նրան։ Նա ուսումնարան է բաց անել տալիս ուր չկայ, միութիւն և հաշտութիւն է քարոզում ուր չկայ։ Նա, իւր կեանքը վտանգի ենթարկելով, առաջ է ընկնում և աւազակներից հալածուածներին պաշտպանում։

Թղթակցութիւնը վերջանում էր հետևեալ խօսքերով. «մանրամասն տեղեկութիւնները խորէնի մասին ուրիշ անգամ կըգրեմ։ Առ այժմ չըգիտեմ որտեղ է ծնվել և կրթվել այս հազուագիւտ մարդը, որ տակաւին երիտասարդ է»։

Թղթակցութիւնը խոր տպաւորութիւն գործեց բոլոր լսողների վրայ։ Ամենքի սրտերը րոպէաբար



յուզվեցին, նրանց երակներում խաղաց երիտասարդական արիւնը։

Փառասիրութեան զգացումը ամենից աւելի հաճակել էր Բարգամեանի հոգին։ Մտքում նա նախանձ էր երիտասարդի վայելած հեղինակութեանը։ Խստադատ «Պետրովեցը» գոռոզ եղանակով նկատեց.

—Թէև ես սէր չունիմ դէպի վարժապետական կոչումը, բայց այդպիսի վարժապետ արժէ լինել։

—Նախանձելի է, նախանձելի այդ մարդը,—ասացին մի քանիսը։

Այդ օրուանից Խորէնի անունը յաճախ կրկնվում էր երիտասարդների շրջանում։ Լրագրները նոր-նոր լուրեր էին հաղորդում նրա մասին։ Շուտով ամբողջ երիտասարդութիւնը սկսեց հեռուից յարգել, սիրել և մինչև անգամ պարծենալ նրա անունով։

Բնագէտ — տեսուչ — հասարակական գործիչ — ծայրայեղ հայրենասէր Բարգամեանը առէպ առէպ դատափետում էր բոլոր «ֆրազեօրներին», բոլոր «պոռոտախօսներին», բոլոր «խամաճիկներին», բոլոր «մտքի երկչոտներին», որ միայն իրանց անձի մասին էին մըտածում։ Եւ այդ ժամանակ գրեթէ միշտ կրկնում էր.

—Եթէ ձեզանից ամէն մէկը մոռանայ իր «ես»ը այնպէս, ինչպէս այն մարդը, այն ժամանակ...

## IV

Մի օր լեզուագէտ Գալուստեանը գնաց իւր ընկերներից մէկի տունը, ուր ժողովված էին մի քանի երիտասարդներ։ Ներս մտաւ թէ չէ՝ նա գոչեց.

—Կարդացի՛ր էք, պարոններ։

—Ի՞նչ։

—Բանից դուրս է գալիս, որ Խորհրդը ռուսահայ է։

—Ռուսահա՛յ,—գոչեցին բոլորը միասին, կարծես, մի տեսակ ուրախութիւն զգալով։

—Այո՛, ռուսահայ է, բայց յայտնի չէ որտեղացի է։

Այնուհետև Խորհրդը սկսեց աւելի հետաքրքրել նրանց։ Եւ ամեն մի լուր նրա մասին կլանում էին ագահութեամբ։

Մի աշնանային երեկոյ Բարդամեանը ֆիզիօնոմիստ բժշկի հետ թև թևի տուած զբօսնում էին Գալավինակի պրոսպեկտի վրայ։ Նրանց մօտեցաւ Գալումեանը։ Նա սաստիկ չփոթված էր երևում։ Առանց բարևելու նա կանգ առաւ ընկերների առջև և, ձեռները կոշտին քաշ գցելով, ասաց.

—Մի՞թէ կարող է աշխարհի երեսին այդպիսի բան պատահել։

—Ի՞նչ է, ինչ է պատահել,—հարցրին ընկերները զարմացած։

—Ո՛չ, դուք այն ասացէք, մեր գործում կարող են հրաշքներ տեղի ունենալ։

—Վերջապէս, պէ՞տք է ասես, թէ՞ չէ...

—Գնանք մի տեղ նստենք, կըպատմեմ։ Այդ զրոյցանալի է, միանգամայն զարմանալի։ Ես չեմ հաւատում, չեմ ուզում հաւատալ և չեմ կարող հաւատալ։

«Ֆիզիօնոմիստ» բժիշկը ընկերներին հրաւիրեց իր մօտ թէյի։ Ճանապարհին նրանք հանդիպեցին ուրիշ երեք ընկերների, և վեց հոգի միասին ուղևորվեցին բժշկի զարդարուն բնակարանը, որ շատ հեռու չէր։ Գալումեանը լուռ էր. պարզ էր, որ նրա ասելիքը մի շատ նշանաւոր բան էր։ Նա զսպում էր իրան



և այդպիսով աւելի գրգռում ընկերների հետաքրքրութիւնը։

Հէնց որ մտան բժշկի սենեակը, լեզուապէտը բարձրաձայն գոչեց.

—Պարոննե՛ր, երևակայել կարո՞ղ էք, թէ ով է մեր պաշտած Խորհրդը։

—Ո՞վ է, ո՞վ է,—կրկնեցին ամեն կողմից։

—Ամենքից հալածված, ամենքից արհամարհված, եսամոլ, վախկոտ համարված Պետրոս Մարդանեանը։

Բժիշկը բարձրաձայն ծիծաղեց։ Բարդամեանը հեգնօրէն ժպտաց, Գալումեանի ասածը մի չիմար կատակ համարելով։ Միւսները զարմացած նայում էին այդ անհաւատալի լուրը հաղորդողի երեսին։

—Այո՛, նա ինքն է, ուրիշ ոչ ոք, ահա ձեզ փաստերը։

Այս ասելով, Գալումեանը գրպանից հանեց և հանդիսաւոր կերպով սեղանի վրայ դրեց երկու նամակ։

—Այս նամակներից մէկը ստացել է իմ համաքաղաքացի Ալթունեանը։ Հեղինակը նրա հաւատարիմ ընկերներից մէկն է և նրա հետ աշակերտել է Ներսիսեան դպրոցում։ Միւսը գրված է Պետրոսի ձեռքով իւր հարազատ եղբօրը։ Այս երկրորդ նամակն էլ ստացվել է Ալթունեանի ձեռքով։ Ես խնդրեցի ու վերցրի Պետրոսի եղբօրից, որ ձեզ ցոյց տամ։ Ուզում էք—կարդացէք։

Պետրոսի նամակը համառօտ էր։ Նա իւր եղբօրից խնդրում էր ծնողների մասին տեղեկութիւն հաղորդել և վերջը մի քանի տող աւելացնում իւր մասին։ Նամակի բովանդակութիւնից երևում էր, որ այն առաջինը չէր, դարձեալ մի քանի նամակներ էր գրել,

որոնք տեղ չէին հասել։

Միւս նամակը շատ ընդարձակ էր և մեծ մասամբ վերաբերվում էր Խորէնին։ Հեղինակը նկարագրում էր մի քանի սրտաշարժ դէպքեր, ուր Խորէնը ցոյց էր տուել հերոսի քաջագործութիւններ։

Փաստն անհերքելի էր։ Այսօրուայ հերոսը մի քանի տարի առաջ իւր հայրենիքում իւր ընկերներից հալածված և արհամարհված երիտասարդն էր։

—Ի՞նչ կասէք, պարոններ, հիմա էլ չէք հաւատում,—գոչեց Գալումեանը։

Բնագէտ Բարգամեանը և ֆիզիօնօմիստ բժիշկը լուռ էին։

—Զարմանալի է, շատ զարմանալի,—արտասանեցին միւս երեք երիտասարդները։

—Իսկ դո՞ւք ինչ կասէք, պարոններ,—դարձաւ Գալումեանը բժշկին և Բարգամեանին։

—Ըղձիտեմ,—պատասխանեց բժիշկը,—ես աշխատում եմ յիշել նրա դէմքը։

—Ես հրաշքներին հաւատալու ընդունակութիւն չունիմ,—աւելացրեց Բարգամեանը,—այստեղ մի թիւրիմացութիւն կայ։

Հազիւ նա արտասանել էր այդ խօսքը, երբ ներս մտաւ մի ուրիշ երիտասարդ։

—Ա՜հ, պարոններ,—գոչեց նորեկը,—այդ շատ լաւ է, որ բոլորդ այստեղ էք։ Նորութիւն։ Ձեզ յայտնի է, թէ ինչպէս յարգում եմ ես Խորէնին։ Վաղուց ցանկանում էի նրա լուսանկարն ունենալ։ Այժմ փափագս կատարվեց։ Այն կողմերից եկել է մի թափառական տաճկահայ լուսանկարիչ և հետը բերել է բոլոր դործիչների լուսանկարները։ Պատահաբար ես նրա



մօտ նայում էի լուսանկարները և ահա ինչ ընկաւ ձեռս։ Լուսանկարիչը պատմում է, որ նա հազիւ հազ կարողացել է համոզել «Խորէն վարդապետին», որ թողնի իւր լուսանկարը հանելու։ Ճանաչում էք։

—Պետրոսն է,—գոչեց Բարգամեանը, առաջինը վերցնելով լուսանկարը։

Այո, Պետրոսն էր։ Գլուխը համեստ պահած, ձեռները ծնկների վրայ դրած, հեզ և, մի և նոյն ժամանակ, եռանդով լի աչքերով հալածվածը նայում էր նախկին հալածողի աչքերին։ Նրա նիհար այտերի, սեղմված շրթունքների և մտախոհ ճակատի վրայ Բարգամեանը կարդաց խորին յանդիմանութեան հետ և վեհանձն թողութիւն։ Ներքին յուզմունքից շրթունքը կրծոտելով, նա լուսանկարը տուեց ուրիշներին։

Ամենից ուշադիր և երկար նայեց ֆիզիօնօմիստ բժիշկը։

—Այո, Պետրոսն է,—ասաց նա, վերջապէս,—բայց նայեցէք ճակատի և բերանի կնճիռներին, այս մարդու միտքը վերջին ժամանակ աշխատել է։

Մի քանի վայրկեան բոլորը չփոթված նայում էին իրարու երեսին։ Ամենքը հալածել էին նրան, ամենքը մի-մի քար էին կպցրել նրան, ամենքը մի-մի բուռն ցեխ էին դցել նրա երեսին, ամենքը զզում էին իրանց մեղքը և ամենքի համար զզալի էր խղճի խայթոցը։

—Գիտէք, պարոններ,—ընդհատեց լռութիւնը Նրանցից մէկը,—ես թէև նրան հալածում էի, բայց սրտիս խորքում չէի ատում։ Զգում էի, որ նրա մէջ մի լաւ բան կայ թագնված։

—Խոստովանվում եմ, ես էլ,—աւելացրեց երկ-

ղորդը։

—Յիշում ես,—դարձաւ լուսանկար բերողը խըմտադատ «Պետրովեցին»,—չը գիտեմ քեզ թէ ում մի անգամ ասել եմ, որ Պետրոս Մարդանեանն ամենքից բարձր է։

—Ես չեմ յիշում քո ասածը,—պատասխանեց «Պետրովեցը»,—բայց եթէ ես նրան մի քանի վիրաւորական խօսք ասել եմ, Պետերի ուսանողների խօսքովըն եմ ասել։

Մէջ մտաւ ֆիլիօնօմիստ բժիշկը, որ տակաւին չփոթված նայում էր լուսանկարին, և ասաց.

—Պարոննեը, մենք Պետրոս Մարդանեանին ածել ենք հէնց այնպէս, ուրիշներին հետևելով։ Ամենից խիստ հալածել են նրան այ, սրանք։

Նա ցոյց տուեց նախ Գալուստեանին, ապա Բարդամեանին։ Լեզուադէտը դլուխը գցեց կրծքին և լուռ մնաց։ Իսկ բնագէտ-տեսուչը, մի կերպ զսպելով իւր հոգեկան խռովութիւնն, ասաց.

—Այո, ես էլ նրան հալածել եմ, բայց ազնիւ նպատակով։ Հաստատ իմացէք, որ հէնց մեր հալածանքն է սոխել նրան այդպէս փոխվելու։

Եւ այս խօսքերով նա արդարացրած համարեց իւր խիղճը։

Թիֆլիս, 1892 թ.

---

# ԸՐՏԻՍՏ

Նուէր տիկ. Ե. Գ. Ռուզ...նին

Հինգ ամիս էր ընդամենը Օդեսայում էի, չորրորդ անգամ փոխեցի սենեակս։ Փոքր ի շատէ մեծ քաղաքում բնակվող մենակեցի համար մի առանձին հաճոյք է տէպ-տէպ կացարան փոխելը։ Անցնելով մի թաղից միւսը, կարծում ես մի երկրից միւսն անցար։ Նոր հարևանութիւն, նոր միջավայր, երբեմն այլ կենցաղով ու ոգով։

Այս անգամ պիտի բնակվէի քաղաքի աղմկալի փողոցներից մինում, հինգյարկանի մի տան երրորդ յարկում։ Տանտիրուհիս իտալուհի էր, դէր, առողջ, ամրակազմ մի այրի մօտ յիսուն տարեկան։ Նրա ամուսինն եղել էր իտալական օպերայի յուշարար, շատ վաղուց հայրենիքից տեղափոխված Ռուսաստան։ Մեռնելով, կնոջ ու միակ դստեր համար թողել էր իբրև ժառանգութիւն հին նօտաների մի մեծ կապոց և իտալացի արտիստների ծանօթութիւնը։ Այրին, ապրելու ուրիշ միջոց չունենալով, պարապում էր սենեակներ վարձու տալով։

Հէնց առաջին օրն ես ծանօթացայ հարևաններիս հետ։ Այդ ինձ համար նոր և բաւական հետաքրքրական շրջան էր։ Նա բաղկացած էր մեծ մասամբ ի-

տալացիներից։ Կար և՛ մի ուռս ուսանող ու մի հրէու-հի առաջնաբոյժ, բաւական դեղեցիկ, թէև ոչ այնքան էլ թարմ։

Կենտրոնը կազմում էր տանտիրուհու դուստրը— չիկահեր, փղոսկրի պէս վայլուն, մաքուր առաջներով և դեղեցիկ աչքերով քսան տարեկան Լուիզան։ Նա երդում էր, ունէր զօրեղ ու անոյշ ձայն, պատրաստվում էր բեմին նուիրվելու։ Գիտէր նուագել դաշնամուր, երաժշտութեան դասեր էր տալիս, վող ժողովում, որ գնայ Իտալիա ձայնը մշակելու։

Առաջին օրն անծանօթ չըլնում ղեացի սովորական անյարմարութիւն, երկրորդ օրն ընտելացայ, իսկ մի շաբաթ անցած՝ բաւական բարեկամացայ բոլորի հետ։ Մենք ճաշում էինք մի և նոյն սենեակում, միաժամանակ, մի և նոյն սեղանի քով։ Երկու ժամից սկսած մինչև երեկոյեան չորս-հինգ ժամը ծիծաղ, երգ, նուագում, պար ու սրախօսութիւններ խառնվում էին միմեանց և ջերմացնում տարբեր ազգերի ու դաւանութիւնների պատկանող մարդկանց բարեկամական մթնոլորտը։

Մի օր ճաշից յետոյ Լուիզան նստեց դաշնամուրի քով և սկսեց նուագել ինչ-որ վայլուն։ Բասո-Կոնտաո Չելլինին գրկեց Կոնտեսսինա Լուկրեցիա Կաֆարելլին ու սկսեց պարել։ Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ, որովհետև իրաւ որ այդ մի զուարճալի զոյգ էր. Չելլինին խիստ նիհար էր և շատ բարձրահասակ, Լուկրեցիա Կաֆարելլին, ընդհակառակը, խիստ գեր էր և կարճահասակ։ Լուիզան նուագելով հանդերձ գեղեցիկ գլուխը ձգել էր յետ և անդուլ քրքջում էր, լեցնելով սենեակը իր անուշ ձայնի հիւթալի հնչիւնները։



Զուարճութեան տաք միջոցին դռների մէջ նկարվեց ինձ համար մի անծանօթ կերպարանք։ Ոչ ոք առաջին պահ չընկատեց նրան, բացի ինձանից, որ նստած էի դռների մօտ։ Անծանօթը հէնց առաջին վայրկենից դրաւեց ուշադրութիւնս։ Ես դիտեցի նրան։ Մօտ 16—17 տարեկան մի պատանի էր նիհար, դունատ դէմքով, կուրծքը փոքր ինչ ներս ընկած։ Հագած էր մուգ-կապտագոյն գօտեւոր կարճ բաճկոն, որի կուրծքը զարդարված էր ասրեայ խաչաձև ծոպերով և նոյն գոյնի նեղ վարտիք։ Ձեռին բռնած էր մի կակուղ կանաչագոյն գլխարկ փետուրով զարդարված, նման այն գլխարկներին, որ գնում են թափառաշրջիկ յոյն անդրիավաճառները կամ իտալացի երաժիշտները։ Նրա դէմքի գծերը կանոնաւոր էին ու գրաւիչ։ Նրա աչքերն ունէին ինչ-որ մելամաղձիկ արտայայտութիւն։ Դա այն երջանիկ դէմքերից էր, որոնք հէնց առաջին հայեացքով մարդու սրտում շարժում են համակրութեան զգացում։

—Բօն ջուրնօ,—ասաց նա, գլուխ տալով։

—Օհօ, արտիստը,—գոչեց ամենքից առաջ բասօ բուֆո Կավալլարօն, որ մի բարեսիրտ մարդ էր մօտ երեսուն ու հինգ տարեկան։

—Արտիստը, արտիստը,—կրկնեցին միւսները։

Նոյն վայրկենին պար, նուագում, ծիծաղ ընդհատվեցին և բոլորի հայեացքները դարձան դէպի պատանին։

—Ո՞րտեղ էիր, այդքան ժամանակ չէիր երեւում,—հարցրեց Կավալլարօն։

—Սպասեցէք, նա ախուր է,—գոչեց Լուիզան և

ժօտեցաւ պատանուն,—էլի ինչ է պատահել, ինչու՞ ներս չես մտնում։

—Ո՞րտեղ է սենեօրա Ստեֆանիան,—հարցրեց պատանին։

Նրա ձայնը յուզված էր, դողում էր։ Կար այդ ձայնի մէջ մի արտաշարժ շեշտ, որ արտայայտում էր հեզուԹեան հետ և Թախիծ։

—Ա՜ա, հասկացայ,—ասաց Լուիզան,—էլի մայրդ, երևի, հիւանդ է։ Խե՜ղճ պատանի, դու սլանում ես երկինք, նա կապած է երկրին...

—Սենեօրինա Լուիզա, ես ձեզ խնդրում եմ ինձ չընդհատել,—գոչեց պատանին վիրաւորված,—սենեօրա Ստեֆանիան այստեղ չէ։

—Մայրս խոհանոցումն է։

Պատանին գլուխ տուեց չնորհալի ձևով ու հեռացաւ։

—Նա չափազանց ախուր էր,—ասաց Կավալլարօն,—անշուշտ մայրն այս անգամ ծանր հիւանդ է։

—Ձեմ կարծում,—նկատեց Լուիզան,—այդ կինը միշտ հիւանդանում է որդուն տանջելու համար։ Խե՜ղճ պատանի...

—Խե՜ղճ,—կրկնեց ռուս ուսանողը կծու հեգնուԹեամբ,—բայց նա չի ուզում, որ դուք նրան խղճաք, սինեօրինա Լուիզա։ Ցեսա՛ք, ինչպէս վիրաւորվեց։

—Նա հպարտ է ինչպէս սպանական դրանդ,—ասաց Կավալլարօն, իւր բարի աչքերը լԹանձր ունքերի տակից դարձնելով դէպի ինձ,—և հպարտուԹիւնը սազում է նրա հեզուԹեանը։ Սինեօր, նրա կերպարանքն ինձ միշտ յիշեցնում է իմ եղբօրը։ Տարտաւար չուԹակահար էր, մեռաւ քսան տարեկան։



ասկում Թևերիս վրայ։

—Դուք ճանաչում էք Լևոնին,—դիմեց ինձ օբիորդ Ռախան—հրէուհի աստուածաբոյժը։—Ո՞չ երեւակայեցէք, հարևաններ, պարոնը մեր արտիստին չի ճանաչում։

—Օ՜, այդ աններելի է,—գոչեցին Լուիզան ու Լուկրեցիա Կաֆարելլին։

—Իմ կարծիքով,—ասաց Կավալլարօն,—ով զարուեստասէր է, իրաւունք չունի Լևոնին չճանաչելու։ Նա իսկական արտիստ է, այո՛, հոգով, սրտով, արիւնով, ամբողջ էութեամբ արտիստ։

Իմ հետաքրքրութիւնը բոլորովին գրգռվեց։ Ո՞վ է, վերջապէս, այդ մանուկը, որ այդքան գրաւել է հարևանների համակրանքը։

—Եթէ կամենում էք, իսկոյն կը ծանօթանաք,—ասաց Լուիզան,—արժէ այցելել նրան իր ապարանքում։ Գիտէք ինչ,—դարձաւ նա ընդհանուրին,—վատ չի լինիլ, եթէ խմբովին գնանք մեր արտիստի հիւանդ մօրը տեսնելու։ Այո՛, վատ չի լինիլ... Ես գնում եմ, ով ուզում է, թո՛ղ հետևէ ինձ։

Այս ասելով, նա անմիջապէս դիմեց դէպի դուռը։ Բացի ուսանողից և երկրորդական բարիտոն Բօրելլիից, բոլորս հետևեցինք նրան, նոյն իսկ տատարմին Լուկրեցիա Կաֆարելլին։

Արտիստը բնակվում էր նոյն տան վերին յարկում։ Լուիզան մեզ առաջնորդեց դէպի գլխաւոր սանդուխտը, բարձրացանք չորրորդ յարկը։ Այնտեղից նեղ, կեղտոտ, փայտեայ սանդուխտով հասանք հինգերորդ յարկը, մտանք մի մթին անկիւն։ Անմիջապէս խփեց մեր քթին ճարպի մէջ տապակվող մսի անախորժ հոտը։

Լուիզան կանգ առաւ մէկ թևանի մի ցածր դռան առջև։

—Սինեօր Զելլինի,—ասաց նա,—ձեզ համար պիտի առաստաղը մի փուտ բարձրացնել։

—Իսկ սինեօրինա Կաֆարելլիի համար դռները պիտի երկու փուտ լայնացնել,—հեգնեց Զելլինին կօնտրալտօի մարմնի հաստութիւնը, գրկելով իւր երկայն թևով նրա իրանը։

Մենք մտանք մի սենեակ, որ մի փոքր մեծ էր, քան մի մեծ հաւաբուն։ Այնտեղ, մութ անկիւնում, պատի տակ երևում էր ինչ-որ բան, նման անկողնակալի թէ թախտի—չըգիտեմ. սինեօրա Ստեֆանիայի յաղթանդամ մարմինը թագցնում էր նրան իմ աչքից։ Մի քայլ առաջ գնալով, տեսայ հնամաշ վերմակի տակ պառկած մի կնոջ դէմք։ Նրա ճակատը կապած էր սև թաշկինակով, աչքերը յառած առաստաղին։ Նա մընդմընդում էր ու ծանր հառաչում։ Նրա ոտների կողմում կանգնած էր «արաիատը»։ Ըստ երևոյթին, նրա միտքը կլանված էր կամ մօր հիւանդութեամբ կամ մի ուրիշ հոգսով, որովհետև մեր երևալը աննկատելի մնաց նրա համար։

—Դէ լաւ, քիչ անքունքա,—ասում էր սինեօրա Ստեֆանիան հիւանդին,—խօմ չես մեռնում։ Սովորական հիւանդութիւնդ է, էլի վաղը կանցնի։ Բա, բա, բա, տես, մօտդ ինչ պատուաւոր հիւրեր են եկել։ Համարեա իմ բոլոր կավալէրներն ու դամերը։ Տղայ,—դարձաւ նա Լևոնին,—երևի, այդ դու ես անհանգստացրել մարդկանց։

Պատանին նայեց մեզ, չափազանց չփոթվեց և շտապեց սենեակի ընդամենը մի զոյգ չարդված ա-



թոռներն առաջարկել եօթ հիւրերից չըգիտէր ո՛ր մէկին։

—Պարոնը բժի՞շկ է,—հարցրեց հիւանդը, երբ տեսաւ ինձ։

—Բժիշկ չէ,—պատասխանեց սինեօրա Ստեֆանիան,—բայց, երևի, ցաւդ բժշկից լաւ կըհասկանայ։ Ո՞վ հայրենակիցներից է...

—Հմ՛յ,—դոչեց հիւանդը զարմանալով թէ ուրախանալով չըգիտեմ և, գլուխը դանդաղ բարձրացնելով, նստեց անկողնում։

—Հմ՛յ,—կրկնեցի ես զարմացած, որովհետև ինչ աղգի, ասես ապաստում էի այդ միջավայրում, բացի հայից։

—Այո՛,—ասաց օրիորդ Ռախաան,—արտիստը ձեր հայրենակիցն է. զարմանալի է, որ չիմացաք հէնց առաջին տեսնելուց։

—Ո՞րտեղացի էք,—հարցրեց հիւանդը,—խօմ Բեսարաբիայից չէ՞ք։ Ո՞չ։ Օհ, այդ շատ լաւ է, շատ լաւ։ Օ՛ֆ օֆ օֆ, Բեսարաբիայի հայերը Աստուած չունին, գաղաններ են, չեն ուզում ցաւս հասկանալ։ Տէր Աստուած, ոչ ոք ցաւս չի հասկանում, ոչ ոք...

—Էլի մի սկսիր հին երգդ,—դոչեց սինեօրա Ստեֆանիան,—բաւական է։

—Ո՛չ, Ստեֆանիա, չեմ կարող լռել, սիրտս այրվում է։ Դու էլ մայր ես, բայց զաւակդ տղայ չէ։ Օ՛հ, երանի իմն էլ աղջիկ լինէր։ Զըգիտես, ինչ է անում նա։ Հօր նման տանջում է ինձ։ Պարոն,—դարձաւ ինձ,—այդ փչացածն իմ միակ տղան է, հասկանո՞ւմ էք, միակ, ուրիշ զաւակ չունիմ։ Աստուած սիրէք, խեղճի բերէք նրան։ Նա հօր ճանապարհով է գնում...

—Սովորական գանգատներ են,—չընչաց ականջիս Լուիզան,—ուշադրութիւն մի դարձնէք։

Ես նայեցի Լևոնին։ Ամաչելուց նա երեսը դարձրել էր պատին, մեզ չէր նայում։

Լուիզան մօտեցաւ նրան, բռնեց ձեռներից, երեսը դարձրեց իւր կողմը, ուղիղ նայեց աչքերին բարեկամական—ոչ, աւելի—սիրող քրոջ քնքոյշ հայեացքով։ Ինձ թւաց, որ այդ հայեացքը թափանցեց մինչև Լևոնի հոգու խորքը։ Եւ ՝ում հոգու խորքը չէր թափանցել այն։ Լևոնը զուարթացաւ և երախտագիտութեան զգացումով լեցուն աչքերով նայեց իտալուհու երեսին։

—Եթէ օրինաւոր որդի լինէը,—շարունակեց հիւանդը,—ձեզ նման պատուաւոր հիւրերին այսօր այս խոզաբնում կընդունէր։ Տեսնում էք, աթոռներ էլ չունինք։ Անամօթ, ինչ ես ցցվել փայտի պէս։ Չես տեսնում հիւրերիս։

Լևոնը կրկին անգամ սենեակի մի զոյգ աթոռներն առաջարկեց մեզ։ Նստել անկարելի էր—այդ փոքրիկ սենեակում եօթ-ութ հոգի կանգնել միայն կարող էին։ Լուկրեցիա Կաֆարելլին երկար չդիմացաւ օդի սակաւութեանը, դուրս գնաց։ Զելլինին հետևեց նրան, ասելով, թէ «արտիստի» մայրը մեռնելու ախորժակ չունի դեռ, կարիք չկար անհանգստանալու։

Նրանց դուրս գնալուց յետոյ սենեակն այնչափ գոնէ ազատվեց, որ ես կարող էի դիտել չուրջս։ Այն, ինչ-որ տեսայ, ինձ հաճելի զարմացում պատճառեց։ Մի անկիւնում կախած էին աշխարհիս անուանի եբաժշտապետների, նուագիչների, երգիչների ու երգչուհիների լուսանկարները հովհարի ձևով միմեանց միացրած։ Միւս անկիւնում դրված էր մի փոքրիկ դրասեղան, ծանրաբեռնված գանազան էժանագին դեղարուեստական իրերով։ Այնտեղ տեսայ Բեթհովենի, Մօցարտի, Շէքսպիրի և Վագների կաւեայ կիսանդրիները, ապիւսի գոյնով, մի հատ խեցեղէն շուն, մի կոտրված սրինգ և ուրիշ այդպիսի պարագաներ։ Սեղանի առաջին պատին կախած էին մի կիթառ, մի մանդօլինա և մի ինչ-որ թաւորնական զգեստ նման Ռիգօլետտոի հագուստին։ Ամենահետաքրքրականը մի նկար էր պօլիտրայի վրայ, որ ներկայացնում էր երկու պատանիների մենամարտութիւնը բռունցքներով մի փողոցային երգչուհու համար։ Աղջիկն ընկել էր մէջտեղ գզգզված մազերով և աշխատում էր բաժանել ախոյեաններին...

—Տեսնում էք,—չընչաց ականջիս կավալլարօն,—երաժշտութիւն, նկարչութիւն, պօէզիա, ոչինչ չի մոռացված։

Այդ միջոցին հիւանդը չարունակում էր գանգատվել.

—Ահա երեք օր է, առաւօտներն էլ երեսը չեմ տեսնում։ Նա չի քնում, Սաէֆանիա, չի քնում։ Չէ՞ որ կարող է հիւանդ ՝ալ, յետոյ ես ինչ անեմ, ով կըպահի ինձ։ Դիշեր-ցերեկ թատրոններումն է։ Հօր ցաւը որդուն է անցել։ Անիծվի նրա գերեզմանը, օրը սևացրեց։

—Է՛լի մխիթարի գանգատները,—արտասանեց Լուիգան,—և ինչպէս չի յոգնում այդ կինը։ Եսամբ...

Արդարև, հիւանդի աչքերի մէջ երևում էր եսամոլի հոգի, թէև գեղեցիկ էին այդ աչքերն և դեռ

բաւական թարմ մօտ յիսուն տարեկան կնոջ թաղամաճ դէմքի վրայ։

Հրաժեշտ տալիս նկատեցի մի բան. Կավալլարօն թագուն Լևոնի ձեռի ափի մէջ սեղմում էր մի ոսկեդրամ, պատանին հրաժարվում էր ընդունել։ Այն ժամանակ բարիսօնը քայլերը դանդաղեցրեց, ծնաց սենեակում, թոյլ տալով, որ Լևոնը մեզ ուղեկցի։

Սինեօրա Սահֆանեան համառօտ պատմեց Լևոնի մասին հետևեալը։—Նրա հայրը եղել է թատրոնական վարսավիր և չափազանց գեղարուեստասէր։ Համեստ, գլուխը քաշ արհեստաւորը յանկարծ անձնատուր է լինում հարբեցողութեան կործանիչ ախտին և ոչ առանց պատճառի։ Պարզվում է, որ նա անյոյս սիրահարված է մի երգչուհու վրայ։ Կուլիսների եռուզում չուառով նա դառնում է ընդհանուր կատակների ու ծաղրի առարկայ։ Արտիստներից սկսած մինչև վերջին թատրոնական ծառան ծիծաղում են նրա յանդուգն զգացման վրայ դէպի մի գեղեցկուհի, որի երկպագուների թուում անուանում են նաև տեղական քաղաքագլուխ, յայտնի միլիոնատէր ու բարեգործ յոյն Մարազլիին...

Հալածանքն ու նեղքին վիշտը նեղդործում են վարսավիրի վրայ այնչափ, որ սրտի դառնութիւնն օղու մէջ անգամ չի կարողանում խեղդել։ Մի օր նա ծեծում է ռեժիսօրին, որ ծաղրելիս է լինում նրա չինած մի կեղծամը, անուանելով նրան «սրիկայ»։ Նըրան զրկում են թատրոնական վարսավիրի պաշտօնից։ Այդ ժամանակից նա դառնում է օղու և փողոցների անդառնալի սեպհականութիւն։ Եւ մի երեկոյ ոստիկանները գտնում են նրան մի ծառի տակ, ձիւնի մէջ



թաւալված, բերում են տուն։ Երեք օր չանցած՝ մեռնում է տիֆից, թողնելով կնոջն ու զաւակին ճակատագրի հաճոյքին։

Այրին, ամուսնու արհեստից զրկված ու տանջված, ութ տարեկան Լևոնին յանձնում է մի աստղագործի և ինքը սկսում ուրիշների համար ճերմակեղէն կարել։ Երկու ամիս չանցած՝ մանուկն արհեստանոցից փախչում է ուսումնարան։ Բարի մարդիկ տալիս են նրա ուսումնավարձը։ Նա սովորում է դըպրել-կարդալը։ Այրին յանձնում է նրան հագուստեղէնի վաճառատուն։ Մանուկը չի ծնում այնտեղ։ Մի ամսից ձեռք մղում է նրան դէպի թատրոն։ Նա դառնում է աֆիշներ բաժանող օրական յիսուն կոպեկով և թատրոնների վերնայարկը բարձրանալու իրաւունքով։

Անցնում է կուլիսների եռուզ, կամաց-կամաց ծանօթանում դերասանական աշխարհի հետ։ Այժմ բոլոր արտիստները ճանաչում են նրան, բոլորին նա ծառայութիւններ է անում և բոլորը սիրում են նրան իր հեզութեան և աշխուժութեան համար։ Նա ոչ մի նեղ կայացում բաց չի թողնում, մանաւանդ իտալական խմբի ներկայացումները։ Նա ցերեկներն էլ թատրոնում է կամ նրա շուրջը։

—Սինեօր, կըզպարմանաք եթէ ասեմ, որ այժմ նա երբեմն ստեղծում է նորակ անծանօթ արտիստի համար փառք մեր քաղաքում,—շարունակեց մօր փոխարէն Լուիզան։—Այո, այո, սինեօր Զեպլինի, մի հատակէք, այս ճիշդ է։ Նա ունի բազմաթիւ յոյն ու հրէայ ընկերներ, որոնք զարմանալի հաւատ ունին դէպի նրա ճաշակը և սիրում են նրան։ Դրանք կա-

կեօրներ չեն, ո՛չ, այլ թատերասէրներ։ Զըգիտեմ, գուցէ նրանք կաշառուում են, բայց Լևոնին—ո՛չ, երբէք չի կարելի կաշառել։ Սինեօր Կավալլարօ, ճի՞շդ եմ ասում թէ ոչ։

—Նա աղնիւ է որպէս նորածին և ղեայուն որպէս քնարի լար,—արտասանեց բարիտոնը։ Նա իմ հանդուցեալ եղբօր տիպարն է...

—Բայց ինչպէս է առեղծում անծանօթ արտիստի համար փառք,—հետաքրքրվեցի ես։

—Առաջին ծափահարութեամբ,—պատասխանեց Կավալլարօն։

—Չեմ հասկանում,—ասացի ես։

—Սինեօր, երևի, չըգիտէք ինչ ասել է արտիստի համար առաջին ծափն անծանօթ քաղաքում։—Շատ բան, երբեմն ամեն ինչ։ Դուք թատերասէր էք, նկատած կըլինէք մի երևոյթ։ Թատրոնական սրահում նստող հասարակութիւնը հազիւ է վստահանում առաջին ծափը տալ անծանօթ արտիստին։ Շատ անգամ, հոդով հիացած երգչի երգով, նա ամաչում է իւր հիացումը արտայայտել. կարող են նրան անճաշակ համարել։ Բայց ահա օդնութեան է հասնում Լևոնը։ Նա ազատ է հասարակական նախապաշարումներից, չի քաշվում առաջին ծափը տալ։ Խումբը հետևում է նրա օրինակին։ Այն ժամանակ հասարակութիւնը նոյնպէս ծափահարում է։ Միւս օրը լրագիրները գրում են այդ ծափահարութիւնների մասին, և ահա անծանօթ արտիստի աշողութիւնը ապահով է։

—Եթէ, ի հարկէ, արտիստը շնորք ունի,—աւելացրեց Զելլինին։

—Այո՛, ի հարկէ։



—Բայց քո Լևոնը կարող է շատ անգամ անշնորքին էլ տալ առաջին ծափը,—նկատեց Բօրելլին։

—Ներողութիւն, — պատասխանեց Կավալլարօն, հեգնօրէն ժպտալով,—մեր խմբի վերաբերմամբ դուռն նա դեռ այդպիսի սխալ չի գործել։

Ես գուշակեցի, որ Բօրելլին դեռ չի արժանացել Լևոնի ծափին։

Վիճաբանութիւնը գուցէ չարունակվէր, եթէ կրկին ներս չըմտներ Լևոնը։ Այս անգամ նրա դէմքը բաւական հանդիստ էր։ Նա հրաւիրեց Կավալլարօին մի անկիւն և, չչնչալով ականջին, բայց թողեց նրա դրպանը մի ոսկեդրամ։ Յետոյ իմացայ, որ մեր դուրս գալուց յետոյ նա իւր մօր բարձի տակ գտնում է այդ դրամը։ Հասկանում է, որ Կավալլարօն պիտի դրած լինի, վերցնում է, բերում, վերադարձնում տիրոջը։

—Յամառ ես, Լևոն, յամառ,—գոչեց Կավալլարօն, չիեղով պատանու դլուխը հայրական սիրով։—Դէ լաւ, մի նեղանար, նստիր, մի փոքր խօսենք։ Դու ինձ հարկէ, երէկ թատրոնում էիր։

—Էի։

—Հաւանեցի՞ր ինձ...

—Ի հարկէ։

—Ապա ինչո՞ւ երեսդ դարձնում ես ինձանից... Ա՜ա, կեղծում ես...

—Սինեօր Կավալլարօ, երէկ դուք չիոթված էիք։

—Ե՞ս. ամենևին։ Սխալվում ես։

—Ո՛չ, սինեօր, չեմ սխալվում։ Երբ հանդիսատ էք, երբէք չէք չեղվում։ Մենք ամենքս իմացանք, որ ձեզ բարկացրել են։

—Քեզ այդպէս է թւացել։ Ոչ ոք ինձ չէր բարկաց-

րել։ Ահա տեսաւր, Լևոն, ինձ դեռ լաւ չես ճանաչում։

Լևոնը նայեց Կավալլարօի աչքերին այնպիսի պարզ ու խելօք հայեացքով, որ կեղծել նրա մօտ անկարելի էր։ Կավալլարօն, ձեռը դնելով նրա ուսին, ասաց.

—Ձես սխալվում, բարեկամս, երեկ ներկայացումից մի քիչ առաջ ես խոշոր վէճ ունեցայ ռեժիսօրի հետ։

—Ո՛չ, սինեօր Կավալլարօ, ասացէք—դիրիժօրի հետ,—ուղղեց Լևոնը համարձակ։

—Դու ճրտեղից իմացար։

—«Օ՛ Կառլօ»-ն երգելիս, սինեօր Մարտինին կէս տօն բարձր վերցրեց ձեզ չեղելու համար։ Սինեօր Մարտինին բոլորի վերաբերմամբ անաչառ է, բացի իրանից։ Ռեժիսօրի պատճառով նա ձեզանից վրէժ չէր առնիլ։ Նա քինախնդիր է միայն իւր անձնական հակառակորդների դէմ։

—Լսում էք, սինեօր,—դարձաւ ինձ Կավալլարօն ոգևորված,—այս պատանու բերանով խօսում է ինքն երաժշտական բնազդումը և դիտողական ձիրքը։

Լևոնը վերկացաւ, գլուխ տուեց, շնորհակալութիւն յայտնեց մեզ մեր այցելութեան համար և շտապեց դէպի դռները։ Այլ ևս նա այնքան դրաւել էր ինձ, որ կամեցայ անպատճառ հետը խօսել։

—Հայերէն գիտէք,—հարցրի ես, երևի, հայրենասիրական ղգացումից դրդված։

—Գիտեմ։

Նա, ինչպէս և իւր մայրը, խօսում էր ռուսերէն լեզուով տաճկական արտասանութեամբ։ Իտալացիներից միայն տանտիրուհիս և նրա աղջիկը գիտէին ռուսերէն, նաև Կավալլարօն։ Միւսների հետ Լևոնը խօսում էր իտալերէն։

Մի քանի հարցեր տուեցի նրան պարզ հայերէն լեզուով։ Նա ապշած նայեց երեսիս և ժպտաց։

—Ձէս հասկանում,—դարձայ ես ռուսերէն լեզուի օգնութեանը։

—Այդ լեզուն եկեղեցական է,—խօսեց նա տաճկերէն հայերէն լեզուով,—իմ իմացած հայերէնն ահա այս լեզուն է։

Ինձ համար նորութիւն չէր Բեսարաբիայի հայերի մայրենի լեզու չիմանալը։ Բայց առաջին անգամն էի պատահում մէկին, որ տաճկերէնը հայերէն էր համարում։

Ես խնդրեցի Լևոնին այցելել ինձ շուտ-շուտ և իմ կողմից խոստացայ այցելել նրան։

Նա ինձ երկար սպասել չըտուեց։ Հետևեալ օրն իսկ եկաւ սենեակս և ուրախ-ուրախ յայտնեց, թէ մայրն արդէն առողջանում է։ Ուղիղն ասած, ես չէի հետաքրքրվում մօր վիճակով, ինձ ղբաղեցնողը որդու ճակատագիրն էր։

Երբ խօսք բաց արի թատրոնի ու երաժշտութեան մասին, պատանին կերպարանափոխվեց, ինչպէս կրակոտ սիրահար, երբ խօսվում է նրա սրտի ընտրեալի վերաբերմամբ։ Ոգևորված նկարագրեց իւր լսած երևելի երգիչների ու նուագիչների տաղանդը։ Վերջին եօթ տարուայ ընթացքում նա լսել էր դրեթէ բոլոր նշանաւոր երգիչներին ու նուագիչներին, որոնք այցելել էին Ռուսաստանն Օդեսայի վրայով։

—Երևի, դու էլ նուագում ես կամ երգում,—

հարցրի ես։

—Ո՛չ, սինեօր։

—Չեմ հասկանում։

—Երգելու համար ձայն չունիմ։

—Իսկ նուագելու համար դործիքներ չաս ունիս սենեակումդ։ Երեկ տեսայ։

—Այո՛, նուագում եմ մանդոլինա և կիթառ։

—Նօտաներ դիտե՞ս։

—Սինեօրինա Լուիզան սովորցրել է։ Դուք լսե՞լ եք նրա երգեցողութիւնը։ Հիանալի ձայն ունէ։ Այնպէս չէ՞։ Այո՛։ Հաւանե՞լ եք ի հարկէ, ով չի հաւանիլ։ Օճ, Լուիզան մեծ ապագայ է խոստանում...

Նա լռեց, հառաչեց, հայեացքը ձգելով դէպի ա-նորոշ տարածութիւն։ Ես նրա դէմքի վրայ նշմարեցի հոգեկան գաղտնի տառապանքի արտայայտութիւն։ Խոստովանվում եմ, այն ժամանակ նշանակութիւն չը-տուեցի նրա հառաչանքին։ Եւ մի՞թէ կարող էի երե-ւակայել տասնուեօթ տարեկան պատանու հոգին որ և լուրջ վշտի ընդունակ։

—Այդ բոլորը լաւ,—ասացի ես,—բայց դու ին-չո՞վ ես կերակրում քեզ ու մօրդ։ Չէ՞ որ հայրդ ժա-ռանգութիւն չի թողել։

—Դործ չաս կայ, սինեօր։ Պրօգրամները եմ ծա-խում, *ստատիստի* դեր եմ կատարում բեմի վրայ, պոչ եմ բռնում։ Ա՜խ, սինեօր, եթէ միջոց ունենայի, կըսովորէի վերլուծել նուագերն ու կըմանէի երաժըշ-տական խումբը։

—Ցիշում ես հօրդ, Լեոն։

—Ի հարկէ, շատ լաւ եմ յիշում։

—Ասում են, նա բարի մարդ էր։



—Այո՛, սինեօր, շատ բարի էր, միայն...

—Հարբում էր,—լրացրի ես պատանու խօսքը։

—Նա երբէք ինձ չէր ծեծում, չէր էլ բարկա-նում վրաս։ Բայց ո՛չ, մի անգամ բարկացաւ, յիշում եմ...

—Երևի, չարութիւն էիր արել։

—Այո՛։ Այն ժամանակ նրա խանութին ահա այն անկիւնի կապոյտ տան ներքին յարկումն էր։ Ամեն օր դնում էի այնտեղ կեղծաթներ սանրում։ Մի օր նա տխուր էր շատ։ Մի ժեներալ եկաւ երեսը սափրել տալու։ Նրա մօտ միշտ մեծամեծներ էին գալիս։ Ես վերցրի մի սանր, վրէն քաշեցի մի թուղթ ու սկսեցի չրթունքներովս նուագել։ Ժեներալը բարկացաւ ու հո-ղըս հրամայեց ինձ դուրս անել։ Հայրս մօտեցաւ, ա-կանջս քաշեց ու, վզակոթիս տալով, վռնդեց դուրս։ Բայց յետոյ, երբ ժեներալը գնաց, կանչեց ինձ ներս, աչքերս սրբեց, համբուրեց ու ասաց. «եթէ դու կու-նենաս երաժշտական ընդունակութիւն, ինձ գրաւ կը-դնեմ, քեզ չեմ թողնիլ առանց ուսման»։ Այո՛, սինեօր, շատ լաւ մարդ էր, թէև հարբում էր։ Սինեօր, նե-րեցէք, որ ժամն է։

—Տանուամէկ։

—Օճ, ես ուշացայ։ Ներողութիւն, էլի կըգամ։ Ձեր սենեակը լաւն է։ Դուք ինձ գրքեր կըտաք կարդալու, այո՛։ Շնորհակալ եմ։ Յըտեսութիւն։ Այսօր Կալաֆատիի բենեֆիան է։ Թատրոնը լիքն է լինելու։ Պէտք է գը-նամ, պոչ բռնեմ։

Ես կամեցայ հարցնել, ինչ ասել է «պոչ բռնել», բայց Լեոնն արդէն չքացել էր։

Կալաֆատին ընտիր երգչուհի էր։

Գնացի թատրոն տեսնելու։ Կասի առ-

ջև կանգնած էր գնողների մի երկայն շարք, որ հասնում էր մինչև փողոցի կէսը։ Եղանակը սառն էր, խոնաւ, անախորժ։ Պիտի բռնէի շարքի վերջին տեղն և ամենաքիչը մի ժամ սպասէի մինչև հերթս հասնէր։ Ուզում էի վերադառնալ տուն, երբ լսեցի իմ ազգանունը։ Դա Լևոնի ձայնն էր, որ կարող էի ճանաչել հարիւրաւոր ձայների մէջ։ Նա կանգնած էր կասսից մի քանի քայլ միայն հեռու, երկու հրէաների միջև սեղմված։

—Ծոմսա՞կ էք ուզում գնել,—հարցրեց նա տաճկերէն։

—Այո՛։

—Եկէք, տեղս բռնեցէք, ապա թէ ոչ, շուտ չէք հասնիլ կասսին։

Ես բռնեցի նրա տեղը։ Նա գնաց կանգնեց շարքի վերջում։ Այդտեղ միայն իմացայ ինչ ասել է «պոչ բռնել»։ Լևոնը կանգնում էր շարքի եռւում և, երբ բաւական մօտենում էր կասսին, իւր հերթը ծախում էր ցանկացողին հինգ—տասը կոպէկով։ Յետոյ դարձեալ գնում էր ու շարքի եռւում կանգնում։ Նա ամեն միջոց գործ էր դնում թատրոնից չըհեռանալու համար։ Նրա օգը, կերակուրը, կեանքը, ամեն ինչ թատրոնն էր։

Իմ հետաքրքրութիւնն այդ պատանու վերաբերմամբ արդէն այնքան մեծ էր, որ աշխատում էի ամեն օր նրան տեսնել։

Մի առաւօտ նրա մօտ հանդիպեցի երկու անծանօթների, որոնց հետ իւր սենեակի դռների առջև կանգնած խօսակցում էր։

Մէկն իւր հասակի պատանի էր հնամաշ հագուստով, բայց գլխին նոր գլխարկ։ Դէմքի գծերը բուն հրէական էին, աչքերը դեղնագոյն, մազերը գրեթէ կարմիր, երեսը ինչ-որ բծերով ծածկված, սակայն համակրելի։



Միւսին ես շատ անգամ էի տեսել քաղաքի զբօսավայրերում ու թատրոնների առջև։ Դա մօտ քսան ու հինգ տարեկան երիտասարդ էր, այնքան նիհար, այնքան բարակ ու դունատ, որ, կարծես, մազազգեստից լիներ չինած։ Նրա երեսն երկարաւուն էր ու նեղ, աչքերը կլոր ու փոքրիկ, կոկորդի ոսկորը դուրս ցցված։ Հարթ ու նօսր մազերը, մինչև ունքերը քաշած կակուղ գլխարկի տակից ցած իջնելով, եախան պէս կպել էին բարակ պարանոցին և ընդգրկել կոկորդի մի մասը։ Սև սիւրտուկի վրայ հագած էր թիկնոցաւոր վերարկու առանց աստառի, լայն թևերով։ Մի ձեռին բռնած էր բաղկի հաստութեամբ մի դեղնագոյն փշոտ փայտ, միւս ձեռին անկապ գրքոյկներ և տեղական լրագրների համարները։

—Իմ ընկերներն են,—ասաց Լևոնը, անմիջապէս ծանօթացնելով ինձ նրանց հետ։—Բանաստեղծ Զաուշէնկօն, Մարդկանց հետ ծանօթացնելով ինձ Մարգուլիս։

Ես հաճոյքով սեղմեցի երկուսի էլ ձեռը։

—Զաուշէնկօն սիրում է մարդկանց հետ ծանօթանալ իւր երկերի միջոցով,—ասաց լայն վերարկու հագած երիտասարդը, որ ինքը բանաստեղծն էր։

Եւ անմիջապէս, գրքոյկներից մեկը պահելով քթիս առջև, հարցրեց.

—Ձեզ կամենալ, արդեօք, մի օրինակ վերցնել։

—Հաճոյքով։

Գրքոյկի վերնագիրն էր. Часы горя и страда-

ній; стихотворенія Леонида Николаевича Чаушенко.

—Դուք դուցէ զարմանաք, մօսեօ,—ասաց նա, դնելով վարտիքի դրպանը գրքոյկի արժէքը,—որ ես, այսպէս ասած, յանդգնեցի կապել ձեր վզին իմ երկը։ Բայց մի վրդովվէք, մարդիկ իրանց խիղճն են ծախում, Չաուշէնկօն իւր երկերը։ Նախկին դրաչար եմ։ Ինքս գրում եմ, ինքս չարում, ինքս տպում, ինքս վաճառում, ինքս էլ ուտում իմ սրտի արեան վաստակը...

—Իսկ ես նախկին և ներկայ չհուդիկ եմ,—ընդհատեց բանաստեղծի խօսքը Իգկո Մարգուլիս կոչված պատանին,—երբեմն լրագիրներ եմ ծախում, երբեմն էլ թատրոններում ծառայում։ Նեղ տեղն ընկնելիս փողոցներում կօշիկներ եմ սրբում։

—Եւ երևակայում է իրան ապագայ Ռուբինշտէյն,—հեգնեց Չաուշէնկօն։

—Ա՛խ, պարոն, արդեօք դուք երաժշտութեան ուսուցի՛չ էք։ Ո՞չ։ Ա՛խաս։ Ես կրկամենայի ձեզանից դաշնամուրի վրայ դասեր վերցնել։ Ծիծաղիր, Չաուշէնկօ, բայց էլի ես պիտի քո Часы горя и страданій երաժշտութեան վերածեմ։ Դէ լաւ, գաւազանդ մի ցոյց տուր, ես երկչոտ չհուդներից չեմ, ես հրէայ եմ։ Արեվիդերչի, սինեօր... գնանք, բանաստեղծ։ Զիմբա, չիմբա—չիլալա...

Նա քամու արագութեամբ թռաւ դուրս։ Չաուշէնկօն հետևեց նրան, հատ գաւազանի ծայրն աղմուկով զարկելով փայտեայ սանդխաի աստիճաններին։

Փառք Աստուծոյ, այս անգամ Լևոնի մայրը տանը չէր—գնացել էր շուկայ պաշարեղէն գնելու։ Լևոնն ասաց, թէ Չաուշէնկօն ու Իգկո Մարգուլիսն եկել էին խորհրդակցելու իտալական խմբի առաջին երգչուհի Բարբինիի բենեֆիսի մասին։ Պատրաստվում են արտաքոյ կարգի ցոյցեր։ Չաուշէնկօն մտադիր է բենեֆիսի պատուին նուիրել երգչուհուն մի բանաստեղծութիւն, պէտք է թարգմանել իտալերէն։

Ես, Լևոնին փորձելու համար, ասացի.

—Կըցանկանայի իմանալ, դուք ինչ դործ ունիք երգչուհիների բենեֆիսների հետ։

—Ինչպէս թէ դործ չունինք,—գոչեց նա զարմացած,—երգչուհիները գեղարուեստին չեն ծառայում։

—Շատ էլ ծառայում են, յիսոյ։

—Ամեն մարդ պարտաւոր է պատուել գեղարուեստը։

—Գեղարուեստը չռայլութիւն է։ Նա հարուստների համար է։ Իսկ դու և քո ընկերները աղքատ էք...

—Հարուստներն արտիստներին նուէրներ են տնում, իսկ մենք ցոյցեր...

Հազիւ մի քանի րոպէ խօսել էինք, երբ ներս մտաւ Լևոնի մայրը։ Դնելով պաշարեղէնի զամբիւղը Շէքսպիրի քթի առջև, նա իսկոյն ևեթ յարձակվեց որդու վրայ.

—Էլի փողոցային սրիկաները այստեղ էին, հա՞։ Երևի, խորհուրդ ունեիք։ Մի շաբաթ է գլուխս ցաւեցնում էք այդ երգչուհու բենեֆիսով։ Պարոն, տեսա՞ք խօմ, տեսա՞ք այս անզգամի ընկերները ովքեր են։ Ինչ կարող է սովորել այդպիսիներից։ Փո՜չ, փո՜չ զաւակ...

Երբեմն մայրերը կարող են իրանց հարազատ զաւակների թշնամի լինել։ Անշուշտ Լևոնի մայրը սիրում

էր որդուն, բայց չէր տեսնում իւր և նրա մէջ եղած վիհը. այն ահագին վիհը, որ չէր կարելի լեցնել ու հարթել անվերջ նախատինքներով։ Մի անգամ այս մասին խօսում էինք մեր սեղանատանը. սինեօրա Ստեֆանեան և Բօրելլին պաշտպանեցին մօրը, իսկ միւսները—որդուն։ Ռախան ասաց.

—Մեզ հրէաներիս համարում եք նիւթապաշտ։ Ես դեմ չեմ, ճիշդ է. բայց, հաւատացէք, ոչ մի հրէայ, մանաւանդ հրէուհի իւր որդու վերաբերմամբ այդ քրիստոնեայ կնոջ չափ նիւթամոլ չէր լինիլ։ Հրէան խելօք կերպով է հարստահարում իւր որդուն։ Եթէ իւր որդու մէջ տեսնում է երաժշտական կամ երգեցող ձիրք, աշխատում է հէնց այդ ձիրքը շահադործել։ Նա չի սոխպում նրան արհեստաւոր կամ վաճառական դառնալ։

Երկու անգամ Լևոնն իմ ներկայութեամբ լաց եղաւ, երբ մայրը յանդիմանում էր նրան իբրև «անպէտք» զաւակի։ Նա փաթաթվեց մօր պարանոցին, գոչելով.

—Մամա, մամա, մի բարկանար, ես քեզ սիրում եմ։

Օճ, ոչ, այդ պատանին չէր կեղծում։ Նա սիրում էր մօրն անչափ, և այս նրա դժբաղդութեան պատճառներից մէկն էր։

—Կարելի՞ է,—լսեցի մի առաւօտ դռների եռեւից Լևոնի ձայնը, երբ դեռ անկողնից չէի վերկացել։

Ուրախութեամբ հրաւիրեցի նրան ներս։ Նա գըլխաբաց էր, երեսն անլուայ, աչքերի սպիտակուցները դեղնած, մազերը դդզդված, դէմքը մազաղաթի պէս դունատ։ Կռնատակին պահած էր մանդոլինան և այնպէս ամուր սեղմած, որ, կարծես, վախենում էր ձեռքից խլեն։ Նրա բաճկոնի կոճակները բաց էին, փողկապ չունէր, շապկի եզրերը բաժանվել էին և երեսան էին հանում նրա նիհար կուրծքը։ Մկնիկների վայ կուչկուչված վարսիկի ծայրերը բարձրացել էին, ե՛ր լեռում էին կօշիկների ականջները։

—Ներողութիւն, սինեօր, — ասաց նա, ցրված հայեացքը պատեցնելով չորս կողմը,—կարծում էի վեր էք կացել։

Ես չտապեցի նրան հանգստացնել, թէ հէնց վեր էի կենում, երբ եկաւ։ Նա խնդրեց թոյլ տալ իրան կէս ժամ մնալու իմ սենեակում։ Ոչ միայն կէս ժամ, այլ միշտ, երբ կամենար և որքան կամենար, կարող էր օգտվել իմ սենեակից։ Բայց այս անգամ ինձ չըվոխեցրեց նրա այլայլված կերպարանքը։

—Ի՞նչ է պատահել,—հարցրի, կարծելով, որ թագնվում է ինչ-որ հալածողներից։

Մի քանի վայրկեան չըպատասխանեց։ Ես հարցըչկրկնեցի, սկսեցի հագնվել։ Նա մօտեցաւ դռներին, նայեց դէպի դուրս ու յետ եկաւ, կանդնեց սենեակի մէջտեղում, աւելի ամուր սեղմելով մանդոլինան կըռան տակ։

—Գիտէք, սինեօր,—ասաց,—կարող է մայրս գալ։

—Ի՞նչ անենք, թող գայ։

—Ես նրանից եմ փախել։ Ուզում էր մանդոլինաս կոտրտել, վառարան դցել։

—Ինչո՞ւ։

—Մինչև լոյս չեմ թողել նրան քնելու, նուագել եմ։ Յետոյ պատմեց, թէ երէկ օպերային երաժշտական խմբի բենեֆիսն է եղել։ Ներկայացումից յետոյ բոլոր երաժիշտները գնացել են հիւրանոց ընթրելու։ Խմբապետը Լևոնին էլ հրաւիրել էր։ Ընթրիքի մէջ-

ցին մեկը վեպիօնչելով նուագել է, ի միջի այլոց, և՛ մի սպանական եղանակ—«Մադրիդի չրջմոլիկը»։

—Գլխից չէր դուրս գալիս այդ եղանակը։ Ուզում էի անպատճառ սովորել հենց այս գիշեր, որ չըմոռանամ։

—Եւ սովորեցի՞ր։

—Այո՛։

—Ինձ համար կընուագե՞ս։

Լևոնի բնաւորութիւնը պարզ էր։ Նա կոտրատվել չըգիտէր, ամեն բանի վերաբերվում էր հասարակ։ Ես արդէն մի քանի անգամ լսել էի նրա նուագումը։ Վատ էր նուագում թէ լաւ, չըգիտեմ, միայն զգացւում էր և զգացնել տալիս լսողին։

Նա նստեց ալթոռի վրայ, գրկեց մանդօլինան։ Առաւօտեան արեգակի կիսրոնագոյն շողերը սփռվել էին ներս։ Լևոնի աչքերն անգիտակցաբար դարձան դեպի այդ շողերը, կարծես, ինչ-որ գաղտնի մադնիսի զօրութեամբ։ Ա՛խ, այդ վեր ուղղված աչքերը, այդ հեզ դէմքը։ Անցել է ընդամենը երկու տարի, բայց կանցնեն շատ տարիներ, դարձեալ այդ օրը վառ կըմնայ յիշողութեանս մէջ։

Ի՞նչ էր Լևոնի նուագածը—բացատրել չեմ կարող։ Յիշում եմ միայն ինձ վրայ գործած տպաւորութիւնը։ Կիսամերկ բևեռվել էի սենեակիս մէջտեղում և լսում էի բուռն զգացմունքների վիժումը։ Վիշտ և բերկրութիւն, փոթորիկ ու մեղմ թախիծ խառնվել էին «Մադրիդի չրջմոլիկի» մէջ—գոնէ այսպէս էր թըւում ինձ։ Գուցէ դա մի կրակոտ, ասպետական ժողովրդի սրտի հրաբուղխն էր, փոքր ինչ կանոնաւորված ինձ անյայտ մի հանճարի ստեղծագործ ուժով,



բայց հետաքրքրականն ինձ համար նուագողն էր։ Կարծես, նիւթեղէն պատանին չքացել էր, ծնացել էր միայն նրա սուրերը։ Նա չէր նկատում իմ ներկայութիւնը, քաղցր հնչիւնների հեղեղով կլանված նեարդերը չէին զգում աշխարհի նիւթականը։ Կարծես, հոգին ամբողջովին ձուլվել էր նուագած եղանակի հետ ու սլացել հեռու մի աշխարհ։—Ընտիր հոգիների կարդական աշխարհը։

Երբ աւարտեց, մի քանի վայրկեան լուռ էր, անշարժ, աչքերը տակաւին յառած արեգակի շողերին, որոնք հետզհետէ դունատվում էին։

Ես չըկարողացայ ինձ զսպել, ոգևորված գոչեցի։

—Կեցցես, Լևոն, կեցցես...

Բայց նա չըլսեց։ Անշարժ էր. նուրբ շրթունքները, որոնք միշտ սեղմված էին, դողում էին նկատելի։ Յանկարծ նրա ձեռները թուլացան, գլուխը մի փոքր թեքվեց ուսին, մանդօլինան հանդարտիկ սահեց կրծքից և ընկաւ նիհարիկ ծնկների վրայ։ Եւ նրա դէմքի շողերը յառված աչքերի մէջ նշմարեցի արցունք։

—Մանուկ, ինչու ես լալիս,—գոչեցի կարեկցութեամբ։

Նա ոտքի կանգնեց, ճակատից հեռացնելով թանձր մազերն և տարօրինակ ձայնով արտասանեց.

—Վեպիօնչելիան ինձ ասաց Մադրիդի չրջմոլիկը դժբաղդ է եղել։ Յուրա գիշերները երգել է դրանդի աղջկայ լուսամուտի տակ և լաց եղել... Նրա հայրը աղքատութիւնից մի օր կախվել է ծառի վրայ, խեղդվել։

Այդ ժամանակ ես չըհասկացայ նրա խօսքերի խորքերում թաղնված բուն վիշտը և կարծեցի զ-

ռանցում էր: Արդարև, զառանցում էր նա, բայց ինչո՞ւ և ինչ...

—Ա՛խ, ներողութիւն,—գոչեց նա, յանկարծ ուշքի գալով,—ես... անքնութիւնից...

—Այո՛, Լևոն, անքուն ես: Եթէ կամենում ես—հանդստացիր սենեակումս:

—Շնորհակալ եմ, սինեօր: Թոյլ տուէք միայն մանդօլինաս թողնեմ այստեղ: Մայրս կարող է նրան վառարան դցել: Երէկ լուսամուտով փողոց շպրտեց կիթառս ու մի քանի լուսանկարներ:

—Լևոն, մայրդ չար կին է,—գոչեցի ես, մինչև հոգոյս խորքը վրդովված այրիի վայրենի արարմունքից:

Լևոնը չափազանց վշտացաւ և սկսեց պաշտպանել մօրը: Ո՛չ, ո՛չ, չար կին չէ նրա մայրը, ընդհակառակը չատ բարի է: Նա սիրում է Լևոնին: Երբեմն քնած ժամանակ Լևոնը զգում է, որ իրան Թագուն համբուրում է: Նա սիրում է, բայց սէրը ցոյց չի տալիս, վախենում է, որ Լևոնն երես առնի, աւելի փչանայ:

—Աւելի փչանա՞ս,—գոչեցի ես,—բայց մի՞թէ դու փչացած ես:

—Ի՛նչ գիտեմ, սինեօր. մայրս ասում է՝ «ով իւր ծնողների կամքը չի կատարում—փուչ որդի է»:

—Է՛հ, ուրեմն, ինչո՞ւ չես կատարում մօրդ կամքը,—հարցրի դիտմամբ, կամենալով փորձել նրան:

Նա մի տխուր հայեացք ձգեց երեսիս, ոչինչ չասաց: Ես այդ հայեացքի մէջ կարդացի նրա անպօրութիւնը—դառնալ մօր կամքի հլու զաւակ: Անվիճելի էր, որ նա շուտով կըհրաժարվէր կեանքի բոլոր բարիքներից, քան Թատրոնից:



Ճաշի միջոցին պատմեցի նրա տաղանդին մասին: Լուիզան լսեց լարված ուշադրութեամբ: Նրան նկատելու չափ չփոթեցրեց այն, որ Լևոնն ասել էր «Մադրիդի չըմոլիկի» մասին: Կավալլարօն խորհրդաւոր ժպտում էր և գլխով յանդիմանական շարժուձեներ անում, Լուիզայի աչքերին նայելով: Ուսանողը նկատեց, թէ Լևոնն անօրմալ էակ է, մի տեսակ հոգեկան հիւանդ: Նրա հասակի ու զգացումների մէջ չըկայ համերաշխութիւն: Իսկ ուղեղը զարգանում է անկանոն: Այս նկատողութիւնը չափազանց վրդովեցրեց Կավալլարօին: Զըխնայելով ռուս լեզուի քերականական կանոնները, նա սկսեց հակաճառել.

—Հոգեկան հիւանդ, հոգեկան հիւանդ. վերջին ժամանակ, կարծես, գիտութիւնները հէնց նրա համար են սովորում, որ բոլոր տաղանտաւոր մարդկանց հիւանդ համարեն: Ո՛չ, պարոններ, իսկական հոգեկան առողջները հէնց Լևոններն են: Միայն նրանք դժբաղդ են, սինեօր ատուդենտ, հասկանում էք, դժբաղդ, որ չեն ծնված կեանքի բարեյաջող պայմաններում: Փոխանակ գիտնականօրէն բացատրելու այդ պատանիների հոգին, օգնեցէք նրանց—ահա ինչ: Մի թողնէք ադամանդը փողոցի ցեխի մէջ: Ափսո՜ս է Լևոնը:

—Նա օրից օր հալվում է մոմի պէս,—շարունակեց Կավալլարօն կարեկցաբար,—նրա կազմը նուրբ է, չի կարող դիմանալ այդ տեսակ ապրուստի: Երբեմն դիշերը հազիւ անկողին պառկած, վեր է կենում, գընում կանգնում է կասի առջև, առանց վերարկուի, մի քանի կոպեկ վաստակելու համար: Վաստակածի

մի ժան էլ թատրոնի վրայ է ծախսում: Ահա վաղը սինեօրա Բարբինիի բենեֆիան է: Դա նրա ամենասիրելի երգչուհին է: Համոզված եմ, որ այժմ իրան տանջում է, որպես զի կարողանայ որ և է կերպ վաղուայ ցոյցերը դեղեցկացնել...

Հետևեալ երեկոյ ես թատրոնումն էի: Նստած մի բարեկամ ընտանիքի հետ օթեականներից մեկում, նայում էի դեպի վերնայարկ: Բազմաթիւ գլուխների մէջ, վերջապէս, տեսայ Լևոնին: Արմունկները պատնեշին յենած, գլուխն ափերի մէջ բռնած, աչքերը յառել էր բեմին: Նրա մի կողմում կանգնած էր բանաստեղծ Զաուշէնկոն, միւս կողմում Իգկո Մարգուլիսը: Երբ բեմի վրայ երևաց երգչուհի Բարբինին, Լևոնը գլուխը բարձրացրեց և ամենից առաջ ծափահարեց: Նրան հետևեցին Զաուշէնկոն և Իգկոն, յետոյ վերնայարկի մի մասը: Նոյն վայրկեանին մի քանի տասնեակ ձեռներ ձգեցին բեմի վրայ ինչ-որ ոսկեայ ու կարմիր ծաղիկներ, նաև գոյնզգոյն բարակ թղթի թերթիկներ: Գոյացաւ մի ֆանթասթիք անձրև: Պարտերն ակամայ յափշտակվեց, և ամբողջ հինգ րոպէ թատրոնը թնդում էր բուռն ծափահարութիւններից: Վերցնելով իւր գլխին տեղացող անձրևից մի կաթիլ—մի ծաղիկ, երգչուհին սեղմեց սրտին, անդադար գլուխ տալով աջ ու ձախ, յետոյ աչքերը բարձրացրեց դեպի վերնայարկ և օդային համբոյրներ ուղղեց պատանի երկրպագուներին: Այս ան-ևելի ոգևորեց նրանց և աւելի զօրացրեց աղաղակներն ու ծափերը:

Լևոնն իւր մարմնի կիսով դուրս էր եկել պատնեշի եռևից: Կարծես, ձգտում էր ծաղիկների հետ



ընկնել երգչուհու ոտների առակ իբրև կենդանի զոհ դեղարուեստի:

Անցաւ առաջին գործողութիւնը, երկրորդը, երրորդը: Լևոնի ոգևորութիւնը աստիճանում էր երգչուհու աշխողութեան հետ զուգընթաց: Նա մերթ ծափահարում էր, ձեռները գլխից վեր բարձրացրած, մերթ աղաղակում. «Էվիվա, բրաւա, բրաւիսսիմա»... Զաուշէնկոի և Իգկոի հետ, մինչև ներկայացման վերջը չերևաց այլ ևս:

Դուրս գալով խուռն բազմութեան հետ փողոց, տեսայ հետևեալը:—Թուով երեսուն-քառասուն ոտիկանները կազմել էին մի ընդարձակ շրջան՝ հեղեղված էլեքտրական ահագին լապտերների առատ լուսով: Թատրոնից դուրս եկողները հաւաքվում էին շրջանի եռևում: Մուտքի մօտ մի կողմում խմբված էին հասարակ չափ համալսարանական ուսանողներ, միւս կողմում կանգնած էին երկու կանոնաւոր շարքերի բաժանված մի խումբ պատանիներ տասնուհնգից մինչև քսան տարեկան: Միակ չափահասը նրանց մէջ Զաուշէնկոն էր: Նա ձեռին պահած էր մի թերթ թուղթ:

Ուսանողներից մի տասը հոգի ձեռներում բռնած էին մի-մի փոքրիկ փունջ ծաղիկներ, իսկ պատանիները՝ մի-մի վառ կերոն:

Տեսարանը գեղեցիկ էր, հետաքրքրական: Գիտէի որ Լևոնը յետին դեր չի կատարում նրա մէջ: Ինչ-վեցի մի կողմ և աչքերով որոնեցի նրան: Դժուար չէր դտնելը: Նա կանգնած էր պատանիների շարքերից մէկի գլխին, ձեռքին մի երկայն ձող, որի ծայրում վառվում էր հաստ մոմի կտորը: Յուրա չէր զգում նա

մի ժամն էլ թատրոնի վրայ է ծախսում: Ահա վաղը սինեօրա Բարբինելի բենեֆիսն է: Դա նրա ամենասիրելի երգչուհին է: Համոզված եմ, որ այժմ իրան տանջում է, որպես զի կարողանայ որ և է կերպ վաղուայ ցոյցերը դեղեցկացնել...

Հետևեալ երեկոյ ես թատրոնումն էի: Նստած մի բարեկամ ընտանիքի հետ օթեակներից մեկում, նայում էի դէպի վերնայարկ: Բազմաթիւ գլուխների մէջ, վերջապէս, տեսայ Լևոնին: Արմունկները պատնէշին յենած, գլուխն ափերի մէջ բռնած, աչքերը յառել էր բեմին: Նրա մի կողմում կանգնած էր բանաստեղծ Զաուչէնկօն, միւս կողմում Իգկո Մարգուլիսը: Երբ բեմի վրայ երևաց երգչուհի Բարբինին, Լևոնը գլուխը բարձրացրեց և ամենից առաջ ծափահարեց: Նրան հետևեցին Զաուչէնկօն և Իգկօն, յետոյ վերնայարկի մի մասը: Նոյն վայրկեանին մի քանի տասնեակ ձեռներ ձգեցին բեմի վրայ ինչ-որ սպիտակ ու կարմիր ծաղիկներ, նաև գոյնզգոյն բանակ թղթի թերթիկներ: Գոյացաւ մի ֆանթաստիկ անձրև: Պարտերն ակամայ յափշտակվեց, և ամբողջ հինգ րոպե թատրոնը թնդում էր բուռն ծափահարութիւններից: Վերցնելով իւր գլխին տեղացող անձրևից մի կաթիլ—մի ծաղիկ, երգչուհին սեղմեց սրտին, անգադար գլուխ տալով աջ ու ձախ, յետոյ աչքերը բարձրացրեց դէպի վերնայարկ և օդային համբոյրներ ուղղեց պատանի երկրպագուներին: Այս աւելի ոգևորեց նրանց և աւելի զօրացրեց աղաղակներն ու ծափերը:

Լևոնն իւր մարմնի կիսով դուրս էր եկել պատնէշի եռից: Կարծես, ձգտում էր ծաղիկների հետ



ընկնել երգչուհու ոտների տակ իբրև կենդանի զոհ դեղարուեստի:

Անցաւ առաջին գործողութիւնը, երկրորդը, երրորդը: Լևոնի ոգևորութիւնը սաստկանում էր երգչուհու աջողութեան հետ զուգընթաց: Նա մերթ ծափահարում էր, ձեռները գլխից վեր բարձրացրած, մերթ աղաղակում. «Էվիվա, բրաւա, բրաւիսսիմա»... Վերջին գործողութեան կիսում յանկարծ չքացաւ Զաուչէնկօի և Իգկօի հետ, մինչև ներկայացման վերջը չերևաց այլ ևս:

Դուրս գալով խաւարն բազմութեան հետ փողոց, տեսայ հետևեալը:—Թուով երեսուն-քառասուն ոտաթաթ կաններ կազմել էին մի ընդարձակ շրջան՝ հեղեղված էլեքտրական ահագին լապտերների առատ լուսով: Թատրոնից դուրս եկողները հաւաքվում էին շրջանի հետևում: Մուտքի մօտ մի կողմում խմբված էին հարիւրի չափ համալսարանական ուսանողներ, միւս կողմում կանգնած էին երկու կանոնաւոր շարքերի բանուած մի խումբ պատանիներ տասնուհնգից մինչև քսան տարեկան: Միակ չափահասը նրանց մէջ Զաուչէնկօն էր: Նա ձեռին պահած էր մի թերթ թուղթ:

Ուսանողներից մի տասը հոգի ձեռներում բռնած էին մի-մի փոքրիկ փունջ ծաղիկների, իսկ պատանիները՝ մի-մի վառ կերոն:

Տեսարանը զեղեցիկ էր, հետաքրքրական: Գիտէի որ Լևոնը յետին դեր չի կատարում նրա մէջ: Քաշվեցի մի կողմ և աչքերով որոնեցի նրան: Դժուար չէր գտնելը: Նա կանգնած էր պատանիների շարքերից մէկի գլխին, ձեռքին մի երկայն ձող, որի ծայրում վառվում էր հսկա մոմի կաղը: Յուրա չէր զգում նա

առանց վերարկուի, նոյն իսկ առանց կրկնակօշիկների, իւր բարակ պիջակում։ Երևի, չէր զգում, թէև եղանակը բաւական ցուրտ էր։ Նա յափշտակված էր իւր դերով, աշխատում էր կարգ պահպանել պատանիների շարքում։ Կերոնների հրեղէն լեզուակները էլէքտրական ահագին լապտերների լուսոյ ներքոյ ներկայացնում էին դեղնագոյն ադօտ բծեր՝ տակաւ, որպէս աստղերը լուսնեակ երեկոյ։

Լևոնի նիհար դէմքը ստացել էր մի տեսակ բացատրիչ արտայայտութիւն։ Նա յիշեցնում էր դեկադենտ նկարչի քմահաճ վրձինի տարօրինակ ստեղծագործութիւն։ Սակայն այդ հիւանդոտ դէմքի վրայ աչքերը փայլում էին յղկած պողպատի պէս։ Զորս կողմից էլէքտրականութեամբ հեղեղված—նրա մարմինը դեռևս վրայ չէր ձգում ստուեր. նա ինքը, կարծես, ստուեր լինէր։ Նրա շարժուձևերը արագ էին, ջղաձգական, լի աւիւնով։ Երբ խօսում էր, նոյն իսկ հեռուից ինձ թւում էր, որ խօսում են նրա բոլոր նեարդերը, սրտի բոլոր թելերը։ Ահագին բազմութեան մէջ ձայնն ինձ չէր հասնում, բայց դրաց կըզգայի, որ այդ ձայնը դողում էր հոգեկան բարձր հաճոյքից իւր բոլոր ելևէջներով։ Լևոնն երջանիկ էր։

Երբ երգչուհին դուրս եկաւ թատրոնից երկրպագուներով շրջապատված, Իգէօ Մարգուլիան ամենից առաջ ազաղակեց. «ուռռա»։ Զաուշէնկօն, գաւաղանով յետ մղելով նրան, մօտեցաւ երգչուհուն ու տուեց նրան իւր ձեռքի թուղթը։ Անշուշտ, այդ նրա ուսանողն էր, յատկապէս օրուայ առիթով գրված։

Լևոնը գլուխը վերցրեց և օդը գցեց։ Նրա թանձրը մազերից երկու չերտ ընկան նուրբ ճակատի վրայ։ Նրա օրինակին հետևեց պատանիների ամբողջ խումբը։ Երևան եկաւ Զաուշէնկօի նեղ, երկայնաձև գլուխը, հալթ, նօսր մազերով։ Եւ կիսամերկ, կիսաքաղցած պատանիների տհաս ձայները «բրաւվա, բրաւվիսիմա», խառնվելով միմեանց, կարծես, սառան ձմեռային ցուրտ օդում։ Այդ վայրկեանին ես անիծեցի մաքսում երջանիկ երգչուհուն, որ, թէկուզ ակամայ, խելքից հանել էր այդ մատաղահաս էակներին և վտանգի էր ենթարկում նրանց կեանքը, ով գիտէ, դուցէ և՛ հոգին։ Մ՛թէ, արդարև, գեղարուեստն այնքան անողոք է իւր բարձրութեան վրայ, որ իւր առջև ծունկ է չոքեցնել տալիս նոյն իսկ անմեղութեանը։

Երբ երգչուհին մօտեցաւ թատրոնի առջև սպասող փառայեղ կառքին, մի քանի զոյգ ձեռներ սկսեցին արձակել ձիերը։ Կարծեցի, թէ Լևոնն է սկզբնապատճառն և շտապեցի մոքսում հայհոյել բարեկամիս։ Սակայն ես դեռ լաւ չէի ճանաչում նրան։ Նա մի բան էր—չըկար ոչ լծվողների և ոչ լծողների մէջ։ Դրեցի—չըկար ոչ լծվողների և ոչ լծողների մէջ։ Դրբանք բացառապէս ուսանողներ էին, որոնց թեթևամտութիւնը, երևի, անասնութեան էր հասնում։

Լևոնի խումբն այ ու ահեակ ուղեկցում էր կառքը վառ կերոններով։ Երգչուհին մէկ-մէկ ընդունում էր ուսանողներից փնջերը, փետուրն ու ծաղիկները սփռում պատանիների վրայ, իսկ ուսանողներին վարձատրում օդային համբոյրներով։

Ձեղքելով ամբոխը, ես մօտեցայ բարեկամիս։

—Աա՜, դուք ի՞նչ այստեղ էք,—դոչեց նա, հևալով,—լսեցի՞ք, ինչպէս երգեց, լսեցի՞ք...

—Այո՛, Լևոն, հիանալի երգեց։ Բայց այդ ուսանողները... Ի՞նչ են անում... Մ՛թէ դու հաւանում

ես այդպիսի ցույցեր։

—Ասուած մի արասցէ։

—Մենք անասուններ չենք,—ասաց Իգկո Մալ-դուլիսը։

—Այո, մենք մարդիկ ենք,—գոչեց Զաուշէնկօն վրդովուած,—էյ, պարոնայք ատուդենտներ, մի ձգէք ձեր մունդիրի վարկը. էյ, պարոններ, ամօթ է...

—Մաիկ արէք,—գոչեց Լևոնը,—ինքն էլ չի հասկանում, ուզում է իջնել կառքից... Բայց ո՛չ, չի իջնում... Աա... Վիտեա, Պետրօ, Մերդէլ, Խայս, հանդցրէք կերոնները... Ո՛չ, ո՛չ, ո՛չ, սպասեցէք... Նա իջնում է կառքից... Իջաւ, իջաւ... Ձիերը լծում են... Կարէ՛ սպիմա, կեցցէ Բարբինի. էվիվա, բրավա, բրավի՛սիմա, առաջ, առաջ...

Եւ, կերոնը բարձրացրած, աղաղակելով, չքացաւ ամբոխի մէջ իւր հրեայ ու յոյն ընկերների հետ... Նրանց հետևեց Զաուշէնկօն, լայն վերարկուի փէշերը օդի մէջ ֆրֆռացնելով պատառոտուած առագաստների պէս...

Ես տուն վերադարձայ ծանր տպաւորութեան տակ։ Այդ գիշեր երազումս տեսայ Լևոնի հօրը։ Թըշ-վառ վարսավիրը։ Նա հարբած, կեղտոտ ու պատառոտուած հագուստով չնձռկել էր թատրոնի մուտքի առջև։ Անցորդները հեգնում ու ծիծաղում էին նրա անյոյս սէրը, որ, ով գիտէ, դուցէ առաջացել էր գեղարուեստի սիրուց։ Այսպէս էի ես միշտ պատկերացնում վարսավիրին, այսպէս էլ տեսայ նրան երազումս...

Զարթնելով, փափագ զգացի Լևոնին տեսնելու։ Բարձրացայ վերև։ Տանը չէր։ Մայրն ինձ հանդիպեց արտասուքը աչքերին և գանգատվեց, թէ գիշերը տուն է վերադարձել երեք ժամին։ Այսօր զարթնել է թէ չէ, իսկոյն անից դուրս եկել։

—Պարոն,—աղերսեց այրին,—դուք կարող էք նրան խելքի բերել։ Նա սիրում է ձեզ, կլսէ ձեր խօսքը։ Նա գնում է հօր ճանապարհով։ Վերջն իրան կբեղուլթեան կըտայ և չան պէս կըթաւալվի փողոցներում։

—Նա այդ չի անիլ, խելօք է։

—Ա՛խ, պարոն, կարծում էք, հայրը յիմար էր։ Ո՛չ, նա էլ խելօք էր։ Բայց խելքից հանեցին, օրս սեւացրին։ Ամուսնուս ձեռքիցս խլեցին, չեմ ուզում որդուցից էլ խլեն... Պարոն, օգնեցէք, ես մայր եմ, հասկանում էք, մայր...

Այո, մայր էր այդ կինը, գիտէի, որ սիրում է որդուն ու տանջվում նրա պատճառով։ Այժմ խղճում ու մինչև անգամ ցաւակցում էի նրան. բայց դարձեալ անախորժ էին ինձ համար նրա անվերջ գանգատները, նրա եսամոլ հոգացողութիւնը որդու համար։

Կէսօրից յետոյ կրկին բարձրացայ վերև։ Այս անգամ Լևոնը տանն էր, բայց անկողնում պառկած։ Նրա վիճ այտերի վրայ նշմարեցի անսովոր կարմրութիւն։ Բռնեցի բազուկը. երակը զարկում էր ուժգին։ Անշուշտ երեկ մրսել էր։ Բայց չէր յանձն առնում հիւանդութիւնը։ Նա ուրախ էր և, օգտվելով մօր բացակայութիւնից, յայտնեց իւր ուրախութեան պատճառը։ Բարձի տակից հանեց մի լուսանկար և, ցոյց տալով, հարցրեց.

—Ճանաչո՞ւմ էք։

Այդ երեկուայ երջանիկ երգչուհու լուսանկարն էր։

«Իմ սիրելի արտիստին», կարդացի լուսանկարի ճակատին։

—Ամենքն էլ ինձ արտիստ են կոչում,—ասաց Լևոնը,—չըվիտեմ ինչու։ Այսօր գնացել էի նրան շնորհաւորելու երեկուայ աշողութեան համար... Մազիկներ էի տարել։ Հրաւիրեց ներս, կաֆէով հիւրասիրեց։ Բաւական խօսեցինք... հարցնում էր, ինչքան եմ վաստակում։ Խաբեցի, ասացի հայրս ժառանգութիւն է թողել։ Վախենում էի, որ փող առաջարկի ինձ։ Նա նուիրեց ինձ իւր լուսանկարը։ Ես համբուրեցի նրա ձեռը, նա էլ իմ ճակատը։ Օ՜օ, սինեօր, ես շատ երգչուհիներից ունիմ այդպիսի նուէրներ, ահա, այն այլբօմը լիքն է...

Եւ այս վարձատրութեամբ նա գոհ ու երջանիկ էր։

—Բայց ես մի լուսանկար ունիմ,—շարունակեց նա,—այլբօմում չեմ պահում։ Մայրս սպառնում է բոլորն այրել, վախենում եմ այս մէկն էլ այրի... խոկոյն ցոյց կըտամ...

Նա բարձրացաւ տեղից, պիջակի գրպանից հանեց մի ծրար, ծրարի միջից թանդագին լուսանկարը։ Ես կարդացի հետեւեալ ժակադիրը. «Իմ ապագայ երկրպագուին—Լուիզա»։

—Օ՜հ, ճիշդ է, բոլորովին ճիշդ, սինեօր։ Ես նրա ապագայ երկրպագուն կըլինիմ։ Լուիզան փայլուն ապագայ ունի. կըտեսնէք, սինեօր, կըտեսնէք... Բայց այս ինչ է, գլուխս պտտեց, պառկեմ...

Երբ տիկին Ալմաստը—Լևոնի մայրը—ներս մտաւ, խորհուրդ տուեցի բժիշկ հրաւիրել։ Լևոնը գլուխը բարձրացրեց, նստեց անկողնում։ Ի՞նչ բժիշկ, ոմ է հիւանդ, հարկաւոր չէ բժիշկ... Ես հակառակ



նրա միտքը. վախենում էր, որ բժիշկն արգելի նրան անից դուրս գալու։

Երեկոյեան եօթ ժամին երրորդ անգամ բարձրացայ վերև և նրան չըտեսայ։ Տիկին Ալմաստն ասաց, թէ իմ դուրս գալուց յետոյ թագուն հագնվել է ու փախել...

Անմի՜տ պատանի. նա վտանգի էր ենթարկում իւր կեանքը։ Ես իսկոյն դուրս եկայ փողոց. գիտէի որ կարող է լինել։ Հանդիպեցի նրան թատրոնի մուտքի առջև։

—Պարոններ, չէ՞ք կամենում պրօգրամ գնել,—դիմում էր նա անցորդներին, առաջարկելով նոյն օրուայ ներկայացման ծրագիրը։

Մարդիկ անցնում էին անտարբեր, անգամ չընայելով նրան, իսկ ժանր կոպտութեամբ գոռում էին. «գնա, կորիր», եւ Լևոնի հպարտ հոգին կրում էր այդ վիրաւորանքները համբերութեամբ։ Իմ սիրտը մորմոքվեց, երբ նայեցի նրա կապտած դէմքին։

—Գնա տուն, գնա—խնդրեցի ես,—դու բոլորովին հիւանդ ես...

—Ո՞վ ասաց հիւանդ եմ։ Մ՚այրս։ Նա միշտ կամ իրան է հիւանդ երևակայում կամ ինձ։ Այս երեկոյ նոր օպերա է ներկայացվում, ես տուն գնամ։ Մ՚չ, սինեօր, ահա իմ տունը...

Նա ցոյց տուեց թատրոնը և ժպտալով հեռացաւ։ Հեռուից լսում էի նրա ձայնը.

—Պարո՛ն, պրօգրամ, պրօգրամ. չէ՞ք կամենում, նոր օպերա է, հետաքրքրական. պրօգրամ, հատը տասը կոպէկ...

Միւս օրն առաւօտեան դարձեալ բարձրացայ վե-

րև և էլի նրան անկողնում տեսայ։ Մի և նոյն տանը քնակվում էր մի հրէայ բժիշկ։ Շտապեցի նրան հրաւիրել։ Գնաց հիւանդին, դրեց ինչ-որ դեղ։ Երկու օր հազիւ կարողացանք Լևոնին տանը պահել, երկրորդ երեկոյ լաց եղաւ, երբ արդելեցինք թատրոն գնալ։ Բարեբաղդաբար, երրորդ օրը տաքութիւնն անցաւ։

Ձմերային սեզոնը վերջացաւ։ Իմ հարևան արտիստները հէնց մեծ պասի առաջին օրն ուղևորվեցին իրանց հայրենիքը։ Այդ օրը սխալ օր էր ոչ միայն Լևոնի այլ և ինձ համար, այնքան արդէն վարժվել էի հարևաններիս շրջանին։

Մենք մինչև կայարան ուղեկցեցինք իտալացիներին։ Հրաժեշտ տալիս Կավալլարօն երեք անգամ բարեկամաբար համբուրվեց Լևոնի հետ...

Հէնց նոյն օրը Լուիզան ինձ ասաց, թէ ինքն էլ ամենաուշը մի ամսից ուղևորվելու է Իտալիա։ Հարցը վճռված էր. սինեօրա Ստեֆանիան վազուց էր հաշտվել աղջկանից բաժանվելու մտքի հետ։

Երբ յայտնեցի Լևոնին Լուիզայի ուղևորութեան մօտալուտ ժամանակը, ինձ այնպէս թւաց, որ լուրը նրա վրայ առանձին տպաւորութիւն չգործեց։ Դուցէ այդ նրանից էր, որ նոյն օրերը նա առհասարակ շատ տխուր էր տրամադրված։ Մեծ պասի առաջին շաբաթն էր, թատրոնները փակ էին։ Լևոնն ամեն օր գնում էր քաղաքային թատրոնի շուրջը դանվող դեղեցիկ պարտէզը, նստում այնտեղ ու նայում հսկայական շինութեանը։ Յետոյ, գլուխը կրծքին թեքած, ով գիտէ ինչ խորհրդածութիւնների մէջ, վերադառնում էր տուն։ Նա նորոգել էր տուել մօր ձեռքով



լուսամուտից փողոց չպրտված կեղտաջուր, նուագում էր։ Երբեմն գալիս էր ինձ մօտ և իմ առաջարկութեամբ մանդօլինա նուագում։ Մի անգամ թախանձեցի նրան կրկնել «Մադրիդի շրջմոլիկը»—մերժեց։

Օպերային փոխարինեց դրաման։ Մեծ պասի առաջին կիրակուց սկսվեցին ներկայացումները։ Լևոնը մտաւ իւր դերի մէջ, բայց ոչ նախկին սիրով. դրաման օպերայի չափ չէր սիրում, մանաւանդ որ եկուոր խմբի մէջ չէկային գրաւիչ դէմքեր։ Սակայն պատանուն պաշարել էր ուրիշ տեսակի աշխոյժ, որ ինձ անհանգստացնում էր։ Նա ամեն օր գալիս էր ինձ մօտ, վերցնում մանդօլինան, նստում լուսամուտի մօտ, նուագում «Մադրիդի շրջմոլիկը»։ Երբեմն յանկարծ ընդհատում էր նուագումը, մանդօլինան շտապով դնում սեղանիս վրայ ու դուրս վազում։ Նա գնում էր Լուիզայի մօտ, նստում և երկար ու երկար հարց ու փորձ անում առաջիկայ ճամբորդութեան մասին։ Եւ բարեսիրտ Լուիզան երբէք չէր ձանձրանում նրա հարցերից, օրավհետև նրա համար հաճելի էր խօսել իւր ապագայի մասին։

—Գիտէք,—դարձաւ ինձ մի անգամ Ռախան,—նա ուղղակի սիրահարված է Լուիզայի վրայ։ Այդ, կարող եմ երդվել, որ սիրահարված է։

—Զգոյշ եղէք, օրիորդ,—ասացի ես,—Լևոնը կըլսի ու կըվշտանայ։

Ես յիշեցի թշուառ վարսավիրին և վախեցայ, մի դուցէ որդին ենթարկվի հօր վիճակին։ Բայց, բարեբաղդաբար, Լուիզայի շրջապատողներն աւելի խելացի էին քան այն երգչուհու շրջանը, որի վրայ սիրահարված էր եղել վարսավիրը։ Ռախան խօսք տուեց

ինձ այլ ևս չբնօսել Լևոնի նուիրական զգացումների մասին...

Հասաւ, վերջապէս, օրիօրդի ուղևորութեան օրը: Մի շաբաթ էր Լևոնն անճանաչելի էր դարձել. նա ուրախ էր ու զուարթ: Կարծես, ինքն էր պատրաստվում ճանապարհորդելու: Գնում էր, գալիս, խօսում, զուարճախօսում: Ջըդիսեր ինչ անէր Լուիզայի սիրտը շահելու համար: Ուղևորութեան նախընթաց երեկոյ Լուիզան, ցոյց տալով մի արծաթէ դրչակոթ, ասաց.

—Տեսէք ինչ խելագարութիւն է արել ձեր հայրենակիցը: Ձի՞ որ այս նրա մի շաբաթուայ աշխատանքի վարձն է:

—Նա նուիրել է ձեզ այդ դրիչը, որ նամակները գրէք նրան,—ասացի ես:

—Այո՛, և ես կըգրեմ նրան: Խնդրեցի նրան յետ վերցնել նուէրը—վիրաւորվեց, քիչ մնաց լաց լինի:

Գնացքն ուղևորվում էր առաւօտեան տասը ժամին: Մենք, սինեօրա Սաւոֆանեայի բոլոր կենդանիներս, գնացինք կայարան Լուիզային ճանապարհ դնելու: Կարծում էի, Լևոնն ամենից առաջ եկած կըլինի այնտեղ: Սակայն նա չըկար և չերևաց երկար ժամանակ: Այս անսպասելի էր. ինչը կարող էր խանգարել նրան վերջին անգամ տեսնելու Լուիզային:

Սինեօրա Սաւոֆանեան ինձ հաղորդեց, թէ կավալլարօից մի շատ սիրալիր նամակ է ստացել: Երգիչն ուրախութեամբ յանձն է առնում հոգալ Իտալիայում Լուիզայի մասին, ղեկավարել նրա առաջին քայլերը:

—Նա շատ ազնիւ մարդ է,—աւելացրեց տանտիրուհիս ուրախ-ուրախ,—հարստատ եղբօր պէս կը-



նայի Լուիզային: Ես ազգական բաց չեի թողնիլ, եթէ չըլիներ կավալլարօն...

Երբէք Լուիզային այնչափ զուարթ ու զուարճախօս չեի տեսել, որչափ այդ օրը, չընայելով որ մինչև կայարան գնալն երկու անգամ արտասվել էր մօրից բաժանվելու պատճառով: Մի վայրկեան անգամ չէր հանգստանում, թռչկոտում էր, ինչպէս եօթ տարեկան աղջիկ, քրքջում էր, հրճվում իւր ճամբորդութեամբ: Ամենքիս հետ կատակներ էր անում և բոլորին խոստանում առանձին-առանձին նամակ գրել: Նա լի էր ապագայի վերաբերմամբ քաղցր յոյսերով և այդ յոյսերը չէր թագցնում մեզանից: Մի երկու տարուց յետոյ կըվերադառնայ մշակված, կատարելագործված ձայնով, կըսկսի երգել օպերայում: Տեսէք, ինչպիսի աշխուժութիւն կունենայ, երբ դուք երկրպագուներ:

«Իսկ նա, անցաւ մտքովս ակամայ, նրա մասին չի՞ս մտածում»:

—Բայց ո՞ւր է Լևոնը,—հարցրեց Լուիզան յանկարծ, կարծես, գուշակելով իմ միտքը.—ա՜հ, իմացայ, ինչու՞ համար է ուշանում: Ինչիւէի փողոցով անցնելիս տեսայ նրան ծաղկավաճառի խանութում: Այդ պատանու սիրտը ոսկեհանոս է, ընդարձակ... Ահա նա, գալիս է... Տեսէք ինչ է բերում, չէի ասում... Անուղղելի...

Ձեղքելով կայարանի ամբոխը, Լևոնը մօտեցաւ մեզ մի գեղեցիկ փունջ ձեռին: Շատ վազելուց քրտնել էր ու սաստիկ հևում էր: Դիմելով ուղղակի Լուիզային, դադարը վերցրեց և, գլուխ տալով, փունջը ներկայացրեց:

Արդէն լաւ ճանաչելով նրան, ես վախեցայ մի-

այն մի բանից—Լուիզայի յանդիմանութիւնից։ Եթէ օրիորդն ամենաթեթև ակնարկ անդամ անէր, թէ այդպիսի մի նուէր բոլորովին չի համապատասխանում Լևոնի աղքատ դրպանին, դիտէի, պիտի չարաչար վիրաւորէր նրան։ Բայց նա նրբապատ գտնվեց. իսկոյն ըմբռնեց Լևոնի հոգեբանութիւնն և այնպէս յայտնեց իւր շնորհակալութիւնը, այնպէս ժպտաց, հոա քաշելով վինջից, այնպէս դովեց նուէրը, որ պատանու այտերը կարմրեցին նեղքին հաճոյքից։

Այդչափ սրատեսա չըգտնվեց Ռախան. նա հարցրեց Լուիզային.

—Կավալլարօն քեզ դիմաւորվելո՞ւ է Միլանում։

—Այո՛,—պատասխանեց սինեօրա Մաեֆանիան։

—Մի՞թէ նա այնտեղ է,—հարցրեց Լևոնը յուզված, դողդոջուն ձայնով։

—Նա եկել է Միլան յատկապէս Լուիզային դիմաւորելու համար,—պատասխանեց սինեօրա Մաեֆանիան մի առանձին հաճոյքով։

Այն հոգեկան հաճոյքը, որ մի ժպտով Լուիզան պատճառել էր Լևոնին, վայրկենաբար չքացաւ, տեղի տալով գաղտնի նախանձի կրծող կսկծին։ Բայց Լևոնը դիտեր զսպել իրան չափահաս տղամարդի պէս։ Նա ասաց.

—Այդ լաւ է։ Սինեօր Կավալլարօն կօգնի սինեօրինա Լուիզային։

Երկրորդ զանգակի միջոցին Լուզան սկսեց վերջին հրաժեշտը տալ։ Նա արաւ աւելի, քան կարելի էր սպասել նոյն իսկ իւր նման մի բարի, հասարակ և պարզասիրտ օրիորդից, որ վարակված չէր նախապաշարումներով։—Ազատվելով մօր դրկից, ամենից առաջ Լևոնի ձեռն առաւ և... համբուրվեց նրա հետ



պարզ ընկերական կերպով։ Յետոյ, չտապ-չտապ սեղմելով մեր ձեռները, փունջը ձեռին բարձրացաւ կառախումբ։

Ես դիտում էի Լևոնին։ Նա բևեռվել էր նոյն տեղում, ուր արժանացաւ Լուիզայի հրաժեշտի համբոյրին և նայում էր այն լուսամուին, ուր պիտի երեար օրիորդը։ Բնազդաբար բռնեցի նրա թևից և մի փոքր հեռացրի կառախմբից...

Ահա երևաց Լուիզայի գունաթափ դէմքը լուսամուից։ Նա օդային համբոյրներ էր ուղարկում մեզ։ Մի քանի րոպէ ևս—լսվեց երկրորդ զանգակը և կառախումբը կամաց-կամաւ չարժվեց, այնպէս անաղմուկ, որ, կարծես, նաև էր լողում։ Այն ժամանակ միայն Լևոնը սթափվեց և, գլխարկը բարձրացնելով, գոչեց իտալերէն.

—Բարի ճանապարհ... յաջողութիւն... Շուտո՛վ... շուտո՛վ։ Ձանապարհին Լևոնը մի բառ անգամ չարտասանեց։ Լուռ էի և ես. չէի կամենում ընդհատել նրա մտքերի թելը։ Թէ նա տանջվում էր—այս պարզ էր լինէ համար, թէ նա երջանիկ էր Լուիզայի համբոյրով—այս էլ երևում էր։ Բայց թէ ինչ էր մտածում—այս չիմացայ. երևում էր միայն, որ նրան զբաղեցնողը սովորական մի միտք չէ...

Ես հրաւիրեցի նրան սենեակս։ Ինչ-որ պատճառով հրաժարվեց գալ։ Արագ-արագ բարձրանալով վերև, չքացաւ հինգերորդ յարկի բարձրութեան մէջ։

Այդ օրից աւելի քան մի շաբաթ անցաւ, ես նրան չտեսայ։ Ինքը չէր գալիս սենեակս, իսկ ես բարձրանում էի վերև և միայն մօրը հանդիպում։

—Ուշ գիշերին տուն է գալիս սենեակս, երբ ես քնած եմ, առաւօտը դնում է, երբ քնած եմ: Բայց լաւ որդի է, ամեն օր սեղանի վրայ թողնում է յիսուն կոպեկ ողորմութիւն... անիծվի նա...

—Տիկին,—դոչեցի ես բարկացած, բոլորովին համբերութիւնից դուրս գալով այրվի անվերջ անէծքներից,—նա ձեր ծախքը տալիս է, հերիք է, էլ ինչ էք ուզում...

Խեղճ կինն ապշած նայեց երեսիս ու մի քայլ յետ դրեց: Երևի, չատ էի բարկացած և նա չէր սպասում իմ կողմից այդչափ կոպտութիւն: Ես զղջացի. ինչ և լինէր—նա դժբաղդ էր, գոնէ այդպէս էր համարում իրան:

—Ներեցէք, որդեօք, ուր է գնում ամեն օր,—հարցրի ես, ձայնս մեղմացնելով:

—Շատ էլ հետաքրքրվում եմ, որ չի ասում: Կիթառն էլ ամեն օր հետը տանում է: Բայց ես կիմանամ, ուր է գնում, կիմանամ. չեմ թողնիլ, որ կորչի հօր պէս...

Զարմանալին այն էր, որ թատրոնների շուրջն էլ չէի հանդիպում Լևոնին: Ես կատարելապէս տրխրում էի առանց նրան, մանաւանդ որ սինեօրա Սաեֆանիայի սեղանատունը զրկվել էր իւր հրապոյրից: Այնտեղ այլ ևս չէին հնչում Լուիզայի մեռաղային ձայնն ու վարակիչ ծիծաղը: Սինեօրա Սաեֆանիան նրա ուղևորվելու հէնց երկրորդ օրը դաշնամուրը վերադարձրել էր երաժշտական խանութը, ուսկից վերցրած էր ամսավարձով: Զրկար ոչ նուագող, ոչ երգող, ոչ ծիծաղող: Ոսիան և ուսանողը մաերմացել էին ու զբաղված էին իրանց մաերմութեամբ: Աւարտելով



ճաշը, նրանք չտապում էին հեռանալ իրանց սենեակներից:

Ես ուրախութեամբ կըտեղափոխվէի մի ուրիշ բնակարան, եթէ չըխանգարէր Սաեֆանիայի դրութիւնը: Նրա սենեակների մեծ մասը դատարկ էր, եթէ ես էլ դուրս գայի, խեղճ կինը պիտի ձրաս կըէր:

Մի անգամ ճաշից յետոյ բուլվարումն էի: Այստեղից բացվում է Օդեսսայի գեղեցիկ տեսարաններից մինը: Մօտ երկու հարիւր ոտնաչափ բարձրութիւնից երևում են ամբողջ նաւահանգիստն ու ծովածոը իրանց հազարաւոր նաւերով: Ես վաղուց էի կըտացել այդ տեսարանից: Նստած ամբոխից հեռու մի առանձնակի նստարանի վրայ, երաժշտութիւն էի լսում: Ակամայ յիշում էի Լևոնի մանդոլինան, որ տասն օր էր որբացել էր սեղանիս վրայ: «Ո՞ւր է նա այժմ, հարցնում էի ինքս ինձ, և հարցը ծնում էր հարց:

—Բօն ժուր, մօսիօ,—լսեցի մի թոյլ թոքախտաւոր ձայն:

Գլուխս բարձրացրի և իմ առջև տեսայ Զաուշէնկոն իգիօ Մարգուլիսի հետ: Այս հանդիպումն ինձ ուրախացրեց: Ես սեղմեցի նրանց ձեռքը և խնդրեցի հարցրի Լևոնի մասին:

Զաուշէնկոն հատ դատարկը բարձրացրեց լայն վերարկուի տակից և, ցոյց տալով նաւահանգիստը, թատրոնական եղանակով ասաց.

—Այնտեղ է:

—Զաուշէնկո, ինչո՞ւ այսօր ձևերդ տրագիքական են,—ասաց Իգիօն:

—Որովհետև, սիրելի չհուդիկս, այնտեղ է կա-

տարվում կեանքի տրագեդիան։ Մարդիկ տանջվում են ու մեռնում խաւարի մէջ։ Գնանք, տար ինձ այնտեղ, Իգկո։ Զաուչէնկօն արիստօկրատ բանաստեղծներից չէ, որոնք խորշում են ամբոխից։ Մաքսիմ Գորկին երբեմն չես կարդացել, Զաուչէնկօյինը կը կարդաս։ Ուզում եմ ուսումնասիրել նաւահանգստի ամբոխը։ Գնանք, պարոն,—դարձաւ նա ինձ,—դուք էլ գրող էք, գնանք, մի ամաչէք։

—Գնանք, ուր որ ուզում էք, միայն թէ Լևանին ցոյց տուէք։

—Իգկոն մեզ կառաջնորդի։ Նա խաւարի ծնունդ է։ Հայրը նաւահանգստում հին լաթեր ու երկաթ է ժողովում, պիտի իմանայ խաւար աշխարհի բոլոր խորշերը իւր ձեռքի ափի պէս։

—Իսկ դու պիտի լուսաւորես այդ խաւար աշխարհը ահա դրանցով,—ասաց Իգկոն, զարկելով բանաստեղծի ձեռքի դրքոյկներին։—Բանի՛ օրինակ ես վերցրել։ Տմա՛ս։ Կըխարչենք, միամիտ կաց։ Նա՛, չիմբա՜-չիմբա, չիլալա... Զաուչէնկո, չիլալա՜...

Նա ձախ ոտը բարձրացրեց և, ալ ոտի վրայ ոստոստալով, վազեց առաջ։

Օդեսայի նաւահանգիստը քաղաքի հետ միացած է մի հակայական քարէ տանդիտով, որի բարձրաբերձեան վրայ բուլվարի մէջտեղում կանգնած է քաղաքի հիմնադիր Ռիշիլիէի արձանը, իսկ ստորոտում կառուցված է մի փոքրիկ եկեղեցի նաւահանգստի բնակչութեան համար։ Մենք իջանք այդ տանդիտով, մտանք մի ապերնաձև լայն փողոց։ Այդ վերջին փողոցն է դէպի ծովափը, այնուհետև ամբողջ նաւահանգստի երկայնութեամբ բարձրանում է «Լեռնային»—երկաթուղու բեռնակիր գնացքների համար կառուցված կամուրջը։ Ինչեր-ցերեկ այս հրաշալի կայարան կամրջի վրայով սուլելով անցնում են չոգեկառքերը, քարշ տալով վագոնների երկայն շարքերը, իսկ ներքև, բազմաթիւ կամարների տակով անց ու դարձ են անում բեռնակիր սայլերը, նաւաստիները, բանւորները։ Այդ—մի աղմկալի վայր է, մի բարդ հանգոյց ծովային և ցամաքային կեանքերի միջև։ Շոշենաւերի թանձր ծուխը, նաւակների կոշտ ձայները, Լոթմակադայի խուլ թընդիւնները գնացքների ծանրութիւնից, կայարաններում կուտակած քարածխի փոշին—այս բոլորը ընդհանուր առմամբ անսովոր մարդու վրայ ճնշող տպաւորութիւն են գործում։

Իգկո Մարդուլիսը մեզ առաջնորդեց քարածխի փոշիով ծածկված փողոցի խորքը։ Երբ եկեղեցուց հեռացանք երկու հարիւր քայլ դէպի աջ, մեր առջև բացվեց օվէանների, ստորին տեսակի թէյյաններն ու պանդոկների մի ամբողջ աւան։ Այստեղ էր վխտում նաւահանգստի բնակչութեան մեծ մասը։ Պանդոկներից լսվում էին հարմոնիայի և ուրիսական տղերմելի «բալալայկա»-ի հնչիւնները ամբոխի աղաղակների, երդերի, գոռում-գոչիւնների, յիշոցների ու անէծքների հետ։ Ներանք, որոնք ժամանակ ու միջոց ունէին, ուտում, խմում ու հարբում էին պանդոկներում, վայելելով էժանագին հուրիների ընկերութեան հաճոյքը, իսկ ներանք, որոնք միմիայն խմելու համար փող ունէին, մտնում էին «Մօնօպոլի» կրպակները։ Այս-

փողոց և բովանդակութիւնը դատարկում իրանց բե-
րանները: Օդին արդելվում է խմել «Մօնօպօլի» կըր-
պակներում, ուստի հարբեցողութիւնը, որ առաջ քիչ
թէ շատ ամօթ ունէր և թագնվում էր օդեանների պա-
տերի մէջ, այժմ թագաւորում է փողոցում ամե-
նայն համարձակութեամբ: Եւ ահա նրա ողորմելի զո-
հերը թաւալված էին կրպակների առջև, մայթերի
վրայ, փողոցի միջտեղում—սայլերի ու կառքերի տակ
ջարդվելու վտանգին ենթակայ:

Իգկօն կանգ առաւ մի մեծ պանդոկի առջև, որի
դռների ճակատին գրված էր. «Արքայական Եախտա»:

—Ահա այստեղ է Լևոնը,—ասաց նա.—անցեալ
շաբաթ «Ոսկէ խարիսխում» էր նուագում:

—Հը՞մ, — արտասանեց Զաուշէնկօն, դառնալով
ինձ,—տատանվո՞ւմ էք: Վախենո՞ւմ էք մտնել: Թո՛ղ
եղէք, ձեզ չեն ուտիլ, մեզ նման մարդիկ են...

Նա դաւազանը բարձրացրեց և յաղթական քայ-
լերով մտաւ Իգկօի հետ պանդոկ: Ես մի քիչ նրա-
նից լաւ էի հագնված: «Աղա» չըհամարվելու համար,
վերարկուիս օձիքը բարձրացրի, գլխարկիս եղրը քա-
շեցի աչքերիս, յուսալով, որ ամենաշատը յոյն որմնա-
դիր կը համարեն ինձ:

Պանդոկը լի էր յաճախորդներով: Առաջին պահ
ոչինչ չկարողացայ որոշել, այնքան մթնոլորտը տո-
գորված էր ծխով, փոշիով ու կերակուրների շոգիով:
Դժուար էր ընդհանուր աղմուկի, գոռում-գոչիւնների
ու հայհոյանքների մէջ մի բան հասկանալ: Այցելու-
ների մի մասը խմբվել էր բուֆետի առջև, որ գան-
վում էր ուղիղ մուտքի դիմաց: Մենք հրհրվում էինք
այս ու այն կողմ: Զաուշէնկօի նիհար մարմինը պնդա-



կաղմ նաւաստիների ուսերի հարուածներից տաշեղի
պէս թռչկոտում էր: Երբեմն նա իրան դիմող մէջքե-
րին դէմ էր տալիս դաւազանի կոթը, ինքը յետ կանգ-
նում: Իգկօն, իւր փոքրութեան չնորհով, կատուի ճար-
պիկութեամբ սլկվում էր առաջ մարդկանց արանքով:
Ես հազիւ էի կարողանում քթի ու պռունգս ազատ
պահել օդի մէջ անխնայ շարժվող ձեռների ու ար-
մունկների պատահական հարուածներից:

Մենք անցանք երկու շարք կեղտոտ ու մերկ սե-
նեակների միջով, որոնց շուրջը նստած էին նաւաս-
տիներ և երկաթուղու ծառայողներ: Մի քիթը ու-
ռած, կարմրած, աչքերի տակերը կապտած կին, լինչ
ինձ տեսնելով, գոչեց.

—Էյ, բաստրման, արի միասին «տրեպակա» պա-
րենք:

Ես հազիւ կարողացայ ազատվել նրա սիրալիր
թևերից, որ բացվել էին ինձ գրկելու համար: Զաու-
շէնկօն, գլուխը փիլիսոփայօրէն շարժելով, արտասանեց.

—Թռչուն, ուր է քո փեսաուրը:

—Քեռի Սիդօրի կառուն պոկոտել է,—ասաց Իգ-
կօն, ծիծաղելով:

Քեռի Սիդօրը «Արքայական Եախտայի» տէրն էր,
կառուն—օղին:

Վերջապէս, հասանք ընդարձակ պանդոկի հա-
մաւաքար մի ապահով անկիւն, ուր մեր կողերը ջարդ-
վելու վտանգից ազատվեցին: Այստեղ մի երկայն սե-
ղանի քով նստած էին տասնի չափ նաւաստիներ: Սե-
ղանը ծածկված էր կեղտոտ ամաններով, հացի կտոր-
ներով, ուտելիքների ու ծխախոտի մնացորդներով, գա-
րեջրի և օղու շիշերով ու բաժակներով:

—Ահա և՛ ձեր արտիստը,—ասաց Իգկօն, ցույց տալով սեղանի ծայրը։

Այնտեղ նստած էր Լևոնը։ Նա կիթառ էր նուագում և զուարճացնում սեղանակիցներին։ Չընայելով իւր չքաւորութեանը, նա մինչև այդ օրը նրան կեղտոտ չէի տեսել։ Գոնէ շապիկը միշտ անարատ էր, ձեռները ու երեսը մաքուր, կօշիկները վաքսած, փայլուն։ Իսկ այժմ նա նմանվում էր գործարանական բանուորի։

Իմ երևալը նրան զարմացրեց։ Նա չընդհատեց նուագումը, բայց չափազանց շփոթվեց, կարմրեց։ Նաւաստիները նրան լսում էին ուշադիր, թէև արդէն բոլորն էլ հարբած էին։ Իրանց հիացմունքն արտայայտում էին գոռում-գոչիւններով։ Երբեմն մէկը կամ միւսը վեր էր կենում, գրկվում ու համբուրվում նրա հետ կամ, մէջքին զարկելով, արտասանում էր.

—Մալադեց, Լեվա, մալադեց...

Ջաուշէնկօն մեզ հրաւիրեց նստել մի դատարկ սեղանի քով, ասելով թէ Լևոնին չի կարելի խանգարել, նաւաստիները կըկատաղեն։ Մի չիշ գարեջրի պատրաստակով կարելի էր նստել, և մենք նստեցինք։ Լևոնը շարունակ մեզ էր նայում ու ժպտում։ Այդ տասն օրուայ ընթացքում նա աւելի նիհարել էր ու թօրշոմել։ Առաջին անգամ այդ օրը նրա բերանի անկիւններում նկատեցի թեթև խորշեր։

Սեղանի մօտից վերկացաւ լայն թիկունքով ու մեծ միրուքով մի նաւաստի և օրօրվելով մօտեցաւ Լևոնին։ Ձեռը դնելով պատառնու նիհարիկ ուսի վրայ, գոչեց.

—Էյ, ճպուռ, նուագելո՛ւ ես ինձ համար՝ «Ո՜հ, իմ վիշա» թէ չէ. ես ուզում եմ՝ «Ո՜հ, իմ վիշա» լսել։

—Տեղդ նստիր, էյ, Սիբիրի ռեխ,—գոչեցին ընկերները,—մի խանգարիր Լեվային։

—Չեմ նստիլ, մինչև որ չլսեմ՝ «Ո՜հ, իմ վիշա»։ «Ո՜հ, իմ վիշա»։ Լեվա, Լեվա, «Ո՜հ, իմ վիշա»։

—Յիմարի գլուխ,—նկատեց մէկը,—Լեվան հէնց «Ո՜հ, իմ վիշան» է նուագում։ Չես լսում, անո՜ւս...

—Լեվա, սուտ չի՞ ասում։

Լեվան գլխով հաստատեց, թէ նուագածը հէնց «Ո՜հ, իմ վիշան» է։

—Սատանան տանի, գոռաց Սիբիրի ռեխը,—ինչ լաւ էիր նուագում։ Լսեցինք, լսեցինք. հիմա նուագիր «Դունայի դեղեցկուհի»։ Լեվա, Լեվա, «Դունայի դեղեցկուհի»։

—Մ՛յ քեզ «Դունայի դեղեցկուհի»,—ասաց մի յաղթանդամ և, եռանդից ձեռները դցելով Սիբիրի ռեխի կռնների միջով, վորը դէմ տուեց մէջքին, բարձրացրեց ու բերեց, նստեցրեց իւր տեղը։

—Է՛յ դու կալուգայի արջ, ինչպէս համարձակվեցիր,—գոռաց Սիբիրի ռեխը,—թաթերդ կըփչրեմ...

Եւ բռունցքն այնպիսի ոյժով զարկեց սեղանին, որ շիշերն ու բաժակները վիմեանց պիսչելով փշրուեցին։

Բարձրացաւ աղմուկ, վէճ, իրարանցում։ Օդի մէջ երևացին մի քանի սպառնալի բռունցքներ։ Գուցէ «Սիբիրի ռեխը» և «Կալուգայի առջը» վիմեանց քիթ ու պռունգը ջարդէին, եթէ չըլինէր մի ալևոր նաւաստի, որին ընկերները «Դեադուշկա» էին անուանում։ Նա մէջ մտաւ նրանց բաժանելու։ Օգնութեան

հասաւ Լէոնը։ Նա նուագումը ընդհատեց և, տեղից վերկենալով, ասաց.

—Պարոններ, թոյլ տուէք ինձ գնալ «Խերսօնցի-ների» մօտ։

Վէճն իսկոյն դադարեց. բոլորը շրջապատեցին երաժշտին։

—Լէվա, ազաւնեակ, մի անիր, Լէվա, հոգեակ, նուագիր. ինչպէս կարելի է,—խնդրեցին բոլորը։

—Նուագի՞ր... ինչպէս նուագեմ, պարոններ, քա-նի որ չէք լսում, կուռւում էք անկիրթ «բօսեաների» պէս։ Մի՛թէ վայել է «Ռուսաց ընկերութեան» նաւաս-տիներին։

—Վայել չէ, իհարկէ, վայել չէ,—դոչեց «Դեա-դուշկան»։

—Դուք ինձ «Տիրասպօլցիների» մօտից բերեցիք այստեղ, որ ձեր կռիւը տեսնեմ։ Դուք լաւ չէք գնա-հատում երաժշտութիւնը...

«Խերսօն», «Տիրասպօլ» նաւերը էին, և նաւաստի-ները կրում էին իրանց նաւերի անունները։

—Կըգնահատենք, կըգնահատենք, Լէվա, յիմար-ներ չենք...

—Ի՞նչ է, փո՞ղ է ուղում այդ ճպուռը,—դոչեց Սիբիրի ռեխը և վարտիկի գրպանից հանելով արծա-թէ դրամներով լի քսակը, դցեց Լէոնի դիրկը,—ա-հա, վերցրու, խեղդվիր...

—Մենք էլ կըտանք, մենք էլ կըտանք,—աղաղա-կեցին ամենքը, ձեռները տանելով իրանց գրպանները։

—Տեսէք, տեսէք, Լէոնը հարստանալու է,—դո-չեց Իսկօն, հրճուանքից ձեռները միմեանց զարկելով, երբ տեսաւ փողի քսակները։



—Հապա, կըտեսնենք թէ ինչպէս,—արտասանեց Ջաուշէնկօն, որ, արմունկները սեղանին յենած, դի-տում էր կատարվող տեսարանը։

Լէոնը հանդիստ վերցրեց իւր դիրկն ընկած քը-սակները և, դնելով սեղանի վրայ, ասաց.

—Ես իմ գնից մի կոպէկ էլ աւելի չեմ վերցնիլ։ Համարը 10 կոպէկ, ոչ աւելի, ոչ պակաս։ Դրէք ձեր գրպանները, նստեցէք, նուագում եմ...

—Բրաւօ, Լէոն, բրաւօ, դու մեր երեսը սև չա-րիր,—դոչեց Ջաուշէնկօն ոգևորված և նաւաստինե-րի ուշադրութիւնը դրաւեց մեր վրայ։

—Այդ ինչ կատու է,—դոչեց Սիբիրի ռեխը.—ա՜հ, տիրացո՛ւ։ Ջէ, ուխտաւոր է, աբեղայ է... է՛յ, երևի, Իօքտամայի տաճարի համար լումա ժողովե-լու ես եկել։ Աբի, աբի, մենք էլ կըտանք մեր հոգու փրկութեան համար։

Ջաուշէնկօն վերցրեց սեղանի վրայից իւր դէմ-քոյկները և հանդիստ քայլերով մօտեցաւ նաւաս-տիներին։

—Պարոններ, ես ոչ տիրացու եմ, ոչ տաճարի համար լումա ժողովող։ Ես երգիչ եմ...

—Երգիչ, երգիչ, այդ շատ լաւ է,—ասացին ո-մանք.—դէհ, երգիր, տեսնենք։

—Երգի՛ր՝ «Ո՜հ, վիշտ»,—պահանջեց Սիբիրի ռե-խը,—«Ո՜հ, իմ վիշտ»։

—Ո՜հ, խաւար—ահա իմ վիշտը,—արտասանեց բանաստեղծը։—Պարոններ, ես ձայնով չեմ երգում, այլ զրկով։ Գնեցէք մի-մի օրինակ ահա այս դրքոյկ-ներից։ Դուք, պարոններ, ինչպէս տեսնում եմ, երա-ժշտութիւնը սիրում էք. մի մոռանաք, որ բանաստեղ-

Ծուխիւնն էլ նրա քոյրն է։

—Ինչրն է,—ասաց Սիբիլի ռեխը,—ապա տուր ինձ այդ գեղեցկուհուն...

Նա խլեց գրքոյկներից մեկը, դրեց դատարկ ա-մանի մէջ, վրան օղի թափեց և, լուցկին վառելով, ասաց.

—Ապա, տեսնենք քոյրն ինչպես է երգում։

Օղին այնքան թունդ չէր, որ վառվէր,

—Ջեռի Սիդօր,—գոչեց Սիբիլի ռեխը,—կատու-իդ մագիլները հանել ես... խի խի խի՛, սպիրտ բեր...

—Է՛յ, Սիբիլի ռեխ,—ասաց «Դեադուշկան»,—այսօր դու մեզ ուզում ես խայտառակել։ Գրքերը սուրբ են, յանցանք է նրանց այրելը... Գնե՛նք մի մի օրինակ...

Նաւաստիները գնեցին մի-մի օրինակ «Վշտի և տանջանքների ժամերից», իսկ անհանգիստ Սիբիլի ռեխը մի մեծ բաժակ օղի ձեռքում մօտեցաւ հեղի-նակին։

—Կոնծիր, գնչիցդ երևում է, որ սիրում ես...

Ջաուշէնկօն լսող չէր։ Երկու ձեռները դէմ տուեց բաժակին, գոչելով.

—Հեռո՛ւ ինձանից համառուսիական թոյն...

Այն ժամանակ Սիբիլի ռեխը կպաւ Լևոնին.

—Խմի՛ր, դու մինչև այսօր դեռ չես հպարտվել... Թէ քրիստոնեայ ես, պիտի խմես...

—Լեվա, Լեվա, մի բաժակ մեր խաթրու,—խնդ-րեցին մեւանները։

Լևոնը հրաժարվեց, ասելով, թէ խմելուց յետոյ չի կարող նուագել։ «Դեադուշկան» նրան պաշտպանեց։

Օրն արդէն մթնել էր։ «Դեադուշկան» յայտնեց,



թէ չոգենաւ վերադառնալու ժամանակ է։ Խումբը, վճարելով կերած-խմածի գինը նաև Լևոնի վարձը, դուրս եկաւ ալմուկով, գոռում-գոչիւններով, մեանց բոթելով ու հարուածելով։

Փողոցում Ջաուշէնկօի գլուխը պըտտեց այնպէս, որ անշուշտ կընդհներ, եթէ չբռնվէր պատին։ Խմիչք-ների հոտն և ծխախոտի ծուխը շշմեցրել էին նրան։ Բայց նա կրկնում էր.

—Շատ ուրախ եմ այստեղ գալուս, շատ ուրախ եմ, ամեն օր պիտի գամ։ Ո՛րքան նիւթ, ո՛րքան նիւթ գրողի համար։

Իսկօն ոստոստում էր Լևոնի շուրջը։ Վերջապէս, ձեռքը դնելով նրա թևին, հարցրեց.

—Այսօր ինձ համար չօկօլա՞դ ես առնելու, թէ ծխախոտ։

—Երկուսն էլ։

—Ֆիւմ ֆիւմ, ուրեմն այսօր երկու ռուբլուց ա-ւելի ես հատաքել... կեցցէ՛ տոիս։ Ես այսօր ոչինչ չեմ վաստակել։ Բանաստեղծ, պիտի ինձ համար մի սրինգ գնես։ Ես էլ ուզում եմ սրինգ նուագել։

—Կըգնեմ, ինչու չեմ գնիլ,—ասաց Ջաուշէնկօն բարեսրտաբար։

—Ջիմբա-չիմբա—չիլալա, Ջաուշէնկօ, չիլալա՛...

Երբ ընկերները բաժանվեցին, նա հետաքրքրվե-ցի իմանալ՝ ինչու է Լևոնը փոխել իր արհեստը։ Չէի ուզում հաւատալ, որ առանց վերին աստիճանի սո-պողական մի պատճառի կարող է նա ցերեկներն ան-գամ ապրել թատրոնից հեռու։

—Կարիքն է ստիպում, սիրելիս,—պատասխանեց նա հանդարտ։

—Բայց չէ՞ որ դու առաջ էլ կարիք ունեիր:

—Ես ուզում եմ մօրս կամքը կատարել:

—Այո՛նքն:

—Ուզում եմ նրան ապահովել:

Ես նայեցի նրա աչքերի մէջին և հասկացայ, որ կեղծում է: Փողոցային լապտերի լոյսը մատնեց նրա այլայլուելը:

—Է՛հ, շատ դժուարին է,—ասացի ես,—որ ուզում ես մօրդ ապահովել: Բայց, ներիր Լևոն, այս անգամ շատ էլ չեմ հաւատում քեզ: Կարծում եմ, ուրիշ նպատակ ունես:

Նա ոչինչ չասաց, միայն քայլերն արագացրեց:

—Ո՞ւր ես շտապում,—հարցրի ես:

—Թատրոն:

—Է՞լի թատրոն:

—Այո՛, սինեօր... այսօր լաւ դրամա են ներկայացնում...

Եւ, երևի, իմ հարց ու փորձերից ազատուելու համար, շտապով հեռացաւ: Ես արդէն դուշակել էի նրա միտքը...

Մի քանի անգամ այցելեցի «Արքայական Եախտա»-ն: Լևոնին այնտեղ սիրում էին: Նաւաստիները խլում էին նրան միմեանց ձեռքից: Նա գիտէր նուագել մալառօսական եղանակներ ու պարեր: Անցնում էր մի խմբից միւսը, բոլորին զուարճացնում, հաւաքելով իւր տաղանդի կոպէկները: Զուարճութեան տաք մէջոցներին սեզոնակիցներն երբեմն խնդրում էին նրան խմել մի-մի բաժակ օղի կամ գարեջուր: Նա չէր ուզում խմել և չէր էլ կարողանում խմել:

Մի անգամ իմ ներկայութեամբ, երբ զղուանքով յետ դրեց օղու բաժակը, նրա համար պահանջեցին ինչ-որ քաղցր ըմպելիք: Նա մի բաժակ խմեց, յետոյ երկրորդն և զուարթացաւ...

Յաւալի էր ինձ համար, որ նա այցելում է այդ տորին վայրերը: Բայց իրաւունք չէի համարում հանդել նրան թողնելու այդ տեղերը: Ուրիշ ինչ միջոց ունէր նա ապրելու, բացի նախկին ողորմելի պարապմունքից:

Մի օր նա ասաց.

—Սինեօր, երկու ամիս չըկայ, արդէն երեսուն ռուբլի եմ յետաձգել: Բայց մօրս չասէք:

—Ինչո՞ւ:

—Որովհետև այդ փողերն ինձ հարկաւոր են...

—Իտալիա գնալու համար,—լրացրի ես նրա խօսքը, խնդիրը միանգամից պարզելու համար.—մի զարմանար, Լևոն, ես այդ վաղուց դիտէի:

—Օ՛օ, սինեօր, իրաւ է, ես ուզում եմ տեսնել Իտալիան...

—Եւ Լուիզային...

Նա ամօթից երեսը դարձրեց ինձանից: Ես հաղորդեցի նրան, թէ սինեօրա Սաեֆանիան կավալլարիոյից նոր նամակ է ստացել: Բարիտոնը գրում է, թէ երգեցողութեան ուսուցիչները փորձել են օրիորդի ձայնը և հիացել նրա ուժով ու «տեմբրով»: Միայն պրոֆեսոր խոստանում է երեք տարուայ ընթացքում Լուիզային այնչափ պատրաստել, որ կարողանայ օպերաներում առաջին «դրամատիկ-սոպրանո»-ի դերը երգել:

Հաղորդածս նորութիւնն չէր նրա համար: Նա ասաց, թէ հէնց նոյն օրն ինքը նամակ է ստացել Լուի-

զայից։ Բարի օրիորդն իւր խոստումը կատարել էր։ Սակայն այդ եղաւ առաջին և վերջին նամակը...

Ամբողջ գարունն և ամառը պատանին այցելեց նաւահանգստի պանդոկները։ Երբեմն գալիս էր սեւ նեակս և ինձ հաշիւ տալիս։ Նրան դեռ սիրում են նաւաստիները, հաճոյքով լսում և միմեանց ձեռքից խլում։ Ամսական միջին թուով քսան ռուբլուց աւելի է յետադառնում։ Շուտով, չուտով կըկատարի իւր փափագը, կուղևորվի Իտալիա...

Այն ինչ՝ պանդոկների մթնոլորտն արդէն դրել էր իւր դրոշմը նրա վրայ։ Չևերը նկատելու չափ գռեհկացել էին։ Ժամանակ առ ժամանակ արտասանում էր տգեղ բառեր, որ առաջ չըկային նրա բառարանում։ Արտասանում էր և խոհոյն ղղջում, կարմրում։ Մի քանի անգամ ղգացի, որ բերանից խմիչքների հոտ է գալիս։ Իսկ մի երեկոյ մեր տան դարպասի առջև տեսայ նրան սաստիկ հարբած դրութեան մէջ։ Կիթառը կռնատակին բռնած, օրօրվելով, տուն էր գնում, մի քայլ առաջ գնելով, մի քայլ կողք, օրօրվելով։ Օգնեցի նրան սանդխատով բարձրանալ։

Ալմաստը տեսաւ նրան թէ չէ՝ ձեռները զարկեց իւր երեսին, գոչելով.

—Սպանեց, մորթեց...

Նախատինքի ժամանակ չէր։ Խնդրեցի վշտացած մօրը զսպել առ այժմ իւր սրտի թոյնը։

Լևոնը թաւալվեց երեսնիվայր անկողնում, մի ոտը թողնելով յատակի վրայ։ Տեսարանը եղկելի էր։ Լևոնը, այն պատանին, որին երևակայութիւնս դրեթէ հրեշտակացրել էր, ընկնում էր աչքումս։ Եւ այս



ինձ համար դառն էր, շատ դառն։ Նա ոչինչ չէր ղղում, ընկած էր կեղտոտ լաթի պէս, ոտից մինչև գլուխ ցեխոտ։ Միայն երբեմն ձեռը դուրս էր բերում փորի տակից և չոշափում ձախ կոշիկը...

Ես թողեցի տխուր տեսարանն և հեռացայ։ Մթեթէ այս է բարեկամիս վերջը։ Մթեթէ Ալմաստի չար դաշակութիւնն իրագործվում է։

Առաւօտն երբ բարձրացայ վերև, Ալմաստն արդէն թեթևացրել էր իւր սիրտն և աչք-ունքը կիսած լուռ նստած էր մի անկիւնում։ Լևոնը վնտռում էր կիթառը, որ դնայ իւր գործին, չէր գտնում։ Ալմաստը թագցրել էր, չէր ուզում տալ։ Տեսնելով ինձ, խնդճ կինը լաց եղաւ։ Այս անգամ խօսքեր չըգտայ Լևոնին արդարացնելու։

—Չէի ասում, որ վերջն իւր անիծված հօր օրին է հասնելու։ Ահա չորրորդ անգամն է տուն է գալիս չան օրում...

Ես բարւոք համարեցի Լևոնի հետ խօսել առանձին, հրաւիրելով սենեակս։ Ցիշում էր երեկուայ իւր խայտառակ դրութիւնն և սաստիկ ամաչում։ Լուռ էր, սպասում էր, որ ես խօսեմ։ Ի՞նչ պիտի ասէի. նախատելը կըվնասէր աւելորդ. Լևոնը յիմար գլուխ չէր և ոչ էլ երեխայ—շուտով պիտի լրանար տասնուվեց տարին։ Ես ընդհակառակն բացատրեցի հարբեցողութեան կորստաբեր հետևանքները։ Նա լաց մինչև վերջը համբերութեամբ և, երբ վերջացրի, ասաց.

—Այդ բոլորը գիտեմ. հայրս հենց հարբեցողութիւնից մեռաւ։

—Գիտես և էլի խմո՞ւմ ես։

—Սիրում եմ։

—Ո՞վքեր։

—Նաւաստիները։

—Տեղափոխվիր ուրիշ պանդոկ։

—Ամեն տեղ սոխալում են։

—Մի՛թէ չես կարող մերժել։

—Առաջ մերժում էի, հիմա չեն թողնում։

—Ի՞նչ ասել է չեն թողնում, ամեն մարդ իւր կամքի տէրն է։

—Այո՛, սինեօր, բայց երբ կէս վեհանոց բռունցքը պահում են քթիդ տակ, մոռանում ես կամքդ։

—Խօմ նրանք քեզ չեն ծեծում։

—Կը ծեծեն, եթէ շատ յամառութիւն անեմ։

—Բայց ինչ օգուտ ունին քեզ հարբեցնելուց։

—Հարբածներն առում են արթուն մարդուն։ Երբ չեմ խմում, ասում են՝ «դու մոքում ծպրտում ես մեզ։ Դու էլ խմիր, հաւասարվիր մեզ հետ»։

—Գոնէ քիչ խմիր։

—Շատ չեմ խմում, բայց քիչն էլ ինձ հարբեցնում է։

—Ի՞նչ են խմեցնում։

—Առաջ գաղջը խմիչքներ էին տալիս։ Հիմա առում են՝ «Թանգ է նստում» և սոխում են խմել գաբեջուր էլ, օղի էլ...

Ես լռեցի։ Բայց հարկաւոր էր մի հեռահանքի հասցնել մեր խօսակցութիւնը։

—Լևոն, թող այդ պանդոկները, էլի թատրոնները...

—Իհարկէ, թողնելու եմ, սինեօր, շուտով, շուտով կը գնամ Իտալիա... Արդէն հարիւր յիսուն ռուբլի ունիմ։



—Իսկ մնդրդ։

—Նրան էլ հետս տանելու եմ։

—Հարիւր յիսուն ռուբլով։

—Ի՞նչ կայ, քի՛չ է։ Ես շատերից եմ հարցրել։ Ասում են՝ ամսական երեսուն ռուբլով կարող ենք ապրել այնպէս, ինչպէս այստեղ։

—Գուցէ կարելի է, բայց մի քանի ամիս, իսկ յետոյ։

—Յետոյ... մի գործ կը գտնեմ։

—Լևոն, ճշմարիտն ասա, ինչն է քեզ սոխում Իտալիա գնալ,—հարցրի ես, նայելով ուղիղ նրա աչքերի մէջին։

—Ուզում եմ վեհանչել նուագելը սովորել ու դալ այստեղի օրկեստրը մտնել։

«Կեղծում ես, բարեկամս, մտածեցի ես, այդ չէ դվնատոր պատճառը»։

Նայեցի նրան ուշադիր, սիրտս մորմոքվեց։ Նա ոտքի վրայ ցամաքել էր, ինչպէս արմատից ձեռաված ծաղիկ։ Խնդրեց ինձ համոզել մորը, որ կնիթառը տայ իրան։ Միևնոյն է, եթէ չըտայ, պիտի նորը գնել, ինչու աւելորդ ծախսի մէջ ընկնել։

Հաջիւ այդ օրից անցել էր մի շաբաթ, երբ մի երեկոյ, մօտ տասը ժամին, յանկարծ սենեակս մտաւ Ալմաստը չփոթված։

—Պարոն, նեղութիւն քաշեցէք, վերև բարձրացէք Աստուծոյ սիրոյն։

Տարօրինակ դրութեան մէջ տեսայ ես Լևոնին այդ երեկոյ։ Հեղ պատանին կատարելապէս կատաղել էր։ Առանց պաճկոնի ու կօշիկները թաւալվել էր դռների առջև և մռնչում էր ինչպէս մատաղ գազան,

կրծոտելով իւր ձեռների մէսը։ Նրա նիհար պարանոցի երակները ուռել, փքվել էին, կարծես, ահա, ահա պիտի տրաքվեն ձգված լարերի պէս։ Նա ոռները զարկում էր յատակին ինչպէս դիւահար։

Պատահել էր մի շատ սովորական դէպք, որի նմանները պատահում էին Օդեսսայի խուլ անկիւններում գրեթէ ամեն երեկոյ։ Նաւահանգստից վերադառնալիս Լևոնի վրայ յարձակվել են ինչ-որ քաղցած սրիկաները, խլել ձեռքից կլեթառը, հանել բաճկոնն ու կօշիկները և բաց թողել։

—Ես դրա համար քեզ սպանում եմ,—գոչեցի ես, բռնելով Լևոնի թևը,—ամօթ։

—Ես էլ այդ եմ ասում, որդի, խօմ չեմ նախատում։ Տանը մի հատ պիջակ էլ ունիս, կօշիկներ էլ... Վայ, Տէր Աստուած, ինչպէս է գլուխը պատին խըփում։ Այս ինչ պատիժ է, երկնային Թագաւոր...

Կատակածելի էր, որ Լևոնը կլեթառի, մանաւանդ ոլորմելի պիջակի ու կօշիկների համար այդպիսի հեծ ու կոծ բարձրացներ։ Անշուշտ կորուստն աւելի մեծ էր։ Խնդրեցի Ալմաստին մի քանի րոպէ թողնել մեզ առանձին։ Այրին դուրս գնաց։ Ճանաչելով Լևոնի բընաւորութիւնը, գիտէի ինչպէս պիտի խօսել այսպիսի հանգամանքներում նրա հետ։ Նա սիրում էր ղեկավարել, որ մարդիկ իրան չափահաս են համարում։

—Ամօթ է, Լևոն։—Փառք Աստուծու, դու երեխայ չես, խելքի եկ... Զարժէ այդպես գոռալ...

—Զարժէ, չարժէ, սինեօր, դուք էլ էք ասում։ Բայց չգիտէք ինչ եմ կորցրել, ինչ։ Զախ կօշիկս... այո... ձախը... Գիտէք... Իտալիա, վերադարձ, երգ, երաժշտութիւն, կորաւ, ամեն ինչ... բուլվարի ներքևում էր, այն մեծ սանդխաի մօտ։ Երկու հոգի էին—մեկը բարձրահասակ, միւսը թիկնաւէտ։ Բարձրահասակը բռնեց եահից ձեռներս, միւսը խուզարկեց գրպանները։ Երբ մի ռուբլուց աւելի չգտան—բարկացան։ Կարծում էի կլեթառս կըխլեն—կըհեռանան։ Զենք չպիջակս էլ հանեցին... Տէրը նրանց հետ, թող ձախ կօշիկս էլ հանէին—չէի խօսիլ... Բայց կօշիկներս, նէ երկու բաժակ օղի արժեն»։ Երբ թիկնաւէտը կըռացաւ կօշիկները հանելու, կատաղեցի, սկսեցի կծոտել նրա ուսերը, գլուխը... Նա ինձ ապտակեց։ Աչքերս մթնեցին... Սկսեցի աղաչել, պաղատել... Զըլսեցին անասուածները... Տարան, տարան...

—Ուրեմն կօշիկներիդ համա՞ր ես լալիս,—ասացի ես, մօտաւորապէս հասկանալով բանի էութիւնը...

—Հարիւր յիսուն ռուբլի, սինեօր, հարիւր յիսուն ռուբլի կար կօշկիս մէջ, ձախ կօշկիս... Այնտեղ էի պահում հաւաքած փողերս...

Եւ նա սկսեց դառնապէս հեկեկալ...

Այսպէս, ուրեմն, տարել էին նրա վեց-եօթ ամսուայ աշխատանքի վարձը. նրա Իտալիա գնալու, Լուիզային առնելու յոյսը... Նա աւելի ապահով տեղ չէր գտել իւր փողերի համար։ Տանը պահել վախեցել էր։ Մայրը կըգտնէր—չէր վերադարձնիլ։ Այդ կինը ամեն առաւօտ որդու գրպանները խուզարկում էր, մօտը փող չէր թողնում։

—Փաթաթել էի թղթում, դրել կրունգիս կողմում, վրէն կաշի խփել, ծայրերը դամել... Եատ գիտէ, չերներ կօշիկներով եմ քնել... Տարան սրիկաները։ Ով գիտէ, հիմա ծախում են մի բաժակ օղիով կամ

մի ֆունտ հացով... Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչ պիտի անեմ...

Նա խօսքեր չէր գտնում թշուառին մխիթարելու։ Խաուրթիւն համարեցի նախատել նրան իւր անզգուշութեան համար։ Հարկաւոր էր միայն ցոյց տալ կոտուածը գտնելու դէթ մի թոյլ յոյս։ Արդէն վիշտը շատ մեծ էր։

—Աա,—գոչեց նա յանկարծ, ձեռը զարկելով ճակատին,—յոյս կայ, կայ յոյս գտնելու։

—Այո՛,—ուրախացայ ես երեխայի պէս։

—Այո՛, սիմեօր։ Դուք ճանաչում էք Իգիօի հօրը։ «Մօշկա սելեօդկա» են կոչում նրան։ Ճարպիկ մարդ է, ճանաչում է փողոցի սրիկաներին։ Հին հագուստեղէն ու կօշիկներ է գնում—վաճառում։ Ա՛հ, խակոյն կըգնամ նրա մօտ, խակոյն։ Մամա, մամա, նէրս եկ, ուր ինձ միւս կօշիկներս, պիջակս, գնում եմ կին թառս փնտրելու...

Հակառակ մօր կամքին, նա շուտով հագնվեց ու վազեց դուրս։

Ես, ի հարկէ, Ալմաստին չըյայտնեցի, թէ Լևոն ինչ է կորցրել։ Երևակայում էի ինչ ողբ պիտի բարձրացներ և ուրքան անիծէր որդուն։

Վերադարձայ սենեակս, հոգով նախանձելով հարուստներին։ Ինչո՞ւ ես էլ հարուստ չէի...

Լոյսը նոր բացված գնացի Լևոնին տեսնելու։ Արդէն դուրս էր եկել տնից։ Ամբողջ գիշեր, Ալմաստի ասելով, չէր քնել, պըտտել էր անկիւնից անկիւն։ Ուշ երեկոյ էր, երբ Լևոնը մտաւ սենեակս յոգնած, քրտնած, փոշոտ։ Նա խօսելու անգամ այժ չունէր։ Մինչև կէսօր թափառել էր Իգիօի հօր, իսկ կէսօրից



յետոյ—Զաուշէնիկի ու Իգիօի հօր հետ։ Եղել էին գրեթէ բոլոր այն շուքանեերում, ուր հին հագուստեղէնի առուտուր է կատարվում։ Փնտրել էին միայն կօշիկները, առանց ում և է ասելու ինչ գտնէ են փնտրում։ Եւ ո՛չ։ Իգիօի հայրը խորհուրդ էր տուել Լևոնին «մոռանալ, թէ երբ և է փող է ունեցել»։ Զաուշէնիկօն յայտնել էր ոստիկանութեանը։ Պրիստաւը ծաղրել էր. «ո՛ր յիմարն է կօշկի մէջ փող պահում։

Լևոնն ամբողջ օրն անց էր կացրել անօթի։ Առաջարկեցի ընթրել ինձ հետ, մերժեց. դուրս եկաւ ուժասպառ, յուսահատված, հարբածի պէս օրօրվելով։

Միւս օրն ես նրան հանդիպեցի փողոցում մի փոքրահասակ, նիհար, կեղտոտ հրէայի հետ խօսելիս։ Դա ինքը «Մօշկա սելօդկան» էր, Իգիօի հայրը։

—Մօսեօ,—դարձաւ նա ինձ, երբ իմացաւ, որ Լևոնի բարեկամն եմ,—միրուքս վկայ, աղքատն երբէք չըպիտի փող ունենայ։ Փողը շատ գոռոզ է, սիրում է թանգագին պալատներ։ Ցիմար աղքատը կարծում է, թէ կարելի է նրան պահել գարշապարի տակ, կօշիկում, խի խի խի՛... Մանա՛կ, դու պիտի կուրծքդ պատռէիր ու ասէիր այդ հարիւրանոցին. «պատռէլի, պատռէիր ու ասէիր այդ հարիւրանոցին. «պատռէլի, պատռէիր ու ասէիր այդ հարիւրանոցին. «պատռէլի, ախրելի, համեցէք, ժյ.քս բնակարանը»։ Երանի եմ տալիս այն հնավաճառին, որ այդ կօշիկը կըգնի։ Երդվում եմ միրուքովս, Սողոմոն աղքատ էլ այնպիսի թանգագին կօշիկներ չի հագել։

Մի շաբաթ շարունակ Լևոնը վազ առաւօտից սկսած մինչև ուշ երեկոյ փնտրում էր իւր կորուստը։ Զաուշէնիկօն և Իգիօն յուսահատվել էին, այլ ևս չէին օգնում նրան, իսկ նա դեռ փնտրում էր։ Նա զրկվել էր քնից, հանգստութիւնից, ախորժակից։ Տան էր

վերադառնում երեկոները, պառկում հագուստով անկողնում, հեկեկում ու հեկեկում։ Ալմաստը յուսահատութիւնից չըգիտէր ինչ անէր, տանջվում էր որդու հետ հաւասար։ Նա պնդում էր, թէ Լևոնը կըխելագարվի, եթէ այդ դրութեան մէջ մնայ։ Սմեն ինչ մոռացել է, ոչնչով չի հետաքրքրվում, նոյն իսկ թատրոններով։

Խոստովանում եմ, ես այլ ևս քաջութիւն չունէի Լևոնի վիշտը տեսնելու։ Նրա ծանր հառաչանքները, ողբը, հեծկլտանքը կարատում էին սիրտս։ Այն ինչ այժմ նա աւելի յաճախ էր այցելում ինձ, քան առաջ։ Գալիս էր նստում սեղանիս քով և խօսում իւր կորստի մասին։ Նա դեռ պահում էր իւր սրտում մի թոյլ յոյս փողերը գտնելու։ Ով գիտէ, անկարելի ոչինչ չըկայ. կարող են այդ կօշիկները պըտտել ամբողջ քաղաքը և գարձեալ յետ գալ, իրանց տիրոջ ձեռքն ընկնել... Բայց չատով այդ թոյլ յոյսն էլ մեռաւ նրա մէջ, և Լևոնի միտքը սկսեց փոքր առ փոքր սթափվել։ Ծանօթ նաւաստիները խնդրում էին նրան շարունակել յաճախել պանդոկները, խոստանալով նրա համար նոր կլիմա գտնել։ Ես խորհուրդ տուեցի նրան ընդունել այդ առաջարկութիւնը և նորից սկսել փող ժողովել։ Մի օր, վերջապէս, նա գնաց «Արքայական եախտա» մի նոր կլիմա ձեռնի։ Երեկոյեան նա պատմեց ինձ, թէ նաւաստիները ինչպիսի ուրախութեամբ են ընդունել նրան, ինչպէս գրկվել ու համբուրվել նրա հետ։ Նրա բերանից գարձեալ օղու հոտ էր գալիս։ Երևի, այս անգամ խմել էր վիշտը մոռացութեան տալու համար. ես քաջութիւն չունեցայ նրան յանդիմանելու։



Մի չնչին գումար, որ կարողացաւ նա խնայել առաջին ամիսը, նորից վերակենդանացրեց նրա յոյսերը։ Այս անգամ նա անկեղծ խոստովանեց ինձ, որ իւր նպատակը գնալու գլխաւոր նպատակը Լուիզային տեսնելն է։ Գրեթէ օր չէր անցնում, որ նա չըհարցնէր.

— Սինեօր, ինչ լուր կայ Լուիզայից։

Նա ինքն ամաչում էր անմիջապէս սինեօրա Սաեֆանիային դիմել այս հարցով։ Ես հաղորդում էի նրան բոլորը, ինչ-որ լսում էի տանտիրուհուց։ Միշտ Լուիզան բարև էր ուղարկում Լևոնին։ Եւ Լևոնը երջանիկ էր այդ ուշադրութեամբ։ Զըգիտեմ, կար, արդեօք, մի ուրիշը, որ այնքան ուրախանար Լուիզայի ամեն մի նոր յաջողութեան համար, որքան այդ սիրահարը։ Նա ասում էր, թէ ամենից աւելի ինքն է սիրում Լուիզային և ամենից առաջ էլ ինքն է ուզում ծափահարել նրան բեմի վրայ. ոչ այստեղ — Օդեսսայում, այլ այնտեղ — Իտալիայում։

Մի անգամ նա ասաց.

— Եթէ մինչև առաջիկայ գարուն չըկարողանամ ճանապարհ ընկնել — կըխելագարվեմ։

Մի ուրիշ անգամ դիմեց ինձ այս հարցով.

— Ինչ էք կարծում, սինեօր, Լուիզան, նշանաւոր երգչուհի դառնալով, կըդոռոզանա՞յ։

Հասկացայ, թէ իսկապէս ինչ է ուզում իմանալ։ Հոգու խորքում նա ինքն իրան արժանի չէր համարում Լուիզային, բայց հպարտութիւնը չէր թոյլ տալիս նրան խոստովանել այդ։ Նա ուզում էր իմ միտքն իմանալ — արժանի եմ համարում իրան Լուիզային թէ ոչ։

Կամենալով գէթ մի փոքր սթափեցնել այդ օրից օր աւելի ու աւելի կուրացող հոգին, պատաս-

խանեցի.

—Այո՛, կը գոռոզանայ։ Նա հէնց այժմ էլ, երբ դեռ շատ հեռու է նշանաւոր երդիչուհի համարվելու պատուից, գոռոզացել է...

—Ո՞վ ասաց,—գոչեց Լևոնը վշտացած։

—Նրա վարմունքը։ Նա քեզ մոռացել է։

—Ի՞նչ։ Ինչո՛ւ. նա միշտ բարևներ է ուղարկում, խօսք ինքներդ էք ասում։

—Այո՛, բարեկամս, ուղարկում է. բայց ներքին, այդ բարևների նպատակն ես ուրիշ կերպ եմ հասկանում։ Լուիզան, դեռ երդիչուհի չդարձած, արտիստների խորամանկութիւնն է իւրացնում։ Ես ճանաչում եմ նոյն իսկ տաղանդաւոր երդչուհիներ ու դերասանուհիներ, որոնք չողոքորթում են համալսարանական քաղաքներում ուսանողներին, գաւառական քաղաքներում—գիմնազիստներին միմիայն նրանց ցոյցերին արժանանալու համար։ Իսկ դու քո խմբով աւելի գեղեցիկ ցոյցեր գիտես անել։ Լուիզան այս գիտէ և քեզ հետ հեռաւոր բարեկամութիւն է պահպանում իր ապագայի համար, թէև գիտէ, միևնոյն ժամանակ, որ դու կաշառվող չես։ Ա՛խ, բարեկամս, մի յափշտակվիր այն ուսանողի պէս, յիշո՛ւմ ես, որ անցեալ տարի ինքնասպանութիւն գործեց մի երդչուհու պատճառով։ Լուիզան քեզ չի սիրում, եթէ սիրէր—նամակ կը գրէր։ Ինչո՛ւ մէկը գրեց ու լռեց։

Գուցէ ես զրպարտում էի Լուիզային, բայց ասածիս մէջ զղում էի ճշմարտութեան մաս։ Լևոնին վրկելու համար պատրաստ էի աւելի վատ դոյներով պատկերացնել Լուիզային նրա առջև։

—Նա ժամանակ չունի ինձ նամակ գրելու, զբաղ-



ված է,—ասաց Լևոնը ոչ այնքան Լուիզային արդարացնելու, որքան իւր անձնասիրութիւնը պաշտպանելու մտքով։

—Գուցէ... թո՛ղ այդպէս լինի... ասացի ես անոթ ձայնակով Լևոնին աւելի չբվշտացնելու համար։

Որքան յիշում եմ, հէնց այդ օրն էր, որ սիմեոնը Սահեֆանեան մոտ սենեակս անսովոր ուրախ տրամադրութեան մէջ և ասաց.

—Սիմեոն, հիմա կարող էք ինձ չնորհաւորել։

—Ի՞նչ է պատահել...

—Պատահել է այն, ինչ-որ վաղուց սպասում էի անհամբեր։ Լուիզան երեկ պսակվել է Կավալլարօի հետ... հէնց այս րոպէիս հեռագիրը ստացայ... ահա...

Եւ նա ծոյլ հանելով հեռագիրը, ցոյց տուեց ինձ։

—Այդպէս անսպասելի,—գոչեցի ես, թէև վաղուց մի ներքին ձայն ինձ ասում էր, թէ կայ ինչ-որ մտերմութիւն Լուիզայի և Կավալլարօի միջև։

—Անսպասելի չէր, սիմեոն, ոչ. այդ դուք չէք գիտէիք, իսկ ես գիտէի, որ նրանք նշանված են վաղուց։ Նշանվելն ինձ համար կարևոր չէր, պսակվելն է կարևոր։ Ես լռում էի, վախենալով որ գործը չբվշտանայ։ Ա՛խ, վերջապէս որքան ուրախ, որքան ուրախ եմ։ Կավալլարօն հէնց իմ ուզած փեսան է—բարի, քաղաքավարի, լաւ երգիչ, լաւ էլ փող է ստանում։ Այո՛, Լուիզան աւելի լաւ ընտրութիւն անել չէր կարող։ Երեկ պսակվել են, այսօր պիտի ուղևորվեն Պարիզ։ Կավալլարօն պիտի մի տարի ծնող այնտեղ։ Լուիզան, իհարկէ, նրա հետ կըլինի...

Ես չնորհաւորեցի երջանիկ մօրը. բայց մի ներքին ձայն չընչաց, թէ շատ էլ անկեղծ չեմ վարվում։

Ի՞նչպէս կընդունի այդ լուրը Լևոնը, որին սիրում եմ աւելի քան Կավալլաթին ու Լուիզային։

Այդ օրն ես վերադարձայ դրսից տուն ուշ դիշերին, որպես ղի չըհանդիպեմ Լևոնին։ Սակայն հետևեալ օրը նա եկաւ սենեակս երեկոյեան սովորական ժամից առաջ։ Սինեօրա Ստեֆանիան ճաշի միջոցին ինձ ցոյց էր տուել երկրորդ հեռագիրը, որով յայտնվում էր, թէ նորապսակները արդէն ուղևորվել են Պարիզ։

Տխուր, անմոռանալի երեկոյ. առաջին անգամ կողոպտվելուց յետոյ Լևոնի դէմքի վրայ տեսայ այդ երեկոյ ուրախ ժպիտ։ Նա իսկոյն պատմեց իւր ուրախութեան պատճառը։ Երկու օր է նրան կանչում են «Խերսօն» շոգենաւը։ Այնտեղ նա նուագում է նաւապետի և իւր օգնականների համար։ Այսօր օգնականներից մէկը տալով նրան իւր մանդօլինան, առաջարկել է նուագել։ Լևոնը կատարել է նրա ցանկութիւնը։ Նաւապետին առանձնապէս դուր է եկել «Մադրիդի չրմոլիկը»։ Նա մի շատ բարի մարդ է. իմանալով որ Լևոնը ձգտում է դնալ Իտալիա, այսօր խոստացաւ օգնել նրան։ Երկու օրից յետոյ «Խերսօնը» դնում է Կոնշտատ։ Այնտեղից յետ է դալու և ուղևորվելու է Միջերկրական ծովը, յետոյ Հեռաւոր Արևելք։ Ահա այդ ժամանակ նա կըվերցնի Լևոնին իւր մօր հետ և կըտանի մինչև Իտալիայի սահմանները...

—Օ՛, սինեօր, սինեօր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ թռչկոտել։ Ես նաւապետի պարտքի տակ չեմ ձգել։ Կընուագեմ նրա համար ամբողջ ճանապարհին, դիշեր-ցերեկ կընուագեմ։ Իտալիա, Իտալիա, անպատճառ պիտի տեսնեմ։ Որքա՜ն կըզարմանայ Լուիզան ու ի՜նչպէս կուրախանայ...



Ծանր էր ինձ համար այս անկեղծ խօսքերից յետոյ թագցնել իրողութիւնը Լևոնից, որ այդ պահին մարմնացած ոգևորութիւն էր։

—Լևոն,—ասացի,—չմտ ես փափագում տեսնել Լուիզային։

—Այո՛, ի հարկէ։

—Եթէ չտեսնես, չմտ կըախսես։

—Բայց ես կըտեսնեմ նրան, սինեօր, կըտեսնեմ Միլանում,—գոչեց Լևոնը հաւատով լի, միևնոյն ժամանակ, մի տեսակ երկիւղով նայելով երեսիս։

—Լուիզան այժմ Միլանում չէ։

—Ո՞վ ասաց։

—Սինեօրա Ստեֆանիայի հեռագիրը։

—Բաս ո՞րտեղ է։

—Պարիզում։

—Ո՞ւմ հետ...

—Կավալլաթոյի...

—Կավալլաթո,—գոչեց պատանին դրեթէ չնչասպառ։

—Ամուսնացել է Լուիզայի հետ և երեկ ուղևորվել Պարիզ մի տարի ժամանակով,—ասացի ես միանդամից սրտիս ծանրութիւնից ազատվելու համար։

Լևոնը ցնցվեց, երեսի մկանունքները դողացին։ Մի վայրկեանում կարմրեց, կապտեց, յետոյ սպրդնեց կաւի պէս։

—Տեսնեմ, որ քեզ չի սիրում Լուիզան, որ դու երազի մէջ ես...

Լևոնը ճիգն արաւ զսպել յուզմունքը։ Այդ տասնուերեք տարեկան պատանին, որի զգացումները այն-

քան անժամանակ հասունացել էին, ունէր նաև կամքի ոյժ: Սակայն հարուածն աւելի զօրեղ էր: Նա թուլացած ընկղմվեց աթոռի վրայ, արտասանելով.

—Ա՛յ նորութիւն... պէտք է չնորհաւորել...

—Այո՛, պէտք է չնորհաւորել,—կրկնեցի ես, ձեռանալով իբր թէ չեմ նկատում նրա յուզմունքը:

—Կավալլարօն լաւ մարդ է, ազնիւ է,—ասաց նա դողդոջուն ձայնով, շրթունքները կրծոտելով:

—Այնքան ազնիւ, որ Լուիզան չարժէ նրան...

—Սխնեօր...

—Չարժէ, չարժէ,—կրկնեցի ես, վրդովվելով անմեղ խաղալուհու դէմ:

—Լուիզան բարձր է... Լուիզան... հրեշտակ է...

Այլևս նա չկարողացաւ իրան պահել, դլուխը դրեց սեղանին ու սկսեց հեկեկալ այնպէս ուժգին, որ թուում էր, թէ նրա մարմինը կտոր-կտոր է լինում:

Ես զգացի անզուսպ առելութիւն դէպի Լուիզան. կարծես, նա ինձ հասցրել էր բարոյական ծանր վիրաւորանք: Սկսեցի անխնայ և միանգամայն անարդար պախարակել մի էակի, որ իսկապէս արժանի էր սիրոյ և յարգանքի: Նկարագրեցի նրա աննշան թերութիւնները խոշորացոյցով մեծացրած, հնարեցի չեղած թերութիւններ: Լսելով ինձ, կարելի էր կարծել, թէ չկայ աշխարհի երեսին և չի եղել աւելի անբարոյական, աւելի չիմար և նոյն իսկ աւելի տգեղ ու հակակրելի արդիկ, քան Լուիզան: Եւ այս բոլորը—Լևոնին հիասթափեցնելու համար: Ես ջախջախում էի նրա կուռքը, ձգում նրա ոտների տակ, որպէս զի ոչնչացնեմ նրա սրտում խորին հաւատը: Այն ինչ գիտէի, որ այդ կուռքը ոչնչով մեղաւոր չէ իր մոլեռանդ երկրպագուի առջև: Նա դուցէ չէր էլ երևակայել, որ իւր պարզ, ընկերական վարմունքը կարող է մի պատանու սրտում առաջացնել այդքան հասուն, այդքան խորը և ջերմ զգացում...

Սակայն Լևոնն աւելի մեծահոգի և վեհանձն էր, քան կարող էի երևակայել: Նրա կեղեքվող կրծքից դառն հեծկլտանքի հետ դուրս էին գալիս միայն այս բառերը.

«Լուիզան պակասութիւն չունի... Լուիզան հրեշտակ է»...

Եղել են մոլեռանդներ, որոնք կրակի միջից իրանց այրվող ձեռները պարզել են դէպի վեր, աղօթել Աստծուն, որի անունով նրանք դատապարտվել են այրման: Այսպէս էր և՛ Լևոնը: Անհուն տանջանքների բովից նա դեռ պաշտում էր իւր իդեալին, ոչ բովհետև դա նրա միակ աստուածուհին էր:

Նա զսպեց հեծկլտանքը, սրբեց արցունքը, ոտքի կանգնեց, դդակը վերցնելով:

—Ձեզ է չնորհաւորել սխնեօրա Ստեֆանիային,—ասաց:—Բայց այժմ ուշ է... վաղը... Ներողութիւն, սխնեօր, Լուիզայի համար չէի լսիլ... Յոգնած եմ... Գիտէք... գիտէք... Լուիզան զուր է ամուսնու հետ գնում Պարիզ... Կավալլարօն գնում է իւր ձայնն աւելի մշակելու... Լուիզան իւր ապագան կըզոհի նրան... Բայց ինձ ինչ... ինձ ինչ...

Քանի մի րոպէ նրան պաշարեց անձնասիրութեան և ամօթի զգացումը: Նա շփոթվեց իւր թուլութիւնից, արտասուքից: Շփոթվեց այնպէս, որ երեսիս չէր ուզում նայել: Վերցրեց մի քանի անգամ մանդոլինան աննպատակ, յետ դրեց, դվնարկը ձեռքին սկսեց

վինտրել նրան, ծիծաղեց, կեղծ, անբնական ծիծաղով։ Վերջապես, ճանկեց իւր թանձր մազերը, կանգնեց սեղանի մօտ և կարմրած աչքերը յառեց լամպարի լոյսին։ Զըգիտեմ ինչու, միշտ նրա աչքերը ձգտում էին դէպի լոյս։ Նա սիրում էր նայել արեգակի շողերին, լամպարի լոյսին, վառարանի կրակին... Եւ այդ լինում էր մանաւանդ այն միջոցներին, երբ նրա մըտքերը պղտորված էին, նրա հոգին խռովված...

Ես տանջվում էի իմ անզօրութիւնից, որովհետև չըգիտէի ինչով մխիթարել մարմնացած տանջանքը։

Լռութիւնը տևեց երկար։ Ես անցուդարձ էի անում. նա չարունակ կանգնած էր։ Յանկարծ, շրթունքները կրծելով, գլխարկը մի ձեռով խփեց միւս ձեռի ափին, շուռ եկաւ և, առանց ինձ հրաժեշտ տալու, արագ քայլերով դուրս գնաց...

Մանդօլինան մնաց սեղանիս վրայ, կարծես, վըշտացած, որ դարձեալ իրան մոռացան... Չէ՞ որ Լևոնը եկել էր նրան տանելու, որ վաղը նուագէ չոգենաւի վրայ...

Ինձ պաշարեց զղջման զգացումը. ինչու՞ այդպես շուտ և անզգոյշ յայտնեցի նրան լուրը։ Ով գիտէ, ուր վազեց և ինչ կարող է անել։ Երկու անգամ բարձրացայ վերև և, դրսից լսելով նրա ձայնը, հանգստացայ, յետ եկայ։ Սկսեցի ինձ մխիթարել այն մտքով, որ կատարել եմ անկեղծ բարեկամի պարտք, բանալով Լևոնի աչքերը։ Մտածեցի նաև, որ ՀՀ, ինչ և լինի, տասնութ տարեկան պատանի է, հազիւ թէ վիշտը նրա սրտում երկար տևի։ Լաց կըլինի, լաց կըլինի Լևոնը—կըհանգստանայ... Մտածում էի այսպես և, մի և նոյն ժամանակ, զգում որ սխալված եմ...



Առաւօտը զարթնեցի մի անսովոր ծանրութիւն սրտիս վրայ։ Շտապով խմելով մի բաժակ թէյ, գնացի վերև։ Լևոնը տանը չէր։ Սլմաստան ասաց, թէ դիշերը, անկողին պառկելուց առաջ, տուել է իրան յիսուն ռուբլի և համբուրվել հետը, թէ դրեթէ ամբողջ գիշերը նստած է եղել դրասեղանի քով, գրել է, ջնջել, պատռել։ Առաւօտը կրկին համբուրվել է նրա հետ և դուրս գնացել, տանը թողնելով կնիքառը, որ ամեն օր հետը տանում էր։

—Նա սխալ էր,—հարցրի ես։

—Ոչ սխալ, ոչ ուրախ. այնպես էր, ինչպես միշտ։ Կնիքառը տանն է, մանդօլինան սենեակումս. պարզ է, որ նա ոչ պանդուխ է գնացել, ոչ չոգենաւով։ Ո՞ւր կարող է լինել։ Ես վախագնեցի տեսնել նրան անպատճառ, հէնց նոյն ժամին. ես սաստիկ անհանգիստ էի։ Դուրս եկայ, պըտտեցի թատրոնների շուրջը, անցայ երկու անգամ Դերիբասեան փողոցը, ուր երբեմն Լևոնը զբօսնում էր։ Զըկար։ Օրը կիրակի էր. մտածեցի, գուցե հայոց եկեղեցումն է. կիրակի օրերը երբեմն գնում էր պատարագ լսելու։ Այնտեղ էլ չէր։

Աւելի քան երկու ժամ թափառելուց յետոյ վերադարձայ տուն մտածելու։ Թւում էր ինձ, որ մի բան եմ կորցնում, մի շատ թանգագին բան։

Դարբասի առջև հանդիպեցի Զաուշէնկօին։ Նա Լևոնի սենեակից էր գալիս։ Նա էլ էր փնտրում ընկերոջը, չըգիտեմ, ինչ-որ «կարևոր» գործի համար։ Եղել էր պանդոկներում, «Խերսօն» չոգենաւի վրայ, հարցրել էր. նաւաստիները այսօր նրան չեն տեսել։

Պատմեցի նրան պատահածը։

—Օ՛, ունայնութիւն,—գոչեց բանաստեղծն իւր սովորական ոգևորութեամբ.—ես միշտ ասել եմ, թէ սէրը դէպի կինը հոգու հիւանդութիւն է: Լևոնը վաղուց է ինձ խոստովանել, թէ սիրահարված է այդ աղջկայ վրայ: Օ՛հ, ինչքան էր խօսում նրա մասին, ինչպէս հառաչում... Պէտք է գանել նրան, հէնց իսկոյն... Նա տաքարիւն է...

Խնդրեցի նրան մի քանի րոպէ սպասել ինձ դրսում: Գնացի սինեօրա Մաեֆանիայի մօտ: Անշուշտ Լևոնն այսօր եղել է նրա մօտ. չէ որ ուզում էր շնորհաւորել նրան:

Երջանիկ տրամադրութեան մէջ գտայ Մաեֆանիային: Նա ուրախութիւնից երգում էր ու պարում Ռահայի մօտ այն րոպէին, երբ մտայ սեղանատունը: Նա ասաց, թէ հրաւիրել է մի քանի բարեկամներ ու ծանօթներ, թէ պէտք է մի լաւ զուարճանալ:

—Ա՛խ, սինեօր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ բոլորին գրկել ու համբուրել:

«Մի գուցէ և ինձ»,—ակամայ մտածեցի ես, գրեթէ երկիւղով նայելով նրա սիւների պէս հաստ և ուժեղ կռնկներին:

Լևոնի մասին ասաց, թէ առաւօան եղել է իւր մօտ, շնորհաւորել է, ձեռքը համբուրել:

—Նա քաղաքավարի պատանի է, խիստ և խիստ ախտ: Կարծես, հայրը վարպետը չի եղել, այլ ջենտլմէն: Բայց ծիծաղելի էր, չէր հասասում Լուիզայի ամուսնութեանը: Հեռագրները ուղեցի, ինքը կարգաց, մէկ էլ չնորհաւորեց, բայց այնպէս մոխիկ աբար աչքերիս խելթ-խելթ, ապշած, որ, կարծես, նոր էր տեսնում ինձ: Ցետոյ առանց դէս, առանց դէն ա-



ասց. «Սինեօրա Մաեֆանիա, մօտս սիրեցէք, նա խեղճ կնիկ է»: Առհասարակ շատ օտարոտի էր...

Այսքանը բաւական էր, որպէս զի իմ մէջ ծագեր վատ նախազգացում: Դուրս գալով փողոց, Զաուշէնկօն հաղորդեցի իմ երկիւղը: Նա առաջարկեց գնալ քաղաքային թատրոնի կողմերը: Իգկօն այժմ պիտի այնտեղ լինի. նա կարող է գտնել Լևոնին:

Իգկօին հանդիպեցինք իւր հասակի մի յոյնի հետ սաստիկ վէճի բռնված: Յոյնը կատաղել էր, հայհոյում էր Իգկօին, անուանելով նրան «քոսոտ ջհուդ», «սատկած առնէտ» և այլն: Իսկ Իգկօն միայն կրկնում էր. «դու լինդ, դու լինդ»:

Զաուշէնկօն սպառնալով յոյնին գաւազանով չախչախել նրա գլուխը, ստիպեց նրան լռել: Ցայտնվեց, որ վէճը Լևոնի պատճառով էր: Ցոյնը Լևոնի մրցակիցն էր թատրոնի վերնայարկում և չուտացնում էր այն երգիչներին, որոնց նա ծափահարում էր: Նա Իգկօի մօտ Լևոնին հայհոյել էր. Իգկօն պաշտպանել էր բացակայ ընկերոջը և վէճի բռնվել:

Երբ Զաուշէնկօն պատմեց ինձանից լսածը, Իգկօն, վերուվար թռչկոտելով, գոչեց.

—Իհէ, իհէ, խեղճ Լևոն...

Նա ևս գիտէր, որ Լևոնը միշտ երազում էր Լուիզայի մասին և պատմեց մեզ մի քանի մանրամասներ: Ի միջի այլոց, ասաց, թէ շատ սիրելիս Լևոնը գնում էր «Ալեքսանդրեան պուռի» կոչված զբօսավայրն ու այնտեղ ծովափի կողմում, մի հեռուստ նստարանի վրայ նստում, կիթառը ծնկների վրայ դրած, և մոխիկ անում նաւահանգստից դուրս եկող շոգենաւերին: Քանի քանի անգամ Իգկօն հանդիպել է նրան

այդ դրութեան մէջ, և նա ասել է. «Իգիծ, երբ մոխիկ եմ անում մի հեռացող շոգենաւի, ինձ թւում է, որ ես էլ նրա վրայ ուրիշների հետ դնում եմ հեռու, հեռու երկիրներ»...

—Գնանք Ալէքսանդրեան պառկ, այնտեղ է, ե՛ւ քեզ,—առաջարկեցի ես։

Տասը րոպէում հասանք պէօսավայրը, անցանք այդ ընդարձակ այդին երկայնութեամբ ու լայնութեամբ, նայեցինք բոլոր ծառուղիները—չկար ու չկար Լևոնը...

Ես վերադարձայ տուն յոգնած և՛ ֆիզիկապէս և՛ հոգեպէս, թողնելով Զառուհիկոին և Իգիօին որոնել իրանց կորած ընկերոջը...

---

Վատ նախազգացումս ինձ այնքան չարաչարել էր, որ ես առանց որ և է պատրուակի հրաժարվեցի մասնակցել սինեօրա Մաեֆանիայի այդ օրուայ ուրախ խնճոյքին։ Ես պառկած էի հագատով անկողնակալ վրայ և մտածում էի Լևոնի և մխիթար Լևոնի մասին։ Նրա տխուր, յուսահատութեամբ լի աչքերն էի յիշում վերջին րոպէին և նրանց մէջ կարդում մի փոքրիկ, բայց աքանչելի հերոսի հոգու անհուն տառապանքը։ Երևակայում էի նրան իւր թշուառ հօր դրութեան մէջ. հարբած, կեղտոտ, վեր ընկած թաղրոնի դռների առջև, անցորդների ծաղրին ու սրախօսութիւնների ենթարկված...

Նայում էի նրա մանդօլինային, սիրտս մորմոքվում էր։ Անշունչ գործիքը, կարծես, լեզու էր առացել, ողբում էր իւր տիրոջը։ Ես վերցրի նրան սեղանից վրայից, քաշ արի պատի մի անկիւնում, որ այլևս աչքիս չընկնի... Մի քանի անգամ մտանեցս դիպան նրա լարերին, և նրանց թոյլ հնչիւնները յիշեցրին ինձ այն նշանաւոր առաւօտը, երբ Լևոնն առաջին անգամ նուագեց «Մադրիդի ըղմոլիկը»։ Թշուառ ըղմոլիկ, ափսո՛ս ես դու այժմ...

Իսկ այնտեղ, հարևան սենեակում ուտում, խմում, զուարճանում էին հրաւիրվածները։ Լսում էի Ռաֆայլի ձայնն և սինեօրա Մաեֆանիայի բարձրաձայն ուրախ ծիծաղը, որ առատ-առատ բղխում էր նրա լայն, առողջ կրծքից... Փոքր առ փոքր նեարդերս թմրեցին. ես նիրհեցի, որովհետև դրեթէ ամբողջ գիշեր չէի քնել... Կէսքուն և կիսարթուն դրութեան մէջ լսեցի ինչ-որ դղրդոց։ Վեր թռայ տեղիցս... դա Լևոնի մանդօլինան էր, որ ընկել էր պատից յատակի վրայ։ Նոյն րոպէին, երբ գործիքը նորից քաշ էի անում պատին, դրսից լսեցի անսովոր աղմուկ։ Ետապէցի նախասենեակ և այնտեղ հանդիպեցի սինեօրա Մաեֆանիային իւր հիւրերի հետ։ Նրանց դէմքերն արտայայտում էին զարմացում և երկիւղ։

—Ի՞նչ է պատահել, ինչ է պատահել,—հարցնում էին միմեանց։

Մեր բնակարանի մուտքի առջև կանգնած էր այրի Ալմաստը և, ձեռները տարածած դէպի նեղքև, գոռում էր հրդեհում այրվողի պէս։ Երկու ոստիկան և մեր գաւթապահը բարձրացնում էին սանդխատով... Լևոնին։ Նրանց ետևից բարձրանում էին Զառուհիկոն և Իգիօն։

Նայելով Լևոնի թրջված հագուստին, կապտած դէմքին, ամեն ինչ հասկացայ... Մնացեալն երկու

խօսքով պատմեցին Զաուշէնկօն և Իգկօն։

Լևոնին հանել էին ջրից նաւաստիները «Խերսօն» շոգենաւի տակից, որ երկու շաբաթից յետոյ պիտի տանէր նրան Իտալիա...

1901 թ. Բագու։

---

# Ե Ւ Գ Ի Ն Է

*Դրամա երեք գործողութեամբ*

# ԵՒԳԻՆԷ

**Դրամա երեք գործողութեամբ**

ՆՈՒԻՐՎՈՒՄ Է ԳԵՐԱՅԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՒԲԼԵԱՆԻՆ

Առաջին անգամ ներկայացված է 29 հոկտ. 1901 թ. Թիֆլիսի Ազոխտիք-ընկերութեան թատրոնում:

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

*Միհրան Ալվերդեան*, քաղաքում յայտնի փաստաբան, 35 տարեկան:

*Եւգինէ Ալվերդեան*, նրա կինը, 24 տարեկան:

*Հռիփսիմէ Միրվէլեան*, Եւգինէի մայրը, 50 տարեկան այրի:

*Մարթա Տէրտէրեան*, Միհրանի քոյրը, 38 տարեկան այրի: Նախկին վարժուհի:

*Համազասպ Վարսամեան*, Միհրանի մօրեղբօր որդին և օգնականը, 28 տարեկան:

*Աբգար Սուլթանեան*, ինժեներ-տեխնօլօգ, գործարանատէր: Միհրանի բարեկամն ու հասակակիցը:

*Արշակ Սառափեան*, Եւգինէի մօրեղբօր որդին: Նախկին սպայ, այժմ անգործ, 36 տարեկան:

*Գարբիս Ազարեան*, 36 տարեկան:

*Գալամքարեան Զարուհի*, 35 տար.
*Գալամքարեան Բարսեղ*, 52 տար. } ամուսիններ:

*Երմոնէ*, Ալվերդեանների աղախինը:

*Գրագիր.*

Գործողութիւնը կատարվում է նահանգական մեծ քաղաքում:

Ներկայացնելու իրաւունքը վերապահված է հեղինակին:

# ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

*Բեմը ներկայացնում է Ալվերդեանների բաւական հարուստ պարզարված հիւրասենեակը: Դէպի ձախ երկու դուռ—խորքինը տանում է սեղանատուն, աւանագենայի կողմինը—Եւգինէի ննջարանը: Այս երկու դռների մէջև գրած է թախտ թանգագին մութաքաներով ու բարձերով: Խորքում նոյնպէս երկու դուռ, որոնցից ձախինը տանում է դէպի նախասենեակ, աջինը դէպի Միհրանի առանձնասենեակը: Ալ պատի վրայ լուսամուտներ դէպի փողոց: Այս պատի տակ գրած է դաշնամուր, մօտը մի սեղան, վրէն գեղարուեստական իրեր, լուսանկարներ դիտակով հանդերձ: Սեղանի մօտ բարձր պատուանդանով բրօնզեայ լամպար ահագին մետաքսեայ լուսամփոփով: Խորքի երկու դռների միջին ուղղութեամբ բեմի մէջտեղում գրած է պահարակ, շրջապատված շքեղ բազկաթոռներով: Ալ կողմում մի օրօրվող բազկաթոռ (качалка): Ամենուրէք սենեակի պատ և յարմար անկիւններում փոքրիկ ցածր փափուկ նստարաններ: Պատերին կախված են իւղանկարներ և գրաւիւրներ: Առ հասարակ ամբողջ կահ կարասին կրում է նոր ձեռք բերված հարստութեան դրոշմ: Ամեն ինչ նոր է և ժամանակակից: Ընթերոյեան 8 ժամն է: Սենեակը լուսաւորվում է գահաւորակի առջև սեղանի վրայ գրած և դաշնամուրի մօտ գտնվող բրօնզեայ լամպարներով:*

## ՏԵՍԻԼ I

Տիկ. Մարթա եւ Երմոնէ:

*Վարագոյրը բարձրանալիս Երմոնէն անձեռոցիկով մաքրում է բազկաթոռները, իսկ տիկ. Մարթան բրօնզեայ լամպարի մօտ նստած կարդում է ինչ-որ գիրք:*

**Տ. ՄԱՐԹԱ:** *Շուտ արա, գործդ վերջացրու, ութ ժամից անց է, սամօվարը կուշանայ:*

**ԵՐՄՈՆԷ:** *Իակի էլ չի ուշանայ:*



**Տ. ՄԱՐ.** *Էլի հակառակեցիր, ախար հայ ես էֆ*

**ԵՐ.** *Հայն ինչ է որ...*

**Տ. ՄԱՐ.** *Հայը դոռոզ է, կոպիտ է, հակաճառող:*

**ԵՐ.** *Իակի էլ հակառակող չէ:*

**Տ. ՄԱՐ.** (*Ծպտալով*) *Դէ լաւ, դնա սամօվարի հոգս տես, թէ չէ՝ կըբարկանամ:*

**ԵՐ.** *Իակի էլ չես բարկանայ: Գնում եմ: (Գըննում է ձախ կողմի խորքի դռներով սեղանատուն: Ձախ թեւի աւանագենայի կողմի դռներից, ննջարանից դուրս է գալիս Եւգինէն:)*

## ՏԵՍԻԼ II

Տիկ. Եւգինե եւ տիկ. Մարթա:

**Տ. ՄԱՐ.** *Երեխան քնեց:*

**ԵՒԳԻՆԷ.** *Վերջապէս, քնեց: (Նստում է դաշնամուրի մօտ երեսը դէպի Մարթան: Լռութիւն:) Տէր Աստուած, ինչքան ախուր է առանց Միհրանի:*

**ՄԱՐ.** (*Գիրքը ծալելով եւ ծնկան վրայ դնելով*) *Մի կէս ժամ ուշացաւ, էլի սիրահարներ, սիրահարներ, չուտով ձեր ամուսնութեան տասնեակ ամիսը կլրանայ, էլի, կարծես, երէկ էք պսակվել: Այդպէս չի կարելի, մի քիչ պակասեցրէք ձեր կրակը: (Ծպտում է:)*

**ԵՒԳ.** *Միթէ ուրախ չես, որ եղբայրդ սիրվում է:*

**ՄԱՐ.** *Ընդհակառակը: Քեզ չէ՞ որ լաւ յայտնի է, թէ որքան թանգ է ինձ համար Միհրանի բաղդաւորութիւնը: Սիրիր նրան, Եւգինէ, նա հաղուագիւտ մարդ է:*

ԵԻԳ. Այժմ ես նրան ճանաչում եմ աւելի, քան թէ դու։

ՄԱՐ. Այո՛։ Կընշանակէ դիտես, որ եթէ նրան վշտացնես—կըդժբաղդանայ։

ԵԻԳ. (*Թևթև հառաչելով*) Ինչո՛ւ պիտի վշտացնեմ, քանի որ սիրում եմ։

ՄԱՐ. Իսկ նա քեզ ուղղակի պաշտում է։ Նա չի էլ կարող ուրիշ կերպ սիրել։ Նրա բնաւորութիւնն անխառն է, հաստատ և, այսպէս ասած, ամբողջ։ Այդ տեսակ մարդիկ երբ սիրում են, սիրում են անկեղծ, խորը և անվերջ սիրով։ Բայց, շողոքորթութիւն չընդամարես, դու էլ նրա նման ես։ Դուք երկուքդ, իմ կարծիքով, միևնոյն բնաւորութեան տէր էք։ Զարմանալի է, որ ասում են, թէ միայն կօնարաատներն են միմեանց սիրում։

ԵԻԳ. Ըղիտեմ, կայ իմ մէջ նրա արժանաւորութիւններից որ և է մէկը թէ չէ, գիտեմ, որ ոչ միայն սիրում եմ նրան, այլ և յարգում։ Նա այն մարդն է, որին վաղուց ստեղծել էր երևակայութիւնս և որին ես ուշ ճանաչեցի։ Յարգում եմ նրա սրտի պարզութիւնը, խելքի կորովը, կամքի ոյժը։ Այո, նա զօրեղ կամքի տէր է։ Միմիայն իւր խելքին է պարտական այն դիրքը, որ նա ունի մեր քաղաքի հարիւրաւոր փաստաբանների մէջ։ (*Վեր է կենում ու շրջում*։)

ՄԱՐ. Աւրի, այդ խօսքերիդ համար քեզ համբուրեմ։ (*Վեր է կենում եւ համբուրվում*։) Այդ կարծիքը պատիւ է բերում քեզ, Եւգինէ։ Նշանակում է, որ դու երախտագէտ ես, իսկ երախտագիտութիւնը մեր ժամանակում մեծ արժանիք է։ Եւ ինչպէս չըլինել երախտագէտ։ Հակառակ ընդհանուր ախտի, նա չըյափշտակվեց ոչ օժիտով և ոչ կապերով և չատ



հարևանացուների մէջ քեզ ընտրեց. քեզ, որ համարեա ոչինչ չունէիր, բացի անձնական արժանաւորութիւններից։ (*Լռում է և, նայելով Եւգինէին, ժպտում*։) Միայն իմացիր, որ եթէ մի օր դու նրան վշտացնես, կատես քեզ։ Իսկ դու դիտես, թէ որքան եմատում, երբ ատում եմ։

ԵԻԳ. (*Նայում է աչքերին, աշխատելով ժպտալ*։) Գիտեմ... աչքերդ արտայայտում են։ (*Երմոնէն նորս է մտնում լրագրները ձեռքին*։)

ԵՐ. (*Տալով լրագրները տիկ. Մարթային*) Խանջալովների ազախինը բերեց։

ՄԱՐ. Այո, այո, ես էլ խնդրել։ (*Կանգնելով լսարի մօտ, շտապով քաց է անում հատարներից մէկն ու նայում*։) Այն է, որ կայ։

ԵԻԳ. Այդ ինչ է։

ՄԱՐ. Արաբաջեանի ինքնասպանութեան գործի հաշիւը։ (*Եւգինէն ցնցվում է*։)

ԵՐ. Խնդրել է, որ էգուց առաւօտ յետ ուղարկէք։

ՄԱՐ. Աւա, լաւ։ (*Երմոնէն գնում է*։) Ուրեմն, հէնց այս երեկոյ պիտի կարդալ։ Բայց ոչ հիմայ. շատ բաժ երեկոյ է, երևի, հիւրեր կըգան։

ԵԻԳ. (*Հետաքրքրված*) Այդտեղ ամբողջ գործն է տպված։

ՄԱՐ. Գիտեմ, ինձ հետաքրքրում է մամուլի կարծիքը։

ԵԻԳ. (*Խլելով լրագրները*) Տուր ինձ, ես ուզում եմ կարդալ։

ՄԱՐ. (*Զարմացած*) Ինչո՛ւ այդպէս խլեցիր։ Ուզում ես—միասին կարդանք։

ԵԻԳ. Ոչ ոչ, առանձին-առանձին... (*Ուզում է գնալ*։)

ՄԱՐ. Ո՞ւր ես գնում։

ԵԻԳ. Իմ ննջարանը, կարգալու։

ՄԱՐ. Ինչո՞ւ ես այդպէս շտապում։

ԵԻԳ. (Շփոթմունքով) Ոչինչ, հէնց այնպէս։ (Զանգակի ձայն։) Ա՜հ, հիւր է գալիս։ Դու ղբաղեցրու, ես իսկոյն... (Գնում է նոյն դռնկրով, որտեղից եկել էր։)

ՄԱՐ. (Նայում է նրա ետեւից զարմացած)։

## ՏԵՍԻԼ III

Տ. Մարթա եւ Սառափեան։

ՍԱՌԱՓԵԱՆ (Ներս է մտնում ֆրակով։ Նա մի փոքր հարբած է, բայց իրան պահում է խիստ կանոնաւոր։) Քոյր Մարթա, ամենախորին յարգանքներս...

ՄԱՐ. Հըմ, էլի քէֆդ լաւ եմ տեսնում։ Այդ ո՞ր տեղից։

ՍԱՌ. Բուրժուական ճաշից եմ գալիս։ (Ընկղմվելով օրօրվող բազկաթոռի վրայ) Ներեցէք, քոյր Մարթա, այս բազկաթոռը նպաստում է մարսողութեան։ Միրզայանովների տանն էի, իրանց փեսացուի ծնողներին ճաշ էին տալիս։ Է՜հ, քոյր Մարթա, մեր հասարակութիւնը լուսաւորվել է։ Այժմ պահանջում են, որ ֆրակով գնանք ճաշի։ Տանուտէինդ տարուայ մէջ Միրզայանովների տրեխները փոխվել են փայլուն կօշիկների, փափախը—ցիլինդրի, չուխան—ֆրակի։ (Հանելով ժիլետի գրպանից մի սիգար։) Կարելի է։ (Մարթան գլխով տանձայնութեան նշան է անում, նատելով բազկաթոռներից մէկի վրայ։) Մերսի։ Այո, այո, մեծ յառաջադիմութեան մէջ է մեր ազգը։ (Սիգարը



վառում է։) Պարոն Միրզայանովը դեռ չի սովորել կերակուրը պատառաքաղով ուտել, լաքէյին «պատդօն» է ասում։ Տիկին Միրզայանովն ասում է. «աղջիկս կա՜դը՜պատը է սովորում», «աղաս վալանչել է անում»։ Հայերէն արժանի չի համարում խօսելու։ Մի խօսքով, չիլափլաս։

ՄԱՐ. Ձայն երկար տուեց։

ՍԱՌԱ. Այո։ Ցեսոյ երիտասարդները նատեցին բակարա խաղալու, ես մի փոքր մոիկ արի, սիրտս պղտորվեց, փող չունէի, որ բաղդս փորձեմ։ Քոյր Մարթա, ախուր է, շա՜տ ախուր։

ՄԱՐ. Ա՜մուսնացէք...

ՍԱՌ. (Շուռ տալով ժիլետի դատարկ գրպանները) Սրանցո՞վ։ Մինչև անգամ ժամացոյց էլ չունիմ. դրաւ եմ դրել հիւրանոցի տիրոջ մօտ։

ՄԱՐ. Ինչո՞ւ չէք ծառայում։

ՍԱՌ. Ո՞վ է պաշտօն տալիս, որ ծառայեմ։ Ինձ հրաւիրում են ճաշերի, ընթրիքների, երեկոյթների, հիւրասիրում են ռեդերների շամպանիայով, Հանրի կլէյնի կամ Ուսմանի սիգարներով, իսկ պաշտօն չեն տալիս։

ՄԱՐ. Երեւի, անընդունակ են համարում։

ՍԱՌ. Անընդունա՞կ։ Ես մի ամբողջ ուսում եմ կառավարել, մի քոսոտ բաղդասարի կամ Մաթէոսի կօնտօրա կառավարել չեմ կարող։ (Շրջում է։) Ո՛չ, այդ չէ, քոյր Մարթա, ընդունակ եմ, բայց լռել չըզիտեմ։ Օօ, լռելու արհեստը չողոքրթելու արհեստից էլ շատ հաւէտ է։ Ես ճանաչում եմ մարդիկ, որոնք համարում են խելօք, որովհետեւ գիտեն լռել և խորհրդաւոր կերպով իրանց քիթը քորել։ Ինձ քորելն երեւելի

տաղանդ է։ (Մարթման ծիծաղում է։) Բայց դուք ծի-
ծաղում էք, (զանգի ձայն) ձեզ հետ լուրջ խօսել չի
կարելի։ Ահա, հիւրեր։ Գրազ կըգամ, որ Գալամքա-
բեաններն են։ Ով լինի-չըլինի, նրանք ամեն շաբաթ
երեկոյ այստեղ են։ (Ներս են մտնում տիկին եւ պա-
րոն Գալամքարեանները։ Կինը հագնված է շքեղ, մար-
դը հնամաշ սիւրտուկով է։) Տեսաք... Ռօմէօ և Ջիւ-
լետտա։

## ՏԵՍԻԼ IV

Նոյնը եւ Գալամքարեաններ, յետոյ Եւգինէ։

Տ. ԳԱԼ. (զարնելով, իսկ Մարթայի հետ համ-
բուրվելով) Ա՛խ, Մարթա, եթէ իմանաս ինչքան յոգ-
նած եմ, կըցաւես։ (Նստում է։) Այսօր երեք նիստ եմ
ունեցել, չորրորդն էլ բաց եմ թողել։ Ամբողջ քաղա-
քըն էլ չափչփել եմ։ Անիծվի այսպիսի քաղաքը. մի
հատ բնակարան չեմ գտնում խելոք տաճկահայ որբե-
րի համար։

ՄԱՐ. Էլի որբեր։

Տ. ԳԱԼ. Այո, այո, էլ մի ասա։

Պ. ԳԱԼ. (Նստում է, սիւրտուկի փեշերը զգուշու-
թեամբ յետ քաշելով։) Լօխ էլ եկել են մեր գլխին
թափվել։ (Փսփսում է։)

ՍԱՌ. Լօխ։ (Մարթման յանդիմանաբար նայում
է Սառափեանին։)

Պ. ԳԱԼ. Ըմբօ, փռակը նոր ըմ տեսնում, էդ հինչ
տէղ... (Փսփսում է։)

ՍԱՌ. (Սիգարէի ծուխը հրճուանքով արձակելով



գլխից վեր) Տենցեվայլնիչ վեչեր ըմ քինիլական...
(Մարթման, հազիւ ծիծաղը զսպելով, դարձեալ յան-
դիմանաբար նայում է նրան։)

Տ. ԳԱԼ. Բայց ոբտեղ է տիկին Եւգինէն։

ՄԱՐ. Մի քիչ զբաղված է։

Տ. ԳԱԼ. Երեւի, անտեսութեամբ։ Ախ, երանի նրան։
Հաւատացնում եմ, ճաշելու ժամանակ չունիմ այդ
տաճկահայերի ձեռքից։

Պ. ԳԱԼ. Էլ տալուց նըվացանք, աղպէր, օղըմըն
հա օղըմ...

ՍԱՌ. Շատ ըն օղում։ (Մարթման, դարձեալ յան-
դիմանաբար նայում է նրան։)

Տ. ԳԱԼ. Զըկարծես, Մարթա, որ այսօր հիւր եմ
եկել։ Ջերմոց հետ գործ ունիմ։ Ախ, գլուխս տրա-
քում է, չգիտեմ որն առեմ կամ որի մասին մտա-
ծեմ։

Պ. ԳԱԼ. Ջորն ասեմ հա գորը խոստովանեմ։
(Ծիծաղում է հազալով։)

ՍԱՌ. Շատ դժուար է գործիչ կանանց դէմու-
թիւնը։

Պ. ԳԱԼ. Աստւած ըմ, ձեռ երկալ ասկի գործերից,
օղուշաղովդ պերսակը։ Օ՛զըմ չի... (Փսփսում է։)

Տ. ԳԱԼ. Բարեկէ, մարդ մենակ իւր համար չըպի-
տի ապրի։ Այսօրուայ օրն ամբողջ քաղաքում ես եմ
ճնացել ու մէկել տիկին Պամպադուբեանը, միւսները
հեռացել են առաջարկից։ Այժմ բոլոր յոյսերս տիկին
Եւգինեի վրայ է։ Մենք վճռել ենք նրան էլ լծի տակ
քաշել։ Երիտասարդ, խելօք, գործացած, նա շատ օգ-
տակար կըլինի հասարակութեան համար։ (Ընչքարանի
դռնեըից դուրս է գալիս Եւգինէն գունատ եւ յուզ-

վածս:) Ահա և ինքը: (Համբուրվում է Ուզինեէի հետ:) Ես որ չըզամ ձեր տուն, դուք իսկի չէք էլ հարցնիլ մեռած եմ թէ կենդանի:

ՍԱՌ. (Առանձին:) Այդ մեկը ցուդային համբոյր էր:

ԵԻԳ. (Բարեւելով միւս հիւրերին) Ներեցէք, այս քանի օրերս տակար էի, թէ չէ—վաղուց էի պատրաստվում ձեզ այցելելու:

Տ. ԳԱԼ. Տկար էք: Դուք այժմ էլ, կարծես, առողջ չէք. դուք գունատ էք, մինչև անգամ դողդում էք:

ՄԱՐ. Տիկինը ճիշդ է ասում, Եւգենէ, դու գունատ ես: Ի՞նչ պատահեց:

ԵԻԳ. (ս. Գալամքարեանի խորհրդաւոր հայեացքից շփոթված) Ե՛ս... ճշմարիտ... ոչինչ. (Աշխատում է ժպտալ:) Գլուխս մի քիչ պտտում է, սիրտս բաբախում:

Տ. ԳԱԼ. Արեան սակաւութիւնից կըլինի, այո, դրանից կարող է մարդու գլուխը պտտել: (Նայում է իւր ամուսնուն խորհրդաւոր:)

ԵԻԳ. Ոչինչ, անցաւ, նստեցէք խնդրեմ: (Նստում են:) Էհ, ասացէք, տիկին, ինչ նորութիւն, ինչով էք զբաղվածծ:

Տ. ԳԱԼ. Մեթէ տիկին Գալամքարեանին հարցնել կարելի՞ է, թէ ինչով է զբաղվածծ: Հէնց հիմա այդ մասին էի դանգատվում: Ձեզ մօտ էլ գործով եմ եկել:

ԵԻԳ. Հրամայեցէք:

Տ. ԳԱԼ. Մի նոր ընկերութիւն ենք կազմել, դուք էլ պիտի անդամ դրվէք:

ՍԱՌ. Ընկերութիւն ընկերական ոգին ապանելու համար—ահա բոլոր հայ ընկերութիւնների նպատակը:



Տ. ԳԱԼ. Դուք ամեն լուրջ բան կատակ էք դարձնում, պարոն Սահակեան:

Գ. ԳԱԼ. Կիրափառ ըս խօսըմ, Սահակով:

Տ. ԳԱԼ. (Ուզինէին:) Իսկապէս, ես սկսել սասցի. ընկերութիւն չէ, այլ շատ մօտիկ ծանօթների մի փոքրիկ շրջան:

ԵԻԳ. Նպատակը:

Տ. ԳԱԼ. Աղքատ հարանացուներին օժիտ տալ:

ՍԱՌ. Պարոն Բարսեղ, չնորհաւորում եմ:

Գ. ԳԱԼ. Խիւ...

ՍԱՌ. Նոր ընկերութիւնը ձեր մալալինի փտած ապրանքները կընպաղդացնի: (Մարթան թաքուն ծիծաղում է:)

Գ. ԳԱԼ. Ըմբօ, ես հիւթ եմ փտած ապրանք ծախալ...

Տ. ԳԱԼ. (Ուզինէին) Ցուսով եմ, որ չէք մերժիլ: Անդամավճարը միանուագ երկու հարիւր րուբլի է:

ԵԻԳ. Զըգիտեմ: Ամուսնուցս կըհարցնեմ, յետոյ պատասխան կըտամ:

Տ. ԳԱԼ. Ձեր ամուսնո՞ւց: Ա՛յդ ինչ ասել է—խորհուրդ, աչք, թէ երկիւղ:

ԵԻԳ. Ոչ մեկը կամ գուցէ երեքն էլ միասին:

ՄԱՐ, կեցցէ՛ս, Եւգինէ:

Գ. ԳԱԼ. Լիսիմ ես, Զարուհի, խոնարհութեան, աչը, երկեօղ, իրեքն էլ միասին լեաւ պէն ա հասս:

Տ. ԳԱԼ. Խոնարհութիւնն ու երկիւղը դէն դիցէք, տիկին, սէրը պահեցէք, որովհետև մենք քանեորդ դարի սկզբումն ենք ապրում:

ՍԱՌ. Բրաւօ, ապրէ մեծ առաջադիմութեան մէջ է... (ս. Գալամքարեանը Սահակեանի վրայ առելու-

*Թևան հայեացք է ձգում։)*

**ՄԱՐ.** Ով սիրում է—նա պէտք է խոնարհվի և վախենայ։ Խոնարհվի սիրելուց և վախենայ սիրուց զրկվելուց։

**Պ. ԳԱԼ.** Մի քիչ խրթին էր, ամա քեֆս եկաւ։ *(Ծնոջը։)* Դու էլ վերը մի քիչ խոնարհվիս, վիս չինի հաա։ *(Ծիծաղում ու հազում է։)*

**ԵԻԳ.** Ո՞րտեղ կըկամենաք թէյ խմել, այստե՞ղ, թէ սեղանատա՞նը։ *(Ուզում է գնալ։)*

**ՄԱՐ.** Իհարկէ, այստեղ։ Սեղանատունը չատ ոտթ է։ Բայց դու մի գնար, ես ինքս կըկարգադրեմ։ *(Գնում է սեղանատուն, ձեռով նշան անելով Ցուլինէին՝ նատել։ Նոյն վայրկեանին ներս են մտնում նախասենեակի դռներից Միհրանը, Սուլթանեանն եւ Վարսամեանը։)*

## ՏԵՍԻԼ V

Նրացե, Միհրաճ, Սուլթանեան եւ Վարսամեան։

**ՄԻՀՐԱՆ** *(Բարևելով ուրախ ու զուարթ)* Հիւրերը, աւելի Թանգագին սիրուհիդ չէր կարող լինել ինձ համար։ *(Սառափեանին)*։ Ա՜ա, Ֆռակիդ, հասկացայ, Մերզալանովների ճաշին ես եղել։ *(Դալամբարեաններին։)* Ցաւսով եմ, այս երեկոն լաւ կանցկացնենք։ Հաղիւ կարողացայ այս անպիտանին *(ցոյց տալով Սուլթանեանին)* բերել այստեղ։

**ԵԻԳ.** *(Սուլթանեանին)* Մերթ այդքան ձանձրանում էք մեր տանը, որ ուժով են բերում ձեզ։

**ՍՈՒԼ.** Օճ, ոչ, սիրելիս։ Ես միշտ հոգեպէս հանդստանում եմ ձեր ընկերութեան մէջ։ Եթէ զբաղված չըլինէի, ես ինքս կըձանձրացնէի ձեզ իմ այցելութիւնով։ *(Հիւրերը նստում են։ Վարսամեանը քոնում է մի համեստ անկիւն։)*

**Տ. ԳԱԼ.** *(Հեգնաբար)* Այդեօք, ինչո՞վ է զբաղված մեր ինժեներ-տեխնօլօգը։

**ՍՈՒԼ.** *(Ձեռ տալով)* Նիւթականով, սիրելին, նիւթականով։

**ՄԻՀ.** Եւգինէ, մեզ թէյ տալու են, թէ չէ։

**ԵԻԳ.** Ախ, Մարթան ամեն բան ուշացնում է։ *(Մօտենում է սեղանատան դռներին, նայում ներս, յետ դառնում։)* Իակոյն։

**ՄԻՀ.** *(Վարսամեանին)* Համաձայնի՛ր, ինչ ես այդ անկիւնում թաղնվել։ Մօտեցիր, սիրելիներին զբաղեցրու, իսկ ես գնում եմ աղջկա տեսնելու։ Ամբողջ օրը չեմ տեսել նրան։ *(Գնում է։)*

**ԵԻԳ.** Փնաթ է, ղադյշ, որ չըզարթեցնես։

**Տ. ԳԱԼ.** *(Եւգինէին)* Ինչ քնքոյշ հայրիկ է։ *(Դառնալով տղամարդկանց։)* Պարոններ, ինչու՞ օրինակ չէք վերցնում պարոն Միհրանից։ Տեսնում էք ամուսնական կեանքի քաղցրութիւնը։ *(Երմոնէն թէյ է ըներում ու բաժանում։)*

**ՍՈՒԼ.** Ամուսնութիւնը, սիրելին, վիճակախաղ է։ Եթէ Միհրանի տոմսակը տարել է ամենախոշոր գումարը, այդ չի նշանակում, որ մեր տոմսակները փուչ են դուրս գալ։

**Տ. ԳԱԼ.** Ինչպէս Աբրաչեանինը։ Ախ, իդէպս, կարդացի՞ր էք Թիֆլիսի լրագրներում այդ պատմութիւնը։ *(Նայում է Եւգինէին։)*

**ՍՈՒԼ.** Ինչպէս չէ, ուր գնում եմ, այդ մասին

եմ լսում։ Դա մի սարսափելի դրամա է։

ՍԱՌ. (Որ գիտէ տիկնին Գալամքարեանի յետին միտքը։) Այո, դա եղեռնագործութիւն է և անմիտ եղեռնագործութիւն։

Պ. ԳԱԼ. Հունցոր Զարուհին ա ասըմ, թամամ բիաբուռչիթոն ա։

Տ. ԳԱԼ. Մի գործ, որ ամօթ է բերում մեր ինտելիգենցիային։

ՎԱՐ. (Որ զբաղված է գեղարուեստական իրերով ծածկված սեղանի մօտ, լուսանկարները դիտակով նայելով։) Ինտելիգենցիան, արդեօք, ինչ դեր է կատարում այդտեղ։

Տ. ԳԱԼ. Պարոն Արաբաջեանը համարվում է իր կնոջ ինքնասպանութեան պատճառը, իսկ նա համալսարանական է։

ՎԱՐ. Եւ ինչ։ Մի՞թէ մի մարդու մեղքը պիտի ամբողջ դասակարգի վզին փաթաթել։

ՍՈՒԼ. Իմ կարծիքով, այդ Արաբաջեանն այնքան էլ արժանի չէ այն հալածանքին, որին ենթարկել է նրան հասարակական կարծիքը։

ՄԻՀ. (Ներս է մտնում։) Քնած է, հարբած է պէս։ (Նստում է Ելզինէի մօտ եւ սկսում ականջ դնել խոսակցութեանը։)

Տ. ԳԱԼ. Դուք արդէն չափազանց ներողամիտ էք դէպի Արաբաջեանը։ Երևի, գործին լաւ ծանօթ չէք։ (Ներս է մտնում Մարթան մի քաժակ թէյ ծառին խառնելով։)

ՍԱՌ. Ես էլ լաւ ծանօթ չեմ այդ գործին։

ՄԻՀ. Այդ ինչ է, Բաթումի դրամայի մասի՞ն է խոսում։ Օօ, ես շատ լաւ գիտեմ։ Թիֆլիս եղած ժամանակս մի օր մտայ պալատը և կարդացի ամբողջ գործը։ (Ելզինէին։) Ես քեզ դեռ չէ՞մ պատմել։

ԵԼԻԴ. Ոչ, բայց մի քանի րոպէ առաջ կարդացի լրագրում։

ՄԻՀ. Օօ, ոչ, ես աւելի մանրամասն գիտեմ։ Դա մի նշանաւոր երևոյթ է։

Տ. ԳԱԼ. Հապա, հապա, պատմեցէք, շատ հետաքրքրական է։

ՄԻՀ. Ես կըպատմեմ միայն էականը։ Այդ Արաբաջեանը յամառ կերպով, նախադրեալ միտումով և սիստեմատիկաբար հալածել է իր կնոջը։ Հալածել է գիշեր-ցերեկ, անդադար, որպէս զի յուսահատեցնի նրան։ Նա ստիպել է կնոջն ամեն հարցքից, երբեմն չի թոյլ տուել ուտել անգամ, հեռը խօսել է միշտ կոպիտ, շատ անգամ հայհոյանքներով։ Ամեն քայլում յիշեցրել է նրան իր անցեալի տխուր սխալը և խայթել, խայթել է կրկնակի պէս։ Եւ այս բոլորն այն օրից, երբ կինն անաբար, խոստովանել է իր անցեալի սխալը։ Նա նեղում է խնդրել մարդուց արտասուքը աչքերին, ոտներին ընկած։ Մի մոռացէք, որ այդ սխալն անբաղդ կինը գործել է դրեթէ մանուկ հասակում։ Մարդու սիրտը չի մեղմացրել, նա չի ներել։ Նա, ընդհակառակը, պահանջել է թշուառից անձնասպանութիւն գործել։ Նա թոյն է բերել տուն, գիտմամբ թողել է կնոջ ննջարանում, սեղանի վրայ։ Նա ուզեցել է ազատվել կնոջից իր պատիւն իբրև մաքրելու համար։ Եւ մաքրել է —տիկին Արաբաջեանը թունաւորվել է, թունաւորելով արդանդում և՛ մի անմեղ էակի։ Ահա

մռայլ եղելութիւնը։ Հետաքրքրական է կնոջ տանջանքը, բայց այդ մի սարսափելի տրագեդիա է, որ ես չեմ նկարագրիլ, խնայելով ձեր ներվերը։

Տ. ԳԱԼ. *(Նայելով Եզինէին)* Կարելի է երևակայել։

ՍՈՒՀ. Եւ մ՛թէ այդ մարդը, որին դու դրեթէ հրէշացրիր, ինքը չի՞ տանջվել։

ԵԻԳ. *(Ով այս խօսակցութեան ամբողջ միջոցին, մի անկիւնում, սակայն հասարակութեանը նկատելի տեղ, նստած, խորին ուշադրութեամբ լսում է, երբեմն ցնցվելով։)* Տանջվե՛լ է։

ՄԻՀ. Այո, տանջվել է և այժմ էլ տանջվում է։ Նրա հոգեկան դրութիւնն էլ մի տրագեդիա է, բայց ի՞նչ է այդ տրագեդիան գործված յանցանքի համեմատ։

ՄԱՐ. Եւ ի՞նչը պիտի տանջէ նրան իսկապէս, ցանկալի է լսանալ։

ՍՈՒՀ. Խղճի խայթոցը։

ՎԱՐ. Խղճի խայթո՞ց... *(Հնազնաբար)* Էհ, պարոններ, ուժ չի յայտնի, թէ ինչ է խիղճ ասված բանը ոմանց համար։ Նեղն ընկած ժամանակ ամենադժայուն մարդն անգամ իւր խղճի առջև դուրս է բերում այնպիսի ճարպիկ կօմպրօմիսներ, որոնք կամաց կամաց հանգստացնում են նրան ու թմրեցնում։

Տ. ԳԱԼ. *(Շարունակելով նայել Եզինէին)* Այո, ճիշդ է, բայց հասարակական կարծիքը։

Պ. ԳԱԼ. Լօխ էլ թըքում ըն անասուածի իրեսին։

ՍԱՌ. Լա՛ւ ուչ, պարոն Բարսեղ, հասարակական կարծիքն օպերետային դատաւոր է. ատաղակին դատելով, նոյն ատաղակի հետ կանկան է պարում։ *(Բոլորը ծիծաղում են, բացի Եզինէից։)*

Պ. ԳԱԼ. *(Հազալով և ծիծաղելով)* Գեափդ լինի, Սռափով։



ՎԱՐ. Մենք գիտենք միայն վրդովվել, իսկ պատժել—երբեք։ Կանցնի մէկ, չատ չատ երկու տարի, ամեն ինչ կըմոռացվի, և դուք, ես, բոլորս նորից կըսկսենք սեղմել նոյն Առաքել Արաբաջեանի ձեռքը, նորից յարգանք ցոյց տալ նրան։

ՍԱՌ. Այդ Արաբաջեանը յիմար է։ Եթէ ես լինեի նրա տեղը, կըսատիպէի այն անպիտանին կնոջս հետ ամուսնանալ, ինքս էլ խաչեղբայր կըլինէի։ *(Բոլորը ծիծաղում են, բացի Եզինէից։)*

Պ. ԳԱԼ. *(Ծիծաղելով ու հազալով)* Վըէյ, մըեռայ, Սռափով, մըեռայ...

Տ. ԳԱԼ. Իսկ դո՛ւք, պ. Սուլթանեան, ինչ կանէիք։

ՍՈՒՀ. Ես կարճակեի կնոջս, ապահովելով նրան նիւթապէս։ *(Երմոնէն գալիս է եւ բաժակները հաւաքում։)*

ՄԱՐ. Ո՞վ է էլի թէյ ցանկանում։ *(Բոլորը լուռ հրաժարվում են։)*

Տ. ԳԱԼ. Իսկ դո՛ւք ինչ կանէիք, պարոն Ալվերդեան, եթէ այդ Արաբաջեանի տեղը լինէիք։ *(Եզինէն ցնցվելով, ուշադրութիւնը լարում է։)*

ՍԱՌ. *(Առանձին)* Օ՛ֆ...

ՄԻՀ. Ե՞ս... Կըներէի։

Տ. ԳԱԼ. Ձեր կնոջ անպատուութիւնը...

ՄԻՀ. Այո։

ԵԻԳ. *(Յանկարծ արձակում է թնթնալու ճիչ)* Ա՛հ...

ԱՄԵՆՔԸ։ Ի՞նչ պատահեց։

ՄԻՀ. *(Վախեցած, ոտքի կանգնելով)* Եւգինէ՛...

ԵԻԳ. Ոչինչ... *(Աշխատում է ժպտալ։)* Կայծակը...

ՍԱՌ. *(Մօտենալով լուսամուտին)* Եւ ինչ կայծակ։ Ահա և՛ սարսափելի որոտում։ *(Լսվում է որոտում։)*

Պ. ԳԱԼ. Եղիա մարգարէի քիւրքը ճղեցին։

ՍԱՌ. (Ծիծաղում է) Հա հա հա, քիւրքը։

Տ. ԳԱԼ. (Մօտենում է Եւգինէին եւ սուր հայեացքով նայում նրա երեսին։) Դուք կայծակից էք աւելի վախենում, թէ փոթորկից։ (Եւգինէն տխուր ժպտում է։) Ինչու՞ ընդհատեցիք հետաքրքրական խօսակցութիւնը։ (Նստում են։) Հա, ուրեմն, պարոն Միհրան, դուք կընկերէիք։

ՍՈՒԼ. Այդ ինձ համար անհասկանալի է։

ՄԱՐ. Միհրան, այդ ինչ ես ասում։

Պ. ԳԱԼ. Էդ հոնից կընկերէիր, խելքս իակի պէն չի կարում։

ՍԱՌ. Այո, հոնից։

ՎԱՐ. (Ոտքի է կանգնում, յանկարծ ոգեւորվելով) Ձեմ հասկանում, ինչու՞ է ձեզ զարմացնում Միհրանի ասածը։ Մի՞թէ տիկին Արաքսէեանն անբարոյական է եղել։ Անպիտանի մէկը նրան մոլորեցրել է համարեա թէ մանուկ հասակում — օրիորդը տասնուհինգ տարեկան է եղել։ Մի՞թէ դա այնպիսի մեծ յանցանք է, որի համար ամուսինը պիտի տանջէր նրան մինչև ինքնասպանութիւն։ Ասացէք խնդրեմ, որ տղամարդն է մինչև ամուսնութիւն իրան մաքուր պահում։ Կարող էք ցոյց տալ մի այդպիսի տղամարդ։ Ի՞նչու կանայք նեղում են մեզ մեր ամենազգուելի կեղտերն, իսկ մենք չենք ուզում ներել նրանց սխալը։ Ես թոյլ եմ տալիս, որ Արաքսէեանը կարող էր չափազանց կատաղել կնոջ դէմ նրա անցեալի պատճառով։ Թոյլ եմ տալիս, որ նա պիտի իրան խայտառակված համարէր։ Բայց ես էր այդ մարդու ներքին դատաւորը, որ յիշեցնէր նրան իւր սեպհական անցեալը, ուր անշուշտ



կան կեղտեր։ Ինչու՞ Թշուառ կինը ներել է նրան այդ կեղտերը, իսկ ինքը՞ոչ։ Որովհետեւ մեկը կին է, միւսը տղամարդ։ Որովհետեւ հասարակական կարծիքն ամբողջ լուծը կանանց վրայ է ծանրացած։ Բայց չէ՞ որ այդ անարդարութիւն է, սոսկալի անարդարութիւն։ Եւ ինչու՞ դոնէ մի անգամ չըբողոքել անարդարութեան դէմ։ (Տիրում է մի քանի վայրկեան լռութիւն։ Եւգինէն, իւր խոովութիւնը թագցնելու համար, ժտենում է դաշնամուրին եւ սկսում կամացուկ, դողդոջուն ձեռներով եւ նեղվային քրքրել նոտաները։ Տ. Գալամքարեանը շարունակ դիտում է նրան, իսկ Սառափեանը դիտում է տիկ. Գալամքարեանին։ Միհրանը, լսելով վարսամեանին, հաւանութեան նշաններ է անում։)

ՍՈՒԼ. Տարօրինակ բողոք։ Մոռանամ հարատ կնոջս կեղտը, թէ ինչ է բողոքում եմ անարդարութեան դէմ։ Ազատիր ինձ այդ տեսակ բողոքից։

ՎԱՐ. Սխալը, պարոն Սուլթանեան, և ոչ կեղտը, սխալը։ Սակայն կարելի էր և՛ կեղտը մոռանալ, եթէ մեր աշխարհահայեացքն աւելի լայն լինէր։ Ով գիտէ, դուցէ ապագայում հասկանանք, որ տղամարդի և կնոջ բարոյական պարտաւորութիւնները հաւասար են, հասկանանք նաև, որ յանցանք ներելը յանցանք դարձել չէ։ Իսկ սխալը, յափշտակվելը, անպիտաններից խաբվիլն այժմ էլ կարող ենք ներել, պէտք է ներենք, մինչև անգամ պարտաւոր ենք ներել։

ՍՈՒԼ. Այդ մասին ես ձեզ հետ կըվիճեմ յետոյ։ Այժմ թողնենք, տիկին Եւգինէն ձանձրանում է։

Տ. ԳԱԼ. Ես այդ վաղուց եմ նկատում։

ՍԱՌ. Խնդրենք տիկնոջը, մեզ համար մի բան նուագի։

ՍՈՒԼ. Այ, այդ ես հասկանում եմ։ Տիկին, մի՛ զրկեք մեզ հաճոյքից։

ՍԱՌ. Եւգինէն նազ անողներից չէ։

Պ. ԳԱԼ. Ըմբօ, խէ պըտի նազ անի, խէ, մունք հմվընք։ (Եւգինէն նստում է դաշնամուրի մօտ եւ նուագում ձեռքն ընկած առաջին նօտան։ Վարսամեանն եւ Մարթան մի անկիւնում վիճում են։ Միհրանը ծըխելով անցուդարձ է անում խորքի պատի տակ հանդարտ քայլերով։)

Տ. ԳԱԼ. (Առանձին ամուսնուն։) Նկատեցի՞ր քանի անգամ դռյնը փոխեց։

Պ. ԳԱԼ. Ա կնիկ, թողար տեսնենք, պէն չունիմ...

ՍԱՌ. (Պատուհան։ Լսում է, յետոյ։) Հիանալի է, հիանալի...Բայց այդ, կացէք, կացէք, այդ ծանօթ բան է...

ԵԻԳԻՆԻ Շօպէնի նօկտիւրն է «Կաթիլ» անունով. ես շատ եմ սիրում... ամբողջ օրը պիւպետրի վրայ է...Ո՛չ—մելանխօլիա, ո՛չ—վիշտ, այլ հիւանդ հոգու տառապանք։ (Կամաց-կամաց ձեռները թուլանում են, գլուխը թեքվում է կրծքին։)

ՄԱՐ. (Մօտենալով Եւգինէին։) Ա՜հ, ինչ պատահեց, դու դադնատվեցիր։ (Եւգինէն նուադում է։) Ուշքը գնում է... Ջո՛ւր... (Բոլորը շփոթվում են, շրջապատելով Եւգինէին։ Սառափեանը ջուր է մօտեցնում։)

ՄԻՀ. (Վախեցած) Եւգինէ՛... (Ձորում է նրա առջեւ։)

Տ. ԳԱԼ. (Ամուսնուն) Լա՛ւ ուշադրութիւն դարձրու, այդ բոլորը նրանից է...

Պ. ԳԱԼ. Փիէ՛...

ԵԻԳ. (Ուշքի գալով) Ոչինչ, ոչինչ, մի՛ վախեցաք։ (Միհրանի օգնութեամբ վեր է կենում, ծիգն անելով



ժպտալ։) Կայծակն ինձ վախեցրեց։ (Հիւրերին։) Նեըեցէք, խնդրեմ, գլուխս պտտեց, ուրիշ ոչինչ... Անցաւ, բոլորովին անցաւ։ Նստեցէք, ուրիշ բան կընուագեմ... (Սկսում է նուագել ուրախ բան։ Հայց հիւրերն այնքան շփոթված են, որ չեն վստահանում ձանձրացնել տանտիրուհուն։)

Պ. ԳԱԼ. Էդ մուզիկը որ կայ մարդու արինը տակն ու վրայ ա անըմ...

ՍՈՒԼ. (Պատուհան։) Գոնէ ես չէի կամենալ ձեզ ձանձրացնել, տիկին։ Դուք, երեւի, տկար էք կամ յոգնած, հանգստացէք...

ՄԻՀ. (Դաշնամուրի կափարիչը ծածկելով) Ես քեզ արդելում եմ...

Տ. ԳԱԼ. Բարեւդ, գնանք...

ՄԻՀ. (Տիկին Գալամքարեանին։) Դուք կըներքէք...

Տ. ԳԱԼ. Ի՞նչ ներելու բան կայ։ Ես առանց այդ էլ երկար ձեալ չէի կարող։ Ես գործով էի եկել։ (Եւգինէին, որ տակաւին գունատ կանգնած է դաշնամուրի մօտ։) Զըմռռանաք իմ առաջարկութեան մասին պարոն Միհրանից թոյլատուութիւն խնդրել։

ՄԻՀ. Այդ ինչ թոյլատուութիւն է։

ՍԱՌ. (Հեգնաբար) Տիկինը մի նոր ընկերութիւն է հիմնել, առաջարկում է Եւգինէին անգամ դրվել։ Մի խօսքով, երկու հարիւր ռուբլու գործ է։

ՄԻՀ. (Տիկ. Գալամքարեանին) Իմ ամուսինն առզատ է անելու, ինչ-որ ցանկանում է, իսկ իմ գրպանը միշտ նրա տրամադրութեան տակ է։

Տ. ԳԱԼ. (Եւգինէին խորհրդաւոր) Լսո՞ւմ էք, առզատ էք անելու, ինչ կամենում էք։ Գնահատեցէք, ցրտեսութիւն։

**Գ. ԳԱԼ.** Ձեզ տեսութեան։ Սառափով, թաթիդ տոր տեսնեմ, քը մատաղ։ (Սեղմում է ձեռը։)

(Հիւրերը գնում են։ Մինրանն ու Մարթան ուղեկցում են նրանց մինչեւ նախասենեակ։)

**ՄԱՌ.** (Դռների մօտ, բոլորից թաքուն քունելով Մինրանի թեւը) Մօտդ յիսուն ռուբլի կայ։ (Մինրանը վարտիկի գրպանից հանում է ու տալիս երկու հատ ծիլված 25-անոց։) Մերսի՛... (Մօտենում է Եւգինէին, որ կանգնած է սենեակի մէջտեղում։) Եւ շատ լաւ ես անում, որ այդ խորամանկ տիկին Գալամքարեանին պատիւ չես անում մինչեւ նախասենեակ ճանապարհ դնելու։ Ցեսոյ կասեմ պատճառը։ Յրտեսութիւն։ (Դռների մօտ հանդիպում է Մինրանին ու Մարթային։) Յրտեսութիւն։ (Գնում է։)

## ՏԵՍԻԼ VI

Եւգինէ, Միհրան եւ Մարթա։

*Մինչեւ Մինրանի եւ Մարթայի վերադառնալն Եւգինէն ժողովում է ուշքը բոլորովին եւ ժպտում նրանց երեսին։*

**ՄԱՐԹԱ.** Դու մեզ վախեցրիր, Եւգինէ, մեթէ կարելի է այդչափ նեղվային լինել։

**ԵԻԳ.** Դառարկ բան էր, անցաւ, չարժէ մատծել...

**ՄԻՀ.** Ես քեզ հարիւր անգամ խնդրել եմ երբ տրամադիր չես—հիւրեր չընդունել։ Ինձ համար քո հանգստութիւնն ամեն բանից թանդ է։

**ՄԱՐ.** Լրագրները պրտեղ թողեցիր։

**ԵԻԳ.** Քո սենեակում, սեղանի վրայ։

**ՄԱՐ.** Ընթրիքի չըպատրաստ լինէ։ (Գնում է ձախ կողմի երկրորդ դռներով։)



## ՏԵՍԻԼ VII

Միհրան եւ Եւգինէ։

**ՄԻՀ.** (Պատւգա։) Վերջապէս, մենակ ենք։ (Համբուրում է։) Նաիր։ Ես ուզում եմ մի բանի մասին խօսել քեզ հետ։ (Նստում են բազկաթոռների վրայ ղէմ ու ղէմ։) Մի վախենար, վախենալու ոչինչ չկայ։ Գիտես ինչ, Եւգինէ. ահա մի քանի ամիս է քեզ փոխված եմ տեսնում։ Կարծես, քեզ անհանգստացնում է ինչ-որ վիշտ, հոգս, վերջապէս, մի միտք և քանի գնում է, այդ փոփոխութիւնն աւելի ու աւելի նկատելի է դառնում։ Աւա, ինչ է պատահել։

**ԵԻԳ.** (Վերկենալով) Այդ մասին այսօր ոչինչ մի հարցրու։

**ՄԻՀ.** Ներողութիւն, դու իրաւունք ունիս։ Դու տակար ես, գնա, ուրեմն, հանգստացիր։ (Վեր է կենում։)

**ԵԻԳ.** (Քնքշաբար) Նեղացա՞ր։ (Ժպտալով) Ես տակար չեմ, անցաւ, մի նեղանար։

**ՄԻՀ.** Բայց դու ինձ խաբել չես կարող, դու մի հոգս ունիս, մի կեղծիր, կեղծելը քեզ չի սազում։

**ԵԻԳ.** (Հառաչելով) Չի՛ սազում... (Շտապելով։) Թող ինձ, ես ուզում եմ քեզ համար նուագել...

**ՄԻՀ.** Երաժշտութիւնը քեզ յուզում է։

**ԵԻԳ.** Երբ հիւրերի ներկայութեամբ եմ նուագում, իսկ երբ հիւրեր չկան, հանգստութիւն է տալիս իմ ներվերին։ (Նստում է դաշնամուրի քով։ Մինրանը տարակուսած կանգնում է նրա մօտ։ Եւգինէն սկսում է նուագել ինչ-որ մելամաղձոտ եղանակ, բայց շուտ

տով թողնում է եւ գլուխը թեքում կրծքին ու լռում։ Պաուզա։) Ոչ, չեմ կարող, ձեռներս չեն չարժվում։ (Միքանի ուսերը քարծրացնելով, տարակուսած նայում է նրան շարունակ։) Օօ, ինչ տօթ է, կարծես, օդ չըկայ։ (Վեր է կենում, լուսամուտներից մէկի վարագոյրը յետ քաշում, յետոյ փեղկը բաց անում։) Ինչ հիանալի երեկոյ է, անձրեւից յետոյ լուսին։ Ինչ մաքուր է երկինքը։ (Մօտենում եւ պակսեցնում ըրօնզեայ լամպարի լոյսը։ Ներս է սփռվում լուսնի մեղմ կաթնագոյն լոյսը։)

Միհ. Բայց ցուրտ է, կարող ես մրսել, հեռու կաց։ (Քոնում է թեւից եւ լուսամուտից հեռացնում։ Ցետոյ լուսամուտը ծածկում է, լամպարի լոյսն աւելացնում եւ նայում նրան ուշադիր։)

Եիգ. Երանի թէ մրսէի ու հիւանդանայի։ Երանի մեռնէի։ Ախ, Տէր Աստուած, որքան անտանելի է։

Միհ. (Պաուզա։) Եւ ինչ, նայիր ինձ... (Մօտենում է ու ձեռից քոնում։) Ես քեզ միշտ խելօք կին եմ համարել...

Եիգ. Խելօք... մի ասա այդ բանը։

(Լուռ տեսարան)

Միհ. Դէհ, ասելու ես թէ ինչի մասին ես մտածում։

Եիգ. Աւելի լաւ։ Նստիր ահա այստեղ։ (Նստում են։) Լսիր, ես վաղուց ուզում էի քեզ պատմել մի պատմութիւն, հէքեաթ, ինչպես կամենաս հասկացիր։ Ես այդ կարդացել եմ չըգիտեմ ինչ գրքում եւ երբ, բայց ինձ վրայ շատ խոր ազդեցութիւն է արել։ Լսում եմ։



Միհ. Լսում եմ։

Եիգ. Եղել է չի եղել, չըգիտեմ ուր, աշխարհում, Արեւելքում, Արաբիայի թէ Հնդկաստանի մի հարուստ քաղաքում մի աղքատ այրի։ Նրա ամուսինը, մի աղնիւ ու քաջ զինուոր, մեռնելով, իր կնոջ միակ աղջկայ համար չի թողնում ոչ մի ժառանգութիւն, բացի իր զէնքերը։ Բայց աղջիկը մօրից ժառանգում է մի հոգեկան յատկութիւն—ծայրայեղ ինքնասիրութիւն։ Այդ աղջիկը ոչ շատ գեղեցիկ է եղել ոչ ազգեղ, ոչ շատ խելօք եւ ոչ յիմար։ Մայրը սիրում է նրան աւելի քան իր աչքի լոյսը, փայփայում է մայրական անհաշտ սիրով։ Ոչինչ չի խնայում նրա համար, տալիս է նրան իր կարողութիւնից աւելի ուսում եւ կրթութիւն։

Միհ. Այդ հետաքրքրական է, յետոյ...

Եիգ. Մի օր այդ աղջկան տեսնում է մի աղնիւ, եռանդուն, խելօք մարդ (նայում Միհրանի աչքերին), մի խօսքով, մարդ, հաւանում է եւ իսկոյն վճռում նրա հետ ամուսնանալ։ Մայրն ուրախութեամբ համաձայնվում է։ Աղջիկը չի սիրում այդ մարդուն, երկար ժամանակ կուռում է ինքն իր հետ, բայց յետոյ նոյնպէս համաձայնվում է... (զգացված) իր մօրը բաղդաւորացնելու համար։ Նա ամուսնանում է աղնիւ մարդու հետ առանց սիրոյ, բայց յետոյ, երբ ճանչում է նրան, սկսում է ոչ միայն սիրել, այլ ուղղակի պաշտել, պաշտել ինչպէս կուռք։ Իսկ բարի մարդը սիրում է նրան, հաւատում եւ չըվատաճում է չքեղութեամբ եւ այն բոլորով, ինչ որ գեղեցկանում է կնոջ կեանքը...

Միհ. (Պաուզա։) Ցետոյ...

ԵԻԳ. (Հառաչելով ու ճակատը շփելով) Բայց շուտով մարդու երախտիքը սկսում է ուտել նրան— ուտել ցեցի պէս։ Չէ՞ որ նա չքաւոր ծնողների զաւակ է։ Մարդը նկատում է նրա վիշտը և պատճառը հարցնում։ Մի օր կինն ընկնում է նրա ոտներին և ասում. «քո անհուն սէրն է ինձ տանջողը... ես մեծ պարտքի տակ եմ—ահա իմ վիշտը։ Ես ինքնասէր եմ, չեմ կարող տանել այդ պարտքը։» Ամենիւ մարդն ապշած արտասանում է. «դու խելագար ես, առաջին անգամը ես եմ տեսնում, որ սիրող կինն իր ամուսնու սիրուց տանջվի»։ «Այո, պատասխանում է կինը, քո սէրն է ինձ տանջում։ Մի սիրիր ինձ և ոչ միայն մի սիրիր, այլ և ատիր, վարվիր հետս կոպիտ, ծեծիր ինձ, հայհոյիր, և ես պակաս կըտանջվիմ» (Պաուզա։) Մարդը չի կատարում նրա տարօրինակ խնդիրը։ Այն ժամանակ ինքնասէր կինը կամաց-կամաց մաշվում է վշաերից, թոքախտ է ստանում ու մեռնում։ (Պաուզա։) Ահա և ամբողջ հեքեաթը։ (Վեր է կենում։)

ՄԻՀ. (Ոլ խորասուզված լսում է վինչու վերջը, մի փոքր լռութիւնից յետոյ։) Եւ դա հեքեաթ է։

ԵԻԳ. Հեքեաթ...

ՄԻՀ. Դու բոլորը պատմեցիր։

ԵԻԳ. Բոլորը։

ՄԻՀ. (Ոտքի է կանգնում կամացուկ, նայելով Ելգինէի երեսին։) Ոչ, կարծեմ մի բան մոռացար։ Այդ հեքեաթն ինձ ծանօթ է։ Ինքնասէր կինը լինում է բարոյապէս իր մարդուց շատ բարձր։ Այնքան բարձր, որ մարդու բոլոր արժանաւորութիւնները նսեմանում են նրա մօտ։ Ինքնասէր կինը լինում է այնքան դրաւիչ, այնքան հրապուրիչ, որ իւր մի ժպիտով վարձատրում է ամուսնու բոլոր բարութիւնները (համբուրում է։) Եւ դու չես կարողանում հեքեաթները պատմել, աւելի լաւն է պատմիր եղելութիւն։

ԵԻԳ. Եղելութիւն։ (Պաուզա։ Միհրանը նայում է նրան։ Ելգինէն երկու ձեռները դնում է նրա ուսերի վրայ, նայում աչքերին։) Ոչքան բարութիւն կայ քո աչքերում։ (Ձայնը դողդողում է։) Իսկ ես... (Աչքերը լցվում են արտասուքով։) Բաւական է... (Ձեռները վերցնում է Միհրանի ուսերից եւ հեկեկալով վազում դէպի ննջարան։)

ՄԻՀ. (Ապշած նայում է նրա ետեւից եւ, երբ Ելգինէն դուրսովին անհետանում է, պաուզա։) Ձեմ հասկանում... (Ձեռը սեղմում է ճակատին։)

վարագոյր

# ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

Նոյն սենեակը, նոյն կահ-կարասին ցերեկով։ Դէսօրուայ մէկ ժամն է։ Լուսամուտները դէպի փողոց բաց են։ Ցատակի նաև կահ-կարասիի մի մասի վրայ սփռվել են ապրիլեան արեգակի ախորժելի ճառագայթները։

## ՏԵՍԻԼ I

Հռիփսիմէ, Մարթա, յետոյ Եւգինէ։

**ՀՌԻՓ.** *(Ներս է մտնում նախասենեակի դռներից գլխարկով ու վերարկուով։ Նայում է շուրջը։ Ոչ ոքի չըտեսնելով, մտնում է նախ Միհրանի առանձնասենեակի դռներին, ականջ դնում։ Յայն չըլսելով, մտնում է ննջարանի դռներին, ուզում է ներս մըտնել, թողնում է մտադրութիւնը, յետ դառնում։ Յանկարծ կողմի խորքի, այն է սեղանատան՝ դռներից ներս է մտնում Մարթան հագնված՝ գլխարկով։)* Ա՜հ, ո՞րտեղ էք։ *(Համբուրվում են։)* Մտնում եմ ներս, ոչ ոք, ոչ ոքի չեմ տեսնում, ոչ ոք չի գալիս, ոչ ոք դուռ չի բանում։ Ոչ ոք չի գալիս ինձ դիմաւորելու։ Ոչ ոք ինձ չի նայում։ Ոչ ոք ինձ չի ճանաչում։ Ոչ ոք ինձ չի ուզում։ Ոչ ոք ինձ չի սիրում։ Ոչ ոք ինձ չի ողջունում։ Ոչ ոք ինձ չի հարցնում։ Ոչ ոք ինձ չի հետաքրքր

ՄԱՐ. Ձեմ հասկանում միտքդ։ Դէհ, ներքիր, մայրիկ, ես շտապում եմ, բայց շուտով կվերադառնամ։

ՀՈՒԻՓ. Ես էլ երկար չեմ նստելու։ (*Մարթան գնում է։*)

## ՏԵՍԻԼ II

Նոյնիսկ եւ Հուիփսիմէ։

ԵԻԳ. Այդ ուր ես շտապում, մամա։ Գլխարկդ վերցրու, միասին նախաճաշ կանենք։

ՀՈՒԻՓ. Չէ, պէտք է գնամ հօրաքրոջդ մօտ։ Երկու ամիս է չեմ տեսել. ամօթ է։ Նա քեզ շատ է սիրում, միշտ գովում է։ Ով քեզ սիրում է, ես էլ նրան եմ սիրում։ Դու ասա տեսնեմ, ինչու այսօր աչքունքդ թթռւած է։

ԵԻԳ. Ասացի, որ անքուն եմ եղել։

ՀՈՒԻՓ. Ախ, ճշմարիտ, ասացիր։ Ուշքս տեղը չէ։ Գիտես, ժէննեա, քո պատկվելուց յետոյ ուշքս իսկի վրես չի լինում։ Ուրախութիւնից է, ուրախութիւնից։ Դու բազդաւոր ես, ես էլ հարբածի պէս եմ։ Աչքիս լոյս, հոգիս, (*համբուրում է*) օրից օր սիրուն նանում ես, այ ինչ ասել է լաւ ապրել։ Այդ ինչ է, էլի նոր հագուստ։ Օխ, ոսկի է, ոսկի Միհրանը, թագուհու պէս է պահում քեզ։ Երէկ մօտս էր, հարուստ բերդը անգամ գովեց քեզ։ Ինձանից էլ չնորհակալ է, որ քեզ նման աղջիկ եմ պահել, մեծացրել նրա համար։ Նա շատ ուրախ է քեզանով, շա՛տ...

ԵԻԳ. (*Հեգնաբար ծիծաղելով*) Սէրի կուրախանայ, երբ ամեն բան կիմանայ։



ՀՈՒԻՓ. Նա ամեն բան գիտէ, ամեն բան։ Ես նրան բոլորը պատմել եմ։ Նա այնպէս սիրում է հօրերդ յիշատակը, որ ուզում է նրա անունով մի որդեգիր պահել։

ԵԻԳ. Այդ քեզ ինքն ասաց։

ՀՈՒԻՓ. Ինչպէս չէ, հէնց երէկ։ Այ, կարծեմ, առաջիկայ սեպտեմբերից մեկին վերցնելու է։

ԵԻԳ. Ես չեմ թողնիլ։

ՀՈՒԻՓ. Բա՜հ, ինչո՞ւ։

ԵԻԳ. Չի հարկաւոր։ Առանց այդ էլ մենք նրան շատ ենք պարտական։

ՀՈՒԻՓ. Պարտականո՞ւ։ Ինչո՞վ։ Փառք Աստծու, ուրիշ գոքանչների պէս նրա վրնջքին չեմ նստել ու նրա հացով չեմ ապրում։

ԵԻԳ. Ես նրան արժանի չեմ...

ՀՈՒԻՓ. Ո՞վ ասաց արժանի չես։ Պօլկովնիկ Միլովի աղջիկն ում չի արժանի։ Եթէ նա բարի է, խելօք, փող շատ է աշխատում, պատիւ ունէ, դու էլ գեղեցիկ ես, խելօք, հրեշտակի պէս մարդուր...

ԵԻԳ. (*Հառաչանքը թագցնելով։*) Մարդուր, օո, Տէր Աստուած, այս ինչ տանջանք է... (*վեր է կենում, մօտենում լուսամուտներից մեկին։*)

ՀՈՒԻՓ. (*Մօտենալով նրան։*) Դու հիւանդ ես։

ԵԻԳ. (*Արագութեամբ հեռանալով նրանից։*) Անքուն եմ, անքուն։ Դու որ գնաս, ես պառկելու եմ անկողին...

ՀՈՒԻՓ. Շատ լաւ կանես, որդի... ահա ես գնացի... (*համբուրվում է։ Լսում է զանգի ձայն։*)

ԵԻԳ. Ահա, տեսնում ես, մի ժամ հանգիստ չեն թողնում։ Երևի, հիւր է։ Ես դեռ մազերս կարգի չեմ

բերել։ Մի փոքր սպասիր, ես իսկոյն կըգամ։ (Գնում է ննջարանի դռներով։ Երմոնէն ներս է հրաւիրում Գաբրօ Ազարեանին ասելով՝ «Այստեղ են»։)

## ՏԵՍԻԼ III

Հռիփսիմէ եւ Գաբրօ Ազարեանց։

ԳԱԲ. Ա.Զ. (Հագնված է ճաշակով, նորաձեւ։ Երևսին սիրալիր ժպիտ, ձեւերը նուրբ, ձայնը մեղմ եւ քաղցրահամբոյր։ Հետուից գլուխ տալով, մօտենում է Հռիփսիմէին։) Ցաւով եմ, չէք մոռացել։

ՀՌԻՓ. Վահ. Գաբրօ... Այդ ո՞ր Աստծուց։ (Գաբրօ Ազարեանը հաճքուրում է նրա ձեռը, իսկ նա Ազարեանի ճակատը։)

ԳԱԲ. Փոքի Աստծուց, մայրիկ, մամոնայի։ Ամենքը փոքի համար այստեղ են վազում, ես էլ վազեցի։

ՀՌԻՓ. Շատ ուրախ եմ, որդի, համեցէք, նստիր, որտեղ քէֆդ է։ (Գաբրօն նստում է բազկաթոռի վրայ, ապատելով սակայն, որ նախ Հռիփսիմէն նստի։) Վահ վահ, աչքերիս չեմ հաւատում։ Աստ է, ինչ կայ, դարձիր ես եկել։

ԳԱԲ. Հապա։ Ինձ ուղարկել են այստեղ իբրև ներկայացուցիչ մի նոր ընկերութեան։

ՀՌԻՓ. Հմ, ով գիտէ, հոր պիտի փորէք, նաեւ հանէք...

ԳԱԲ. Այո, այդպիսի մի բան։ Ասացէք, ինչպէս էք, դո՞ւք, Եւգինէն։ Լսել ենք, լսել ենք։

ՀՌԻՓ. (Գարձանքով ցոյց տալով շուրջը։) Տեսնում ես էլի, գիպի ժենեայիս համար է սարքած։

ԳԱԲ. (Դիտելով շուրջը։) Հիանալի է, շատ ուրախ եմ։ Աստւած են, շատ խելօք ու աղնիւ մարդ է ու շատ լաւ փաստաբան։

ՀՌԻՓ. Մի խօսքով, ժենեաս բաղդաւորվեց, դոհոլթիւն Աստծու։ Էհ, ձերոնք ինչպէս ե՞ն։

ԳԱԲ. Իմ քոյրն էլ անցեալ շաբաթ նշանվեց։

ՀՌԻՓ. Վահ, ասա, որ ուրախանամ է։ Ո՞րն է նշանվել։

ԳԱԲ. Փոքրը, Լիզան...

ՀՌԻՓ. Ո՞ւմ հետ։

ԳԱԲ. Մի բժիշկ ուսանողի։

ՀՌԻՓ. Աստուած երկուսին էլ մեծ բաղդի արժանացնի։ Հաւատա, որդի, քոյրերիդ էլ ու քեզ էլ միշտ հարազատ որդուս պէս եմ սիրել։ Շատ ուրախ եմ։ Աղջիկս բաղդաւորվելուց յետոյ ուզում եմ, որ ամբողջ աշխարհը բաղդաւորվի։ Ախ, ինչպէս է սիրում, ինչպէ՞ս է սիրում ժենեայիս...

ԳԱԲ. (Ժխտական արծաթէ տուփը գրպանից հանելով։) Կարելի՞ է։

ՀՌԻՓ. Խնդրեմ. վահ, մոռացել ես, որ ես էլ եմ ծխում։

ԳԱԲ. (Առաջարկում է ծխախոտ։) Ես ձեր ոչ մի սովորութիւնը չեմ մոռացել։ Այս շատ լաւ պապիրոս է։ (Հռիփսիմէն վերցնում է ծխախոտ։ Ազարեանը վառում է լուցկի, նախ տալիս է նրան ծխելու, ապա ինքն է ծխում։) Ինքը բողարճեանցն է յաւուկ ինձ հարմար պատուիրել իւր գործարանում։ Մի մեծ արկղ բերել եմ հետս։ Եթէ թոյլ տաք, վաղը մի քանի հարիւր կուղարկեմ ձեզ համար։

ՀՌԻՓ. (Ժխելով։) Շատ լաւն է։ Իսկի չես փոխ-

վել, էլի էն Գաբրօն ես, միշտ քաղաքավարի, բարի, կավալեր...

ԳԱՔ. Իսկ դուք փոխվել էք, չաղացել էք, չահեւլացել, սիրուևացել...

ՀՈՒԻՓ. (Ծոյված)։ Այս օրհնված քաղաքում ամենքը չաղանում են...

ԳԱՔ. Օրհնված։ Այդ ինչից է, որ ուրիշներն անիծում են այս քաղաքը, իսկ դուք օրհնում էք։

ՀՈՒԻՓ. Մենք են գործում անիծողները, որդի։ Այս քաղաքի նման քաղաք չկայ։ Ես Թիֆլիսն ինչ է սրա մօտ։ Այստեղ ամեն բան լաւ է։ Մարդիկ խելօք են, աշխատասէր, իսկ բարեքիւնն էլ մի ասա, այստեղ չար մարդ չկայ։ Մէկ էլ որ այստեղ նախանձ չկայ, որդի։ Իսկ Թիֆլիսում, օհ օհ օհ, մարդ են ուտում։ Եթէ Ժենեա այնտեղ այսպէս բաղդաւորվեր, ու ու ու, ամենքը նախանձից կըտրաքվէին, էլ բան չէր մնալ—չէնարէին, որ աղջկա իւր մարդուց բաժանեն։ Այստեղ մարդիկ ժամանակ չունին նախանձելու։ Ա՛հ, ինչ ուշացաւ Ժենեա։ Ես մի քիչ վռազում եմ, որդի, կընդրեա։ Ա՛հա գալիս է։

ԵԻԳ. (Ներս է մտնում եւ, նկատելով Գաբրօյին, ցնցվում է, շփոթվում եւ մնում անշարժ։)

## ՏԵՍԻԼ IV

Նոյն եւ Եւգինէ։

ՀՈՒԻՓ. (Միծաղելով։) Զբաղնաչեց...

ԵԻԳ. (Մօտենում է սեղանատան դռներին, մըտածում։) Երմանէ (Շտապով ներս է մտնում Երմո-



նէն։ Եւգինէն ուզում է նրան մի քան ասել, բայց մոռացում է, վճռական շարժումն է անում, յետոյ ձեռով նշան է անում նրան հեռանալու։ Երմոնէն գնում է զարմացած։ Զարմացած է նաեւ Հոիփսիմէն։)

ՀՈՒԻՓ. Ժենեա, չես ճանաչում Գաբրօյին. մեր բարի, քաղաքավարի հարևան Գաբրօ Ազարեանին։

ԳԱԲՐՕ։ (Եւգինէն դուրս գալու րոպէից ոտքի է վեր կացել եւ անշարժ կանգնած ժպտալով սպասում է նրա հայեացքին։) Երեւի, շատ փոխվել, ծերացել եմ։ (Մօտենում է եւ կամենում Եւգինէի ձեռը համբուրելու։)

ԵԻԳ. (Ձեռը կամացուկ, մօրից թագուն, խլում է նրանից։) Բարև ձեզ...

ՀՈՒԻՓ. Հիմայ ճանաչեցիր։

ԳԱԲ. Աչքից հեռու—մտքից ընկած։ Էհ, ինչպէս կըհրամայէք ձեզ անուանել այժմ։ Առաջ ինձ համար փոքրիկ Ժենեա էիք, իսկ այժմ Եւգինիա Պաւլօվնա, թէ տիկին Ալվերդեան։ (Առանձին։) Տէր Աստուած, ոլքան գեղեցկացել է։

ՀՈՒԻՓ. Գաբրօն ամեն բան լսել է Միհրանի մասին։ Ժենեա, չնորհաւորիր նրան, Լիզան նշանվել է։

ԵԻԳ. (Անտարբեր։) Այո՞։

ԳԱԲ. Այո, տիկին, թէ նշանվել է եւ թէ շուտով պիտի ամուսնանայ—գիտեմ, բայց թէ երկար ժամանակ կապրի մարդու հետ—Աստուած գիտէ։

ՀՈՒԻՓ. Ի՞նչ ես ասում, որդի, այ այ այ։ Նայիր, ինչ ես կանգնել...

ԳԱԲ. Մեր ժամանակում կնոջ համար մարդուց բաժանվելն աւելի հեշտ է, քան ամուսնանալը։

ՀՈՒԻՓ. Էհ, դու էլի առաջուայ կատակաբերն ես։

ժեննեա, ես գնացի, բայց շուտով կըգամ։ (Դարըօին։) Այսօր, երևի, այստեղ կըճաշես, իսկ վաղն անպատճառ իմ մօտն ես։ (Վեր է կենում։)

ԵԻԳ. Մամա, աշխատիր շուտով վերադառնալ, գործ ունիմ։

ՀՈՒԻՓ. Լաւ, լաւ. (գնում է։)

## ՏԵՍԻԼ V

Եւգինէ եւ Դարօ Ազարեան։

ԵԻԳ. (Ոտներկցում է մօրը մինչեւ նախասենեակ, սպասում է մինչեւ նրա քարտուղին դուրս գնայն եւ դռները ծածկում. յետոյ մօտենում է սեղանատան դռներին, նայում՝ ղէպի ներս, դռները ծածկում. յետոյ կանգնում է քեմի մէջ տեղում ու նայում Դարօին ոտքից մինչեւ գլուխ։)

ԳԱՔ. (Ամբողջ ժամանակ ոտքի վրայ աչքերով հետեւում է նրան. նրա ղէմքին արտայայտում է մերթ զարմացում ու տարակուսանք, մերթ ուրախութիւն եւ հրճուանք։) Վերջապէս։ (Ցատկակում է Եւգինէին համբուրելու։)

ԵԻԳ. (Առանց տեղից շարժվելու, ձեռը ետ քաշում է այնպէս խիստ, որ Ազարեանը ընկնում է տեղն ու տեղը. յետոյ նայում է նրան խորին արհամարհանքով. մի փոքր ժամանակ լռութիւն)։ Ես դրա համար չառանձնացայ ձեզ հետ։

ԳԱՔ. (Տակաւին ձեւացնում է, թէ չի հասկանում նրա իսկական տրամադրութիւնը, ժպտում է։) Ներիր, մոռացայ, որ կնոջ համար պզուշութիւնը կէս առաքինութիւն է։



ԵԻԳ. (Մղելով ինքն իւր հետ կռիւ, որպէս զի կարողանայ սառնարիւն լինել։) Ինչո՞ւ էք եկել։

ԳԱՔ. Ահա սիրող և յարգող բարեկամի համար աւելի քան անհասկանալի մի հարց։ Ներիր, ժեննեա, չէի սպասում։

ԵԻԳ. (Վրդովվելով նրա ասնութիւնից։) Մի հարձակվէք ինձ հետ խօսել եղակի։

ԳԱՔ. (Փորը ինչ շփոթվում է, սակայն իսկոյն իշխում է իրան եւ ելգինէի տրամադրութիւնը կատարելապէս վերածում։) Կարծեմ վարագոյրների հետեւում ոչ ոք չի թագնված, թէ աղաղակը սովորութիւն ունէ դրան հետեւից ականջ դնելու։ Գեղեցկութեան թշնամին բամբասանքն է, իսկ բամբասանքի աղբիւրը — ծառաները։ Մի պահէք, սիրելին, հայ ծառաներ. նրանք չափից դուրս հետաքրքիր են...

ԵԻԳ. Թողէք ձեր կատակները և պատասխանեցէք. ինչո՞ւ համար էք եկել։

ԳԱՔ. Զարմանալի հարց, եկել եմ ինչպէս սովորաբար, դործով, պաշտօնով...

ԵԻԳ. Իմ տունը, այստե՞ղ։

ԳԱՔ. Ա՛ա, այդպէս ասացէք։ Այցելութեան։ Չէ որ մենք բարեկամներ ենք...

ԵԻԳ. Ուրեմն, լսեցէք. այդ կըլինի ձեր առաջին և վերջին այցելութիւնը։ Այս մէկ։ Երկրորդ, դուք չէք համարձակվիլ ոտք դնել իմ մօր տունը։ Հասկանո՞ւմ էք։ (Արտասանելով այս խօսքերը, մօտենում է լուսամուտներից մէկին եւ հայեացքը յառում դէպի փողոց։)

ԳԱՔ. (Հիասթափված, լռում է, խորհում, յետոյ։)

Արդեօք, խիստ չէք վարվում ինձ հետ։

ԵԻԳ. (Տակաւին պահպանելով սառնարիւնութիւնը) Ցաւենայն դէպս, վարվում եմ աւելի մեղմ, քան դուք վարվեցիք ինձ հետ։

ԳԱՔ. Ես ձեզ վրայ բռնութիւն դործ չեմ դրել։

ԵԻԳ. (Երեսն արագ դարձնելով դէպի նա։) Բռնութիւն։ Դուք աւելի վատ միջոց էք դործ դրել։ Եթէ լինէիք աւազակ և ինձ անպատուէիք, այսօր ես հաղար անդամ պակաս կըտանջվէի։ Բայց ոչ, դուք յափշտակեցիք ինձ քաղցր լեզուով, որ սրից ու կրակից զօրեղ է։ Ձեմ հեդքում, դուք ինձ դիւր էիք դալիս, որովհետև դեղեցիկ էիք։ Բայց մի մոռանաք, որ կեանքն ինձ համար մի մրին աչխարհ էր։ Ճշմարիտ է, մի օր դուք ինձ թուացիք ասպետ։ Այնպիսի ասպետ, որ պատրաստ է իւր կեանքը վտանդի ենթարկել մի խեղճ աղջիկ կրակից՝ազատելու։ Բայց ինչ դիտէի, որ կրակը հէնց դուք ինքներդ էք։ (Սկսում է անց ու դարձ անել։)

ԳԱՔ. Ըզգիտէի, որ իմ սէրը ձեզ համար կրակ էր։

ԵԻԳ. Սէր։ (Դառն ծիծաղ։) Չա հա հա, սէր։ Ծաղր, խաբէութիւն, անարդանք և ոչ սէր։ Ես մինչև այսօր չեմ կարողանում ինձ հաչիւ տալ, ինչպէս պատահեց այդ։ Բայց այդ օրն ես ոչ միայն հաւատում էի ձեզ, այլև հաճելի էր ինձ՝ հաւատալ։ Եւ դուք, օդտվելով այդ բանից, դործ դրեցիք ձեր լեզուն, այդ թունաւոր դեղը։ Նա կամաց-կամաց վարակում էր արիւնս, սպանում էր իմ մէջ ամօթի զդացումը, և սպանեց։ (Ընկղմվում է զահավորակի վրայ եւ երեսն ամօթից ձեռներով ծածկում։)

ԳԱՔ. (Ձայնն արան, հետևում կանգնած, յետոյ



մի քանի քայլ մոտենում։) Եւ դինէ, այդ բոլորն անցած բաներ են։ Ինչու՞ էք զրկրում անցեալն և ինքներդ ձեզ տանջում։ Այն օրից յետոյ մենք մի քանի տարի էլ եղել ենք հարևաններ և... բարեկամներ։

ԵԻԳ. Ես ձեզ երբէք չեմ սիրել։

ԳԱՔ. Բայց չէք էլ աաել, երբեմն մինչև անդամ թոյլ էք տուել ձեզ փաղաքշելու։ Մի թէ կարող էք հերքել այդ։

ԵԻԳ. (Ցնցվելով։) Օօ, զղուելի բոպէներ։

ԳԱՔ. Ինչու՞։ Զդուելի կըլիներ այն ժամանակ, եթէ այդ օրից յետոյ ձեզ չըհամբուրէի։ Բայց ես ոչ միայն համբուրում էի, այլ և սիրում ձեզ։ Այո, այո, սիրում էի և, վկայ է Աստուած, ուրախութեամբ կոտնատակ ձեզ հետ, եթէ հանդամանքները ներէին։ Իմ վրին մեծ լուծ կար—մայրս և քոյրերս։ Աւելացրէք և՛ այն, որ այդ միջոցին ես անդործ էի։ Այժմ, եւդինէ, պէտք է մոռանալ անցեալն և ապրել նոր զդացմունքերով։ Դուք ժամանակակից կին էք, կըրթած, դարդացած, դուք պիտի հեռու լինէք նախապաշարումներից։

ԵԻԳ. (Գլուխը ցածրացնելով, վերը է կենում։) Ցեռյ... յետոյ։

ԳԱՔ. (Յօրահուսավելով։) Այն օրից անցել է լինը տարի—մի ամբողջ յաւիտենականութիւն։ Դուք սեղմել էք օտար քաղաք, յամրոց կերպով ամուսնացել և ահա մի տարուց աւելի է վայելում էք հանդիստ ամուսնական կեանք։ Այժմ ոչ ոք չըդիտէ ինչ է եղել ձեր անցեալում, ոչ ոք, բացի ինձանից...

ԵԻԳ. (Ձայրացած։) Ոչ ոք։ Սուտ էք ասում։ Որ դուք դոնէ մի անդամ պարծեցած չըլինէք ձեր յաղ-

Թուխթեամբ, դո՛ւք. Հա հա հա։ Ո՞վ չըգիտէ, որ դուք և ձեղիպէտներըը հէնց նրա համար էք ինձ նամանեբին մոլորեցնում, պատուից զրկում, որ յետոյ պարծենաք։ Դա ձեր հերոսութիւնն է։ Բայց բաւական է։ Լսեցէք. ես ոչ միայն չեմ աշխատիլ ձեր լեզուի վրայ որ և է սանձ դնել, այլև կազատեմ նրան ամեն մի սանձից։ (*Սկսում է անց ու դարձ անել։*)

ԳԱՔ. (*Ապշելով։*) Այդ ինչպէս։

ԵԻԳ. Կարդացի՛լ էք Արաքաչեանի մասին լրագրներում։

ԳԱՔ. Ի՞նչ էք ուզում ասել։

ԵԻԳ. Այն, որ ես կըհեռանիմ այն թշուառ կնոջ օրինակին։

ԳԱՔ. Եւ կըխոստովանէք ձեր ամուսնուն։

ԵԻԳ. Այո՛։

ԳԱՔ. (*Պաուզա։*) Դուք այդ չէք անիլ։

ԵԻԳ. Եւ ո՛վ կարգելի ինձ։

ԳԱՔ. Դուք չէք կամենալ ձեզ կործանել։

ԵԻԳ. Լաւ է կործանվել, քան թէ ապրել այնպէս, ինչպէս այժմ։

ԳԱՔ. Ձէ՛ որ ձեր ամուսինը ձեզ սիրում է ու հաւատում, կընշանակէ նա ձեզ համարում է անարատ։

ԵԻԳ. Այո՛, բայց ես խիղճ ունիմ։

ԳԱՔ. Եւ մի՞թէ այդ խիղճը թոյլ կըտայ ձեզ մի հարուածով կործանել երեք կեանք։ Ասում են ձեր ամուսինը լաւ մարդ է։ Եթէ ձեզ չէք խնայում, խնայեցէք գոնէ նրան։

ԵԻԳ. Խնայել խաբելով, խնայել սուտուխեամբ. խնայել այնպէս, ինչպէս խնայել եմ մինչև այժմ։ Օհ, ոչ, դա խնայել չի նշանակում, այլ բարոյապէս կողոպտել մի ազնիւ մարդու։ Գիտէք ինչ ասել է խղճի խայթոց։ Օհ, ոչ, եթէ գիտենայիք—այս առնը ստք չէիք դնիլ։ Իսկ ես գիտեմ։ Մի տարի է նա ինձ տանջում է։ Սկզբում դեռ ոչինչ, որովհետև գիտակցութիւնս թմրած էր, որովհետև Ալվերդեանին չէի սիրում, որովհետև ամուսնացել էի նրա հետ հէնց այնպէս, ինչպէս ամուսնանում է առհասարակ կանանց մեծ մասը։ Բայց յետոյ սկսվեց տանջանքս, երբ սիրեցի նրան։ (*Թեթեւ պաուզա։*) Անցեալ օրն երբ այստեղ խօսում էին Արաքաչեանի մասին, ես հազիւ զսպեցի ինձ, որպէս զի հէնց հիւրերի ներկայութեամբ չընկնեմ ամուսնուս առնեբին և չասեմ. «ես ևս մի տիկին Արաքաչեան եմ»։ (*Պաուզա։*) Բայց այն, ինչ որ չարեցի այն օրը, կանեմ այսօր, որովհետև պարտաւոր եմ անելու և չեմ կարող չանել... (*Ընկղմվում է բազկաթոռի վրայ ու աչքերը յառում դէպի անդորր տարածութիւն։*)

ԳԱՔ. (*Մի փոքր լռութիւնից յետոյ անվստահ բայլերով մօտենում է, կանգնում նրա գլխի մօտ։ Պաուզա։*) Ես լսել եմ, որ դուք ունիք մի սիրուն եղբայր...

ԵԻԳ. (*Ցնցվում է*) Երեխայ...

ԳԱՔ. Ոբին, երևի, սիրում էք թէ դուք և թէ ձեր ամուսինը։

ԵԻԳ. Խեղճ փոքրիկ։

ԳԱՔ. Ահա հէնց այդ խեղճ փոքրիկի համար դուք պիտի խնայէք ձեզ...

ԵԻԳ. (*Ցասկաւին ինքնամոռացութեան մէջ։*) Խեղճ Մարգո...

ԳԱՔ. Մի մոռանաք և՛ ձեր մօրը...

ԵԻԳ. (Ուշքի գալով։) Մա՜յրս...

ԳԱՔ. Այո, այդ բարի և միամիտ կնոջը...

ԵԻԳ. (Արագութեամբ ոտքի է կանգնում կատաղած։) Որի բարեկամութիւնը դուք այդպէս ապականեցիք։ Օ՜օ, բաւական է, հեռացէք...

ԳԱՔ. Կը հեռանամ, իհարկէ, բայց խօսք առէք, որ չէք կատարիլ ձեր անմիտ վճիռը։

ԵԻԳ. Ի՞նչ, ինչ իրաւունքով էք պահանջում ինձնից այդպիսի խօսք։

ԳԱՔ. Սիրոյ մարդու իրաւունքով։

ԵԻԳ. Սի՜ր... Մի արբապղծէք այդ բառը։ Կան բերաններ, որոնք իրաւունք չունին նրան արտասանելու։ (Զսպելով իւր յուզումը, մօտենում է սեղանատան դռներին։)

ԳԱՔ. Ի՞նչ էք կամենում անել։

ԵԻԳ. Կանչել ազախնին, որ ձեր վերարկուն պահի։

ԳԱՔ. (Պատգա, որի միջոցին Գաբրօի մէջ տեղի է ունենում հոգեկան պատերազմ. նա ճանաչում է Եւգինէի հոգին։) Ես կը գնամ առանց ազախնի օգնութեան էլ։ Բայց, Աստուած սիրէք, մի կործանէք ձեզ։ Դուք այդքան երիտասարդ էք, գեղեցիկ, կեանքը ձեզ ժպտում է, երես մի գարձնէք նրանից։ Եւգինէ, ես ձեզ լաւ չէի ճանաչում, այժմ ճանաչեցի։ Խոստովանւում եմ, ես ձեզ համարում էի մեկն այն կանանցից, որոնք... որոնք... այդչափ լուրջ չեն նայում կեանքին... բայց աչքերս բացվեցին և այժմ ձեզ տեսնում եմ ձեր իսկական գոյներով։ Ես մոլորված էի և ահա այժմ ղղջում եմ... գնէ այս բանին հաւատացէք...

ԵԻԳ. (Հեգնական դառն ծիծաղով։) Հա հա հա, ղղջում եմ, հա հա, ղղջում եմ. այդպէս չո՛ւռ։ (Պա-



զա։) Բաւական է, բաւական է, այս րոպէին ամուսինս կարող է գալ. ես չեմ ուզում, որ դուք հանդիպէք միմեանց։ Գնացէք...

ԳԱՔ. (Ամօթից ընկճված։) Եւգինէ՜...

ԵԻԳ. Գնացէք, գնացէք, խնդրում եմ, ես առանց այդ էլ շատ եմ տանջվում։ (Մօտենում է նախասենեկի դռներին։)

ԳԱՔ. Գոնէ մի մեզմ հայեացք, ներման մի թոյլ ժպիտ։

ԵԻԳ. Առանց նայելու նրան, տանջանքով ցոյց է տալիս ձեռով դռները։ Գաբրօն մօտենում է դռներին, տակաւին յուսալով, որ Եւգինէն կը վերադառնայ։ Բայց տեսնելով, որ նրա դէմքի արտայայտութիւնը չի փոխվում, գնում է ամօթահար հանդարտ քայլերով։

ԵԻԳԻՆԷ. Սպասում է մինչեւ Ազարեանի հեռանալը, ծածկում է դռները, ընկղմվում աթոռի վրայ եւ, գլուխը դնելով թեւերի վրայ, դառն հեկեկում է։ Այնուհետեւ, մի վճռական շարժում անելով, ոտքի է կանգնում, աչքերը սրբում, ուշքը ժողովում, մի քանի վայրկեան անցուդարձ անում։ Ցետոյ մօտենում է սեղանատան դռներին, բաց է անում։ Ներս է մտնում աղախինը։

## ՏԵՍԻԼ VI

Եւգինէ եւ Եւոճէ։

ԵԻԳ. Դայեակը վերադարձա՞ւ։

ԵՐՄ. Իսկի էլ չէ։ Կօֆէն պատրաստ է։

ԵԻԳ. Հաւաքիր։ Ես չեմ ուզում։ (Պատգա։ Ե-

*մոնէն ուզում է գնալ, լսում է զանգի ձայն։) Երևի, պարոնդ է։ (Ելմոնէն գնում է նախասենեակի դռնով։ Ելինէն իշխում է իրան, ուշքը գոլորովին ժողովելով եւ նստում դաշնամուրի մօտ։ Նուագում է ուրախ եղանակ։)*

## ՏԵՍԻԼ VII

Միեւրաց եւ Ելինէն։

**ՄԻՀ.** (*Հագած է ֆրակ։ Նա գալիս է դատարանից եւ շատ ուրախ է։ Դռների առջեւ սկզբում տալիս է Ելմոնէնին, որ իսկոյն տանում է նրա ոտանձնասենեակը, կրկին յետ դառնում սեղանատուն։*) Ահա, այդ ինձ դիւր է գալիս. երբ գործից վերադառնալիս քեզ տեսնում եմ դաշնամուրի մօտ, հագնված, ուրախ, մոռանում եմ յոգնածութիւնս։ (*Մօտենում է ու համբուրում։*) Շարունակիր, չարունակիր, ես ուրախ տրամադրութեան մէջ եմ... մի գործ տարբեր փառայեղ կերպով։ Դատարանն արդարացրեց այն անմեղ թուրքին, որին թշնամիները ցոյց էին տուել իբրև եղբայրասպան։ (*Նստում է մօտը։*) Պէտք է տեսնէիր, թէ խեղճն ուրախութիւնից ինչպէս էր լալիս։ Օ՜, որպիսի հոգեկան երջանկութիւն է տեսնել անմեղին չղթաներից ազատված և զգալ, որ նրա ազատութեան մէջ դու էլ դեր ես կատարել։ Նուագիր, նուագիր, այդ եղանակը համապատասխանում է իմ հոգեկան տրամադրութեանը...

**ԵԻԳ.** (*Վերջացնելով նուագումը։ Պատաս։*) Շո՛ր է դրսում։



**ՄԻՀ.** Վատ չէ։ Բայց երկու չաքաթ ևս և աֆրիկեան տաքերը կըսկավին։ Էհ, հոգ չէ, կըփախչենք։ Լսիր. մայիսի մէկից մինչև սեպտեմբեր բոլոր գործերս յանձնում եմ Համազասպին և չորս ամիս քեզ հետ պատում եմ Եւրոպայում։ Այո, այո, դու պէտք է տեսնես ինչպէս են ապրում քաղաքակիրթ ազգերը։ Ցոյս ունիմ, որ չես ասիլ, թէ վատ միտք է։ (*Ձեռները վերցնում է իւր ձեռների մէջ։*)

**ԵԻԳ.** Մի՞թէ քո գլխում կարող է վատ միտք ծագել։

**ՄԻՀ.** Օ՜, մի՛ ասա, երբեմն շատ վատ մտքեր են ծագում։ Օրինակ, այն երեկոյ. այն ինչ հէքիաթ էր, աա՛։ Աստուած գիտէ մի վայրկեանում ինչեր զգացի։ Բայց յետոյ բանը հասկացայ։ Երեխայ, ինչո՞ւ մինչև հիմայ ինձանից թագցնում էիր...(*Նայում է Ելինէի աչքերին խորհրդաւոր։*) Մի՞թէ սիրող հայր չեմ... Իհարկէ, իհարկէ, այդ դէպքերի մէջ կնոջ բնաւորութիւնը փոխվում է։ Բայց, ի սէր Աստծու, կապրիզներ որքան քեֆդ է ունեցիր, միայն ինձ մի վշտացրու։ Եթէ ոչ, գիտես, իրաւաբան եմ, օրէնքով կըդատեմ. մէկ էլ տեսար որոշեցի—զրկել բոլոր իրաւունքներից և աքսորել ոչ այնքան հեռու տեղեր, այսինքն—խոհանոց, որ ինձ համար ձուածեղ պատրաստես։ Աա, կերթա՞ս...

**ԵԻԳ.** Ուրախութեամբ։ (*Հեռանում է։*)

**ՄԻՀ.** Օ՜, գիտեմ, կերթաս։ Դու խոհանոցից սարսափող կանանցից չես. այն կանանցից, որոնք իրանց սալօններումն են խոհարարուհի։ Բայց ես քեզ չեմ ուզարկիլ։ Որ այդ քնքոյշ ձեռները կոշտանան... Երբէք, փառք Աստծու, քո բազդից իմ գործերն այնքան լաւ են գնում, որ կարող ես մէկի տեղ երեք խոհա-

բար պահել։ Սակայն... (Վեր է կենում) սաստիկ ցան-
կանում եմ Մարգօին համբուրել։ Ցուսով եմ, որ մեր
նպատակի օրիորդը տանն է։

ԵԻԳ. Ոչ։

ՄԻՀ. Ա՜ա, թափառական, երբեք տանը չի նըս-
տում։ Բայց եղանակը լաւ է, թող ազատ օդ շնչի։
Բա՜ի, քիչ էր մնում մոռանայի։ Սպասիր։ (Մօտենում
է սեղանատան դռներին։) Երմոնէ, Երմոնէ։ Այստեղ
բեր պօրտֆէյլս։ (Վերադառնում է Եւգինէի մօտ։ Եր-
մոնէն քեմով անցնում է Միհրանի առանձնասենեակը։) Իսկոյն կըտեսնես. մի թեթեւ սիւրպրիզ։ Վա-
ղուց է քեզ նուէրներ չեմ արել։ Բայց թոյլ տուր
կանխաւճառը տանալ... (Գրկում է Եւգինէին եւ հա-
մբուրում։)

ԵԻԳ. (Առանձին։) Օօ, ինչ տանջանք, Աստուած
իմ... (Երմոնէն քերում է պօրտֆէյլը։)

ՄԻՀ. (Առնելով պօրտֆէյլը, աղախնին նշան է
անում հեռանալու։ Երմոնէն գնում է սեղանատան
դռներով։ Միհրանը քաց է անում պօրտֆէյլը, հա-
նում է մի քանի աքցիաներ եւ առաջարկում է Եւգինէ-
ին։) Ահա, այս բոլորն այսօր, դասարան գնալիս, մայ
«Եգիպարով» և ընկերութեան գրասենեակին և գնե-
ցի քո ու Մարգօի անունով։ Վերցրու, փոխարէնը մի
ժպիտ, օօ ոչ, մի համբոյր... (Համբուրում է։)

ԵԻԳ. (Որ աստն անգամ ամուսնու համբոյրից
ցնցվում է, վերցնում է թղթերը, նայում։) Ի՞նչ բա-
ներ են։

ՄԻՀ. Նաւթային ընկերութեան աքցիաներ։

ԵԻԳ. Ոչինչ չեմ հասկանում այս թղթերից։ (Դը-
նում է թղթերը դաշնամուրի վրայ։)



ՄԻՀ. Ի՞նչ քո բանն է։ Դու ուրիշ հոգով ես
կրթված։ Հայրդ գինեվաճառական է եղել։ Նա քո մօտ
միշտ խօսել է հրացանների ու թնդանօթների մա-
սին։ Բայց, սիրելիս, ժամանակակից զօրեղ զէնքերից մէկն
էլ այդպիսի թղթերն են։ Պահիր քեզ համար, տա-
րաւայ վերջը դիվիդենտ կըստանաս։ (Ուզում է գրկել։)

ԵԻԳ. (Ցետ է քաշվում) Ա՜հ...

ՄԻՀ. Դու չե՞ս ուզում, որ քեզ համբուրեմ։

ԵԻԳ. (Ճիգն է անում ժպտալ։) Այո, չեմ ուզում։

ՄԻՀ. Ա՜ա, հասկանում եմ. դու ինքդ ես ուզում
համբուրել։

ԵԻԳ. (Ոտքի կանգնելով) Աստուած իմ, այլևս
այժ չըմնաց ինձնում...

ՄԻՀ. (Նկատելով նրա այլայլվիլը։) Ինչ սաս-
ցե՞ր... այժ չըմնաց...

ԵԻԳ. (Նայելով լուսամուտով դէպի փողոց։) Այո,
չըմնաց...

ՄԻՀ. (Ուրի կանգնելով։) Եւգինէ...

ԵԻԳ. (Երեսը դարձնելով նրան) Ի՞նչ ես կամե-
նում ինձանից, ինչ...

ՄԻՀ. Եթէ հիւանդ ես, պիտի բժիշկ հրաւիրել։
(Ուզում է մօտենալ դռներին։)

ԵԻԳ. Ոչ ոչ, հարկաւոր չէ։ Օօ, երանի թէ հի-
ւանդ լինէի։

ՄԻՀ. Ա՜ա, ինչ է պատահել։ Կարելի է ազգա-
կանների մասին վատ լուր ես լսել, գուցէ մայրդ
հիւանդ է կամ մի կարիք ունի։ Ա՜ա, չէ որ ես քեզ
համար ոչինչ չեմ խնայում։ Եւգինէ... (Գրկում է։)

ԵԻԳ. (Ազատվելով նրա գրկից։) Թո՛ղ, մի գըր-
կիր ինձ...

ՄԻՀ. (Աելի ու աելի զարմանալով, դարձեալ ժամենում է նրան ու զրկում։ Այս անգամ Եւգինէն ուղղակի հրում է նրան։) Դու ինձ հրում ես։

ԵԻԳ. Ոչ—քեզ, այլ ինձ եմ հրում քեզանից, Իննա...

ՄԻՀ. Ես դա... կատակ է...

ԵԻԳ. Կատակ... տանջանք է։

ՄԻՀ. Ո՞վ է տանջվում, ինչու։

ԵԻԳ. Նա, որ արժանի է տանջվելու և չուտով նա, որ արժանի չէ... (Աղտաոանում է խուլ ձայնով, հազիւ զսպելով հեկեկանքը։)

ՄԻՀ. (Ճակատը շփելով։) Ահա հանելուկ... «Նա, որ արժանի է և չուտով նա, որ արժանի չէ»։ Ոչինչ չեմ հասկանում, ոչինչ... բայց... դու սխալվում ես, դու հիւանդ ես, զառանցում ես... Եւգինէ, վատ մըտքեր են ծագում գլխումս, իմ մէջ կասկածներ են յղանում... պարզ խօսիր... (Եւգինէն լուռ է։) Վերջապէս, այդ չափից դուրս է... (Մօտենում է եւ քնում նրա ձեռը։)

ԵԻԳ. (Նայելով Միհրանին վշտալի հայեացքով։) Եւ ինչու, ինչու դու մի ուրիշ մարդ չես, կոպիտ, դեռևիկ, չար մարդ։ (Ձեռն ազատում է նրա ձեռից եւ հեռանում։)

ՄԻՀ. (Ապշած, քնեւոում է միեւնոյն տեղում, աչքերը յառելով Եւգինէի վրայ։ Պաուզա։) Աա...

ԵԻԳ. (Պաուզա։) Ինչով պիտի վարձատրեմ քո բոլոր բարութիւնները, եթէ ոչ... անկեղծութեամբ... Այո, այո, միմիայն անկեղծութեամբ։ Մի նայիր ինձ այդպէս, քո հայեացքն ինձ կըսպանէ...

ՄԻՀ. Վախենում ես, այո, վախենում ես։ (Լըռում է եւ շարունակ նայում։)



ԵԻԳ. (Մի քանի վայրկեան անց ու դարձ անելով, յանկարծ կանգ է առնում նրա առջեւ։) Մի հարց... (Ճակատը շփելով, պաուզայից յետոյ վճռական շարժումն է անում։) Այն երեկոյ դու ասում էիր, թէ ես թէ դու լինելիը Արաքսէեանի տեղը, կըներէիր կնոջդ անցեալը...

ՄԻՀ. Ասում էի, յետոյ...

ԵԻԳ. Արդեօք, համոզմունքով էիր ասում։

ՄԻՀ. Այդ ինչ հարց է... (Պուզա։ Ձայնը ըարձրացնում է։) Այդ ինչ հարց է... (Պաուզա։ Բռնում է Եւգինէի ձեռն եւ ուժգին թոթափում։) Ինչ հարց է այդ...

ԵԻԳ. Օօ, ինչ ամուր ես սեղմում ձեռս, դու երկաթի պէս ունես։

ՄԻՀ. (Ցածաձին ըաց ընդհողնելով նրա ձեռը։) Աա, ինչու ես հարցնում...

ԵԻԳ. Հարցնում եմ նրա համար, որ ես... ես... մի անպիտան կին եմ, ես... արժանի չեմ... որ ես... մի... մի տիկին Արաքսէեան եմ...

(Արտասանելով այս բառերը, ձեռն ազատում է Միհրանի ձեռից եւ թուլացած ընկնում է թախթի վրայ։ Երկարատեւ պաուզա, որի ժամանակ Միհրանը քարացած կանգնած է միեւնոյն տեղ, մի ուժեղ ցնցումից յետոյ։ Իսկ Եւգինէն երկու ձեռներով երեսը ծածկած է։ Վերջապէս, Միհրանը շփում է աչքերը, նայում շուրջը, յետոյ ինքն իրան, կարծես, հաստատանալու համար՝ երազումն է թէ արթուն։)

ՄԻՀ. Այս ինչ է... երազ... թէ ցնորվել եմ... Բայց... կարծեմ, խելքս գլխիս է... Ահա նա, ահա մեր... հիւրասենեակը... ծանօթ իրերը... Օրը ցերեկով... Իմ փաղաքշանքներից յետոյ... Հէնց այստեղ, ինքն իւր

լեզուով։ (Մօտենում է ու ձեռը քռնում։) Ցեա վերցրու աստծդ... յեա վերցրու։

ԵԻԳ. Հազիւ կարողացել եմ ասել։

ՄԻՀ. (Թոթափելով նրա ձեռը ուժգին։) Ուրեմն կատակ չի այդ...

ԵԻԳ. (Յորին տանջանքով երեսը դարձնում է նրանից։) Ո՞վ կարող է իւր ճակատագրի հետ այդպիսի կատակ անել։ (Ձեռն ազատում է ու քայլերն ուղղում դէպի ննջարան։)

ՄԻՀ. (Կտրելով նրա ճանապարհը։) Ոչ ոչ ոչ, ասա, որ ինձ փորձում էիր, ասա, որ ցնորված եա։ Դէհ, ասա... Աղաչում եմ, լռում ես, չեմ սպասում, այլ աղաչում եմ, աղերսում եմ, լսիր, ես տանջվում եմ... Փորձում էիր, որ իմանամ, թէ սուտ էր, որ ինձ փորձում էիր... Ես կըտամ քեզ ամբողջ կեանքս մի վայրկեան, միայն հերքիր, հերքիր աստծդ...

ԵԻԳ. Ես բոլորն ասացի։

ՄԻՀ. Ուրեմն չես հերքում... չես հերքում... Աա, դարչելի...(Ուզում է յարձակվիլ նրա վրայ, բայց վայրկենաբար զսպում է իրան։) Դազանը, դազանը պիտի զոպել։

(Ներս են մտնում տիկ. Հոիփսիմէն եւ տիկ. Մարթան դրսի հագուստով եւ ապշած մնում։)

ՄԻՀ. (Հեկեկալով փաթաթվում է քրոջ պարանոցին։) Մ՚արթա, Մ՚արթա...

ԵԻԳ. (Ընկնում է մօր գիրկը։)

Մարթան, կարծես, իրողութիւնը գուշակած, ատելութեամբ լի հայեացքով նայում է Եւգինէին։ Իսկ Հոիփսիմէն, ոչինչ չըհասկանալով, ապշած նայում է Մինրանին։



# ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Բեմը ներկայացնում է Մինրանի ընդարձակ առանձնասենեակը։ Երկու դուռ—խորքում և ձախ։ Խորքինը տանում է նախասենեակ, որի միւս կողմումն է Մինրանի վաստաբանական գրասենեակը, ձախինը տանում է հիւրասենեակ։ Ըջ պատի վրայ դէպի փողոց լուսամուտներ։ Տնաջնեղն էլ և մուտք ունին ձախի դռներից։ Ըջ պատի տակ դրած է Մինրանի գրասեղանը, վրէն հեռաձօի ապարատ, թանաքաման, թղթեր, պաշտօնական դրծեր, խորքի պատի տակ գրքերի պահարան դարաններով, քովը երկաթէ դրամարկղ։ Ձախ կողմում կաշուեծածկ գահաւոռակ և բազկաթոռներ, սեղան, վրէն ամսագրեր, մի տուփ՝ ծխախոտով լի և այլն։ Ցատակին սփռած է պարսկական գորգ։ Պատերին մի քանի գրաւիւրներ և մի քանի թատրոնական նշանաւոր դերձիչների նաև եւրոպական հռետորների պատկերներ.

## ՏԵՍԻԼ I

Վարագամեան եւ Գրագիր։

*Վարագոյրը բարձրանալիս Վարագամեանը, Մինրանի գրասեղանի մօտ կանգնած, թղթերի մէջ փընտրում է ինչ-որ թուղթ, իսկ գրագիրը մի թերթ ձեռին, գրիչն ականջի վրայ դրած, կանգնած է խորքի դռների առջեւ։ Մի քանի վայրկեան լռութիւն։*

**ՎԱՐ.** Զըգիտեմ որտեղ է դրել նա այն թուղթը։ (Դադարում է փնտրել։) Լաւ, առ այժմ արտագրեա։

**ՑԷՔ ԱՅԴ ԽՆԴԻՐԸ, ԻՆՔԸ ԿԸԳԱՅ, ԿԸՀԱՐՑՆԵՄ։**

**ԳՐԱԳ.** (Երեսը դարձնում է դուրս գնալու, իսկոյն

յետ է դառնում. պատգա՛ս:) Գրասենեակում մի քանի այցելուներ են սպասում:

ՎԱՐ. Իսկոյն կըգամ:

ԴՐԱԳ. Նրանք ուզում են անձամբ պարոն Ալվերդեանին տեսնել:

ՎԱՐ. Ասացէք, որ Ալվերդեանն ոչ ոքի չի ընդունում:

(Դրագիրը գնում է: Վարսամեանը, գրասեղանի մօտ կանգնած, ձեռը յենում է ճակատին եւ մտածում: Յորքի դռներից ներս է մտնում Սառափեանը:)

## ՏԵՍԻԼ II

Վարսամեան եւ Սառափեան:

ՍԱՌԱՓ. (Ճակատը թաշկինակով սրբելով:) Ահա քեզ և՛ դարնան սկիզբ. արդէն տաքն ղժալի է: (Բարկեւելով:) Չըմ, էլի միևնոյն տրամադրութեան մէջ է մեր պարոնը:

ՎԱՐ. Անփոփոխ:

ՍԱՌ. Զարմանալի է, հասկանալ չեմ կարող ինչ է պատահել այս տանը: Մխրանը լաւ այդպէս է, Մարթային խօսեցնել չի լինում, իսկ Եւգինէն իւր ննջարանից դուրս չի գալիս: Պէտք է, վերջապէս, պատճառն իմանալ: (Քայլերն ուղղում է ղէպի ձախի դռները:)

ՎԱՐ. Կարծեմ, հրամայված է ոչ ոքի չընդունել:

ՍԱՌ. Ահա թէ ինչ: Տարօրինակ է, տարօրինակ, ոչինչ չեմ հասկանում: Ահա, ով որ գալիս է: (Ձախ դռներից ներս է մտնում Մարթան տխուր դէմքով:)



## ՏԵՍԻԼ III

Նոյնը եւ Մարթա:

ՄԱՐ. (Գլխով սառն պատասխանելով Սառափեանի բարեւին, դառնում է Վարսամեանին:) Թիֆլիսի լրագրները սպացվել են:

ՎԱՐ. (Ցոյց տալով գահատրակի առջեւ դրած սեղանը:) Բոլորն այնտեղ է:

(Մարթան մօտենում է սեղանին, լրագրները վերցնում եւ քայլերն ուղղում դէպի ձախի դռները:)

ՍԱՌ. Եւգինէին կարելի՞ է տեսնել, քոյր Մարթա:

ՄԱՐ. (Սառն:) Հարցրէք աղախնին: (Գնում է:)

ՍԱՌ. (Վարսամեանին:) Տեսա՞ր, էհէ... ոչ, պէտք է ինչպէս եւ է. ծանօթանալ այդ կօմեդիայի բովանդակութեանը:

ՎԱՐ. Լաւ է եթէ կօմեդիա է և ոչ դրամա...

ՍԱՌ. Ինչ ասացիր...

ՎԱՐ. Ոչինչ... (Ձախ դռներից գալիս է Հռիփսիմէն—Եւգինէի մայրը՝ տխուր եւ յուզված:)

## ՏԵՍԻԼ IV

Նոյնը եւ Տիկին Հռիփսիմէ:

ՀՌԻՓ. Մխրանն այստեղ չէ: (Տեսնելով Սառափեանին:) Ա՛յ, լաւ է, որ քեզ տեսայ: Դու ինձ հարկաւոր ես:

ՍԱՌ. Փառք Աստծու, ես էլ մէկին հարկաւոր եմ: Հրամայիր հօրաքոյր...

ՀՈՒԻՓ. Գիտես ինչ... բայց (Նայում է վարպետանին, որ այդ միջոցին գրասեղանի մօտ կանգնած ինչ-որ գրում է շտապով մի կտոր թղթի վրայ)... Բաթով, որդի...

ՎԱՐ. (Գլուխ տալով) Ես ձեզ չեմ խանգարիլ։ Վերջացրի։ (Գրիչը թողնում է սեղանի վրայ, վերցնելով գրած թղթերը։) Արշակ, եթէ Միհրանը հարցնի իմ մասին, ասա գրասենեակումն եմ։ (Գլուխ տալով Հոխփսիմէին, գնում է խորքի դռներով։)

ՀՈՒԻՓ. Ի՞նչ հասկացող տղայ է։ Ախ, Արշակ, ես անբաղդ եմ։ Օգնիր. այս քաղաքում, բացի քեզանից, մօտիկ ազգական չունիմ...

ՍԱՌ. Ի՞նչ է պատահել...

ՀՈՒԻՓ. Մի հարցնիլ, որդի, ոչ մի բան մի հարցնիլ, միայն օգնիր...

ՍԱՌ. Բայց ինչպէս օգնեմ, ո՛ւմ օգնեմ, երբ ո՛չինչ չեմ հասկանում։

ՀՈՒԻՓ. Չի էլ հարկաւոր, որ հասկանաս, որդի, դու միայն, ա՜հ...ցը՜... այո՛, ասա Միհրանին, ասա... որ... մի խօսքով, հաշտեցրու նրան...

ՍԱՌ. Ո՞ւմ հետ հաշտեցնեմ։

ՀՈՒԻՓ. Ժէննեայի։

ՍԱՌ. (Զարմացած։) Միհրանը կռուել է Եւդիքնէի հետ... Փարերը կըտրաքեն... երկինքը կըպատռվի։

ՀՈՒԻՓ. Չեն կռուել, որդի, այլ, այլ... ինչպէս ասեմ... (Առանձին։) Ախ, ինչ դժուար է գաղանիք պահել... (Ներան։) Գիտես ինչ, որդի. ասա Միհրանին, որ սուտ է, որ Ժէննեայի... խեղքը դլխին չէ... փորձում է... մի խօսքով, հանդստացրու նրան... (Սկսում է լաց լինել։)



ՍԱՌ. (Ձեռը ձակատին զարնելով։) Աա, հիմայ հասկացայ... Մի խօսքով ասա, վերջացրու էլի... Եւ-դինէին զրպարտել են։

ՀՈՒԻՓ. Զրպարտել են, իհարկէ, զրպարտել են...

ՍԱՌ. Լուր են տարածել, որ նրա անցեալը նըման է Աբաբաչեանի անցեալին... Եւ տարածողն է տիկին Գալամքարեանը։

ՀՈՒԻՓ. Ի՛նչ, դու մի բան լսե՞լ ես։

ՍԱՌ. Այո՛, լսել եմ։

ՀՈՒԻՓ. Ուրեմն, խօսո՞ւմ են։

ՍԱՌ. Խօսում են։

ՀՈՒԻՓ. (Թուլանում ընկղմվում է զահլաւորակի վրայ։) Տունս քանդվեց...

ՍԱՌ. (Բռնելով նրա ձեռքից։) Լաւ, ուշքի եկ, հօրեայր... Աշխարհում չի գտնուել մի ցինիկ, որ հասատայ այդ զրպարտութեանը։

ՀՈՒԻՓ. Բայց ինչ անեմ, որդի, ինչ անեմ, աղջիկս ձեռքիցս գնում է, բաղդս ջուրն է ընկնում...

ՍԱՌ. Վեր կաց, հօրաքոյր, քայլերի ձայն եմ լսում։ Զըպիտի ազմուկ բարձրացնել։

ՀՈՒԻՓ. (Վեր կենալով։) Այո, այո, չըպիտի աղմուկ բարձրացնել... Երևի, Մարթան է գալիս... Օհ, ես չեմ կարող նրա երեսը տեսնել։ Նա ուզում է հետս կռուել։ Այս դռներով կըգնամ... (Գնում է խորքի դռներով։)

## ՏԵՍԻԼ V

Միհրան եւ Սառափեան։

ՄԻՀ. Ներս է մտնում տնային սիջակով, գիշերային շապկով, օձիքը վերեւ ծալծլացած։ Նա զա-

*լիս է ննջարանից եւ երեւում է, որ գիշերն անքուն է անցկացրել։ Մտքերի մէջ խորասուզված, հընկատելով Սառափեանին, մօտենում է գրասեղանին, նայում թղթերին, յետոյ մօտենում է գրքերի պահարանին, այնտեղ եւս ինչ-որ որոնում եւ ապա դարձեալ մօտենում է գրասեղանին։ Այս ամբողջ ժամանակ Սառափեանը տարակուսած նայում է նրան, մերթ ընդ մերթ գլուխը երերելով։*

**ՍԱՌ.** *(Պատուհան. մօտենում է։)* **Ինչ երկար ես քնում։**

**ՄԻՀ.** *(Սթափվելով։)* **Աա, այդ դու ես... այդպես վաղ...**

**ՍԱՌ.** **Լաւ վաղ է... արդէն մէկ ժամն է։**

**ՄԻՀ.** *(Մեքենաբար)։* **Արդէն մէկ ժամն է։** *(Ընդատում է գրասեղանի քով, քաց է անում արկղերից մէկը։)* **Այս ինչ է այստեղ։** *(Հանում է արկղից մի ռեվօլվեր։)* **Այս ինձ նուիրել է, ախ, այո, այո, այն թուրք բէգը, որի եղբօրը պաշտպանեցի։ Ինչո՞ւ... Անցան այն ժամանակները երբ մարդիկ կեանքի բարդ խնդիրները լուծում էին զէնքով։ Իսկ այժմ...** *(Արհամարհանքով ռեվօլվերը դնում է սեղանի վրայ եւ շարունակում արկղում որոնել։)* **Վերցրու, նուիրում եմ քեզ, հարկաւոր կըգայ, դու նախկին զինուորական ես։**

**ՍԱՌ.** *(Վերցնում է ռեվօլվերն ու նայում։)* **Հիանալի ռեվօլվեր է, ամերիկական վերջին սիստեմայի...** *(Դնելով գրպանը։)* **Շնորհակալ եմ։** *(Պատուհան։)* **Զբաղուածծ ես...**

**ՄԻՀ.** *(Շարունակ որոնելով արկղի մէջ։)* **Գործ ունեիս հետս...**

**ՍԱՌ.** **Ուզում էի առաջարկել մի քիչ զբօսնելու**



**ինձ հետ։ Եղանակը վատ չէ, թէեւ մի քիչ տաք է։**

**ՄԻՀ.** **Ես ցերեկները երբ եմ զբօսնել...** *(Հանում է արկղից մի թուղթ, նայում է վերնագրին, վեր է կենում, մօտենում խորքի դռներին։)* **Ո՞վ կայ այդտեղ։** *(Գալիս է գրագիրը։)* **Այս թուղթը վաղը կարտագրէք եւ կընդերկայացնէք դատարանին։**

**ԳՐԱԳ.** **Հա, հէնց մենք էլ այդ էինք վնտռում։** *(Վերցնում է թուղթը։)*

**ՄԻՀ.** **Մէկ ժամն է, կողպեցէք գրասենեակն ու գնացէք։** *(Գրագիրը գնում է։)* **Զարմանալի ողորմելի էակներ կան աշխարհում. այդ ապուշը, մինչեւ ամեն օր չարձակեմ պարապմունքից, ինքնագլուխ չի գնայ։ Կարծես, այդ սարկական պաշտօնը հաճելի է նրա համար։** *(Սառափեանին է դառնում պատուհանից յետոյ։)* **Է՞լ ինչ կասես...**

**ՍԱՌ.** **Ոչինչ...**

**ՄԻՀ.** **Այդ քիչ է... Բայց դեմքդ ցոյց է տալիս, որ մի բան ուզում ես ասել. ինչ էր խնդրում քեզանից հօրաքոյրդ։**

**ՍԱՌ.** *(Զարմանալով ու շփոթվելով։)* **Հօրաքոյրս...**

**ՄԻՀ.** **Այո, իմ գրքանչը... Չէ որ մի փոքր առաջ նա այստեղ լալիս էր քո առջեւ։** *(Նայելով նրան խորհրդաւոր։)* **Երբեմն մարդ կարող է պատի հետից էլ գղալ, թէ ինչ են խօսում իր մասին։** *(Մտածում է։)* **Բայց ինձ համար մի եւ նոյն է, ինչ ուզում են—թող խօսեն։ Հասկանում էք, միեւնոյն է...** *(Ջեռով մի շարժումն անելով, դարձեալ նստում է գրասեղանի քով։ Խորքի դռներից ներս են մտնում Սուլթանեանն եւ վարսամեանը։)*

## ՏԵՍԻԼ VI

Միհրան, Սուլթանեան, Սառափեան եւ Վարսամեան։

ՄԻՀ. *(Տեսնելով նրանց, աշխատում է ձեւանալ անհոգ ու զուարթ։)* Աա, Կովկասեան ամերիկացի, բարով։ Ի՞նչ է ասում քո գործնական փիլիսոփայութիւնը...

ՍՈՒԼԹ. Իմ գործնական փիլիսոփայութիւնը պատուիրում է ինձ՝ ներկայացնել քեզ ամերիկական հաշիւ և պահանջել քեզանից կորցրած ժամանակիս համար վարձ։ Այդ ինչ է պատահել, բարեկամ, ժեննեթալի չին ես սացել, թէ մինիատիրի պաշտօն, ահա երրորդ անգամն է գալիս եմ, ասում են. «չի ընդունում»... *(Նստում է զրաւոնանի քով։ Պաուզա։)* Ծանօթացար իմ մեքենապետի գործի հետ։ Բաւա, այդ ինչ է, դու նիհարել ես և, կարծես, ծերացել... Ի՞նչ է պատահել...

ՄԻՀ. Ծանօթացայ քո մեքենապետի գործի հետ։

ՍՈՒԼԹ. Հըմ, յոյս կայ, որ նրան արդարացնեն։

ՄԻՀ. *(Առանց նրան նայելու, ղէպի անորոշ տարածութիւն։)* Խեղճ մարդ։ *(Վարսամեանին և Սառափեանին։)* Երևակայեցէք մի համեստ և աշխատասէր մարդ։ Նա ունէ մի երիտասարդ կին—գեղեցիկ և ոչ յիմար, բարոյական, բայց վերին աստիճանի կենսասէր։ *(Հառաչանքը զսպելով։)* Ամուսիններն ապրում են հանգիստ և երջանիկ։ *(Ծուզվում է։ Պաուզա։)* Աւարտել է գալիս մի ինչ-որ ֆրանտ, երկար ժամանակ հետամուտ է լինում գեղեցիկ կնոջը։ Երկու տարի կինը մաքառում է նրա հրապոյրների դէմ, վերջը *(Ծուզում ը զսպելով)*...մոլորւում է...էհ...կորցնում է խելքը...

ՍՈՒԼԹ. Աբի ու հասկացիր կնոջ հոգեբանութիւնը։

ՄԻՀ. Մարդն իմանում է իր անպատուութիւնը և կնոջը նախազգուշացնում։ Կինն առաջ հերքում է, յետոյ յանձն է առնում յանցանքն և խոստանում է ձեռք վերցնել մոլորութիւնից... Բայց չի կարողանում։ Երեք տարի մարդը տանջւում է, կարող էք երևակայել ինչպէս։ *(Սուլթանեանին։)* Գործին կցած է նրա յիշատակարանը. դա տառապող հոգու մի ամբողջ տրագեդիա է։ *(Զսպելով յուզմունքը, նորից դառնում է Սառափեանին և Վարսամեանին։)* Մի օր նա, որից վերադառնալով, հանդիպում է կնոջը սիրականի գըրկում...

ՍԱՌ. Եւ իսկոյն, իհարկէ, ֆրանտին ազատում...

ՄԻՀ. *(Հառաչելով։)* Օ՛, երջանկութիւնը մարդու համար այնքան հազուագիւտ բան է, որ երբ ձեռքն է ընկնում, ատամներով է պահում նրան։ Այդ ամուսինը դեռ յոյս է ունենում իր ընտանեկան հանգստութիւնը վերականգնելու։ Նա զսպում է իրան։ Այն ինչ ֆրանտը, կարծելով, որ հասել է իր վերջին ժամը, դրսանից հանում է մի դանակ՝ պաշտպանվելու համար։ Ամուսինն ասում է նրան. «Հեռացիր, ես չեմ ուզում մարդասպան դառնալ»։ Սակայն ֆրանտը թոյլ է տալիս իրան մի արհամարհական ծիծաղ։ Եւ ահա այդ ծիծաղը, իբրև լկտի անարգանք, կարում է անպատասխանի համբերութիւնը. թշնամուն արձակում է հրացանը, և ֆրանտը թաւալվում է իր սիրուհու ոտների տակ։

ՎԱՐ. *(Պաուզա։)* Եւ այժմ կինը ողբում է իր սիրականին, իհարկէ։

ՍՈՒԼԹ. Ընդհակառակը, նա լալիս է իր ամուս-

նու մասին։ Եւ հէնց նա ինքն է ինձ խնդրել մի լաւ փաստաբան վարձել իւր մարդու համար։

ՎԱՐ. Ահա այստեղ կարող էիր ասել. «արի ու հասկացիր կնոջ հոգեբանութիւնը»։ (Միհրանին։) Բայց ես զարմանում եմ, ահա երեք տարի է քո օգնականն եմ և չեմ լիշում, որ մի գործ քեզ այնքան յուզած լինի, որքան այդ մեքենապետի գործը...

ՄԻՀ. (Անց ու դարձ անելով։) Ինձ յուզում են այդ մարդու քաշած տանջանքները։ Որքան համբերութիւն, որքան հոգեկան ոյժ պէտք է ունենայ մի մարդ, որ կարողանայ զսպել իւր մէջ գազանին երեք տարի շարունակ... Իսկ նա մի հասարակ մեքենապետ է, գրեթէ անկիրթ...

ՍՈՒԼԹ. Իմ կարծիքով, աշխարհում երկու տեսակ մարդիկ գիտեն հերոսաբար կրել երանց վիշտը— փիլիսոփաները և աշխատանքի մարդիկ։ Եւ դրանք են կազմում մարդկութեան բարոյական արիստոկրատիան։ Մնացածները միջին էակներ են և խաղալիք իրանց ճակատագրի հաճոյքին...

ՄԻՀ. (Նայելով Սուլթանեանին խոր և տարօրինակ հայեացքով։) Այո՛։

ՍՈՒԼԹ. Այո։ Ով երկնքում չի սաւառնում մարքով կամ ամբողջ էութեամբ կպած չէ երկրին, ծառի ճիւղի պէս երերվում է ամեն մի թեթև հողմից... Ինչ և է, ես շատ ուրախ եմ, որ իմ մեքենապետի գործն այդքան քեզ յուզել է, այդ կընշանակէ, որ դու նրան կըպաշտպանես զգացումով։ Շատ ուրախ եմ։ Դէհ, ցըտեսութիւն, ես գնամ թշուառի ընտանիքին ուրախացնեմ, որ յոյս կայ նրան արդարացնելու։ (Դառնալով Սաուափեանին։) Իսկ յետոյ ուզում եմ քեզ



հետ «Եւրոպա» հիւրանոցում մի լաւ ճաշել։ Գնանք։

ՍԱՒԱՓ. Ահա այդ բարձր է ամեն մի փիլիսոփայութիւնից։ (Միհրանին։) Ցըտեսութիւն։ (Վարսամեանին։) Մտածիր որքան կամենում ես խորը, բայց մի սպասիր կեանքից կատարեալ երջանկութիւն, այլ վերցրու այն, ինչ-որ տալիս է, թէ կուզ մի ուրախ ճաշ չամպանիայով։ (Սուլթանեանին։) Ես քո խոնարհ ծառան։ Ցըտեսութիւն։ (Սաուափեան եւ Սուլթանեան գնում են խորքի դռներով։)

## ՏԵՍԻԼ VII

Միհրաց եւ Վարսամեաց։

ՄԻՀ. (Մտքերի մէջ խորասուզված՝ մի քանի վայրկեան լուռ անց ու դարձ է անում։ Յանուզա։) Ի՞նչ ես կարծում, նա իրաւացի՛ է։

ՎԱՐ. Ո՞վ։

ՄԻՀ. Սուլթանեանը։ Նա ասում է. ով երկնքում չի սաւառնում կամ երկրին կպած չէ իւր ամբողջ էութեամբ, երերվում է ամենաթեթև հողմից։

ՎԱՐՍ. (Օր շարունակ նայում է նրա խրաքանչիւր շարժմանը։) Նա մի բանում իրաւացի է, այն է՝ աշխատանքի մարդիկ աւելի հեշտութեամբ են կրում իրանց վիշտը։ Այո, ես կարծում եմ, չըկայ վիշտ, որին կարելի չլինէր խեղդել աշխատանք ասված առիւծի ճիրաններով։ Այս տեսակէտից զարմանալի է ինձ համար քո վերջին ժամանակուայ ծուլութիւնը...

ՄԻՀ. (Յանկարծ կանգ առնելով, նայում է նրան խորը-խորը։) Ինչո՞ւ ես այդ ասում։

ՎԱՐ. (Շփոթվելով) Դու փախչում ես աշխատանքից։

ՄԻՀ. Բայց ես վիշտ չունիմ։

նու մասին։ Եւ հէնց նա ինքն է ինձ խնդրել մի լաւ փաստաբան վարձել իւր մարդու համար։

ՎԱՐ. Ահա այստեղ կարող էիր ասել. «արի ու հասկացիր կնոջ հոգեբանութիւնը»։ (Միհրանին։) Բայց ես զարմանում եմ, ահա երեք տարի է քո օգնականն եմ և չեմ լիշում, որ մի գործ քեզ այնքան յուզած լինի, որքան այդ մեքենապետի գործը...

ՄԻՀ. (Անց ու դարձ անելով։) Ինձ յուզում են այդ մարդու քաշած տանջանքները։ Որքան համբերութիւն, որքան հոգեկան ոյժ պէտք է ունենայ մի մարդ, որ կարողանայ զսպել իւր մէջ գազանին երեք տարի շարունակ... Իսկ նա մի հասարակ մեքենապետ է, գրեթէ անկիրթ...

ՍՈՒՂԹ. Իմ կարծիքով, աշխարհում երկու տեսակ մարդիկ գիտեն հերոսաբար կրել իրանց վիշտը— փիլիսոփաները և աշխատանքի մարդիկ։ Եւ դրանք են կազմում մարդկութեան բարոյական արիստոկրատիան։ Մնացածները միջին էակներ են և խաղալիք իրանց ճակատագրի հաճոյքին...

ՄԻՀ. (Նայելով Սուլթանեանին խոր և տարօրինակ հայեացքով։) Այո՛։

ՍՈՒՂԹ. Այո։ Ով երկնքում չի սաւառնում մաքուր կամ ամբողջ էութեամբ կապած չէ երկրին, ծառի ճիւղի պէս երերվում է ամեն մի թեթև հոգմից... Ինչ և է, ես շատ ուրախ եմ, որ իմ մեքենապետի գործն այդքան քեզ յուզել է, այդ կընշանակէ, որ դու նրան կըպաշտպանես ղեկացումով։ Շատ ուրախ եմ։ Դէհ, ցըտեսութիւն, ես գնամ թշուառի ընտանիքին ուրախացնեմ, որ յոյս կայ նրան արդարացնելու։ (Դառնալով Սատափեանին։) Իսկ յետոյ ուզում եմ քեզ



հետ «Եւրոպա» հիւրանոցում մի լաւ ճաշել։ Գնանք։

ՍԱՏԱՓ. Ահա այդ բարձր է ամեն մի փիլիսոփայութիւնից։ (Միհրանին։) Ցըտեսութիւն։ (Վարսամեանին։) Մտածիր որքան կամենում ես խորը, բայց մի սպասիր կեանքից կատարեալ երջանկութիւն, այլ վերցրու այն, ինչ-որ տալիս է, թէ կուզ մի ուրախ ճաշ չամպանիայով։ (Սուլթանեանին։) Ես քո խոնարհ ծառան։ Ցըտեսութիւն։ (Սատափեան և Սուլթանեան գնում են խորքի դռնով։)

## ՏԵՍԻԼ VII

Միհրան եւ Վարսամեան։

ՄԻՀ. (Մտքերի մէջ խորասուզված՝ մի քանի վայրկեան լուռ անց ու դարձ է անում։ Պառկում։) Ի՞նչ ես կարծում, նա իրաւացի՛ է։

ՎԱՐ. Ո՞վ։

ՄԻՀ. Սուլթանեանը։ Նա ասում է. ով երկնքում չի սաւառնում կամ երկրին կապած չէ իւր ամբողջ էութեամբ, երերվում է ամենաթեթև հոգմից։

ՎԱՐՍ. (Որ շարունակ նայում է նրա իւրաքանչիւր շարժմանը։) Նա մի բանում իրաւացի է, այն է՝ աշխատանքի մարդիկ աւելի հեշտութեամբ են կրում իրանց վիշտը։ Այո, ես կարծում եմ, չըկայ վիշտ, որին կարելի չըլինէր խեղդել աշխատանք ասված առիւծի ճիրաններով։ Այս տեսակէտից զարմանալի է ինձ համար քո վերջին ժամանակուայ ծուլութիւնը...

ՄԻՀ. (Ծանկարծ կանգ առնելով, նայում է նրան խորը-խորը։) Ինչո՞ւ ես այդ ասում։

ՎԱՐ. (Շփոթվելով) Դու փախչում ես աշխատանքից։

ՄԻՀ. Բայց ես վիշտ չունիմ։

ՎԱՐ. (Դամենալով ուղղել իւր անզգուշութիւնը։) Ես այդ չէի ուզում ասել։ Ահա մօտ երկու շաբաթ է դու գործով չես հետաքրքրվում և ոչ ոքի չես ուզում ընդունել։ Եթէ այդպէս շարունակես, շուտով մենք կըզրկվենք կլիենտներից։

ՄԻՀ. Եւ այդ քեզ շատ կըտխրեցնի։

ՎԱՐ. Այո, որովհետև դու կարող ես կորցնել տաբրինների ընթացքում ձեռք բերած հռչակդ...

ՄԻՀ. (Դառն ծիծաղով։) Հռչակ, հա հա հա, հռչակ։ Մինթէ որ և է հռչակ կամ լաւ անուն կարող է մարդուն բաղդաւորեցնել։ Մարդու այտառղը (խփելով կրծքին) պիտի հանգիստ լինի... այտառղը...

ՎԱՐ. Ես կարծում եմ, երբ մարդ կատարում է իւր պարտականութիւնները, նրա սիրտը միշտ հանգիստ պիտի լինի...

ՄԻՀ. Մինթէ, միամիտ և մաքուր երիտասարդի խօսքեր։ Բայց, ասա ինձ, շատ մարդիկ են ընդունակ կատարելու իրանց պարտականութիւնները, ասա, շատ մարդիկ։ (Դանդնալով նրա դէմ ու դէմ ու նայելով ուղիղ աչքերին։) Համաձայն, ես դիտեմ ինչ ես ուզում ասել, ինչ ես մտածում այս բոլորին, այո, այո, դիտեմ ինչ պարտականութեան մասին է խօսքդ։ Դու ինձ մեղադրում ես մաքումդ, այնպէս չէ, համարում ես ինձ թուլամորթ, այո, ասա։ Ինչու՞ ես երեսդ դարձնում, մինթէ ես յիմար եմ, մինթէ չըգիտեմ բարեկամիս աչքերի մէջ կարդալ նրա մաքերը։ Այո, այո, դու ամեն բան գիտես, միայն համեստութիւնը, այդ կեղծ ղեացումը թոյլ չի տալիս քեզ՝ ինձ բացարձակ յանդիմանելու։

ՎԱՐ. Մի՛ հրաժ։



ՄԻՀ. Ջուր մի կեղծիր, համաձայնիր։ Մեր բարոյական հայեացքները մի և նոյնն են, և այսքանը բաւական է։ Սակայն գաղափարների և իրականութեան մէջ կայ ահագին խորխորատ։ Գիտեմ, դու ուզում ես, որ ես հերոսաբար անցնեմ այդ խորխորատը։ Կանցնեմ, կանցնեմ, տալիս եմ քեզ աղնիւ խօսք։

ՎԱՐ. (Ուրախանալով։) Այո՛, յուսամ... Բայց ես այդպէս էլ համոզված էի, ուրիշ կերպ չէր կարող լինել։

ՄԻՀ. Այն երեկոյ—յիշո՞ւմ ես—երբ դու խօսում էիր Աբաբաջեանի մասին, քո իւրաքանչիւր բառն իմ մէջ աւելի ու աւելի ամրացնում էր իմ գաղափարը։ Ճո մէջ ես տեսնում էի մի հզօր պաշտպանի։

ՎԱՐ. Ապացուցիր, ուրեմն, որ մեր բարոյական աշխարհն ամայի չէ, որ մենք ևս ունինք մարդիկ բառի ընդարձակ նշանակութեամբ, գործի, և ոչ խօսքի մարդիկ...

ՄԻՀ. Կաշխատեմ։

ՎԱՐ. Դէհ, թոյլ տուր, ուրեմն, սեղմել ձեռդ իբրև հաւատարիմ ընկերիդ։ Ես խոստանում եմ հետեւել քո օրինակին, եթէ իմ կեանքի հանգամանքներն էլ այդպէս հիւսվեն։ (Սեղմում է ձեռը։) Ցըտեսութիւն, ես հեռանում եմ, որպէս զի դու այդ տրամադրութեան մէջ տեսնվես նրա հետ... Ցըտեսութիւն։ (Լսելի դառնալ սեղմում է նրա ձեռն եւ գնում։)

## ՏԵՍԻԼ VIII

Միհրան մենակ, յետոյ Մարթա։

ՄԻՀ. Ագնիւ տղայ, նրան համարում են տօլստոյական։ (Նստում է գրասեղանի մօտ, վերցնում է

մի գործ եւ սկսում է կարդալ։ Ձախի դռներից ներս է մտնում Մարթան եւ, տեսնելով եղբօրը զբաղված, կամացուկ մօտենում է զահատրակի առջեւ դրած սեղանին եւ, կանգ առնելով, նայում նրան վշտակցութեամբ։ Միհրանը, ըստ երեւոյթին, կարդում է, բայց միտքը զբաղված է իւր վշտով։ Մերթ ընդ մերթ նա ցնցվում է։ Վերջապէս, գործը շալրտում է ղէն, վեր է կենում եւ անց ու դարձ անում։ Յանկարծ, նկատելով քրոջը, կանգ է առնում։) Դարձեալ։

ՄԱՐ. Այո, և միշտ, քանի որ տանջվում ես։

ՄԻՀ. Ես այլևս չեմ տանջվում։

ՄԱՐ. Ո՞վ հաւատաց։ Նայիր հայելուն, տես ինչ էիր և ինչ ես դարձել։ Այս երկու շաբաթուայ ընթացքում դու տասը տարով ծերացել ես։ Դու դիշերները քուն չունիս, ցերեկները հանդիստ։

ՄԻՀ. Լաւ կանես, եթէ իմ մասին հոգալու փոխարէն, մտածես քո վարմունքի մասին։ Դու նրան հալածում ես։

ՄԱՐ. Ես նրան միայն ատում եմ և ուրիշ կերպ չեմ կարող վարվել մի կնոջ հետ, որ անբաղդացրել է իմ միակ եղբօրը։

ՄԻՀ. Ատում ես և չես ղգում, որ նա ինքն անսահման տանջվում է։

ՄԱՐ. Երևի, խղճի խայթոցից, չէ։ Եթէ նա խիղճ ունենար, քեզ հետ չէր ամուսնանալ...

ՄԻՀ. Մարթա...

ՄԱՐ. Այո, եթէ նա խիղճ ունենար, քեզ չէր խաբի։

ՄԻՀ. Նա ոչ միայն ինձ չի խաբել, այլև իմ վերաբերմամբ վարվել է ազնուաբար։



ՄԱՐ. (Դառն հեգնութեամբ։) Մեծ... ես այն ժամանակ նրան ազնիւ կը համարէի, եթէ նա իւր խոստովանութիւնն անէր ամուսնանալուց առաջ։

ՄԻՀ. Այն ժամանակ խոստովանելն այնքան մեծ քաջութիւն չէր լինել, որքան այժմ։ Երբ կինը յանուն անկեղծութեան հրաժարվում է ճաշակված երջանկութիւնից—հասկանում ես, ճաշակված—նա արժանի է հիացման։ Բանի որ նա հարսնացու էր, ինձ չէր սիրում, կարող էր վշտացնել ինձ սառնարիւն։ Այն ժամանակ նա չը գիտէր ինչ ասել է փոխադարձ սիրոյ քաղցրութիւն, իսկ այժմ գիտէ։ Ահա ինչն եմ ես հոգոսութիւն համարում։ Արդեօք, չառիւծն են ընդունակ այդ տեսակ քայլի, այն էլ մեր կանանցից։ Բնազդ յայտնի է, որ ես նրան հաւատում էի ինչպէս արբուհու։ Եւ եթէ ամբողջ քաղաքը նրան չարախօսէր—դարձեալ իմ հաւատը դէպի նա չէր խախտվիլ։ Ուրեմն, ինչ գժուարութիւն կար նրա համար իւր անցեալն ինձանից թաղցնելու, եթէ չունենար նուրբ խիղճ, ազնիւ հոգի... եթէ չը սիրէր ինձ...

ՄԱՐ. Գեղեցիկ խօսքեր, որոնք պատիւ են բերում միայն քեզ, բայց նրան չեն արդարացնում։

ՄԻՀ. Ոչինչ չի կարող նրան այնպէս արդարացնել, որպէս հէնց իւր խոստովանութիւնը և ոչ ոք չի կարող նրան այնքան խիստ դատապարտել, որքան նա ինքը...

ՄԱՐ. (Պատրաստում է եղբօրը։) Լսիր, Միհրան. մանուկ հասակից մենք եղել ենք ընկերներ, քո վշտերն և ուրախութիւններն իմն են եղել, քո անունն ու պատիւն իմն եմ համարել։ Մեր ծնողների մահից յետոյ ես քեզ համար եղել եմ մայր և հայր... Ու-

սուցչութիւն անելով, քեզ օգնել եմ, որ բարձրագոյն ուսում ստանաս։ Ուրեմն, ինչպէս կարող եմ առնարիւն վերաբերվել քո ճակատագրին։ Ասում եմ. «նեղոում եմ։» Գուցէ, բայց մի մոռանար, որ կայ հասարակական կարծիք, բարեկամների թագուն արհամարհանք, թշնամիների չար ուրախութիւն։ Այս բոլորը դու դուցէ սկզբում կարողանաս արհամարհել, բայց յետոյ, յետոյ կըսկսես ականջ դնել չչուկներին։ Եւ այն ժամանակ կատես նրան աւելի, քան կարող էիր առել այժմ, եթէ այդպէս չըմտածէիր։ Ուրեմն, մի՛ թէ աւելի լաւ չէ խնդիրը լուծել հէնց այժմ։ (Պառկում։) Արձակիր նրան։

ՄԻՀ. Այդ է քո բոլոր առելիքը։ Հասարակական կարծիք, բարեկամների արհամարհանք, չըդիտեմ էլ ինչ։ Մարթա, այդ բոլորից աւելի բարձր ու թանգ է ինձ համար իմ ներքին դատաւորի ձայնը։ Ես գիտեմ, որ բարոյականի կոմիից մեր կեանքի լինը առներորոշականը պատկանում է հասարակութեանը, գիտեմ, որ կան աւանդութիւններ, որոնց չի կարելի ոտնատակ անել անպատիժ։ Բայց ես ուզում եմ հպատակվել իմ խղճի ձայնին... Իսկ նա, այդ ձայնն ինձ ասում է. «Եւգինէն արժանի է ներման։» Ոչ, այդ ձայնն աւելի է ասում։ Նա ասում է. «Եւգինէն բարձր բարոյականութեան տէր կին է։» (Մարթան ապշած նայում է նրան։) Զարմացիր, բայց այս մի այնպիսի հաոմոմունք է, որին չի կարող խեղդել իմ մէջ ոչ մի հասարակական նախապաշարմունք։ (Պառկում։) Մինչ ես չըգիտեմ, որ ընկերական նիստ ու կացի պայմաններն անհատները չեն ստեղծում։ Սակայն անհատները կարող են արհամարհել նրանց և մինչև անգամ փոխել... Ինչ ասել կուզի, ես չէի կամենայ, որ նրա անցեալն այդպէս լինէր, բայց, մտածիր, ո՞վ եմ ես ինքս, ինչ է, վերջապէս, իմ սեռական անցեալը։ Այո՛, ինչ է։ Եթէ նա հաղիւ պատանեկական հասակում ընկել է մի խաբեբայի թակարդը, ինձ ոչ ոք չի խաբել, ես ինքս եմ խաբել... Այո՛, այո՛, թէև իմ խաբեութիւնն այնքան ստոր չի եղել, որչափ այդ պարոնինը, բայց խաբեութիւն է եղել... Ես ևս մոլորեցրել եմ կանանց... Ինչո՞ւ Եւգինէն ինձ ներել է իմ անցեալի կեղտաերը, իսկ ես չըպիտի կարողանամ նրա անցեալի ամայ սխալը մոռանալ։ Եւ ոչ միայն սխալը, այլ թէ՛ կուզ կեղտերը, եթէ լինէին կեղտեր...

ՄԱՐ. Վարսամեանի խօսքերը...

ՄԻՀ. Ա՜ա, այդ խօսքերը ոչ Վարսամեանինն են և ոչ իմը։ Դրանք խօսքեր չեն, այլ արդար բողոք օրէնքի դէմ ստացած անիրաւութեան դէմ... Եւ ես զարմանում եմ, որ դու, կանանց իրաւունքների պաշտպանդ, ընդդէմ ես մի այդպիսի բողոքի։

ՄԱՐ. Բայց ես չեմ ուզում, որ բողոքողն իմ եղբայրը լինի։ Չեմ ուզում, որ նա լինի գարաւոր բնդդէմ առաջին դնդակ արձակողը։

ՄԻՀ. Եւ ուզում ես, որ նա լինի բարոյական պատիժ, հոգեկան քաշուքութիւնից զերկ։ Ուզում ես, որ նա լինի մեկն այն ոգորմելիներից, որոնք սարկաբար հեծծում են հասարակական կարծիք ասված բառութեան ներքոյ... Ոչ ոչ, ես չեմ կամենում և չեմ կարող լինել այդպիսի մարդ...

ՄԱՐ. (Լռութիւնից յետոյ։) Այո, տեսնում եմ, որ իմ և քո հայեացքների մէջ կայ ահագին անդունդ։ Այդ անդունդը մենք չենք կարող լեցնել վիճաբանու-

*թեամբ։ (Կռուելով ինքն իւր հետ. պատուա։) Ուրեմն... Թող նա բաժանի մեզ...*

**ՄԻՀ.** *Մարթա...*

**ՄԱՐ.** *Ինչու՞ կեղծել. այդպիսի մի կնոջ հետ ես մի յարկի տակ մնալ չեմ կարող։ (Սկսում է արտասվել։)*

**ՄԻՀ.** *(Դրգռվելով։) Մի վիրաւորիր նրան։ (Ձախ դռների մէջ երեւում է Եւգինէն։ Նա գունատ է, նիհար. վերջին ժամանակի կրած հոգեկան յուզումներն ու տանջանքները նրա դէմքին տուել են հեզութիւն։ Նրա աչքերի արտայայտութիւնը վշտալի է, սակայն հանգիստ։ Աչքերի տակ երեւում են թեթեւ կնճիռներ, բայց վիշտը դէմքի գեղեցկութիւնը չի քայքայել։ Մարթան, տեսնելով նրան, շտապով սրբում է իւր աչքերն եւ ատելութեամբ լի հայեացքը յառում նրա երեսին։ Մինչդեռ Եւգինէն նայում է նրան հանգիստ հայեացքով, որի մէջ երեւում է նրա հոգու հպարտութիւնը։ Մարթան արագութեամբ երեսը դարձնում է նրանից։ Եւգինէի դէմքով սահում է մի մեղմ, կիսատհեգնական եւ ներողամիտ ժպիտ։ Մարթան քայլերն ուղղում է դէպի խորքի դռները։)*

**ԵԻԳ.** *(Հանգիստ, մի քանի քայլ առաջ է շարժվում։)* *Սպասեցէք...*

**ՄԱՐ.** *(Նայելով նրան անզուսպ ատելութեամբ։)* *Ի՞նչ էք կամենում...*

**ԵԻԳ.** *Ես ձեզ խնդրում եմ մնալ...*

**ՄԱՐ.** *(Դառն հեգնութեամբ եւ կծու։)* *Մնալ այս օդո՞ւմ... Այսաեղ... ես կը խեղդվիմ...*

**ՄԻՀ.** *(Դառն յանդիմանութեամբ)* *Մարթա, Մարթա։*

**ՄԱՐ.** *Ես կը վերադառնամ միայն քո վերջին վճիռն իմանալու համար։ (Գնում է։)*



## ՏԵՍԻԼ IX

Եւգինէ եւ Միհրան։

*Միհրանը մտնում է լուսամուտին, մի քանի վայրկեան նայում դէպի փողոց մտախոհ, յետոյ մոտենում է գրասեղանին, նայում ցրուած հայեացքով թղթերին, ապա նստում է, արմունգները դնում սեղանի եզրին եւ գլուխը յենում ձեռների ափերին, եւ գինէն մտնում է գահաւորակին եւ, մի ձեռը յենելով սեղանին, նայում է նրան։*

**ՄԻՀ.** *(Բաւական երկարատեւ լռութիւնից յետոյ, ձեռները հեռացնում է երեսից, բայց դարձեալ նէին չի նայում։)* *Ի՞նչ էիր կամենում ասել Մարթային։*

**ԵԻԳ.** *Ես ուզում էի խնդրել,, որ նա իւր եղբօրը.... մենակ չը թողնի...*

**ՄԻՀ.** *Ի՞նչ է նշանակում այդ։*

**ԵԻԳ.** *Այն, որ ինձ համար անհամեմատ աւելի հեշտ է լսել նրա նախատինքները, քան տեսնել քո լուռ տանջանքները...*

**ՄԻՀ.** *Ի՞նչ է մնում ինձ անել, եթէ ոչ լռել... Իսկ յետոյ (զգացված ձայնով) մոռանալ...*

**ԵԻԳ.** *Մոռանալ... Ո՞վ կարող է մարդուց աննման բինը պահանջել։ Ես այդ մասին չեմ էլ երազում անգամ։*

**ՄԻՀ.** *Երբեմն մտածում եմ, արդեօք, աւելի լաւ չէը լինի, եթէ ոչինչ չիմանայի։ Հարիւր բաղդատութիւններից ինքնասուիրութիւնը ապրում է իլիւզիայով, թող մէկն էլ ես լինեի...*

**ԵԻԳ.** *Եւ ես չարունակէի խաբել։ Տեսնելքեզ երջանիկ՝ ինձ համար կը լինէր ամենամեծ երջանկութիւնը։*

*Չանիկ և ամեն վայրկեան ղդալ, որ դու խաւարի մէջ ես, որ քո երջանկութիւնը հիմնված է մի սիրող կնոջ կեղծիքի վրայ։ Ո՛չ։*

*Մ ի հ. Ճիշտ է, ճիշտ է, ես այդ մասին շատ եմ մտածել։ Բայց և այնպէս երևակայութիւնս ամեն վայրկեան պատկերացնում է այդ քաոսնելի տեսարանը բոլոր իւր մանրամասնութիւններով։ Գիշեր-ցերեկ իմ աչքերի առջև կանգնած է քեզ մոլորեցնողի կերպարանքն և հալածում է ինձ իւր յանդուգն ու լիրբ արհամարհանքով։*

*Ե ի Գ. Հեշտ չէ դիմանալ վիրաւորված պատուի ղդացմանը...*

*Մ ի հ. Պատուի՞... Ոչ, դու սխալվում ես։ Ինչպէս դու ինձ հետ եղար անկեղծ, կըլինիմ և՛ ես։ Իմ պատիւն ես արատաւորված չեմ համարում։ Սխալը քո անցեալումն է և ոչ ներկայում։ Ինձ տանջում է միայն այն միտքը, որ դու երբ և է, թեկուզ մի ժամով, պատկանել ես այդ մարդուն։ Դա, իհարկէ, նախապաշարմունք է, այո, նախապաշարմունք, բայց և... տանջանք... (Վեր է կենում և հափազանց յուզված անցուդարձ անում. մի քանի վայրկեան լռութիւն։) Անցեալ օրն երեկոյեան, մենակ նստած այս սեղանի մօտ, թէյ էի խմում, յանկարծ բաժակի մէջ, թէյի երեսին կենդանի նկարվեց նա։ Ես խելագարի պէս դուռալով, ոտքի թռայ։ Թուաց ինձ, որ նա ծիծաղում է քեզ վրայ դիւային ծիծաղով։ Ամեն տեղ, ամեն տեղ, նրան եմ տեսնում։ Նրա ուրուականն ինձ հալածում է գիշեր-ցերեկ։ (Պատուզա։) Բայց... բայց... ես կաղատամ, կաղատամ այս յիմար հալիւցինացիայից և կմոռանամ բոլորը, բոլորը։ (Ընկղմվում է զահատակի վրայ և ծածկում ձեռներով սեղմում։ Պատուզա։)*

*Ե ի Գ. (Դառն տանջանքով։) Դու երբեք չես մոռանալ...*

*Մ ի հ. (Գլուխն արագօրէն բարձրացնելով և ոտքի կանգնելով։) Ինչո՞ւ։ Մի թէ ես այդքան անզօր եմ հոգով, թուլամո՞րթ... Եթէ ես կարողացայ զսպել իմ մէջ նախահայրերիցս ժառանգած ասիականութեան կոպիտ ոգին, ինչո՞ւ չեմ կարող աւելին անել։*

*Ե ի Գ. Ինձ համար աւելի լաւ կըլինէր, եթէ չըզսպէիր այդ ոգին։ Այն րոպէին երբ, մթնած աչքերով յարձակվելով ինձ վրայ, քիչ էր մնում սպանէիր ինձ, ես երկիւղ չունէի։ Մի հարուած, և ես կըատանայի իմ արժանի վարձն ու ամեն ինչ կըվերջանար։ Իսկ այժմ... Ո՛չ, Միհրան, մի խաբիր քեզ։ Ներել—դուցէ կարողանաս, բայց մոռանալ—երբեք։*

*Մ ի հ. Ուրեմն...*

*Ե ի Գ. Պէտք է անել այն, ինչ-որ պահանջում է քո քոյրը։ Ինչո՞ւ կեղծել. ինձ համար աւելի լաւ է զրկվել ամեն բանից, քան դառնալ խղճալի։ Նա, որ մի ժամանակ ապրել է սիրոյ չքեղ պալատում, չի կարողանալ կանգնել նոյն պալատի դռների մօտ և ողորմութիւն խնդրել։*

*Մ ի հ. Գիտէի, որ հպարտ ես, բայց չըգիտէի, որ այդչափ եսամոլ ես։*

*Ե ի Գ. Եսամո՞լ...*

*Մ ի հ. Այո, եսամոլ։ Դու այս անից ուզում ես հեռանալ այն պատճառով, որ չես կարող տեսնել իմ տանջանքները։ Դա եսամոլութեան նուրբ տեսակներից մէկն է։*

*Ե ի Գ. Թող այդպէս լինի։ Բայց, հեռանալով այս-*

տեղից, կըթեթևացնեմ քո տանջանքները։ Վիրաւորւած մարդու ցաւը կրկնապատկւում է, երբ նա տեսնում է այն ղէնքը, որով վիրաւորւել է։ Միայն իմ բացակայութիւնը կարող է բուժել քո վէրքը...

ՄԻՀ. Ա՞յդ է, ուրեմն, քո կարծիքով, խնդրի լուծումը։

ԵԻԳ. Ես կարծում եմ, որ ուրիշ ելք չկայ։ Պէտք է բաժանվենք։

ՄԻՀ. Երբէ՛ք, երբէք. դու պիտի ճնաս իմ տանը հէնց ինձ բժշկելու համար։ Քո պատիժը դու արդէն ստացել ես, բաւական է. մի՛թէ ես չըգիտեմ ինչ է կատարվում այս րոպէին քո հոգում։ Դու պէտք է ճնաս իմ տանը։

ԵԻԳ. Չեմ կարող... վերջապէս, իրաւունք չունիմ...

ՄԻՀ. Եւ ո՞վ է խլում քեզանից իրաւունքը։

ԵԻԳ. Իմ խիղճը—հաւատա, այդ միակ ելքն է, չըկայ ուրիշը, չկայ։ Եթէ ես մինչև այսօր յետաձգել եմ, պատճառը մայրս էր։ Ես ազատում էի, որ հարուածի ոյժը մի փոքր թուլանայ նրա մէջ։ Այսօր ես յայտնեցի համոզել նրան, որ ինձ համար ուրիշ ելք չըկայ։ (Լռութիւն։) Իրեղէններս արդէն կապկապած են, ճնում է միայն... (Ճնշված ձայնով) վերջին անգամ նայել քեզ։ (Երեսը դարձնում է նրանից որպէս զի արտասուքը թագցնի)։

ՄԻՀ. (Նայում է նրան համակրութեամբ եւ սիրով լի հայեացքով։ Նրա ղէմքն արտայայտում է չերմ ցանկութիւն զրկել ու համբուրել Եւգինէին, բայց ինքնասիրութիւնը չի թոյլ տալիս նրան այդ անելու։ Պատուզա։) Բաւական է, բաւական է։

ԵԻԳ. (Կարծատու, բայց զօրեղ պատնրազից յետոյ, վճռողաբար։) Մնաս բարով... միայն... (Տատանվում է) բայց ոչինչ... (Բացատական շարժումն է անում ձեռով եւ քայլերն ուղղում դէպի ծախ կողմի դռները։ Ներսի սենեակից լսվում է դայեակի ձայնը, որ օրօր է երգում երեխայի համար։ Յորքի դռներում երեւում է Մարթան։ Լսելով դայեակի երգը, Եւգինէն զօրեղ ցնցվում է, դողում եւ հազիւ ոտքի վրայ մնալ կարողանալով, յենվում է դռների շրջանակին։)

ՄԻՀ. (Նայում է շարունակ Եւգինէին)։

ԵԻԳ. (Լռութիւնից յետոյ) Ես չատ եմ մտածել նրա մասին... (Յուզ ձայնով, արտասանելով իւրաքանչիւր բառն առանձին) Նա քեզ է պատկանում... Ես նրան թողնում եմ այստեղ։

ՄԱՐԹԱ. Եւ ուրիշ կերպ էլ չի կարող լինել...

ՄԻՀ. (Ցնցվում է քրոջ ձայնից։) Ո՛չ, կարող է լինել... (Մօտենում է Եւգինէին։)

ԵԻԳ. (Ուժասպառ ընկնում է Միհրանի գիրկը։) Ա՜հ...

ՄԻՀ. (Պատւզա։) Մարթա, մօտեցիր... օգնիր... Եւգինէ... Մարթան տեղից չի շարժվում եւ նայում է նրանց արհամարհանքով, իսկ երբ Միհրանը գըրկում է Եւգինէին, ցնցվում է։ Միհրանը հանդարտիկ Եւգինէին նստեցնում է աթոռի վրայ, աշխատելով նրան ուշքի բերել։ Ներսի սենեակից տակաւին լսվում է դայեակի երգը, որ հետզհետէ ցածանալով ընդհատվում է։)

ԵԻԳԻՆԷ. (Աչքերը բանալով, նայում է Միհրանին, յետոյ հանդարտիկ շոշում է նրա առջեւ եւ, վերցնելով նրա ձեռը, ամուր սեղմում է շրթունքներին։) Չեմ կարող, չեմ կարող...

ՄԻՀ. (Ձեռը խլելով, գրկում է նրա գլուխը։ Պա-

ուզա։) *Համոզմունքով ներեցի, սիրելով կըմոռանամ...* (*Երեսը դարձնելով Մարթային, ձեռով նշան է անում նրան հեռանալու։*)

**ՄԱՐԹԱ։** *Մոռացիր և՛ ինձ։* (*Գնում է։*)

ՎԱՐԱԳՈՑ։

1901 թ. *Յուլիս-օգոստոս. Կօջօր։*

ՀԱՅ. ՀԱՆՐ. ՀԱՅԿ. ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1922

## ՎԵՐՋ

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ


| | Երես. |
|---|---|
| Նորերից մէկը, պատմուածք . . . . . | 1 |
| Օրիորդ Լիզա, վէպիկ . . . . . | 20 |
| Ցաթման և Աստղը, վէպիկ . . . . . | 76 |
| Թանգագին կապանքը, պատկեր . . . . . | 110 |
| Տասնուհինգ տարի անցած, պատմուածք . . | 132 |
| Խելագարը, պատմուածք . . . . . | 152 |
| Երկանից արտաքսուածը, պատմուածք . . . | 190 |
| Արտիստը, պատմուածք . . . . . | 213 |
| Եւդինէ, դրամա 3 արարուածով . . . . | 293 |


---

ՀՀ Ազգային գրադարան
NL0353160

47990